

Մ. Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ  
ԿԵՂԾԱՐԱՐՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК  
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
ИНСТИТУТ ИСТОРИИ

М. Г. НЕРСИСЯН

# ФАЛЬСИФИКАТОРЫ ИСТОРИИ

(СТАТЬИ И СООБЩЕНИЯ)

ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН» НАН РА  
ЕРЕВАН 1998

9(47.025)

8-63

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

15

Մ. Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

# ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՆԵՐԸ

(ՀՈԳՎԱԾՆԵՐ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ)

3037

ՀՀ ԳԱՍ «ՊԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 1998

Ներսիսյան Մ. Գ.

և 633 Պատմության կեղծարարները (Տողվածներ և հաղորդումներ): Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1998.— 343 էջ:

Քննարկողներին առաջարկվող այս գրքում տեղ են գտել ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանի պատմագիտական այն հոդվածներն ու հաղորդումները, որոնց մեծ մասը գրված է վերջին տասնամյակում և հիմնականում ուղղված է պատմության թուրք կեղծարարների դեմ: Միաժամանակ հրատարակվում են հետաքրքիր արխիվային նյութեր Հայկական Հարցի հայ ազատագրական շարժման ու ուսու-հայկական բազմաթիվ հարաբերությունների պատմության մասին:

0503020913

703 (02) — 98

ԳՄԳ 63 . 3 (22)

ISBN 5—8080

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 1998

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Վերջին շրջա տասնամյակներին թուրքիայում մեծ նիգեր գործադրվեցին, որպեսզի նենգավորվի ինչպես օսմանյան պետության, այնպես էլ հայ ու մի շարք այլ ժողովուրդների պատմությունը: Այդ ուղղությամբ ծավալուն աշխատանք է կատարվում նաև մեր օրերում. շատ պատմաբաններ, բարձրաստիճան պաշտոնյաներ, հրապարակախոսներ, լրագրողներ և երբեմն էլ իշխանությունները փորձում են պատմական փաստերը աղավաղելու միջոցով յուրովի, իրենց ցանկացած ձևով ներկայացնել անցյալի պատմությունը: Օսմանյան պետությանը վերագրելով հնարովի, շեղած «բարեմասնություններ» նրանք, օրինակ, համառոտ են պնդում են, որ իբր հայերը, ինչպես և բարձր սոցիալական աստիճանի տիրապետության տակ գտնված մյուս ժողովուրդները չեն ենթարկվել նեղումների, բռնությունների և կոզապուտի, բեզմակառակ, ունեցել են ապահով ու բարեկեցիկ կյանք, իսկ եթե երբեմն ապստամբել են, ապա այդ արել են թուրքիայի թշնամի պետությունների հրահրումներով: Անհիմն ու մտացածին է այն կարծիքը, գրում են նրանք, որ իբր Օսմանյան կայսրության մեջ տեղի են ունեցել զանգվածային կոտորածներ ու ցեղասպանություն: Վնականորեն ժխտվում է հայտնաբերված հայերի ցեղասպանությունը: Գրվել են և այսօր էլ գրվում են բազմաթիվ ու բազմատեսակ աշխատություններ, որոնց նպատակն է համոզել ընթերցողին, թե հայերի կոտորածներ չեն եղել ո՛չ 1894—1896, ո՛չ 1915—1916 թթ. և ոչ էլ հետագա տարիներին:

Գտնելու են ռեալիստները պատմական նշմարությունը, հետապնդելով ավելի հեռավոր նպատակներ՝ բարձր ազգայնամուլները ստեղծել են արտառոց «տեսություն» այն մասին, որ իբր օսմանյան պետությունը բազմակրթություն է տարածել Ասիայի, Աֆրիկայի ու Եվրոպայի շատ երկրներում, որ բարձր սոցիալական իբր նպաստել են համաշխարհային մշակույթի զարգացմանը: Ինչպիսի ցեղաբանություն:

Ուղղության արժանի է այն հանգամանքը, որ վերը նշված, մեզմասամ, անհիմն «տեսությունները» հետևորդներ ունեն ԱՄՆ-ում,

Յրահանիւմ և մի քանի այլ երկրներում: Վերջերս մեր և արտասահմանյան մամուլի որոշ օրգաններում և մասնավորապէս «Կարիֆորնիա կուրիեր» քերթում տպագրւեցին նյութեր այն մասին, որ բուրժուական իշխանութիւնների այլևայլ ներկայացուցիչներ աշխատում են իրենց «պատմագիտական» քարոզներին մասնակից դարձնել ամերիկյան պատմաբաններին: Եվ հետաքրքիր է նշել, որ այդ նշանց մասամբ հաջողվել է: Պարզվում է, որ մի շարք ամերիկյան «պատմաբաններ» գերադասել են հրատարակել ոչ թե առաջարկվող դոկտրիններից, այլ բարեխղճութանից և գիտական սկզբունքայնութունից:

Հաշվի առնելով այս բոլորը՝ ես հարկ համարեցի վերահրատարակելով վերջին տարիներին գրված իմ այն հոդվածները, որոնք ուղղված են պատմութան կեղծարարների դեմ: Միաժամանակ նպատակահարմար գտա տալ այստեղ նաև հայ ազատագրական շարժմանը, հայ-առասական հաղահական հարաբերությունների պատմութանը, Հայկական Հարցին և հարակից խնդիրներին նվիրված մի շարք այլ հրատարակումներ:

Ավելորդ չեմ համարում նշել, որ ժողովածուում զետեղված հոդվածները տպագրվել են տարբեր ժամանակներում և տարբեր հանդեսներում, ուստի նրանցում անդ են գտել մի շարք փաստերի ու մտքերի կրկնություններ:

Ներկա ժողովածուն հրատարակութան պատրաստելու գործում մեզ զգալի օգնություն է ցույց տվել «Պատմա-բանասիրական հանդեսի» պատասխանատու բարտողար Ն. Վ. Գերոյանը, որին և հայտնում եմ շնորհակալություն:

Մ. Ն.

1938 թ., ապրիլ:

# 1. Հ Ո Ւ Վ Ա Մ Ն Ե Ր

## ՕՍՄԱՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ

### «ԲԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՍԻԱՅԻ» ՄԱՍԻՆ

Պատմութան թուրք կեղծարարները մեծ ճիգեր են գործադրում, որպէսզի հիմնավորեն իրենց իսկ կողմից ստեղծված առասպելն այն մասին, թե օսմանյան պետութիւնը եղել է աշխարհի ամենազարգացած և առաջադեմ պետութիւններից մեկը, որ թուրք սուլթանները քաղաքակրթութիւն են սերմանել ու տարածել Ասիայի, Եվրոպայի շատ երկրներում, ազատութիւն, օրինականութիւն ևն պարզեւէլ բազմաթիւ ժողովուրդների, կարգ ու կանոն են հաստատել նրանց երկրներում և այլն, և այլն: Այս արտաոտց «տեսութիւն» տարածողների դերում հանդես են եկել ճանաչված պատմաբաններ Աֆետ Ինանը, Մեհմեդ Քյուփեռլյուլուն, Իսմաիլ Ուզունշարշիլին, Օմեր Բարկանը և ուրիշներ: Ի. Ուզունշարշիլին, օրինակ, սուլթանական Թուրքիայի պատմութիւնը նշխրված իր շորս հատորանոց աշխատութիւն մեջ այն տեսակետն է հայտնում, որ օսմանցիների նվաճումները՝ առաջադիմական նշանակութիւն ունեցան, որ թուրքական իշխանութիւնները իրենց տիրապետութիւն տակ զանվող ժողովուրդների նկատմամբ վարել են արդար ու միանգամայն բարյացակամ քաղաքականութիւն: Հեղինակը փաստորեն կրկնում է թուրք պաշտոնական պատմագրութիւն այն տեսակետը, թե օսմանյան պետութիւնը, լրավելով շատ երկրներ, կատարեց քաղաքակրթական միտիա<sup>1</sup>: Թուրքադիտութիւն մեջ ոչ քիչ հեղինակութիւն ունեցող Օ. Բարկանը ևս ամեն կերպ փորձում է համոզել ընթերցողին, որ օսմանյան Թուրքիայում իբր եղել են իրեալական կարգեր՝ հասարակական տարբեր շերտերի հիանալի համագործակցութիւն, ազատութիւն ու արդարութիւն, որ սուլթանական պետութիւնը նոր, առաջադիմ քաղաքակրթներ է տարածել «հետամնաց» եվրոպական երկրներում և այլն<sup>2</sup>:

<sup>1</sup> I. H. Uzunçarşılı. Osmanlı tarihi. Cilt I—IV, Ankara, 1947—1959.  
<sup>2</sup> Ö. L. Barkan. XV ve XVI asırlarında Osmanlı İmparatorluğunda İktisadi ve mali esasları. C. I. Kanunlar, İstanbul, 1945.

Ավելին. թուրքական պատմագիտական ընկերության 1943 թ. կայացած նիստում շատ պատմաբաններ այն կարծիքն են հայտնել, թե իբր «չուր-վերե են վառել համաշխարհային մշակույթի առաջին ջահերը»<sup>3</sup>: Նույն մտքերն այս կամ այլ ձևով արտահայտել են ռասիստ ու պանթուրքիստ բազմաթիվ բարձրաստիճան պաշտոնյաներ, զինվորականներ, ազգայնամուլ հրապարակախոսներ:

Կարևոր է նշել այն հանգամանքը, որ պատմությունն աղավաղողներին հովանավորել են իշխանությունները: Գաղտնիք չէ, որ Թուրքիայի կառավարության անմիջական նախաձեռնությամբ ու ֆինանսական օգնությամբ 1930-ական թթ. լույս տեսավ շորս հատորից բաղկացած «Tarih»-ը՝ «Պատմությունը», որի գլխավոր նպատակն է եղել գովերգել, իզեալականացնել օսմանյան պետությունը, ամեն կերպ արգարացնել սուլթանների կողմից հրի ու սրի միջոցով կատարված նվաճումներն ու անօրինակ բարբարոսությունները և այգպիսով, կամակատար գրչակների օգնությամբ, նորից կյանքի կոչել թուրքական նացիոնալիզմը, շովինիզմը:

Պատմությունը աղավաղողների նշված քարոզները, սակայն, դանազան նկատառումներով կրկնել են նաև արևմտյան երկրների մի շարք արևելագետ պատմաբաններ: Վերջիններիս մասին պատմաբան Բ. Տ. Գորյանովը իրավացիորեն գրել է, որ պատմության այդ կեղծարարները ևս փորձում են թուրք սուլթաններին և զրաւեց թվում նաև բյուզանդական պետությունը կործանող արյունարբու Մեհմեդ (Մուհամմեդ) II (1451—1481) պատկերել որպես պրոգրեսիվ գործիչներ<sup>4</sup>:

Պատմության այդ կեղծարարների մասին, ինչպես հայտնի է, գոյություն ունի հարուստ գրականություն, սակայն մեզ այստեղ հետաքրքրող խնդրին՝ օսմանյան պետության «Լաղափակրթական միսիայի» «տեսությունը» հարկ եղած ուղադրություն չի դարձվել: Ուստի անհրա-

<sup>3</sup> Մանվել Զուլալյան. Հայոց պատմության խեղաթյուրումը արդի թուրք պատմագրության մեջ. Երևան, 1995, էջ 8:

<sup>4</sup> Б. Т. Горьянов. Фальсификация истории турецкого завоевания и военно-феодалного строя Османской Турции в трудах Запада и США (տե՛ս 29-և «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1957, № 10): Թուրքֆիլական տեսակետներ են հայտնել մեծ մասամբ XVI—XVII դդ. ֆրանսիացի հեղինակները, քանի որ այդ դարերում սակայն էին դաշնակցային կապեր Ֆրանսիայի և օսմանյան պետության միջև: Նման հայացքներ է ունեցել նաև սուլթանական արքունիքի հետ սերտ կապեր ունեցող, ծագումով պոլսահայ Իզնաուխու Մուրադեա դ'Օստոնը (տե՛ս նրա բազմահատորյակը՝ M. d'Ohsan. Tableau général de l'Empire Ottoman. Vol. I—VII, Paris, 1736—1824):

մեշտ է հատուկ քննարկման առարկա դարձնել այդ հարցը, քանի որ իրականում հիշյալ պետությունն իր ամբողջ գոյության ընթացքում աչքի է ընկել անօրինակ բարբարոսություններով, դարեր շարունակ արգելակել է իրեն հպատակ երկրների տնտեսության, մշակույթի զարգացումը և դաժան հալածանքի, կեղեքումների ու կոտորածների է ենթարկել բազմաթիվ ժողովուրդների և ազգությունների:

Թուրք-օսմանյան պետությունը, որ կազմավորվեց XIV դարի սկզբներին Փոքր Ասիայի հյուսիսարևմտյան տարածքում, հենց սկզբից ևեթ ծավալեց խիստ ագրեսիվ, նվաճողական քաղաքականություն հարևան երկրների նկատմամբ: Իշխանության զլուխ անցած սուլթանները և ավատական վերնախավի ներկայացուցիչները իրենց նյութական ապահովության ու հարստացման հիմնական աղբյուրը դարձրին թալանչիական արշավանքները, պատերազմները, նվաճված երկրների կողմուտը, մեծ մասշտաբներով կատարվող գերեվարությունը, ռազմատուգանքի ու ծանր հարկերի բռնագանձումը և այլն:

Օսմանյան բռնապետության էության, ինքնատիպության ու բնորոշ հատկանիշների կամ, այլ կերպ ասած, նրա կողմից կատարված անօրինակ շարագործությունների մասին գրել են անցյալ դարի այնպիսի նշանավոր գիտնականներ, գրողներ ու հասարակական-քաղաքական գործիչներ, ինչպիսիք են՝ գերմանացիներ Հեգելը, Կարլ Մարքսը, ռուսներ Ն. Գ. Զեբնիշևսկին, Լ. Ա. Կամարովսկին, Ս. Գլինկան, անգլիացի Վ. Գլադստոնը, իռլանդացի էմիլ Գիլոնը, ֆրանսիացիներ Վիկտոր Զյուգոն, Անատոլ Ֆրանսը, բելգիացի Մ. Գ. Բրուն-ժեկմենը, ամերիկացիներ Ֆր. Գբինը, Ե. Մ. Բլիսը և ուրիշներ: Օսմոթմանանք նրանցից մի քանիսի կարծիքներին:

Նոսելով XIII դարում քոչվոր օսմանցիների կողմից Կարահիսարում հիմնած իշխանության մասին, իշխանություն, որը հետագայում դարձավ օսմանցիների պետության հիմքը և հիմնական բաղկացուցիչ մասը, Կարլ Մարքսը այն բնութագրել է որպես «ավազակային»: Մերձավար Արևելքում 1230-ական թթ. կատարված մի շարք քաղաքական անցքերի կապակցությամբ Մարքսը նշել է. «Գրեթե այդ նույն ժամանակ թուրք օսմանների հորդան ներխուժում է Փոքր Ասիա, որ նրանք ամենից առաջ հիմնում են Կարահիսարի ավազակային պետությունը»<sup>5</sup>:

<sup>5</sup> Архан К. Маркса и Ф. Энгельса, Т. V, с. 223.

Մի այլ կապակցությամբ Մարքսը թուրքական իշխանության հիմնադիր օսմանի գինվորներին ուղղակի անվանում է «ավազակներ»<sup>8</sup>:

Մարքսը գրել է նաև այն բարբարոսությունների մասին, որ կատարեցին թուրք սուլթանները հաջորդ դարերում: Այսպես, օրինակ, նա ելում է 1430 թ. Քեսայունիկի և 1453 թ. Կ. Պոլսի գրավման ժամանակ տեղի ունեցած գազանությունները: Ընդհանրապես լիցի օսմանյան գործերի կողմից 1453 թ. Պելյոպոնեսում կատարված վայրագությունները նա գրել է, որ թուրքերը այնտեղ «կազմակերպեցին շարքեր, անմաքաբնակ դարձրին երկիրը, գերի առաւն բնակիչներին»: Ընդհանրացնելով իր խոսքը՝ Մարքսն այնուհետև նկատում է. թուրքերը «նրի ու սրի էին մատնում քաղաքներն ու գյուղերը... կատարում էին վայրագություններ, ինչպես համեմարվեք»<sup>9</sup>: Գրավված երկրներում, գրել է նա, օսմանցիները հաստատում էին ռազմական ուժի: Մարքսը անհրաժեշտ է համարել ընդգծել նաև այն փաստը, որ թուրք բարբարոսները վաղուց արդեն իրենց ցույց են տվել որպես ամեն մի պրոգրեսի թշնամիներ<sup>10</sup>: Ահա այն գնահատականը, որ տվել է մեծ գիտնականը «քաղաքակրթություն տարածող» պետությունը:

Մասովորապես նման տեսակետ է արտահայտել ռուս նշանավոր հրատարակախոս Ն. Գ. Չեռնիշևսկին: Վճռականորեն մերժելով իր հայրենակից իզնախոս ու հետազնմ հեղինակ Մ. Ստասուլիչի այն կարծիքը, թե սուլթան Մուհամմեդ II եղել է խաղաղասեր, հումանիստ և չի ցանկացել գրավել Բյուզանդիայի մայրաքաղաք Կ. Պոլսը, Չեռնիշևսկին գրել է. «եվ մի՞թե կարելի է կարծել, որ Մուհամմեդ II չի կամեցել նվաճել Բյուզանդիան, այլ այդ արել է հարկազրկած: Դա առնչվածն տարօրինակ է: Թուրքերը ապրել են միայն գավրումներով, սահմանների ընդլայնումն է եղել նրանց միակ նպատակը... Բայկանդան բերանդրում ուղղափառներից (հույներ, սերբեր) հետզհետե խլելով մի շրջանի մյուսի հետևից, թուրքերը մտածում էին ուղղակի այդ շրջանների գավրման, քայանի, հարկերի և տիրակալելու մասին... Բնական է մտածել, ինչպես և առանց բացառության ապացուցում են թուրքական պատմության XV—XVI դարերի բոլոր փաստերը, որ թուրքերը

նվաճումներ կատարելով, հետապնդում էին հենց ավար և գավթումներ»<sup>10</sup>:

Իր հոգովածում, որ ունի «Ն. Գ. Չեռնիշևսկին Կոստանդնուպոլիսը թուրքերի կողմից գրավելու մասին» խորագիրը, Ի. Ն. Բորոգլինը ճիշտ է նկատում, որ Չեռնիշևսկին մի շարք աշխատություններում հատկապես ընդգծում է այն շարիքը, որ Բալկանյան թերակղզու սլավոնական ժողովուրդներին բերեց օսմանյան դաժան լուծը: Նա խոսում է ատելի գավթիչների կողմից ճնշվող ժողովրդի իրավագուրկ վիճակի, սանձազերծ եւիշերական հորդանների կատարած գազանությունների մասին, որոնք վայրագորեն բնաջնջում են սլավոնական երկրների հիմնական բնակիչներին: Իր հայտնի բնորոշումը տալով իրեն այնքան ատելի «ասիականությունը», Ն. Գ. Չեռնիշևսկին նկատի ուներ նախ և առաջ թուրքական բռնապետությունը: «Ասիականություն է կոչվում,—ասում էր նա,—այնպիսի իրավիճակը, որի ժամանակ կամայականությունից պաշտպանված չեն ո՛չ անհատը, ո՛չ աշխատանքը, ո՛չ սեփականությունը: Ասիական պետություններում օրենքը միանգամայն անուժ է: Այնտեղ բացառապես իշխում է բռնությունը»<sup>11</sup>:

Պատմաբան, հրատարակախոս Սերգեյ Գլինկան, հենվելով հարուստ փաստերի վրա, գրել է, որ բոլոր գրաված երկրներում թուրք-օսմանները ստեղծում էին ոչ թե քաղաքական ու քաղաքացիական հաստատություններ, այլ «միայն ռազմական ճամբարներ: Ամենուրեք, ուր փայլատակում էր նրանց սուրբ, այնտեղ միշտ էլ հնչում էր սառկոյրյան շղթաների շառաչումը»<sup>12</sup>:

Վիլյամ Գլադստոնը «Բուլղարական սարսափները և Արևելյան հարցը» իր հայտնի աշխատության մեջ գրել է, որ օսմանցիները «ամենուր, որտեղ որ հայտնվել են՝ իրենց հետևից բողեյ են խոր արյունոտ հետք, և նրանց տիրապետությանը ողջ տարածքում վերացել է կաղափարությունը: Նրանք ամենուրեք հանդիսացել են ուժի միջոցով կառավարման ներկայացուցիչներ, ի հակադրություն օրենքի միջոցով կառավարման»<sup>13</sup>: Անգլիացի լիբերալ գործիչը արեւմտահայերի 1894 թ. կոտորածների առիթով ունեցած իր ելույթներից մեկում ասել է. «Թուրքիայի պատմությունը տխուր և չար գործերով լի մի պատմություն է»<sup>14</sup>:

Օսմանյան բռնապետության գազանությունների մասին բազմիցս գրել է Վիկտոր Հյուգոն: Նա ևս ընդգծել է այն ճշմարտությունը, որ

<sup>10</sup> Н. Г. Чернышевский. Сочинения. Т. II, М., 1949, с. 606—610.

<sup>11</sup> Византийский Временник, т. VII, М., 1953, с. 92.

<sup>12</sup> С. Глинка. Картины исторические и политические. М., 1840, с. 108.

<sup>13</sup> Гладстон. Болгарские ужасы и Восточный вопрос. СПб., 1876, с. 6.

<sup>14</sup> Լեո. Գլադստոն. Քիֆիս, 1899, էջ 243:

<sup>8</sup> Տե՛ս նույն տեղում, հ. VI, էջ 170:

<sup>9</sup> Ի՞նչ կեց նկատներ, որ 1914 թ. Փարիզում լույս տեսած մի աշխատության մեջ բերված են հարուստ տեղեկություններ Կ. Պոլսի գրավման և այնտեղ կատարված կոտորածների ու բարբարոսությունների մասին. տե՛ս G. Schlimberger. La siege, la prise de la ville de Cois n'oupe par les turks en 1453. Paris, 1914.

<sup>8</sup> К. Маркс. Хронологические записки. Т. VII, с. 202.

<sup>9</sup> К. Маркс, Ф. Энгельс. Сочинения. Т. IX, с. 395.

այնտեղ, որ հայտնվել են օսմանյան զորքերը, թողել են արյունոտ հետքեր, ավերակներ ու ամառաօթյուն<sup>15</sup>:

Օսմանյան պետության և նրա սուլթանների մասին հետաքրքիր տեղեկություններ կան Յ. Շյոստերի «Համաշխարհային պատմություն» հանրահռչակ բազմահատորյակում, որը հրատարակվեց անցյալ դարում: Երկու վկայություն նրանից: 1430 թ., երբ սուլթանական բանակը գրավեց Բեսալոնիկը, թուրքերը գերեզմաններ և սարսուկ դարձրին ավելի քան 7000 տարբեր հասակի տղամարդկանց ու կանանց, թալանեցին բնակիչների ունեցվածքը, ավերեցին եկեղեցիներն ու վանքերը<sup>16</sup>: Կ. Պոլիսը գրավող և թուրք պատմադիտություն մեջ փառաբանված սուլթան Մեհմեդի մասին ասված է, որ նա փարել է բազմաթիվ արյունոտ պատերազմներ, կործանել է շատ քաղաքներ, ամալացրել է ամբողջ երկրներ, կիրառել է դաժան ու տանջալից պատիժներ<sup>17</sup>: Ի դեպ, Քուլթիայի պատմությունը նվիրված մի գրքում, որը հրատարակվել է Բեսալոնում 1788 թ., և հաջորդ տարի լույս տեսել նաև Լուսերեն Ս. Պետերբուրգում, գրված է, որ այդ վայրագ սուլթանի հրամանով երկու հրեա բժիշկների մաշկազերծ են արել միայն նրա համար, որ նրանք չեն կատարացել բուժել դաժան բուսապետի անբուժելի հիվանդությունը<sup>18</sup>:

Մուհամմեդ II և նրա հետնորդների դաժանությունների մասին գրել է նաև Ստեֆան Յվալդը: Խոսելով այն մասին, թե այդ սուլթանն ինչպես կողոպտեց ու ավերեց Կ. Պոլիսը, նշանավոր գրողը նրան անվանում էր վայրենաբարո, նենգ, երկերեսանի ու ստախոս: Օսմանցիների կործանարար ռազմական հզորությունը դարեր շարունակ, նշել է Յվալդը, արդելակել, խափանել է Նվրոպայի գարգալումը<sup>19</sup>:

Գերմանացի սոցիալ-դեմոկրատ, նշանավոր հումանիտար-սոցիալիստ Հենրիխ Ֆիրբուխերը իր «Armenien 1915» աշխատության մեջ նշել է այն իրողությունը, որ Օսմանյան կայսրությունը ստեղծվել է բազմաթիվ ավերիչ արշավանքների, պատերազմների ու նվաճումների հետևանքով և չպատահել է հրի ու սրի շնորհիվ: Թուրք սուլթանները, սահայն, էրեհց պետություն մեջ ևս կատարել են անօրինակ բնություն-

<sup>15</sup> Виктор Гюго, Собрание сочинений в 15 томах, Т. I, М., 1953, с. 393.

<sup>16</sup> Ф. Шюссер, Всемирная история, Т. 9, СПб., 1861, с. 74.

<sup>17</sup> Նույն տեղում, հ. 12, էջ 76:

<sup>18</sup> Барон Тюр. Известные известия о Турецкой империи, СПб., 1789, с. 325.

<sup>19</sup> С. Фан Цвейг, Собрание сочинений в семи томах, Т. 3, М., 1933, с. 31.

ներ ու քաղաքաբնակիչներ: Աշխարհի ոչ մի երկրում, ընդգծել է անվանի հրապարակախոսը, բնությունը չի եղել այնքան կործանարար և սուրբ այնքան սարսուփելի, ինչպես թուրքիայում: Օսմանյան սուլթանների համար սովորական երևույթ էր եղբայրասպանությունը և հաճախ նաև ազգականներին դավադրաբար ոչնչացնելը: Բնորոշ է, որ 200 մեծ վեզիրներից 76-ը մահացել են ոչ բնական մահով, իսկ սուլթաններից մեկ երրորդը սպանվել է այլևայլ միջոցներով<sup>20</sup>:

\* \* \*

Հայտնի է, որ XX դարում զգալի զարգացում ապրեցին արևելագիտությունը և թուրքագիտությունը: Հանդես եկան բազմաթիվ գիտնականներ, որոնք հրապարակեցին արժեքավոր ուսումնասիրություններ օսմանյան պետության և կայսրության մասին: Կարծում եմ մեզ այստեղ հետաքրքրող հարցերի վերաբերյալ կարևոր է լսել նաև նրանց՝ մասնագետ, պրոֆեսիոնալ հեղինակների կարծիքները:

Անվանի թուրքագետ Ա. Ս. Տվերիտինովան, որ հրատարակել է թուրքիայի միջնադարյան պատմության մի շարք հարցերին նվիրված արժեքավոր ուսումնասիրություններ, ընդգծել է, որ օսմանցիների թալանչական արշավանքներն ու պատերազմները եղել են նրանց մշտական և կարևորագույն «արհեստը»: Նշանավոր փրանսիական, լայնորեն օգտագործելով թուրքական աղբյուրները, գրել է. «Քալանը ու զանգվածային գեթալարությունը քուրճակն արշավանքների գլխավոր շարժառիթն էին»: Ըստ սկզբնաղբյուրների ծանոթանալով թուրքերի կողմից Բալկանյան թերակղզու երկրների նվաճման պատմությունը մենք զրտնում ենք սարսուփելի պատկեր: Արշավանքները, Սերբիայի, Բուլղարիայի յուրաքանչյուր քաղաքի ու շրջանի զավթումը ուղեկցվում էր բնակչության մի մասի կոտորածով և մյուսի կողոպտանով, բնակավայրերի ավերումով և տասնյակ հազարավոր մարդկանց գերեզմանում ու նրանց ստրկացմամբ: Աղբյուրներում ամեն մի արշավանքի նկարագրությունը ավարտվում է հետևյալ նախադասությամբ. «Ողջ շրջապատը ամալացնելով՝ զինվորները ձեռք բերեցին անհամար ավար», կամ՝ «Վերադառնալով արշավանքից տանում էին իրենց հետ անթիվ-անհամար ավար, փրիներ և կարված գրուսներ»: Հաճախ առանձին երկրամասեր գրավելու ժամանակ ամբողջ շրջանների բնակչությունը տարվում էր Անատոլիա և այլն: Հունգարիայի հարավային շրջանների վրա

<sup>20</sup> Heinrich Vierbücher, Armenien 1915, Hamburg--Bergedorf, 1930.

1438 թ. արշավանքին մասնակից տարեգիր Աշիկ Փաշա Զարեն հայտնում էր, որ այդ արշավանքի ժամանակ զերի վերցվածները «այնքան շատ էին, որ ստրուկ գերի կին կարելի էր ստանալ մի զույգ կոշիկի փոխարեն»:

Գիտնականը միանգամայն ճիշտ է նկատել նաև այն, որ «սուլթանը և նրան շրջապատող վերնախավը նվաճված երկրների բնակիչներին դիտում էին միայն որպես ստրուկներ»։ Պատահական չէ, որ Թուրքիայում լայն ծավալ էր ստացել ստրկավաճառությունը։ Հանդես գալով պատմության կեղծարարների դեմ, Տվերիտինովան պնդում է այն անհերքելի փաստը, որ օսման սուլթանները իրենց ենթակա ժողովուրդներին բերեցին ոչ թե քաղաքակրթություն, այլ ստրկատիրական կարգեր, կողոպուտ և կոտորածներ։ Ընդհանրացնելով իր խոսքը՝ հեղինակը գրել է. «Թուրքական տիրապետությունը նվաճված երկրների համար դարձավ մեծագույն աղետ»<sup>21</sup>:

Թուրքագետ Ա. Յ. Միլլերը գրել է, որ օսմանյան պետության հաստատության գլխավոր ազդեցությունը նվաճված երկրների «կողոպուտն էր՝ ռազմական ավարի, ստրուկների և հարկերի ձեռք բերումը։ Իրենց ամբողջ էներգիան, ուշադրությունը և ժամանակը թուրքերը նվիրում էին մարտունակ բանակ ստեղծելու գործին»<sup>22</sup>:

Խոսելով սուլթանական Թուրքիայի բանակի ու պետական կառուցվածքի մասին Միլլերը արձանագրում էր շատ բնորոշ մի հանդամանք. «Կանոնավոր բանակի ղինվորները և սպաները (ենիչերիներ, հեծելազոր ու հրետանավորներ) կոչվում էին «կառավարության ստրուկներ»։ Սուլթանի ստրուկներ էին համարվում նաև ընդհանրապես բոլոր պետական ծառայողները (բացի հոգևորականներից)... Ստրուկների միջոցով սուլթանները ձգտում էին ավերի ամրապնդել իրենց դիրքերը կառավարող ֆեոդալական դասակարգի տարատեսակ ներկայացուցիչներին կատմամբ»<sup>23</sup>:

Իրավազուրկ ուսույցի մասին նույն հեղինակը գրել է, որ նա «ենթարկվում էր փաշայի անկանխելի ճնշումներին ու կամայականություններին։ Քրիստոնյաներից դանձմող հարկը դառնում էր ստրկացուցիչ և

ստանանքի։ Հարկ սկսեցին հավաքել անչափահասներից, մինչև իսկ փոքր երեխաներից։ Գյուղացիները՝ թե՛ մուսուլման, թե՛ ոչ մուսուլման, թողնում էին հողերը և փախչում քաղաք, բայց նրանց համար այնտեղ աշխատանք չկար»<sup>24</sup>:

Բալկանյան ժողովուրդների պատմության անվանի մասնագետ Ի. Մ. Դոստյանը բազմաթիվ ազդեցություն ու փաստերի հիման վրա հանդես է հետևյալ եզրակացություններ. «Հայտնի է, որ պատերազմները միջնադարում սովորաբար ուղեկցվում էին թալանով, խաղաղ բնակչության նպանություններով, հորհհրերով, բռնագրավումներով և այլն, սակայն բուրժուականության ակնհայտորեն գերազանցեցին միջնադարյան դասակարգային բուրժուականության օրինակները։ Նվաճած տերիտորիաների թալանը թուրքական ռազմավարության պետության համար ռազմական գործողությունների գլխավոր նպատակներից մեկն էր։ Հպատակեցված ժողովուրդներին ռազմական ուժի միջոցով թալանելը XIV—XV դարերում սուլթանի և թուրքական ֆեոդալների զանձարանի ծախսերի հիմնական աղբյուրն էր։ Թուրքական բանակի ամեն մի ղինվոր պատերազմ էր գնում հաղթվածներին թալանելու և հարստանալու հույսով»<sup>25</sup>:

Մի այլ առիթով Ի. Ս. Դոստյանը իրավացիորեն գրել է. «Նվաճողական պատերազմները հանդիսանում էին սուլթանական զանձարանի դրամական աղբյուր, թուրքական վերնախավի հարստացման, թուրքական բանակի սպաների ու ղինվորների ապրուստի միջոցների հիմնական աղբյուրը։ Բալկանյան թերակղզու զանազան շրջանների վրա հարձակվելով՝ թուրքերը բնակչության մասսայաբար ստրկության էին մատնում, թալանում էին խաղաղ բնակչության տնկեցվածքը»<sup>26</sup>:

Օսմանյան քաղաքականությունը ուսույցի վերաբերմամբ եղել է՝ ծծել նրա կենսունակ հյութերը, խլել նրանից այն ամենը, ինչ ուժ, գեղեցկություն, բնականություն էր ներկայացնում», նկատել է հայտնի պատմաբան Կոնյ<sup>27</sup>:

Օսմանյան սուլթանների բարբարոսությունների մասին գրել է նաև նշանավոր թուրքագետ Յու. Ա. Պետրոսյանը։ Թուրքական զորքերի արշավանքները Բալկաններ, բնագրում է նա, «սոսկայի ողբերգություն դարձան սևղական բնակչության համար։ Տասնյակ քաղաքների և հար-

21 Տե՛ս Ա. Ս. Տվերիտինովայի «Фальсификация истории Турции в кемалистской историографии» հոդվածը, որ հրատարակված է «Византийский Временник» ժողովածուի 1953 թ. VII հատորում:

22 А. Ф. Миллер. Краткая история Турции. М., 1948, с. 16.

23 А. Ф. Миллер. Османская империя (султанская Турция). М., 1946.

24 Նույն տեղում, էջ 9:  
25 Византийский Временник, т. VII, с. 38.  
26 И. С. Дюстьян. Борьба сербского народа против турецкого ига. XV—начало XIX вв. М., 1958, с. 17.  
27 Կ. Կ. Զայց պատմություն. հ. 3, Երևան, 1946, էջ 112:

չորավոր գյուղերի ավերում, խաղաղ բնակչության մասսայական կոտորածներ, թալան ու ավազակություն — այսպիսին էր Բալկաններին վաճառման պատկերը: Թուրքական նվաճողների գաղանթությունները ակնհայտորեն գերազանցեցին նույնիսկ միջնադարյան պատերազմների դաժանությունները: Նվաճված տերիտորիաների ժողովուրդների տառապանքները իսկապես անշափ էին<sup>28</sup>:

Հեղինակը հատուկ ընդգծում է թուրք սուլթանների դաժանությունը: Այսպես, սուլթան Մեհմեդ II մասին ասված է, որ նա խիստ զաղտնապահ, նենդ, դաժան, անսանձ ու իշխանասեր բռնապետ էր: Նա անխնա տնչացնում էր բոլոր նրանց (անգամ իր հարազատներին), ովքեր կարող էին մրցակից լինել զահին տիրելու համար: «Մուհամմեդ II-ի դաժանությունն այնքան ահավոր էր, որ նրա միայն անունը սարսափեցնում էր հպատակներին»<sup>29</sup>: Սուլթան Սելիմ I (1512—1520) մասին նշված է. «Սելիմի հրամանով խեղդամահ արվեցին նրա եղբայրներն ու ազգականները, ընդ որում ոմանց սպանեցին իր՝ սուլթանի ներկայությամբ»: Սուլթան Սելիմի վայրագությունները ավելի շատ արտահայտվեցին նրա նվաճողական պատերազմների ժամանակ: Բնորոշ է, որ Սելիմին հաջորդող սուլթան Սուլեյմանը, գրավելով Հունգարիան, իրագործեց մասսայական կոտորածներ, որոնց ընթացքում սրի քաշվեց 200 000 մարդ<sup>30</sup>:

Պետրոսյանի գրքում բերված են բազմաթիվ փաստեր այն մասին, թե օսմանյան գրքերը ինչ վայրագություններ են կատարել նաև Անդրկովկասում: Հայերն ու վրացիները մի անգամ չէ, որ ընդվզել են սուլթանական ծանր լծի դեմ, բայց ուժերը եղել են անհավասար: Այդ է պատճառը, որ նրանք իրենց հայացքն ուղղել են Ռուսաստանին, հույս դնելով այդ երկրի հովանավորության և օգնության վրա<sup>31</sup>:

Պատմաբանը ցույց է տվել, թե ինչպիսի ծավալ է ստացել գերեվարությունը օսմանյան պետության մեջ. «Ստամբուլը ստրկավաճառության խոշոր կենտրոն էր: Ստրկավաճառության շուկաները քաղաքում մի քանիսն էին: Այստեղ վաճառում էին ուղղավերիներին և նվաճած երկրների ստրկացրած բնակիչներին, այդ թվում ռուսներին և ուկրաինացիներին, որոնք հարազատ բնակավայրերից գերեվարվել էին

Ղրիմի թափարների կողմից: Ստամբուլի ստրկավաճառության շուկաներում տարեկան վաճառվում էին տասնյակ հազարավոր ստրուկներ»<sup>32</sup>:

Հեղինակը միաժամանակ արգարացիորեն նշել է թուրք ժողովրդական մասսաների ծանր վիճակը և նրանց ապստամբական շարժումները օսմանյան սուլթանների դեմ:

Հայտնի արևելագետ Զ. Վ. Ուզալցովան գրել է. «Թուրքական նվաճումները հույներին, ինչպես նաև Բալկանյան թերակղզու մյուս ժողովուրդներին պատնառեցին դաժանագույն տառապանքներ, հազարավոր մարդկանց մահ, ստրկություն և ավերում... Թուրքերի կողմից Բյուզանդիայի և Բալկանյան թերակղզու մյուս երկրների գրավման խորապես ռեակցիոն դերը այն էր, որ այդ ավազակային նվաճումները մի քանի դարով կասեցրին ժողովուրդների հետագա պրոգրեսիվ տնտեսական զարգացումը, անկման հասցրեցին և քայքայեցին նրանց արտադրողական ուժերը, խեղդամահ արեցին նոր բուրժուական հարաբերությունների այն ծիլերը, որոնք արդեն սկսել էին ի հայտ գալ, վերականգնեցին ֆեոդալական կարգերի ամենահետամնաց ձևերը»<sup>33</sup>:

Նշանավոր գիտնականը, ժխտելով Բյուզանդիայի վերնախավին պատկանող մի շարք ռենեգատների փարիսեցիական պնդումները, ցույց է տվել, որ Կ. Պոլիսը նվաճող սուլթան Մեհմեդ II եղել է ոչ թե «առաջադեմ», «փայլուն» դեմք, այլ արյունարբու, վայրագ բռնապետ: Հիշենք թեկուր միայն այն, թե փնչպես էր նա կործանում արվեստի և մշակույթի հիստորիան հուշարձանները իր կողմից գրավված բոլոր երկրներում: Զ. Ուզալցովան իրավացիորեն քննադատել է պատմաբան Ն. Յորգայի «Օսմանյան պետության պատմությունը» երկհատոր աշխատությունը<sup>34</sup>, որտեղ փորձ է արվում ցույց տալ, թե Բյուզանդիայում իբր լայն տարածում է ունեցել թուրքոֆիլությունը: «Բյուզանդիայում ժողովրդական մասսաների կարծեցյալ «թուրքոֆիլության» առասպելը, — որում է նա, — ստեղծված է թուրքերի բուրժուական ջատագովների կողմից, ոչ մի գիտական հիմք չունի և աղբյուրներում հաստատում չի գտնում... Հօգուտ թուրքերի դավաճանական քաղաքականություն էին վարում վերնախավի մի բուռ ռենեգատներ, որոնք ձգտում էին մատուցել իրենց հարստությունն ու իշխանությունը»<sup>35</sup>:

Օսմանյան կայսրությունում XV—XVI դդ. բռնկված գյուղացիական ապստամբություններին նվիրած իր ուսումնասիրության մեջ պատմա-

3037

28 Ю. А. Петросян. Османская империя, могущество и гибель. Исторические очерки. М., 1990, с. 23.

29 Նույն տեղում, էջ 40:

30 Նույն տեղում, էջ 57, 62:

31 Նույն տեղում, էջ 159:

32 Նույն տեղում, էջ 85:

33 Византийский Временник, т. VII, с. 120—121.

34 Տե՛ս N. Yorga. Geschichte des Osmanischen Reiches. Bd. I—II. Gotha, 19.8—19.9.

35 Византийский Временник, т. VII, с. 120.

բան Գ. Ի. Իբրահիմովը գրել է. «Օսման թուրքերի պետությունը ստեղծվել է Փոքր Ասիայում, XIII դարում, որպես ֆեոդալական ավազակ նվաճողների պետություն... Օսմանյան կայսրությունը մարդկության պատմության տարեգրքում գրել է արյունահեղ պատերազմների, նվաճումների և Ասիայի ու Հարավարևելյան Եվրոպայի բազմաթիվ ժողովուրդների սարկացման մուսլ էջեր»<sup>36</sup>:

Բուլղարիայի պատմության հայտնի մասնագետ, ակադեմիկոս Ն. Ս. Գերմովինը ցույց է տվել, որ օսմանյան պետության դորքերը, ներխուժելով Բալկաններ, «ամալացնում էին երկիրը, թալանում, սպանում էին և բնակիչներին մասսայաբար դեբեվարում, ապա նրանց որպես ստրուկներ վաճառում Փոքր Ասիայի շուկաներում»<sup>37</sup>: Բուլղարացի Ա. Ա. Լևոնյակովը նշել է, որ թուրքերը Բուլղարիայում հաստատեցին ռազմաֆեոդալական ռեժիմ: «Օսմանյի ֆեոդալները գրավեցին երկրի լավագույն հողերը, բուլղարներին դուրս մղեցին քաղաքներից, բնակիչներին դարձրին իրավագուրկ «ոսյա»՝ ձգտելով արմատախիչ անել ոչ միայն նրանց ազգային ինքնագիտակցությունը, այլև «բուլղարներ» անվանումը»<sup>38</sup>:

Բուլղարիայի պատմությանը նվիրված երկհատոր աշխատության հեղինակները գրել են. «Թուրքերի կողմից Բուլղարիայի գրավումը XIV դարի վերջին բուլղար ժողովրդին մատնեց հինգդարյա անհույս ստրկություն: Թուրքական սիրապետության ժամանակը Բուլղարիայի պատմության ամենածանր շրջանն է, իր կյանքի, իր լեզվի, իր ազգային մշակույթի համար ժողովրդի գաժան ու անհավասար պայքարի շրջան: Թուրքական նվաճողները, բուլղար ժողովրդին զրկելով անկախությունից, խախտեցին պատմական զարգացման նորմալ ընթացքը, կասեցրին Բուլղարիայի արտադրողական ուժերի զարգացումը: Թուրքական սիրապետության մի քանի դարից հետո բուլղար ժողովուրդը տնտեսապես և քաղաքականապես դարձավ Եվրոպայի ամենահեռամասց ժողովուրդներից մեկը»<sup>39</sup>:

Օսմանյան սուլթանների բարբարոսությունների մասին բուլղարներն չենք մոռցնում ստեղծվել է բավական հարուստ գրականություն: Հրապարակվել են ինչպես փաստաթղթերի ժողովածուներ, գիտական ուսումնասիրություններ, այնպես էլ ընդհանրացնող, ուրվագծային բնույթի բազմահատոր աշխատություններ:

36 Նույն տեղում, էջ 122:

37 Н. С. Державин. История Болгарии. Т. 2, М.—Л., 1946, с. 157.

38 А. А. Ровняков. В борьбе за свободу. Л.: Наука, 1980, с. 7.

39 История Болгарии. Т. I, М., 1954, с. 163.

Օսմանյան պետության ագրեսիվ քաղաքականության, ավազակային պատերազմների, զանգվածային կոստորածնելի ու այլևայլ բարբարոսությունների մասին կարևոր ու ճշգրիտ տեղեկություններ են հաղորդում իր ժամանակի շատ տարեգիրներ, ականատես գործիչներ և պատմիչներ:

Բուլղարիայի վանքերից մեկի կրոնավոր Իսային, որպես ականատես վկայել է, որ թուրքական զորքերը, 1371 թ. Մարիցայի հայտնի ճակատամարտից հետո, Հարավարևելյան Եվրոպայում բազմաթիվ քաղաքներ ու շրջաններ կողոպտեցին ու ավերեցին, բնակչության զգալի մասը սրի քաշվեց, շատերը գերեվարվեցին կամ մահացան համատաքսած քաղցից: Մի այլ հոգևորական գրում է, որ 1393 թ., երբ թուրքական հրոսակախմբերը գրավեցին Բուլղարիայի մայրաքաղաք Տրանովոն, տեղի ունեցան սարսափելի ջարդեր, քաղաքը ենթարկվեց ահավոր թալանի, հազարավոր մարդիկ գերի տարվեցին<sup>40</sup>:

Անօրինակ վալրագություններ կատարվեցին 1453 թ. մայիսի վերջերին: Երկար ժամանակ շկարզանալով կոտորել Կ. Պոլսի պաշտպանների համառ և հերոսական պիմադրությունը, որին մասնակցում էին նաև բազմաթիվ հայեր, սուլթան Մեհմեդ II խոստացավ իր զորքերին Կ. Պոլիսը գրավելու դեպքում նրանց թույլատրել երեք օր ու երեք գիշեր ազատ ու անկաշկանդ կողոպտել այդ հարուստ, շքեղ քաղաքը և գերեվարել նրա բնակիչներին, ինչքան կարողանան և ինչպես ցանկանան: XV դարի պատմագիր, աթենացի Լաոնիկ Հալիկոնդիլը հաղորդում է, որ վճռական գրոհի նախօրեին դիմելով ենիշեղիներին սուլթանը ասել է, թե գնացեք նոր գրոհի, հաջողության դեպքում «դուք կունենաք ստրուկներ, որոնց համար ձեզ շատ կվճարեն, դուք կունենաք և՛ կանայք, և՛ երեխաներ, և՛ այդ քաղաքի մեծ հարստությունը»<sup>41</sup>: Խոստումը կատարվեց:

Կ. Պոլսի հերոսական պաշտպանության մասնակից, ողբերգական այդ դեպքերի ակտնատես, XV դարի հայտնի բյուզանդական պարեգիր, պատմաբան Գեորգի Սֆրանձեսը իր «Մեծ խրոնիկա» գրքում պատմում է, որ թուրքական զորքերը, մայիսի 29-ին ներխուժելով քաղաք, անմիջապես սկսեցին կոստորածն ու թալանը, բնդ որում «մի շարք տեղերում դիակների թիվը այնքան շատ էր, որ հողը բոլորովին շէր երևում,

40 Տե՛ս Ի. Ս. Դոստյանի հոդվածը «Византийский Временник» ժողովածուի VII հատորում:

41 Византийский Временник, т. VII, с. 440.

և կարելի էր տեսնել անսովոր տեսարան. լաց ու հեկեկանք, բազմաթիվ աչքավական ու աղնվատոճմ կանանց, աղջիկների և աստծուն նվիրված միանձնուհիների գերեզմարում, որոնց, չնայած նրանց աղադականներին, անողորմաբար հյուսներից քաշելով դուրս էին բերում եկեղեցիներից. երեխաների լաց ու կոծ, սրբաթյունների և սուրբ տաճարների կողոպուտ...»<sup>43</sup>:

Հռչակավոր Ս. Սոփիա եկեղեցին բարբարոսաբար թալանելուց հետո, շարունակում է տարեգիրը, այնտեղ «թուրքերը ուտում, խմում էին և իրականացնում իրենց անառակ ցանկություններն ու սուփանքը կանանց, աղջիկների և անշափաստ տղաների նկատմամբ: Ամենուրեք կատարվում էր շարագործություն: Բնակարաններում լաց ու տրտունջ, ամենուրեք ողբ, եկեղեցիներում արցունքներ, ամեն տեղ տղամարդկանց հառաչանք և կանանց հեծեծանք. թուրքերը հափշտակում էին մարդկանց և նրանց դարձնում ստրուկներ... Հրապարակներում, փողոցներում և այլ վայրերում տեղի ունեցան ամեն տեսակի վայրագություններ: Ոչ մի տեղ չմնաց շխուզարկված և շթալանված... Որպեսզի փսնեն իրաքցված դրամները սրբապիղծները սակնուվրա արին ողջ այգիներն ու տները»<sup>43</sup>:

Այս դեպքերի մի այլ ժամանակակից, հույն հայտնի պատմաբան Բուկան իր «Բյուզանդիայի պատմությունը» գրքում նույնպես պատմում է 4. Պոլսի գրավման ու ավերման մասին: Ներխուժելով 4. Պոլիս, գրել է նա, «թուրքերը, վազվզելով բոլոր կողմերը, սպանելով և գերի վերցնելով, վերջապես հասան տաճարին և տեսնելով որ դարպասները փակ են, ժամանակ չկորցնելով կացիններով ջարդեցին նրա դռները: Նրք նրանք սրելով զինված ներս խուժեցին և անհամար բազմություն տեսան, սկսեցին գերիներ հավաքակել... Ո՞վ կպատմի այնտեղ պատանակածը, ո՞վ կպատմի երեխաների լաց ու կոծի մասին, մայրերի ողբի ու սուգունքների մասին»<sup>44</sup>:

Աղբյուրները հաղորդում են, որ թալանի ու գերիների մեծ բաժինը վերցնում էր ինքը սուլթան Մեհմեդ II: Բացի դրանից իր հարեմի համար սուլթանը գերիներից «ընտրում էր գեղեցիկ աղջիկներ ու տղաներ»: Սակայն ավելի բնորոշ փաստ: Մի խրախուժանքի ժամանակ, գրել է Դուկան, հարբած սուլթանը հրամայում է իր մոտ բերել Բյուզանդական կայսրության առաջին միլիոնարը (աղմիրալ) Լուկա Նոտարայի փոք-

րիկ զորոն, «որովհետև 14 տարեկան այդ տղան գեղեցիկ էր»: Տղայի հայրը բնականաբար փորձում է թույլ շտալ, որ սուլթանը պղծի իր որդուն: Հաջորդ օրը այդ հույն իշխանապետը և նրա երկու որդին զխատվում են<sup>45</sup>: Այսպիսով 4. Պոլիսը գրավող ու ավերող Մուհամմեդ II, հակառակ նրա մասին հորինված գովասանական հեքիաթների, ոչ միայն խելոտ, դաժան, այլև ապականված, այլասերված մարդ էր:

Օսմանյան բարբարոսությունների մասին հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում XV դարի սերբ տարեգիր Կոնստանտին Միխայլուչիչը, որը երիտասարդ հասակում գերվելով թուրքերի կողմից, ստիպված է եղել մասնակցել սուլթան Մեհմեդ II մի շարք արշավանքներին: «Թուրքերը [սուլթանները] երբեք չեն գտնվում հանգիստ վիճակում, միշտ պատերազմներ են վարում բազմաթիվ երկրների հետ և եթե հաջողություն են կիցում, միայն այն դեպքում, երբ դա իրենց ձեռնառու է եղել... Նրանք այլ երկրներում միայն շարիք են գործում: Հափշտակում են մարդկանց, գերեզմարում, իսկ ովքեր անկարող են քայլել, սպանում են»<sup>46</sup>:

Միխայլուչիչի տարեգրության մեջ սուլթան Մուհամմեդ II մասին ասված է. «Նա շատ խորամանկ էր և ում որ կարող էր խաբում էր խաղաղություն առաջարկելով: Նա հաղվագյուտ զեպքում էր իր խոսքի տերը լինում և երբ որևէ մեկը դրա համար նրան մեղադրում էր, ապա խեղազգայի նման հարձակվում էր նրա վրա»: Տարեգիրը նշել է նաև, թե այդ սուլթանը ինչ ջարդեր ու կողոպուտ կազմակերպեց 4. Պոլիսը 1453 թ. մայիսին գրավելու օրերին: Երբ օսմանյան զորքերը ներխուժեցին քաղաք, տեղի ունեցան համընդհանուր կոտորած ու կողոպուտ. «տղամարդկանց ոչնչացրին, իսկ կանանց ու երեխաներին գերեզմարեցին»<sup>47</sup>:

1458 թ., Պելոպոննեսը օսմանյան զորքերի կողմից գրավելու ժամանակ, 4. Միխայլուչիչը նորից գտնվում էր օսմանյան բանակում: Որպես ակամատես նա գրել է, որ սուլթան Մուհամմեդ II «անձամբ սպանում էր մարդկանց, ջարդում էր նրանց ոսկորները և կատարում այլ գազանություններ»<sup>48</sup>:

4. Պոլիսի անկումից ընդամենը երկու տարի հետո՝ 1455 թ. սերբական Նովո Բրզո քաղաքն առանց դիմադրության հանձնվեց թուրքերին,

<sup>45</sup> Նույն տեղում, էջ 406—407:

<sup>46</sup> Записки инычара. Написаны Константином Михайловичем из Остравицы. Введение, перевод и комментарии А. И. Рогова. М., 1978, с. 114.

<sup>47</sup> Նույն տեղում, էջ 72:

<sup>48</sup> Նույն տեղում, էջ 81:

<sup>42</sup> Նույն տեղում, էջ 428—429:

<sup>43</sup> Նույն տեղում, էջ 429:

<sup>44</sup> Նույն տեղում, էջ 402:

բայց շնայած դրան սուլթան Մեհմեդի հրամանով քաղաքի հազարավոր տղամարդիկ ոչնչացվեցին, իսկ 320 պատանիներ և 700 կանայք որպես գերիներ հանձնվեցին բռնակարի մերձավորներին<sup>49</sup>:

Սուլթանական զորքերը 1461 թ. գրավեցին Տրապիզոնը: Հավատարիմ իրենց սուլթորոթյանը, զավթիչները դաժան դատաստան տեսան քաղաքի բնակչության հետ, շատերը գերեզմարվեցին, կոտորվեցին կամ արտոգրվեցին Ստամբուլ: Սուլթանի հատուկ զորամասի համար բռնի կերպով հավաքեցին 1500 մանուկներ<sup>50</sup>: Տրապիզոնի կայսրության գահակալը և նրա ընտանիքի անդամները, Մուհամմեդի հրամանով, նենգաբար սպանվեցին:

Բյուզանդական պետության կործանումը շատ երկրներում բնկալվեց որպես մեծ դժբախտություն: Կ. Պոլսի ավերումը, այնտեղ կատարված բարբարոսությունները ծանր ապավորություն թողեցին ժամանակակիցների վրա: Կրվեցին բանաստեղծություններ, պոեմներ, օբազդեր և այլն, որոնցում դառնորեն ողբացին փառաբանված պետության անկումը: Հանդես եկան ողբասացներ շատ երկրներում և մասնավորապես սլավոնական երկրներում, Բալկաններում, Հայաստանում՝ հայերի մեջ:

Կատարված անցքերին հալ հեղինակներից անդրադարձան տաղերգուներ Աբրահամ Անկյուրացին, Առաքել Բաղիշեցին և ուրիշները: Անկյուրացին 392-տողանոց բանաստեղծության մեջ, օրինակ, գրել է, որ շար սուլթան Մեհմեդի արյան ծարավի զինվորները, երբ ներխուժեցին Կ. Պոլիս, ապա՝

Չամենեսան կոտորեցին  
Այլ և ըզայրս և ըզկանաչս  
Ի գերութիւն իսկ վարեցին:  
Եւ զնորահարս տըղայս նոցին  
Ի մօր գրըկացրն խլէին,  
Առեալ գթարի հարկանէին,  
Չձերացրն սրով խողխողէին:  
.....  
.....

Չթագաւորաց ըզգերեզմանցրն,  
Որ ի մարմար տապանս կային,  
Բացեալ զնոսա կողոպտեցին,  
Չոսկերս ամենքն փըշրեցին<sup>51</sup>:

Կ. Պոլսում կատարված վայրագությունների մասին անդլիացի պատմաբան Ստիվեն Ռանսիմենը 1969 թ. հրատարակեց հատուկ աշխատություն՝ «Կոստանդնուպոլսի անկումը 1453 թ.» խորագրով, որ սրբաբան է բազմաթիվ աղբյուրների և հայրուստ գրականության հիման վրա: Հեղինակը գրում է, որ երբ թուրքական զորքերը ներխուժեցին քաղաք, «բոլորը անմիջապես նետվեցին ավարի համար վայրենի որսի: Մկրտում դեռես չհավատարկով, որ դիմադրությունն արդեն դադարել է, նրանք սպանում էին բոլորին, ում հանդիպում էին փողոցներում՝ տղամայրչկանց, կանանց, երեխաներին: Առյան կեղեղներ էին հոսում Կոստանդնուպոլսի զառիվայր փողոցներով: Սակայն շուտով սպանելու ծարայը հալեցվեց, և զինվորները զբաղվեցին ավելի շահավետ գործով՝ մարդկանց դերձելով ու իրերի բռնագրավումով... քաղաքի կողոպտար շարունակվեց ամբողջ օրը: Թուրքերը խուժում էին տղամարդկանց և կանանց վանքերը և կապկպում էին այնտեղ ապրողներին: Մի քանի երթուսասարգ կրոնավորներ նետվեցին ջրհորները: Քաղաքի բնակիչների բոլոր աները ենթարկվեցին թալանի: Մարդկանց իրենց ունեցվածքով էին տանում: Ով ուժասպառ ընկնում էր, անմիջապես սպանում էին: Ահրապես էին վարվում նաև շատ մանուկների հետ, որոնց համար ոչինչ չէին կարող ստանալ»<sup>52</sup>:

Ուշագրություն արժանի է հետևյալ հանգամանքը: Ինչպես պատմադիտության հին աղբյուրներում, այնպես էլ ավելի ուշ դարերի արևելապիտանական ու թուրքագիտական գրականության մեջ բազմիցս նշված է, որ Կ. Պոլիսը գրավող սուլթան Մեհմեդ II իր դահակալության ընթացքում՝ 1451—1481 թթ., վարել է համընդհանուր բազմաթիվ պատերազմներ, նվաճել է շատ երկրներ. աչքի է ընկել իր անօրինակ դաժանությամբ, եղել է, ինչպես տեսանք, անբարոյական ու անառակ մարդ: Նա ավելի ուժեղացրեց ճնշումներն ու կեղեքումները նվաճված երկր-

51 Հ. Ո. Ա. Կոստան. Հայկական աղբյուրները Բյուզանդիայի անկման մասին. Երևան, 1957 թ.: Անկյուրացու և Բաղիշեցու բանաստեղծությունների ոտներն թարգմանությունները, որ կատարել է Սեն Արեշատյանը, տպագրվել են «Византийский Временник» ժողովածուի VII հատորում:

52 С. Рансимен. Падение Константинополя в 1453 году. М., 1983, с. 131-133 (Steven Runcimen. The Fall of Constantinople in 1453. Cambridge, 1969).

49 Византийский Временник, т. VII, с. 39.

50 Նույն տեղում, էջ 118:

ներում<sup>53</sup>: Բայց շնայած դրան քիչ փորձեր չեն կատարվել փառաբանելու այդ սանձարձակ բանակարին: Բնորոշ է, օրինակ, որ նրան հաճախ կոչել են Մեծ նվաճող, Անհաղթ ու հերոս Փաղիշահ:

Օսմանյան Թուրքիայի XIV—XV դարերի պատմության վերաբերյալ կարևոր տեղեկություններ են հաղորդում XIX դարի եվրոպական մի շարք թուրքագետ պատմաբաններ, մասնավորապես, ավստրիացի գիտնական ու դիվանագետ Ջ. Համմերը: Նրա բազմահատոր աշխատության մեջ հանգամանորեն լուսարանված են այն ահավոր բարբարոսությունները, որ կատարել են թուրք սուլթանները դարերի ընթացքում: Ահա մի փոքր մասն այն բազմաթիվ փաստերից, որոնք բերված են նրա աշխատության միայն առաջին հատորում: 1396 թ. Նիկոպոլիս քաղաքում սուլթան Բայազիդի հրամանով դաժանորեն սպանվեցին 10000 քրիստոնյա զորիներ: 1453 թ. սուլթան Մուհամմեդ II, գրավելով Կ. Պոլիսը, կատարեց անօրինակ զազանություններ: Նույն սուլթանը 1458 թ. թալանեց ու ավերեց Պելոպոնեսը, կազմակերպեց ջարդեր, գերեվարեց հազարավոր մարդկանց: 1459 թ. թուրքական զորքերը, ներխուժելով Սերբիա, թալանեցին ու ավերեցին բազմաթիվ ամրոցներ, բնակավայրեր և գերեվարեցին 100000 մարդ: 1492—1493 թթ. Ավստրիայում կատարվեցին սոսկալի վայրագություններ: Թուրք հաննիբալները երեխաներին սպանել են, նրանց զուխները խփելով պատերին: Աղջիկներին մայրերի ու տղամարդկանց աչքի առաջ բռնաբարել են և հետո սպանել, կտրված գլուխները բարձրացրել են ցցերի վրա և այլն<sup>54</sup>:

### III

Օսմանյան սուլթաններն իրենց «քաղաքակրթական միսիան» շարունակեցին իրադրծել նաև XVI—XVIII դարերում: Արդեն XVI դարի սկզբին նրանք «ազատություն և արդարություն» բերեցին վրաց ժողովրդին: Ահա ինչ են գրել այդ մասին վրացի պատմաբանները. «1510 թ. թուրքական մեծ բանակը ներխուժեց Արևմտյան Վրաստան... Օսմանյանները ավերեցին քաղաքները, քանդեցին գյուղերը, թալանեցին ու հրդեհեցին եկեղեցիները»: Վրացի բնակիչները դիմեցին մասսայական

<sup>53</sup> Բարբրդի գավառի վանքերից մեկում 1460-ական թթ. գրված մի հիշատակարանում նշված է, թե ինչպիսի ծանր վիճակում էին գտնվում քրիստոնյաները սուլթան Մուհամմեդ II օրոք: Ժամանակագիրը ընդգծում էր մասնավորապես հայ ժողովրդի քաղաքի վիճակը (տե՛ս Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր № 6273):

<sup>54</sup> Joseph von Hammer-Purgstall, Geschichte des Osmanischen Reiches, 1. Band, Pest, 1840.

փախուստի: «Խարաջի բռնագանձումը, բարբարոսական ձևեր ընդունած օսմանյան կոռ ու բեգարը ծանր հետևանքների հասցրին: Անշեղորեն ավելանում էր գյուղացիների կողմից լքված գյուղերի թիվը: XVI դարի վերջում Սամցխե-Սաաթաբազում արդեն կային 296 լքյալ գյուղեր, յակ մնացյալ 344 գյուղերում հաշվվում էր 1-ից մինչև 11 ծուխ յուրաքանչյուրում»<sup>55</sup>:

Թուրք հայտնի պատմիչ Իբրահիմ Փեչևին, խոսելով օսմանյան բանակի 1553 թ. հաղթանակների մասին Հայաստանում և Իրանում, հպարտաբար արձանագրում էր, որ երբ սուլթանական զորքերը մտան Շուրազյալ (Շիրակ), «ամբողջությամբ ավերեցին ու հողին հավասարեցրին գավառի գյուղերը և բոլոր շինությունները»: Նույնը կատարվեց նաև Երևանում՝ բոլոր կառույցները, պարտեզներն ու այգիները հրդեհվեցին: 27-րդ օրը զորքերը հասան Նախիջևանի դաշտը: «Հաղթական բանակի» սարսափից քաղաքներն ու գյուղերը, տներն ու բնակավայրերն ամառացի և բուերի ու ագոավների բնակավայր էին դարձել: «Որսի ու ավարի ծարավ «աթ-օղանները» և այլ զինվորները հարձակվեցին շահի և նրա որդու պալատների, բնակավայրերի վրա՝ կողոպտեցին թաքցրած հարստությունները, ավերեցին, քանդեցին, քարը քարի վրա շրթոցեցին: Բացի այդ 4—5 օրվա տարածության վրա գանվող ճանապարհի բոլոր գյուղերն ու ավանները, դաշտերն ու շինությունները այն աստիճան քանդեցին ու ավերեցին, որ շինության ու կենդանության հետքն անգամ չմնաց»<sup>56</sup>:

1579 թ. թուրքական զորքերը, ներխուժելով Հայաստան ու Վրաստան, ասված է մի հիշատակարանում, «հիմնահատակ ավերեցին շատ եկեղեցիներ ու վանքեր, կոտորեցին շատ քրիստոնյաների՝ վարդապետների ու եպիսկոպոսների, հազարավանների ու ժողովրդի, տանջահարարին շատերին և դերի տարան անթիվ-անհամար մարդկանց: Նախիջևան քաղաքից և ուրիշ շրջաններից գերի տարան ավելի քան 40000 մարդ»<sup>57</sup>:

<sup>55</sup> Н. А. Бердзенишвили, В. Д. Дондуа и др. История Грузии. Т. I, Тбилиси, 1962, с. 292.

<sup>56</sup> Քուրթական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Ա, կազմեց Ա. Խ. Սաֆրաստյան, Երևան, 1961, էջ 34:

<sup>57</sup> Ученые записки Института востоковедения, т. 3, М., 1951, с. III. Հետաքրքիր է, որ աղբյուրների պատմաբան Ա. Ռահմանին գրել է, որ XVI—XVII դդ. օսմանյանները, ներխուժելով Անդրկովկաս, գերեվարում էին ոչ միայն հայերին ու վրացիներին, այլև մուսուլմաններին և նրանց վաճառում Կաֆայի, Սաաբրուլի և Եգիպտոսի ստրկավաճառման շուկաներում (А. А. Рахмани, Азербайджан в конце XVI и начале XVII вв. Баку, 1981, с. 49).

XVI դարի մի հայ տարեգիր, պատմելով 1581 թ. Անդրկովկաս ներխուժած թուրքական զորքերի գազանությունների մասին, գրել է. «Թուրք զինվորները «զրազում քաղաքս, գրեզս և զգաւառս ավերեալ քանդեցին, զարսն սրով սպանին, և զկանայն և զաղայն գեթի մարեցին: Եւ այնչափ անողոք բան արարին, զի զաղայն որովայնով հալան և ընկեցին ի վառեալ թո՛իրն ի մէջ կրակին»<sup>58</sup>:

Օսմանյան կայսրության մեջ XVII դարում կատարվող կեղծքումների ու ճնշումների մասին աճաթե ինչ է պատմում երկար տառիկներ թուրքիայում ապրած ֆրանսիացի նշանավոր ճանապարհորդ Միշել Ծեբուրը. «Նահանգներում փաշաները դարձել են փոքր թագավորներ... Իշխում են հպատակներին ինչպես ունեցվածքի, այնպես էլ, մասնավորապես, կյանքի վրա, որոնց, երբեմն զայրույթի պահին առանց դատու դատաստանի մահվան են դատապարտում: Նրանք հազար և մի խօզմուխներ են կատարում... Նրանց զործակալները ավերում են գյուղերը, գողանում, կողոպտում ու ամալի են դարձնում այն բնակավայրերը, որտեղից որ անցնում են»<sup>59</sup>: Մի այլ կապակցությամբ Ծեբուրը գրել է. «Սուլթանը ավերում է կայսրության սահմաններում գտնվող նվաճված նահանգները և նրա բնակիչներին թողնում այնպիսի վիճակում, որ նրանք հնարավորություն չունենան ապստամբելու: Պա արվում է բնակչության մի մասը տեղափոխելով մի շրջանից մյուսը, իսկ մնացած խեղճերին թողնելով կատաղած փաշայի տիրապետության տակ, որը վերջնականապես կողոպտում է գյուղի, գավառի բնակիչներին»<sup>60</sup>:

XVII դարի թուրք պատմագիր և աշխարհագիր Քյաթիբ Չելեբին, նկարագրելով Քավրեղի գրավումը օսմանյան զորքերի կողմից, հարգողում է, որ սուլթան Մուրադ IV հրամանով նրա զինվորները «լանդեցին ու ավերեցին Իրանի շահի պալատը: Շուկան ամրոցովի՛ն կռուկի մատնեցին, բառեղեն տներ և գեղեցիկ շինությունները փառամանդ առեցին: Այնուհետև սկսեցին ծառեր կտրատել»:

Արձանագրելով նման բազմաթիվ փաստեր, թուրք պաշտոնական տարեգիր-պատմիչը չի դատապարտում այդ բարբարոսությունների հեղինակներին: Ո՛չ: Նա այդ բոլորը համարում է սխրագործություններ, որոնք պատիվ են բերում սուլթաններին: Նկատենք նաև, որ նույն հե-

ղինակը, հիշատակելով մեկ դար առաջ թուրքական զորքերի տարած «փաշուն» հաղթանակների մասին, ամենայն զոհունակությամբ և պարծենկոտությամբ գրել է. «Իսլամական [օսմանյան] զինվորները թշնամա անհամար քաղաքները հողին հավասարեցրին և բազմաթիվ ժողովուրդներին իրենց ենթարկեցին»<sup>61</sup>:

Պատմիչ ու աշխարհագետ էվլիա Չելեբին, խոսելով օսմանյան բանակի՝ դեպի Վրաստան 1647 թ. կատարած արշավանքի մասին, բավականությամբ նշել է, թե ինչպես տեղի ունեցան մասսայական կոտորածներ, գերեվարություն և կոլոպուտ: «Մեր բանակը, — որախոսությամբ արձանագրում էր նա, — ծայրաստիճան հարստացավ գերիներով և ավարով... Ավարը տարան Տրապիզոն և վաճառեցին օգուտով»<sup>62</sup>: Ի դեպ, ինքը Չելեբին ևս, որ մասնակցում էր այդ արշավանքին, ստացավ «նվեթներ», որոնց թվում ստրուկ և ստրկուհի:

Օսմանյան իշխանությունների ավերիչ ասպատակությունների վերաբերյալ կարևոր տեղեկություններ է հաղորդում նաև XVII դարի հայ անվանի մատենագիր ու բանաստեղծ, Կ. Պոլսի մշտական բնակիչ Նրեմհա Քեմուրճյանը (1637—1695 թթ.): Լայնորեն օգտագործելով թուրքական աղբյուրները, լինելով կատարվող մի շարք իրագործությունների ականատես, նա իր արձակ և շափածո գրվածքներում պատկերում է այն վայրագությունները, որոնք իրագործեցին թուրք սուլթանները Հունաստանում, Ուկրաինայում, Հայաստանում և այլուր: Այսպես, օրինակ, նա գրել է, որ 1674 թ., երբ թուրքական զորքերը ներխուժեցին Ուկրաինա, կատարվեցին սարսափելի ավերածություններ. «զբազում գավառքս» ավերեցին, «կոտորեցին և վարեցին, ի զուրիշ մի գեթի՛ր ծախեալ»<sup>63</sup>:

XVII դարի նշանավոր կրոնական գործիչ, Պավլով-Աֆոնյան վանքի վանահայր Իսային, ժամանելով Մոսկվա պատմել է, որ թուրքական զորամասերը Հունաստանում, Սևրեիայում և Բուլղարիայում առանց սրևէ առիթի սրի քաշեցին 300000 ուղղափառ քրիստոնյա և անթիվ երիտասարդների ու կանանց զերի վերցնելով նրանց ուղարկեցին Անատոլիա, Ասիա, Եգիպտոս: Ուղղափառների քաղաքները, վանքերը և եկեղեցիները հրդեհեցին ու ավերեցին:

Մի սերը տարեգիր արձանագրել է, որ 1690 թ. թուրքական զորքերը Սևրեիայում, Մակեդոնիայում և Բուլղարիայում կատարեցին նոր

58 Մաշտոցի անվ. Մատենագրան, ձեռ. № 6273, էջ 285ա:

59 Մ. Չելեբյան. Հայոց պատմության խեղաթյուրումը արդի թուրք պատմագրության մեջ..., էջ 124:

60 Նույն տեղում, էջ 126:

61 Թուրքական աղբյուրները Հայաստանի և հայերի մասին..., հ. Ա, էջ 79:

62 Նույն տեղում, էջ 130—131:

63 Երեմիա Քեմուրճյան. Պատմություն համառոտ Կճ տարվոյ օսմանցոյ իրագորացն. Աշխատասիրությամբ Ժ. Մ. Ավետիսյանի, Երևան, 1982, էջ 49:

բարբարոսություններ: «Այդ երկրները ասպատակվեցին, եկեղեցիները և վանքերը բոլորովին կողոպտվեցին ու ավերվեցին, տղամարդկանց օրի քաղցեցին, կանանց և երիտասարդներին գերեվարեցին»<sup>64</sup>:

Օսմանյան կայսրության մեջ տիրող ծանր վիճակի մասին գրել են անգամ այն թուրք պատմագիր-տարեգիրները, որոնք կապված են և շեղ սուլթանական արքունիքի հետ: Այսպես օրինակ՝ XVII դարի տարեգիր Քուչի Բելը իր ապրած ժամանակաշրջանի մասին ստիպված է եղել արձանագրել, որ «...աղքատ ուսյաների նկատմամբ ներկայումս կիրառվող ճշտումներն ու բռնությունները տեղի չեն ունեցել ոչ մի ժամանակ և ոչ մի վայրում»: Խոսելով ծանր հարկերի և ժողովրդի նկատմամբ կիրառվող բռնությունների մասին, նա բացականչում է. «Ռայաները ինչպե՞ս կարող են տանել այս բռնությունները: Երկրի ժողովուրդը ինչպե՞ս կարող է ապրել այս պայմաններում»<sup>65</sup>:

Թուրք հայտնի պատմաբան և բարձրաստիճան պաշտոնյա Ահմեդ-Ջեվդեթ փաշայի տրամադրության տակ եղել են սուլթանական արքունիքի արխիվներից շատ նյութեր և բազմաթիվ պաշտոնական փաստաթղթեր: Խոսելով Թուրքիայի ներքին գրության մասին XVIII դարում և նախորդ շրջաններում նա գրել է. «...երկար ժամանակ բռնություններն ու անիրավությունները անցել էին ամեն մի սահման, ուսյաները Օսմանյան կայսրության մեջ ենթարկվելով մեծ թշվառության թողել էին իրենց երկիրն ու հայրենիքը և ցիրուցան եղել: Գրա հետեւանքով երկիրն ավերվել՝ ազոավների ու բուերի բնի էր վերածվել... Երկրի այս աստիճան ավերվածության պատճառը միայն պատերազմները չէ՛ն»: Կարևոր պատճառներից մեկն էլ այն էր, ավելացնում է հեղինակը, որ աղքատների վրա դրվում էին շատ ծանր հարկեր և դրանք գանձվում էին ամենայն բռնությամբ ու դաժանությամբ<sup>66</sup>:

Հետաքրքիր տեղեկություններ է պարունակում հայ նշանավոր պատմագիր Աբրահամ Երևանցու այն աշխատությունը, որը նվիրված է 1721—1736 թթ. թուրք-պարսկական պատերազմներին: Այսպես, Երևանցու գրությունը գրում է, որ թուրքական բանակը 1724 թ. Երևանում «այնչափ յարուն թաքեց որ Զանգու ջուրն կամրայծառեց, յարունայ հոտն ի մէջ քաղաքէն կը բուրէ, ողորմելի բըրիտոնէքն բովանդակ զսուրն քաղցիին, ոչ մնաց բըրիտոնայ. անմեղ արգարներըն գերի վարեցին, կուս

աղչիրունն ջրում խեղդեցաւ, ալսաբ գերի գնաց ի ձեռն օսմանցու Գերիքն լեցվեց օսմանցու շատիրներն: Եղավ պղծութիւն, անօրինութիւն...»<sup>67</sup>:

Թուրք պատմիչ Չելեբի Զադե էֆենդին, նկարագրելով Գյանջայի (Գանձակի) գրավումը օսմանյան զորքերի կողմից 1725 թ., նույնպես հպարտությամբ նշել է. «Իսլամական բանակի փառապանծ դրոշակը ծածանվեց քաղաքում, առլուծանման ղազինները անհավատ ռաֆիկներին արջուկով քաղաքի փողոցներն ու շուկաները ներկեցին և Շարիաթի սրբալիցա անհավատների թափված արյունը Զիհան գետի նման հոսեցրին»<sup>68</sup>:

1720-ական թթ., երբ թուրքական զորքերը ներխուժեցին Անդրկովկաս, երկրի բնակչության համար ստեղծվեց կատաստրոֆիկ վիճակ: Այդ մասին աղբյուրներից պատմաբանները գրել են. «1725 թ. սուլթանական բանակին մեծ կորուսաների գնով և տեղական թուրքոֆիլ տարրերի օգնությամբ հաջողվեց ղրավել Աղբբեջանի տերիտորիայի զգալի մասը... նվաճված հողերում քուրճակառ ֆեոդալները հաստատեցին անտանելի ծանր ռեժիմ: Աշխատավոր բնակչության վրեժով դարձավ աղետալի... նվաճողները առանձնապես անհանդուրժողակեություն ցուցաբերեցին քրիստոնյա բնակչության նկատմամբ, ենթակելով նրան ամեն տեսակի հալածանքների ու ստորացումների: Շիրվանում և Շեքիում թուրքական իշխանությունները բրիտանյաներին հրամայել էին կրծքի վրա կրել գեղի տարրերակիչ նշան: Շեքիի քրիստոնյաները ուսական ցարին ուղղած նամակում հայտնում էին, որ նվաճողները այրեցին ձեռագրեր, գրքեր և եկեղեցիներ: «Բազմաթիվ մարդիկ, — գրում էին շեքիցիները, — իրենց հավատի համար կոտորվեցին սրերով»: Խաղաղ բնակիչներին ոչնչացումը, քաղաքների և գյուղերի կողոպուտն ու ավերումը, քրիստոնյաներին բռնությամբ իսլամացնելը առաջ բերեցին բնակչության խիստ զգո՞հությունը, աժեղացրեցին նրա պայքարը ընդդեմ նվաճողների»<sup>69</sup>:

Զեռնարկելով մեծ արշավանք գեպի Արևելյան Հայաստան ու Պարսկաստան՝ օսմանյան զորքերը 1721 թ. գրավեցին «բազում քաղաքս և դիւզս և յագարակս և քանդեալ կործանեցին ամուր ապարանք և գերի

64 И. С. Достян. Борьба сербского народа против турецкого ига... с. 78.

65 Թուրքական աղբյուրներ..., հ. Բ, էջ 230:

66 Նույն տեղում, հ. Ա, էջ 277:

67 Աբրահամ Երևանցի. Պատմութիւն պատերազմացն 1721—1736 թթ. Յապաղաբան, Բագեր, խմբագիր օրինակ և ծանոթութիւններ: Պատրաստեց Տ. Ս. Ճեմճեմյան. Վենետիկ, 1977, էջ 31: Երևանցու գիրքը ավելի վաղ լույս է տեսել ռուսերէն, տե՛ս Աբրահամ Երևանցի, История войны 1721—1736 гг. Ответ. редактор С. В. Тер-Аветисян, Ереван, 1939.

68 Эвлия Челеби. Книга путешествия. Вып. I, М., 1961, с. 10—11.

69 И. А. Гусейнов, З. И. Ибрагимов, А. Н. Гулиев и др. История Азербайджана. Т. I, Баку, 1958, с. 310—311.

վարեցաւ ազգս Հայոց մեծէ և մինչև ի փոքունս և եկեղեցիք և վանո-  
քայք, յանապատք մտեալ, բազում սրբութիւնս՝ գիրք և պատուական  
խաչեր և աւետարանք և այլ ամենայն բոսպոսք զարդուց սուրբ եկեղե-  
ցնաց և վանորէից աւար և գերի տարեալ և շատ վարդապետք և կար-  
գաւոր քահանայք, սարկաւազունք և աշխարհականք, որպէս ոչխարի  
գննեցին և ի սպանդ վարեցին...»<sup>70</sup>:

Քուրք սուլթանների նման գաղանությունների մասին հարուստ  
նյութ են պարունակում նաև XV դարի հայերեն ձեռագրերի հիշատա-  
կարանները<sup>71</sup>:

Օսմանյան կարգերի իսկական էութիւն մասին է խոսում այն հան-  
գամանքը ևս, որ պետութիւն հովանավորութեամբ երկրում ստեղծվել  
էին հատուկ շուկաներ (բազարներ), որ կատարվում էին գերի վերց-  
րած երեսանների, աղջիկների, կանանց ու տղամարդկանց առևտուր:  
Կ. Պոլսում (Սամբուլում) գործող այդպիսի մի շուկայի մասին գլխի  
Միմեն Լեհացին որպես ակնաւառն պատմում է. «զաղջկունս և զման-  
կունս, զտղայս և զաղվորերես կանայս տէլարնին առեալ ի ձեռս զնո-  
սա՝ շուր ածէին և ծախէին որպէս զծի և զչորի. ևս զայս ժողովեալ  
է տեղի ինչ կամ ի մօլտանի՝ իբրև զոչխարս ի փարախի: Իսկ զնօղքն  
եկեալ բանային զերեսս և զծոցս կոյս աղջկանց և զամենայն մար-  
մինս նոցա շօշափէին յոտաց մինչ ի գլուխ, զի մի քոս, խոց կամ այլ  
ինչ սպի կամ վէր ունիցին: Եւ նոքա լուռ և անմտունչ կային. ևս զորս  
հասէին՝ գնէին. և որոշեալ ի հօրէ, ի մօրէ կամ ի քերց և յեղբարց  
բաժանեալ առեալ տանէին ի տուն: Եւ ևս տեսեալ զայս ամենայն աղէտս  
ցաւագինս, զոր բնաւ չէի տեսեալ, ցաւաց գլուխ իմ, զողաց սիրտ իմ,  
խորովեցաւ անձն իմ և ամենայն ոսկերք իմ սասանեցան»<sup>72</sup>...

Ահա մի պերճախոս փաստ ևս օսմանյան պետութիւն «քաղաքա-  
կրթական միտեալի» մասին:

1731 թ. դարնանը օսմանյան սուլթանը Անդրկովկասում գտնվող իր  
դորահրամանատարին հասցեագրված ֆերմանում գրել է. «Գլանջայի  
երկրամասի հարկանութեամբ ապրող անիծյալ սղնախցի (ղարաբաղցի)  
հայերն արդեն մի քանի տարի է, որ դադարել են օրինական հարկ

վճարել և սկսել են համառել իրենց անհնազանդութիւն մեծ: Ուստի  
Շարխաթի օրենքների համաձայն անհրաժեշտ է ոչնչացնել նրանց իրենց  
արարքների համար»<sup>73</sup>: Սրան հետևում էր հրաման՝ իր զորամասով  
շարժվել «անհավասնների» դեմ: Ահա այսպես էին մտածում ու գործում  
«քաղաքակրթութիւն տարածող» սուլթանները:

XVIII դարի կեսերին Քուրքիա այցելած դերմանացի ճանապարհ-  
հորդ, թրքասիրական հակումներ ունեցող Մ. Օտտերի գրքում կարդում  
ենք. «Քուրքերը մի առած ունեն, որն ասում է, թե սրտեղից էլ անցնի  
օսմանին, այնտեղ բոլորովին խոս չի բուսնի... Զուրքերը ամալացնում  
են այն վայրերը, որտեղ որ էրանք գտնվում են՝ լինի դա կայսրութեան  
ներսում, թե դրսում: Այդ է պատճառը, որ իրենց տիրացած գեղեցիկ  
երկրամասերը մեծ մասամբ ոչ բնակեցված են և ոչ էլ հողերը մշակ-  
ված»<sup>74</sup>:

1760 թ. Արևմտյան Հայաստան այցելից հայ լուսավորական շարժ-  
ման ակնավոր ներկայացուցիչ Հովսեփ Էմիլը: Նա խորք վշտով ու  
գաշտութեամբ արձանագրել է այն հանգամանքը, որ հայերը ամենուրեք  
ենթակա են դաժան ճնշումների ու կեղեքումների, որ «դժպտուր» քրիս-  
տոնյաները ընդհանրապես գտնվում են ստրկական ու ճորտական վի-  
ճակում: Նա միաժամանակ նշել է նաև այն, որ տեղի հայ ազնու հո-  
գեբարկանները, հանդես բերելով զարմանալի ստրկամտութիւն, քա-  
րադրում են իրենց «հօտին» հնազանդ մնալ թուրք փաշաներին և հույք  
դէլ միայն Քրիստոսի կողմից սպասվող փրկութիւնն վրա<sup>75</sup>:

Նույն իմաստն էլիմ անապատում գրված մի ձեռագրի հիշատա-  
կարանում ասված է. «Ի դառն և ի նեղ ժամանակիս, որ լամենայն  
կողմանէ նեղիմք յանօրինաց հարկապահանջութենէ, ի սպանութենէ, ի  
ղերութենէ և յայլ անասելի և անպատմելի պատուհասէ, որ այս Է. (70)  
տարի է իբրև արեան ծովու նման կու ծփալ բովանդակ աշխարհս»<sup>76</sup>:

XVIII դարի 70-ական թվականների հայ ազատագրական շարժ-  
ման ակնավոր գործիչներից մեկը՝ Մովսես Բաղրամյանը մեծ ցավով  
գրում էր, որ Հայաստանը ավերվել ու անապատ է դարձել, ժողովուրդն  
անասելի ճնշումներից ու կոտորածներից խույս տալու համար փախել և  
պատսպարվել է լեռներում:

70 Մատենագարան, № 7534 ձեռագրի հիշատակարանը, մանր ժամանակագրու-  
թյուններ, 13—18 դդ. հատ. 2. կապմեց Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1956 թ., էջ 438:

71 ՏԼՆ մե գարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ 1401—1450. կապմեց  
Լ. Ա. Խաչիկյան, Երևան, մաս Ա, Բ, Գ, 1955—1967:

72 Միմեն գլխի Լեհացու Ուղեգրութիւն, տարեկրթիւն և իշխատակարանք  
Ռուսումասիրեց և հրատարակեց Է. Ներսէս Ակիմեան, Վիեննա, 1936, էջ 18—19:

73 Акты, собранные Кавказскою археографическою коммиссией. Т. 2, с.  
1093.

74 Մ. Չ ու լ ա լ յ ա ն. նշվ. աշխ., էջ 141:

75 Life and Adventures of Emin o'or Emin 1726—1809. Written by Him-  
s P. Second Edition. Calcutta 1918, p. 141—142.

76 Մատենագարան, ձեռագիր № 4982, էջ 349ա:

ո՛չ քաղաքք, ո՛չ շէնք, և ո՛չ դղեակք ամրոցաց  
մնացին՝ որք ոչ խորտակեալ քակտեցան.  
զի միանգամայն, թէ գիւղօրէք՝ թէ աւանք՝ և  
աղաքակք վեր ՚ի վայր կործանեցան...  
...որպէս երկիր անապատ՝ և անջրտի, այնպէս  
ամէն աշխարհս մեր կորզացեալ խոպանացաւ:  
Ձի առ ՚ի վեր շարաշշուկ աղմուկ շփոթին ո՛չ մարդ  
գտանախոր, և ո՛չ մշակ, որ գերկիրս գործէին.  
այլ համակ խորշիլ, և խոյս տալ ՚ի լլկողացն յայրս  
և ՚ի փափարս լերանց խուճապէին<sup>77</sup>:

Կանգ շառնելով մյուս ականատեսների նման բազմաթիվ վկայու-  
թյունների վրա, կարևոր ենք համարում նշել, որ նշանավոր թուրքա-  
գետ Ջ. Համմերը նույնպես արձանագրել է այն գազանությունները,  
որոնք տեղի ունեցան XVI—XVII դարերում Օսմանյան կայսրության  
մեջ: Այսպես, օրինակ, նա գրում է, որ Ավստրիայում 1532 թ. թուր-  
քական զորամասի հրամանատար Քյադիմբեգը դաժանորեն սպանում  
էր երեխաներին ու ծերերին, աղջիկներին ու տղաներին ձիերից կապած  
քարշ էր տալիս փողոցներով, այրում գլուղեր ու շուկաներ<sup>78</sup>: 1638 թ.  
սուլթան Մուրադի հրամանով Բաղդադում օսմանյան զորքերը կոտո-  
րեցին ավելի քան 30000 մարդ<sup>79</sup>:

Համմերը հատկապես մեծ զայրույթով է խոսել Օսմանյան կայս-  
րությունում կատարվող մանկահավաքների մասին: Նա ահավոր ողբեր-  
գություն էր համարում այն, որ օսմանյան սուլթանները քրիստոնյա  
երեխաներին բռնի կերպով դարձնելով ֆանատիկոս մահմեդականներ և  
բնագրկելով ենիչերական բանակում՝ նրանց օգտագործում էին իրենց  
հարազատ ծնողների և ժողովրդի դեմ: Հայտնի է, թե ինչպիսի վայրա-  
գություններ են կատարել ենիչերիները ամբողջ կայսրության մեջ:

Օսմանյան պետության իսկական էություն մասին է խոսում նաև  
այն իրողությունը, որ հպատակ քրիստոնյաները թուրքական իշխանու-  
թյուններին հաճախ որպես հարկ պիտի տալին նաև երիտասարդ կա-  
նանց ու տղամարդկանց: Հայ ականավոր պատմաբան, ակադեմիկոս  
Աշոտ Հովհաննիսյանը, հենվելով բազմաթիվ ու բազմատեսակ փաստե-

քի վրա, ցույց է տվել, որ օսմանյան պետության մեջ «հարկերն ու  
տուրքերը վերցնում էին ոչ միայն պարենով, փողով կամ աշխատան-  
քով, այլև՝ մարդկանցով»<sup>80</sup>: Թուրքագետ Ա. Մաֆրաստյանը գրել է, որ  
սուլթանին հարկատու քրիստոնյաները Մինգրելիայում «այլ հարկերի  
հետ միասին, իբրև «հարկ», ամեն տարի պետք է սուլթանական ար-  
քունիք ուղարկեին որոշ թվով կուլս աղջիկներ ու զեղեցիկ պատա-  
նիկներ»<sup>81</sup>:

Մի շարք հեղինակներ, ցանկանալով դրական խոսք ասել օսման-  
յան պետության մասին, նշում են այն հանգամանքը, որ թուրք սուլ-  
թանները իրենց ենթակա երկրներում պահպանեցին քրիստոնյա բնա-  
կիչների համայնքները, հանդուրժեցին նրանց գոյությունը: Բայց, ինչ-  
պես արդեն քանիցս նկատված է պատմագիտական գրականության մեջ,  
այդ արվել է միայն և միայն մի նպատակով՝ ունենալ «մշտական կրան  
կով» և շփոթել մեծածավալ կեղեկումների ու քալանի հնարավորու-  
թյունից: Այդ հանգամանքը դեռևս XVII դարում նշել է Թուրքիա այ-  
ցեյած Ֆրանսիացի ճանապարհորդ Միշել Ֆեբուրը, գրելով այսպիսի  
տողեր. «օսմանյան սուլթանները «իրենց երկրում քրիստոնյաներին և  
հրեաներին հանդուրժում են այն պատճառով, որ նրանցից ավելի օգուտ  
են ստանում, քան իրենց կրոնակիցներից»<sup>82</sup>:

Հարկ է նկատել, որ XVI—XVIII դարերում օսմանյան պետության  
կողմից Հայաստանում և հարևան երկրներում անօրինակ բարբարոսու-  
թյունների մասին կարևոր տեղեկություններ են հաղորդում ոչ միայն  
հայերեն ձեռագրերի հիշատակարանները, այլև հայ շատ ժամանակա-  
գիրներ, տարեգիրներ ու պատմիչներ:

IV

Ինչպիսի՞ գործունեություն ծավալեց «բաղաբակիթ» օսմանյան  
պետությունը XIX դարում և XX դարի սկզբներին՝ իր գոյության վեր-  
ջին շրջանում: Համառոտ կերպով կանգ առնենք նաև այդ հարցի վրա:

Հայտնի է, որ Օսմանյան կայսրության քայքայումը և անկումը  
կանխելու, ինչպես նաև սուլթանական պետության երբեմնի հզորությու-  
նը վերականգնելու նպատակով Բ. Դուռը XIX դարի սկզբին և հաջորդ  
տասնամյակներին փորձեց իրականացնել մի շարք ռեֆորմներ, որոնք,

77 նոր տետրակ որ կոչի Յորդորակ, Մադրաս, 1772, էջ 18:  
78 Joseph von Hammer-Purgstall. Geschichte des Osmänischen  
Reiches, 2 Band, Pest, 184, S. 91.  
79 նույն տեղում, 3 Band, S. 185.

80 Ա շ ո տ շ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. Դրվագներ հայ ազատագրական մտքի պատ-  
մության, գիրք երկրորդ, Երևան, 1959, էջ 18—19:  
81 Թուրքական աղբյուրներ..., Եվլիա Չելեպի, Երևան, 1967, էջ 309:  
82 M. Febure. L'État présent de la Turquie. Paris, 1675, p. 217.

սակալն, հիմնականում վերաբերելով բանակին, պետական կառուցվածքին ու վարչական բնույթի հարցերին, շփոխեցին, շրջադարձեցին հպատակ ժողովուրդներին ու ազգությունների ծանր վիճակը: Սուլթանական բնագիտություն կեդեքումները, դաժան հարածանքներն ու էտերածները շարունակվեցին նոր թափով:

Փրանսիացի նշանավոր ճանապարհորդ Օլիվիեն, որ XIX դարի սկզբին այցելել էր Կրետե կղզի, գրում էր, որ այնտեղի «քրիստոնյաների հունձքը շարունակ հափշտակում է թուրք կառավարիչը, սեփականությունը գրավում է փաշան, մինչդեռ ենթերեքները մշտապես անարգում են ու ծեծում դագանակով... և այդ բոլորը տեսնելով ու ապրելով՝ հույն երկրագործները բնականաբար շունին հռանդ, ցանկություն դարկ տալու արդյունագործությունը, հողը մշակելուն, քանի որ արդյունքը պետք է անցնի իրենց ատելի տարրի ձեռքը... նրանց՝ քրիստոնյաների դաշտերը ավերվում են օրեցօր, ձիթենի փշանում է, խաղողը ոչնչանում»<sup>83</sup>:

Հունական ազատագրական շարժման պատմությանը նվիրված իր գրքում Գ. Արշը նշել է, որ XVIII դարի վերջին և XIX դարի սկզբներին Հունաստան ճամփորդած ականատեսները շեն պատկերացրել, թե որևէ այլ երկրում «կարող է գոյություն ունենալ այդքան վայրենի դեպատիզմ և այդքան դաժան ստրկություն»<sup>84</sup>:

1803 թ. ռուս հյուպատոսը Պելոպոննեսից գրել է, որ այնտեղի կառավարիչները զիշատիչ գայլեր են և նշանակվում են մեկ տարով, որպեսզի կողոպտեն խեղճ ուսուցիչն և բոլոր նրանց, ովքեր շեն կարող դիմադրել<sup>85</sup>:

Օսմանյան պետության բարբարոսական քաղաքականության մասին կարևոր տեղեկություններ է հաղորդել XIX դարի սկզբին Հունաստան, Եգիպտոս և Պաղեստին այցելած Ֆրանսիացի հայտնի գրող և քաղաքական գործիչ Շատոբրիանը, որի ճանապարհորդական նոթերը հատվածաբար հրատարակվեցին իր ժամանակ ինչպես ֆրանսիական մամուլում, այնպես էլ «Вестник Европы» նշանավոր ռուսական հանդեսում: Ահա մի քանի քաղվածք այդ պորբերականից: Խոսելով Հունաստանի մասին հուշագիրը ընդգծում է. «Ամենուրեք հրով ու արով

ավերված գյուղեր, քաղաքների ամայացած թաղամասեր: Տասնհինգ մղոն տարածության վրա մենք շտեսանք ոչ մի բնակավայր: Թալանը, այլևայլ բռնությունները ոչնչացրել են հողագործությունը: Ամենավերջին գյուղական աղան շատ հեշտությամբ կարող է դուրս քշել հույն բնակիչն իր սեփական խրճիթից, խլել նրա կնոջը, երեխային, սուսնել նրան... Անբախտ հույնը, կորցնելով համբերությունը, ստիպված թողնում է իր հայրենիքը և փորձում հանգստություն գտնել հարեան երկրներում: Բայց իզուր: Ամենուր նա հանդիպում է փաշաների և կազիների, ամենուրեք՝ և՛ Հորդանանի ավազուտներում, և՛ Պալմիրի անապատներում»<sup>86</sup>:

Եգիպտոսում տիրում է ահավոր շքավորություն: Զինված ավազակալին հրոսակախմբերը թալանում և ավերում են: «Այստեղ մենք տեսանք, թե ինչպես են ալբանացիները որսում [գերեվարում] երեխաներին: Նեղոսի ստորին հոսանքում՝ Խոզետայից մինչև Կահիրե ընկած շրջանի 150 գյուղեր ամբողջովին ավերված են: Զգալի տարածք գետաբերանում մնացել է անմշակ: Ֆելլահների (գյուղացիների) մեծ մասը դատապարտվել է մահվան»<sup>87</sup>:

Շատոբրիանը մոռալ գույներով է նկարագրում նաև Երուսաղեմի վիճակը: Թուրքական իշխանությունները վարում են սոցիալական կեղեքման և ազգային ճնշման դաժան քաղաքականություն: Երուսաղեմ քաղաքի տները, գրում է նա, այնքան խղճուկ և ողորմելի են, որ ակամայից հարց կա տալիս քեզ, թե «արդյո՞ք դրանք գերեզմաններ չեն անապատներում: Քաղաքում լուսնը է տիրում, ոչինչ չի լսվում, «только иногда отдается топот дикой кобылицы. Это яничар ведет голову бедуина или скачет грабить феллаха»<sup>88</sup>:

Մորեսի (Հունաստան) մի շարք բերդերում տեղավորված թուրքական կայազորների զինվորները, զեկուցում էր տեղի ռուսական հյուպատոսը 1815 թ., «թալանում ու սպանում են և ամեն ինչ մնում է անսպասիվ: Այստեղ գոյություն չունի ո՛չ իշխանություն, ո՛չ օրենք»<sup>89</sup>:

XIX դարի առաջին երկու տասնամյակներում ահավոր բարբարոսություններ կատարվեցին Սևրբիայում, Մոլդովայում ու Վալախիայում: Ազատագրական շարժումը արմատախիլ անելու նպատակով թուրքական սուլթանները թալանեցին և ավերեցին հարյուրավոր գյուղեր ու քաղաքներ, սրի քաշեցին կամ գերեվարեցին տասնյակ հազարավոր

83 Մ. վարանդյան. Հայկական շարժման նախապատմություն. 3. Ա., 1912, էջ 115:

84 Г. Арш. Этерическое движение в России. Освободительная борьба греческого народа в начале XIX в. и русско-греческие связи. М., 1970, с. 49.

85 Նույն տեղում, էջ 48:

86 «Вестник Европы», 1801, сентябрь, № 18, с. 82.

87 Նույն տեղում, էջ 85:

88 Նույն տեղում, էջ 87:

89 Г. Арш. Этерическое движение в России... с. 44.

մարդկանց<sup>90</sup>: Հանրահայտ է, թե ինչպիսի վայրագություններ տեղի ունեցան Հունաստանում, երբ հույն ժողովուրդը հերոսական ազատագրական պայքար էր մղում օսմանյան տիրապետության դեմ:

Ֆրանսիացի ճանապարհորդ Շառլ Գեվալը, որ 1825—1826 թթ. եղել է Կ. Պոլսում և Հունաստանում, ընդհանրացնելով իր տպավորությունները, գրել է, որ թուրքական պետությունը «իր բարեկեցությունը և հզորությունը հիմնում է սգիտության և բարբարոսության վրա, մարդկանց դարձնում է անասուններ, որպեսզի ունենա ստրուկներ»: Թուրքիան, շարունակում էր նա, մի երկիր է, ուր «գեսպտիզմը և գազանությունը վաղուց արդեն պայքարում են անկախության և լուսավորության դեմ»: «Երկու տարի թուրքիայում» վերնագրերը կրող իր հուշերում նա բերում է բազմաթիվ փաստեր այն մասին, թե ինչպիսի բարբարոսությունները թուրք սովորանքները ավերում են հունական քաղաքները, գյուղերը և կոտորում բնակչությունը<sup>91</sup>:

Գերմանացի գինվորական, հետազայում ճշանավոր զորավար Մոլալեն, որը 1835—1839 թթ. գտնվում էր Թուրքիայում, իր „Büchle aus der Türkei“ աշխատության մեջ պատկերել է երկրի քաղաքների կողպեղծումը ու ավերված վիճակը: «Թուրքական քաղաքները առհասարակ ամայության կերպարանք ունեն... Ավերումներ կատարել է ոչ այնքան ժամանակը, որքան մարդկային ձեռքը»<sup>92</sup> (հասկանալի է, որ «մարդկային ձեռք» ասելով հեղինակը նկատի ունի թուրքական իշխանություններին: Ավելացնել էր, որ նույն վիճակում էին գտնվում նաև գյուղերը):

Դարասկզբին Արևմտյան Հայաստան այցելած ֆրանսիացի գիվանդանապետ Ա. Ժոբերը գրել է. «Այս երկրում հոգազործը իդուր է սեքմեր ցանում: Հունձը խլում են դեռ շհասունացած: Ավազակների կատաղությունից և նահանգում իշխող փաշաների հարստահարությունից ազատվելու համար գյուղացին ստիպված է լքել դաշտերը, փախչել բնտանիքով և իր հոտերով: Այս դժբախտ երկրում գոյություն չունի ո՛չ հայրենիք, ո՛չ ապահովություն, ո՛չ հանգիստ»<sup>93</sup>:

<sup>90</sup> А. Петросян. Османская империя. Могущество и гибель. М., 1990, с. 178—179.

<sup>91</sup> Два года в Константинополе и Морее (1825—1826)... соч. III. Д. Пер. с франц., СПб., 1828.

<sup>92</sup> Քաղվածքն ըստ Մ. վարդանյանի «Հայկական շարժման նախապատմությունը» գրքի (հ. Ա, էջ 115):

<sup>93</sup> Հ ո վ հ. Հ ա կ ո Ր Յ ա ն. Ուղեգրություններ. հ. 2, Երևան, 1934, էջ 120:

Ռուս-թուրքական 1853—1856 թթ. պատերազմի մասնակից ռուս զինեղակալ Լիխտենբերգը պատմում է. «Ես տեսա մի քանի հայեր կտրված ականջներով ու քթերով, մի բան, որ արված էր ոչ թե դատարանով, այլ կամայականորեն և բռնությունով և այս կամ այն ազդեցիկ ու հարուստ գյուղացիների կամ տեղական դատարանի անդամի կողմից: Նրանք [հայերը] մշտապես գտնվում էին տազնապի մեջ, ունեին ահաբեկված տեսք»<sup>94</sup>:

Մշո գավառում տիրող իրադրությունը հայ նշանավոր ազգագրագետ Գ. Սրվանձտյանը 1864 թ. պատկերել է հետևյալ բառերով. «Արյան հոսում, ընչից ավար, ընտանյաց բռնաբարություն, եկեղեցուց կողոպտում, օրինաց եղծում, կենաց զրավում»<sup>95</sup>: Քղի գավառի հայ բնակչության զրույթյան մասին 1869 թ. գրված մի փաստաթղթում ասված է. «Աս ժողովուրդը բարոյապես ու ֆիզիկապես կորսվելու վրա է, իրենց կյանքն ալ, սուսցվածքն ալ վտանգի մեջ է ամեն օր. կը սպանվին, կը վերափոխվին, կը կողոպտվին, կը հարստահարվին»<sup>96</sup>:

Արևմտահայության կրած ճնշումների ու հալածանքների մասին կարևոր տեղեկություն է հայտնում ֆրանսիացի գինվորական Ֆրիդրիխ Միլինգենը, որը 1853—1864 թթ. ծառայել է թուրքական բանակում որպես գումարտակի հրամանատար, կրելով Օսման Սելիկի բեյ անունը: Նա մասնավորապես հետաքրքիր փաստեր է բերում այն մասին, թե ինչպիսի կամայականությունների են ենթարկվել հայերը Բ. Գոան Մեծ վեզիր Ֆուադ փաշայի կողմից<sup>97</sup>:

Ավելի ուշ՝ 1876 թ., էջմիածնի կաթողիկոս Գևորգ Զորրոզը ստացավ մե խնդրագիր, որը ստորագրված էր 4000 արևմտահայերի կողմից: Այնտեղ իմիջիայլուց ասված էր. «Զոր ու գիշեր տազնապի մեջ ենք. դառնորեն տառապում ենք զավառական պաշտոնյաների, հարկահանների, կառավարիչների և այլ բռնակալների ձեռքին, ընդհուպ միջոցն այն, որ նրանք անպատվում են մեր եկեղեցական հովիտներ, մեր կանանց համեստությունը, մեր ազնիկների պատիվը, հեղում են մեր

<sup>94</sup> М. Лихутин. Русские в Азиатской Турции в 1854 и 1855 годах. СПб., 1863, с. 168.

<sup>95</sup> «Արծվիկ Տարնո», 1864, № 1:

<sup>96</sup> Գիվան հայոց պատմության. գիրք ԺԳ, էջ 174:

<sup>97</sup> La Turquie sous le règne d'Abdul Aziz (1862—1867), par Frédéric Milingen (Osman Seifi bey). Paris, 1868, p. 173—174. Տե՛ս նաև՝ Մ. Գ. Նեյր-սի ո յ ա ն. Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ. 1850—1870 թթ., Երևան, 1955, էջ 124:

երիտասարդների ու ծերերի արյունը, անարգում են մեր տաճարի ու ծեսերի սրբությունը»<sup>98</sup>;

Ռուսաստանի կայսր Ալեքսանդր Երրորդին ուղղված իրենց դիմումում Մկրտիչ Խրիմյանը (Խրիմյան Հայրիկը), Խորեն Հովհաննիսյանը և Հայրապետ Խանջյանը 1882 թ. փետրվարի 10-ին գրում էին. «Հայաստանի Վանի վիլայեթի հայ քրիստոնյա բնակչության անունից, ի լրացումն մեր խոնարհ դիմումի, որ հղված էր Ձերդ Մեծությանը 1880 թ. մարտի 16-ին մեր ժողովրդի ազետալի վիճակի վերաբերյալ, նորից կրկնում ենք մեր խնդրանքը: Մենք համարձակվեցինք վերստին դիմել Ձեզ այն պատճառով, որ ներկայումս հայ ժողովուրդը գտնվում է կործանման եզրին, քանզի վիճակը անտանելի է և հուսահատական: Փոխանակ այն բանի, որ Բեռլինի դաշնագրի Հայոց հարցին նվիրված 61-րդ հոդվածը վերջ դնեք անտանելի հայաթանքներին, նոր ձևումները հաստատում են, որ եթե այսպես շարունակվի, ապա այդ հոդվածը կդառնա մեր կործանման պատճառը: Բեռլինի դաշնագրի կնքումից մինչև այժմ Բարձր Գոռն կողմից չի նկատվում որևէ ցանկություն Հայաստանում արդարություն ու հավասարություն հաստատելու ուղղությամբ: Ընդհակառակը, կենտրոնական կառավարական հիմնարկներում միանգամայն անտեսվում են քրիստոնյաների շահերը, արմատավորվում են մոլեռանդություն ու ատելություն նրանց նկատմամբ, որի հետևանքով կառավարական պաշտոնյաները, ավազակախմբերը և ընդհանրապես բոլոր կեղեքիչները, էլ ավելի խրախուսված ծավալում են իրենց ոճրագործությունները»<sup>99</sup>:

Բայանդացի հռչակավոր արևելագետ էմիլ Գիլլոնը, խոսելով արևմբրտահայերի ծանր վիճակի մասին, նշել է, որ Արևմտյան Հայաստանում հաստատված է կառավարման գաղանալին այնպիսի սխտեմ, որի հետ համեմատած Հյուսիսային Ամերիկայի, հարավային շտաններում մի ժամանակ գոյություն ունեցող ստրկական կարգերի «դաժանությունները միայն աննշան շարաշահություններ են»<sup>100</sup>: Անվանի գիտնականը մի այլ կապակցությամբ գրել է. «Օտարերկրացի նշանավոր մի պետական գործիչ, որը սովորաբար համարվում է համոզված թուրքասեր,

<sup>98</sup> Դաշնագրի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, Թղթ. 228, փաստաթուղթ 2:

<sup>99</sup> Архив внешней политики России (далее—АВПР), Главный архив, д. 119, л. 50.

<sup>100</sup> E. J. Dillon. The Condition of Armenia (The Contemporary Review, N. Y.—London, August, 1895).

վերջերս ինձ հետ ունեցած մասնավոր խոսակցության ժամանակ նկատեց, որ թուրքական տիրապետությունը Հայաստանում կարելի է ճիշտ բնորոշել որպես կազմակերպված ավագակալություն, օրինականացված սպանություն և վաճառվող անբարոյականություն»<sup>101</sup>:

Թուրք-օսմանյան պետությունը իր խսկական էությունը նորից բացահայտեց այն տարիներին, երբ արյան մեջ խեղդեց բուլղար ժողովրդի ազատագրական շարժումը: 1875 թ. օսմանյան տիրապետության դեմ ապստամբություն բարձրացրեց Բոսնիայի ու Հերցեգովինայի քրիստոնյա բնակչությունը: Մեկ տարի հետո բռնկվեց համաժողովրդական ապստամբություն Բուլղարիայում, որը սակայն ճնշվեց ամենայն դաժանությամբ: «Յիլիպոնեսի սանջակում մի քանի օրվա ընթացքում շեքսքեզները և բաշիբոզուկները (Թուրքիայի անկանոն հեծյալները) սրի քաշեցին մոտ 15000 մարդ: Կոտորածը տեղի էր ունենում ամեն տեղի տանջանքներով և անարգանք կոտով»<sup>102</sup>:

Այս ողբերգական անցքերի մասին գոյություն ունի հարուստ գրականություն ռուսերեն, անգլիերեն, ֆրանսերեն, գերմաներեն, բուլղարերեն և այլ լեզուներով, ուստի հարկ չկա կանգ առնել դրանց վրա: Սակայն ավելորդ չեմ համարում այստեղ հիշել, թե ինչ է գրել ռուս հանրահռչակ գրող Ֆ. Մ. Գոստոսևսկին Բուլղարիայում կատարված բարբարոսությունների մասին: Միայն մի քաղվածք: «Տասնյակ, հարյուր հազարավոր Երեսնյաներ ոչնչացվում են երկրի երեսից, ոչնչացվում են արմատապես, իսպառ: Մահացող եղբայրները աչքի առաջ անարգվում են նրանց բուլրերը, մայրերի աչքի առաջ վեր են նետում նրանց մանկիկներին և որսում են հրացանների սփինների վրա: Ավերվում են դուրդերը, եկեղեցիները, բնաջնջվում է ամեն ինչ: Եվ դա կատարում է վայրենի հորդան՝ Բաղախկերթության սիւրիմ բլեամին: Դա սովորական ավագակալների հրոսակախումբ չէ... ո՛չ, դա սխտեմ է, դա հսկայական կայսրության գործելակերպ է: Ջարդարանները գործում են մինիստրների և պետության տիրակալների, հեկց սուլթանի կարգադրություններով»<sup>103</sup>:

Գոստոսևսկին զայրույթով էր խոսում նաև եվրոպական պետությունների հանցավոր անտարբերության մասին: Եվրոպացիները, որ իրենց կրկնում վերացրին բռնապետությունը և ազգարարեցին մարդկանց

<sup>101</sup> Նույն տեղում: Տե՛ս նաև՝ Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, խմբ. Մ. Գ. Ներսիսյանի, Երևան, 1991, էջ 87:

<sup>102</sup> История дипломатии, Т. 2, М.—Л., 1945, с. 28.

<sup>103</sup> Ф. М. Достоевский. Поли. собр. соч. в 30-ти томах. Т. 23. Л., 1981, с. 61—62.

ազատությունը ու իրավունքը, այժմ «երես են դարձնում միլիոնավոր դժբախտ արարածներին»:

Գազանաբարո սուլթան Աբդուլ Համիդ Երկրորդի հրամանով թուրքական իշխանությունները 1890-ական թթ. իրագործեցին նոր մասսայական կոտորածներ՝ ցեղասպանություն Արևմտյան Հայաստանում: 1894—1896 թթ. ամենավարագ ձեռք սրի քաշվեց 300000 մարդ, կողոպտվեց ու ամալացվեց Արևմտյան Հայաստանի մեծ մասը:

Արյունաբերու փաղիշահի կազմած ծրագրի համաձայն թուրքական դորքերը և նրանց միացած ավազակային հրոսակախմբերը Զեքի փաշայի հրամանատարությամբ 1894 թ. արշավեցին Սասուն, որի հետևանքով սրի քաշվեց շուրջ 10000 մարդ, թալանվեցին ու ավերվեցին տասնյակ գյուղեր ու ավաններ: Հաջորդ տարիներին՝ 1895—1896 թթ. համընդհանուր կոտորածներ տեղի ունեցան ամբողջ Արևմտյան Հայաստանում: Սուլթան Աբդուլ Համիդը շահամանափակվեց սովորական ջարդերով: Նա իրագործեց իր նախօրոք մշակած ծրագիրը՝ իրականացնել արևմտահայերի ցեղասպանությունը, որպեսզի դրանով իսկ վերացնի Հայկական Հարցը: Մի քանի վկայություններ կատարված բարբարոսությունների մասին:

Մեծ Բրիտանիայի փոխհյուպատոսը Վանում Ֆիլիպ Քերին 1894 թ. նոյեմբերի 15-ին գեկուցում էր, որ թուրքական զորքերը Սասունում կատարել են սոսկալի վալրագություններ: «Գեղի գուղանում շատ երիտասարդների ձեռքն ու ոտքը կապել են, շարել կողք կողքի, վրաները ցախ թափել ու ողջ-ողջ ալրել»: Մի այլ գյուղում «մոտ վաթսուներկու տասարդ կանանց ու աղջիկների մտցրել են եկեղեցու մեջ: Զինվորներին թույլ են տվել նրանց հետ վարվել ինչպես կամենան, իսկ դրանից հետո սպանել են բոլորին... Նավթը օգտագործել են աներն իրենց բնակիչներով վառելու համար: Բիթլիսում մի զինվոր պատմել է, որ ինքը տեսել է, թե ինչպես բոցերի միջից փախչող մի փոքր տղա զինվորի սվինով հետ է նետվել կրակի մեջ»<sup>104</sup>: Նույն թվականի նոյեմբերի 26-ին Ռուսաստանի զլխավոր հյուպատոսը էրզրումում՝ Վ. Մաքսիմովը գրել է, որ սուլթանի զինվորները սպանել են անգամ մանուկներին և «իրենց անասնական հակումները բավարարելով անգթորեն ոչնչացրել կանանց ու աղջիկներին»<sup>105</sup>:

Կոտորածները դարձան համատարած 1895—1896 թթ.: Մարզվանի հայերը Ռուսաստանի հյուպատոս Նալյոտովին ուղղված դիմում-նամա-

կում 1895 թ. նոյեմբերի 9-ին գրել են. «Նոյեմբերի 3-ը, ուրբաթ օրը, մեր քաղաքի համար սև օր դարձավ, վշտալի ու սարսափելի օր: Այդ օրը թուրքիան իր արյունոտ պատմությունը հարստացրեց ևս մի «փառավոր» էջով, գրված սև տառերով ի սոսկումն և ի վրդովմունք համայն քաղաքակիրթ աշխարհի: Թուրքիան մի անգամ ևս իր արյունոտ գահն օժեց բազմաթիվ անմեղ քրիստոնյաների արյամբ»: Հետաքրքիր է, որ նամակում նախազգուշացվում էր. «Բացառված չէ, որ թուրքական կառավարությունը իրեն հատուկ անամոթությամբ փորձի ժխտել իր մեղքը և այդ ծանր իրադարձությունների ողջ պատասխանատվությունը բարդի հայերի վրա: Բայց ամեն դեպքում մենք պատրաստ ենք ապացուցելու, որ կոտորածի կազմակերպիչը կառավարությունն է: Մենք ունենք բազմաթիվ հավաստի փաստեր և անհերքելի ապացույցներ, որոնք օրվա լույսի պես պարզ են և կարող են հաստատել, որ կոտորածը կանխամտածված գործողությունների հետևանք է... Ողորմած Տեր. մենք ներկայումս բոլորովին զուլաներս կորցրել ենք, չգիտենք ինչ անենք: Մեր հույսը միայն դուք եք»<sup>106</sup>:

Ֆրանսիական «Գեղին դիրք» փաստաթղթերի հայտնի ժողովածուում կարդում ենք. «1895 թ. վերջին 1896 թ. սկզբին, կես տարվա բնթացքում, Փոքր Ասիայում, հայաբնակ բոլոր քաղաքներում ու գյուղերում տեղի ունեցան կազմակերպված զարհուրելի զանգվածային կոտորածներ, որոնց հանդեպ խամրեցին նույնիսկ Սասունի գազանությունները»<sup>107</sup>:

Բելյուսի ռուսական զլխավոր հյուպատոսի 1898 թ. հուլիսի 23 թվակիր գեկուցագրում ասված էր. «Չնայած թուրքերի բազմիցս տված խոստումներին՝ չհալածել հայերին սոսկ նրա համար, որ նրանք հայ են, ճնշումները և հալածանքները շարունակվում են Օսմանյան կայսրության ամբողջ տարածքում» և Բ. Դուրը, խրախուսելով տեղական իշխանությունների ջարդարարական գործունեությունը, ձգտում է ստիպել հայերին դիմել զաղթի<sup>108</sup>: Խոսելով 1896 թ. Ստամբուլում տեղի ունեցած հայերի ջարդի մասին թուրք լիբերալ-պատմաբան Օսման Նուրին գրել է. Այդ ջարդը «մի ահարկու եղեռն էր մարդկության դեմ: Եղեռնի կազմակերպիչն անկասկած նույն սուլթան Աբդուլ Համիդ Երկրորդն էր»<sup>109</sup>:

Սուլթան Աբդուլ Համիդի մահին Անատոլ Ֆրանսը արտահայտվել է այսպես. «Սուլթան Աբդուլ Համիդ Երկրորդը մի հրեշ է, որը մշտա-

<sup>104</sup> АВПР. Посольство в Константинополе, д. 3135.

<sup>105</sup> Նույն տեղում, գ. 3176, թ. 45:

<sup>106</sup> Նույն տեղում, գ. 3181, թ. 38—40:

<sup>107</sup> Братская помощь пострадавшим в Турции армянам. М., 1897, с. 101.

<sup>108</sup> АВПР. Посольство в Константинополе, д. 3179, л. 279.

<sup>109</sup> Թուրքական աղբյուրներ..., 4. 4, Եփեսոս, 1972, էջ 213:

պէս դողում է իր խղճուկ ամենազորութեան մեջ և, սարսափելով իր իսկ ոճրագործութիւններէից, իրեն հանգստացնում է նրանով, որ նոր ոճիրներ է գործում. 1893-ից մինչև 1896 թ. նա կախել ու ողջակիզել է 300 հազար հայերի և այդ ժամանակից սկսած նողկալի զգուշավորութեամբ զբաղվում է սրբացած ժողովրդի հետեւողական բնաջնջմամբ...»<sup>110</sup>:

1894—96 թթ. ցեղասպանութիւնը առաջ բերեց բողոքի մեծ ալիք շատ երկրներում: Օսմանյան պետութեան դեմ իրենց գայրութիւն արտահայտեցին հատկապէս գիտութեան ու մշակութի շատ ներկայացուցիչներ: Սուտատանում, Անգլիայում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում հրապարակվեցին բազմաթիւ աշխատութիւններ, որոնցում բացահայտվում էին թուրքական իշխանութիւնների բարբարոսութիւնները:

Մակաւն ավելի սարսափելին, որ ցնցեց ամբողջ առաջավոր մարդկութեանը, տեղի ունեցավ 1915—1916 թթ., երբ օսմանյան զառամշալ պետութեան զլուխ անցած ինքիհատկաների (երիտթուրքերի) կուսակցութիւնը կազմակերպեց արևմտահայութեան հրեշտակաբեր ցեղասպանութիւն, որի ընթացքում զոհվեց մեկ և կես միլիոն մարդ:

Արևմտահայութեան 1915—1916 թթ. կոտորածների՝ Մեծ Նդեռնի գլխավոր կազմակերպիչներն էին օսմանյան պետութեան պարագլուխներ Քալմաթ բեյը, էնվեր փաշան, Նազրմ բեյը և ուրիշներ: Այն գաղտնի խորհրդակցութիւնում, ուր քննարկվում էր հայերին բնաջնջելու հարցը, գոյտոր նազրմ բեյը ասել է. «Հալ ժողովրդին պետք է ոչնչացնել հիմնովին, որպէսզէր ոչ մի հայ չմնա մեր երկրում և մոռացվի այդ անունն իսկ: Այժմ պատերազմ է, այսպիսի հարմար իրադրութիւն էլ չի լինի: Մեծ պետութիւնների միջամտութիւնը և համաշխարհային մամուլի ազմկոտ բողոքներն աննկատ կմնան: Այժմ մենք պետք է զլխովի բնաջնջենք հայերին, անհրաժեշտ է ոչնչացնել նրանց մինչև վերջին մարդը... Ես ուզում եմ, որ այս հողի վրա թուրքը և միայն թուրքը ապրի ու երկրի լիշխան տեր լինի: Թող չբռնեն բոլոր ոչ թուրք տարրերը՝ ինչ ազգութեան ու կրօնի էլ պատկանելիս լինեն»<sup>111</sup>:

Նորհրդակցութեան անդամները, իհարկե, համաձայնվել են իրենց գործակից նազրմ բեյի հետ: Ընդունվում է համապատասխան որոշում: 1915 թ. մայիս ամսին արդեն թուրքական կառավարութեան ներքին գործերի մինիստր Քալմաթ բեյը հրամաններ է տալիս տեղական իշ-

խանութիւններին երկրի հայ բնակչութեանը հիմնովին ոչնչացնելու մասին: Հալեպի վալիին ուղարկված նրա հրահանգում, Վօրինակ, ասված էր. «Ձեզ արդեն հաղորդվել է, որ Ձեմիեթի [երիտթուրքերի ղեկավար կոմիտեի] որոշման համաձայն պետք է ամբողջովին ոչնչացնել թուրքիայում ապրող հայերին: Նրանք, սվքեր հանդես են գալիս այդ որոշման դեմ, չեն կարող մնալ իրենց պաշտոններում: Որքան էլ դաժան լինեն ձեռնարկված միջոցառումները, այնուամենայնիվ պետք է վերջ տայ հայերի գոյութեանը: Ուշադրութիւն մի դարձրեք ո՛չ տարիքին, ո՛չ սեռին, ո՛չ խղճի խայթին»<sup>112</sup>:

Սի հրամանը կատարվեց ամենայն բարբարոսութեամբ: Տեղի ունեցավ XX դարի առաջին ցեղասպանութիւնը իր անօրինակ վայրագութիւններով: Բերներ անհերքելի ու կասկած չհարուցող մի շարք վկայութիւններ:

Թուրքական հանրապետութեան հիմնադիր Մուստաֆա Քեմալ փաշան 1926 թ. հունիսին շվեյցարացի լրագրող էմիլ Հիլքերբրանտի հետ ունեցած հարցազրույցի ժամանակ խոսելով երիտթուրքերի ոճրագործութիւնների մասին ասել է. «Երիտթուրքերը պետք է պատասխան տան մեր հպատակ մի քանի միլիոն քրիստոնյաների համար, որոնք դաժանորեն արտաքսվեցին իրենց հայրենի օջախներից և ոչնչացվեցին»<sup>113</sup>:

Երիտթուրքերի տիրապետութեան ժամանակ պատասխանատու պաշտոն վարող Նալիմ բեյը, որը ի պաշտոնե անձամբ զբաղվել է հայերի դեպորտացիայի հարցերով, գրել է. «Հայերի արքուն ու կոտորածը իրենց հավասարը չունեն անմարդկային արարքների մասին մինչև այժմ գրված պատմութիւնների մեջ: Թուրքիայի ընդարձակ տարածքի որ անկյունն էլ որ հայացք նետես, որ խոր կիրճն էլ որ նայես՝ ամենուրեք կարելի է գտնել ամենադաժան կերպով խողիտղված ու ալյանդակված հազարավոր հայերի դիակներ ու կմախքներ»<sup>114</sup>:

Կատարված ոճրագործութիւնների մասին գրել է նաև քաղաքական գրքերի, երիտթուրքերի գաղտնի խորհրդակցութիւնների մասնակից Միլլիան Ջադե Ռիֆաթը<sup>115</sup>:

<sup>112</sup> The Memoirs of Naim Bey. Turkish Documents Relating to the Deportations and Massacres of Armenians. Compiled by Aram Ancoorian. London, 1920, p. 61.

<sup>113</sup> Յե՛ն Los Angeles Examiner\* թերթի 1926 թ. օգոստոսի 1-ի համարը:

<sup>114</sup> The Memoirs of Naim Bey. Turkish Official Documents Relating to the Deportations and Massacres of Armenians... p. 1—47.

<sup>115</sup> Si'e Геноцид армян в Османской империи. Документы и материалы. Под редакцией проф. М. Г. Нерсисяна. Ереван, 1966, с. 362—366.

<sup>110</sup> Anatole France. Trente ans de vie sociale. I. Introduction générale, 1897—1904, Paris, p. 137—138, 143—143.

<sup>111</sup> Mevlan Zade Rifat. Türkiye inkilabının ic yuzu. Halep, 1929, s. 89—93.

Կարևոր են նաև գերմանական աղբյուրների վկայությունները: 1912—1915 թթ. Թուրքիայի դաշնակից Գերմանիայի դեսպանը Կ. Պոլսում՝ բարոն ֆոն Վանդենհայմը, որ մեծ ազդեցություն ուներ երիտթուրքերի ղեկավարների վրա, լավատեղյակ էր Օսմանյան կայսրության մեջ կառավարող անցքերին, կանցլեր Բեստան Հուլիգին ուղղված 1915 թ. հունիսի 17 թվակիր գաղտնի զեկուցագրում հաղորդել է. «Վերջերս ներքին գործերի մինիստր Փալեասթ փաշան բացահայտորեն հայտարարել է կայզերական դեսպանության աշխատակից, ղոկտոր Մորգմանին, որ Բ. Պոլսը ցանկանում է օգտագործել համաշխարհային պատերազմը, որպեսզի վերջնական դատաստան տեսնի իր ներքին թշնամիներին (քրիստոնյաների) հետ»<sup>116</sup>:

Նույն դեսպանը մոտ մեկ ամիս հետո խոսելով թուրքական իշխանությունների կողմից կատարվող հայերի բռնի դադթեցումների մասին գրել է, որ օսմանյան կառավարությունը «իբո՛ւ նպատակ ունի ոչնչացնել նալ ցեղը քաբֆական պետության մեջ»<sup>117</sup>:

Գերմանիայի նոր դեսպան Վոլֆ Մետերնիխը 1916 թ. հունիսի 30-ի իր գաղտնի տեղեկագրում հաղորդել է, որ երիտթուրքերի «կենտրոնական կոմիտեն պահանջում է բնաջինջ անել հայերի վերջին մնացորդները» (Das Komitee verlangt die Vertilgung der letzten Reste der Armenier)<sup>118</sup>: Գեսպանը երիտթուրքերին համարում էր մոլի ֆանատիկոսներ ու «սոված գալլեր»:

Մեծ Նդեռնի մատին կարևոր փաստաթղթեր կան նաև Առաջին աշխարհամարտի տարիներին Թուրքիայի դաշնակից Բուլղարիայի պետական արխիվներում: Այսպես, Բուլղարիայի Կ. Պոլսի դեսպան Ն. Կոլչևը 1915 թ. հուլիսի 15-ին իր երկրի մինիստրների խորհրդի նախագահ ղոկտոր Վ. Ռադոսլովին զեկուցել է. «Շարունակվում են հայերի ջարդերն ու հալածանքները, որոնք ստանում են այս ժողովրդին վերջնականապես բնաջնջելու ահավոր կերպարանք: Ամենուրեք հայկական բնակավայրերը բոլորովին ամալանում են: Կանայք ուղարկվում են թուրքական կենտրոններ և հանձնվում հարեմներին, երեխաները բաժանվում են թուրք ընտանիքների միջև՝ թուրքացնելու համար, տղամարդիկ արսորվում են Միջագետք, Արարիա և այլ հեռավոր ծայրա-

մասեր»<sup>119</sup>: Այդ նույն ամսին Զմյուռնիայի դեսպան Իվան Համամջիևը զեկուցել է. Անատոլիայի հայ բնակչությունը «ենթարկվել է ոչ միայն սխտեմատիկ հալածանքների, այլև զանգվածային կոտորածների: Բիթլիսում և էրզրումում ոչ մի հայ չի մնացել: Այնտեղի հայերի մի մասը փախել է Ռուսաստան, իսկ ուրիշները կոտորվել են: Անկարայից վտարված 750 հայ բնատնիքներ ճանապարհին սպանվել են բաշեբոզուկ շեթենների կողմից: Իզմիթի, Բուրսայի, էրզրումի և Բիթլիսի հայ հոգևոր առաջնորդները շղթայակապ տարվել են և արսորվել հայտնի չէ, թե ուր»<sup>120</sup>:

Գրեթե նույն տեսակետներն են արտահայտել Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Թուրքիայի դաշնակից Ավստրիայի պետական ու ղրվանագիտական դործիշները: Այսպես, Ավստրիայի վիցե-մարշալ Պոմիանկովսկին, որ իր պետության լիազոր ներկայացուցիչն էր Թուրքիայում և սերտ կապեր ուներ երիտթուրքերի պարագլուխների հետ, նույնպես զայրույթ է արտահայտել թուրքական կառավարության կողմից հայերի նկատմամբ իրագործվող անօրինակ դաժանությունների ու բարբարոսությունների դեմ<sup>121</sup>:

Հայտնի է, որ վենեսուելցի սպա Ռաֆայել Նոգալիսը, որպես կամավոր թուրքական բանակում կռվում էր ինքնապաշտպանության դիմած հայերի դեմ: Բայց շնայած դրան նա ևս ընդունում է, որ երիտթուրքերի կառավարությունը վարում է ջարդարարական քաղաքականություն<sup>122</sup>:

Հենրի Մորգենթաուն, որ 1913—1916 թթ. զբաղեցնում էր Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանի պաշտոնը Կ. Պոլսում և հաճախակի հանդիպումներ էր ունենում օսմանյան պետության ղեկավար գործիշների հետ, գրել է. «Նս վստահ եմ, որ մարդկության համայն պատմության մեջ չկան այնպիսի զարհուրելի փաստեր, ինչպիսին այս կոտորածն էր: Այն մեծ կոտորածներն ու հալածանքները, որոնք տեղի են ունեցել անցյալում, համարյա աննշան բան են թվում հայ

<sup>116</sup> Deutschland und Armenien. 1914—1918. Sammlung diplomatischer Aktenstücke. Herausgegeben und eingeleitet von Dr. Johannes Lepsius. Potsdam, 1919, S. 84.

<sup>117</sup> Նույն տեղում, էջ 94:

<sup>118</sup> Նույն տեղում, էջ 277:

<sup>119</sup> Հայոց ցեղասպանությունը Թուրքիայում բուլղարական ղրվանագիտական փաստաթղթերի լույսի տակ, բուլղարերենից թարգմանեցին Զ. Ղասարյան, Կ. Ճինդույան. Երևան, 1996, էջ 19—20:

<sup>120</sup> Նույն տեղում, էջ 23:

<sup>121</sup> J. Pomiankowski. Der Zusammenbruch des Osmanischen Reiches. Graz, 1969, S. 165.

<sup>122</sup> Յե՛ս Vahakn N. Dadrian. German Responsibility in the Armenian Genocide..., p. 32—33.

ազգի 1915 թ. կրած տառապանքների համեմատությամբ»<sup>123</sup>: Դեսպանի արժեքավոր հուշերում կան նաև այսպիսի տողեր. «Մի անգամ ես զրույց ունեցա թուրք պատասխանատու և բարձրաստիճան պաշտոնյայի հետ, որն ինձ պատմեց, թե ինչ խոշտանգումներ են կիրառվում հայերի նկատմամբ: Նա շթաքրեց, որ կառավարությունը հավանություն է տալիս կիրառվող խոշտանգումներին... Այդ աստիճանավորն ասաց, որ խոշտանգումների այդ բոլոր մանրամասնությունները քննարկվել են «Միություն և առաջադիմություն» կոմիտեի շտաբ-կայանի գիշերալսին նիստում: Յավ պատճառող յուրաքանչյուր նոր միջոց գնահատվում էր որպես հիանալի հայտնագործություն, և աստիճանավորները շարունակ գլուխ են կոտրում մի նոր տանջանք հնարելու համար: Նա ինձ պատմեց, որ նրանք դիմել են նույնիսկ իսպանական ինկվիզիցիայի հաշվետվություններին... և ընդօրինակել այն բոլորը, ինչ որ զանել են այնտեղ»<sup>124</sup>:

Մեծ եղեռնի մասին կարևոր տեղեկություններ են հաղորդում նաև պարսիկ ու արաբական աղբյուրները: Այսպես օրինակ, պարսիկ Քերպեյա Ալի Մեհմեդը պատմել է. «Ես ռազմամթերք կը փոխադրեի Երզրան-կայան Կարին: Մի անգամ 1915 հունիսի մեջ, երբ եկա խոթորի կամուրջին մոտ, մի ահռելի տեսարան ներկայացավ իմ աչքերու: Անթիվանհամար մարդկանց դիակներ մեծ կամուրջին 12 կամարները լիցուցած էին, դեմ էին առած, և ջուրը իր քնթացքը փոխած կամուրջին անդին կը վազեր: Սոսկալի էր տեսնիլը, երկար սպասեցի քարավանը վա, մինչև որ այդ դիակները քշվեցան: և կարողացա կամուրջին անցնիլ: Սակայն կամուրջին մինչև ձիերի ամբողջ ճանապարհը լիցուն էր դիակներով, ծերեր, կիներ, երեխաներ արդեն հոտած, նեխված և ուռած: Այնպիսի մեծ զարշահոտություն կար, որ անցնիլ այդ ճանապարհով անհր-նար էր: Իմ երկու ուղտապաններս արդեն հոտեն հիվանդանալով մեռան, և ես ստիպվեցա ճանապարհս փոխել: Անլուր և զարհուրելի ոճ-րազործության զոհեր և հետքեր էին ասոնք: Բոլոր դիակները հայեր, թշվառ հայեր էին»<sup>125</sup>:

<sup>123</sup> Henry Morgenthau, Ambassador Morgenthau's Story, New York, 1918, p. 324.

<sup>124</sup> Նույն տեղում, էջ 315:

<sup>125</sup> Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում..., էջ 376: Մի այլ պարսիկ հեղինակ՝ Սեյիդ Մոհամմադ Ալի Համադ Զադե, իր հուշերում գրել է. «Ես ակամայինց վկա եղա այն անտանելի դաժանությունն ու խոշտանգումներին, որոնք թուրքերը կիրառում էին հայերի նկատմամբ Առաջին համաշխարհային պատերազմի ամսի-ներին. արդյունքն եղավ, ինչպես դիակներ, միլիոնավոր հայերի շարքը (տե՛ս «Երան-նամես», 1993, № 1, էջ 13, Ս. Սաֆարյանի հաղորդումը):

Արևմտահայերի 1915 թ. կոտորածների ականատես, արաբ մտա-վորական Ֆահդ էլ Հուսեյինը գրել է. «Հայերին մահվան մատնելը վրդովեցուցիչ, ահավոր դաժանություն էր... նրանց բնաջնջելու եղա-նակները տարբեր էին. Բիթլիսում իշխանությունները հայերին լցնում էին մեծ, հարգով լի մարազները, զոհերը փակում ծղոտով և հրահում... Մուշում սպանում էին գնդակներով, դանակներով ու դաշույններով: Իշխանությունները վարձում էին մսագործների, որոնք մարդասպանի արհեստի համար օրեկան ստանում էին մեկ ոսկի... Գիարբեքիրում իշ-խանությունները հայերին բնաջնջում էին մերթ հրով, մերթ սրով: Հա-ճախ նրանց խումբ-խումբ նետում էին ջրհորները կամ փոսերի մեջ ու ուղ-ողջ թաղում: Ծառ հայեր էլ ջրահեղձ են արվել Տիգրիսում և Եփ-րատում... ժանդարմները ուրիշ եղանակ էլ էին կիրառում: Նրանք կա-նանց ու երեխաներին կապում էին իրար ու մեծ բարձրությունից ցած նետում... Հայերի դեմ գործադրած դաժանությունների պատասխանատ-վությունը ընկնում է «Միություն և առաջադիմություն» կոմիտեի ան-դամների վրա, որոնք իրենց ձեռքին էին պահում իշխանությունը: Նրանք մոլեռանդ ցեղապաշտներ էին»<sup>126</sup>:

Ֆրանսիացի ականավոր հրապարակախոս Հանրի Բարբին 1916 թ. այլերկրով Արևմտյան Հայաստան, այնտեղ կատարված գաղանթություն-ների մասին գրել է. «Չկա ոչ մի ծառ, ոչ մի ժայռ, ժամուռի ոչ մի կտոր, որը վկա չլի՛նի մարդու սպանության, որը պղծված չլի՛նի թափ-ված արյան հեղեղներով: Չկա ոչ մի գետ կամ վտակ, որը դեպի համի-տեռական մոռացություն տարած չլի՛նի հարյուրավոր ու հազարավոր դիակներ: Չկա ոչ մի անդառնղ կամ կիրճ, որոնք չլի՛նեն գերեզմաններ բաց երկնքի տակ, որոնց խորքերում շերեային կմախքների չծածկված կույտերը, քանի որ մարդասպանները գրեթե ոչ մի տեղ չեն վատնել ո՛չ ջանք, ո՛չ ժամանակ, որպեսզի թաղեն իրենց զոհերին: Այս ընդար-ձակ մարդերը, որոնցում մի ժամանակ ծաղկել են հայկական բնակա-վայրերը, այսօր ամալացած ու անմարդաբնակ են»<sup>127</sup>:

<sup>126</sup> Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում..., էջ 493: Արևմտ-ահայերի 1915—1916 թթ. ցեղասպանության մասին գրել են նաև բազմաթիվ արաբ դատաբաններ. տե՛ս ն. Հովհաննիսյանի՝ այս հարցին նվիրած հոդվածը, որ տպագրվել է «Новая история Армении в трудах современных зарубежных авторов» գրքում (Երևան, 1993, էջ 159—218):

<sup>127</sup> Анри Барби. В стране ужаса. Перевод с французского. Тифлис, 1919, с. 40.

Հայկական կոտորածներին տեղյակ և ականատես, Կ. Պոլսի հայ պատրիարք Զավեն արքեպիսկոպոսը 1915 թ. դեկտեմբերին ամերիկահայերին տեղեկացնում էր. «Պատմությունը չեմ կարծեր, թե արձանագրած բլլա այսպիսի կոտորած մը... Չեմ կարծեր, թե որևէ գրիչ կամ բերան կարենա նկարագրել այն զարհուրելի նախնիները, որոնք տեղի ունեցան վերջին 8—9 ամիսներուն մեջ Թուրքիոյ մեկ ծայրէն մինչև մյուս ծայրը... Համիդյան ռեժիմին ատեն կամ անկե առաջ տեղի ունեցած կոտորածները չնչին բան մըն են ասոր քով: Այս անգամ գործադրվածը խսկապես բնաջնջումի ծրագիր մըն է, և այսօր որ անիկա ի գլուխ ելած է, այլևս կրնա ըսվիլ, թե հայը իր հայրենիքին մեջ պատմական դարձած է... Կուսակալներեն ոմանք պարծանոք հեռագրեցին կենտրոնական կառավարության, թե իրենց կառավարած նահանգներուն մեջ ոչ մի նաչ կղանվի այլևս: Այս անգամ խուժանը չէր, որ հարձակվեցավ խաղաղ ժողովուրդին վրա, այլ նույն ինքը կառավարությունը, որ իր ծրագիրը գործադրեց զինվորներու, ժանտարմներու, ոստիկաններու և մանավանդ հրոսակախմբերու ձեռքով: Հրահանգը կենտրոնեն արվեցավ և ամեն կողմ գործադրվեցավ անխղճորեն: Ժողովուրդը վտարվեցավ իր հայրենի օջախեն, լքելով ամեն ինչ և ճամփան կողոպտվեցավ ու կոտորվեցավ: Սամսոնեն սկսյալ մինչև Տիգրանակերտ գրեթե հայ այլ մարդ չէ ազատված: Երիտասարդ կիներն ու աղջիկներն առևանգվեցան ու մանուկները կոտորվեցան: Կոտորածը ահռելի եղած է Մուշ, Բաղնշ, Տիգրանակերտ, Եդեսիա, Տրապիզոն, Շապին-Գարահիսար, Քոլի, Բալու և Երզնկա-Քեմաղ, ուր գրեթե ոչ մեկ հայ ազատված է, մանուկներն ու ծերերն անգամ չխնայվելով: Հայաստանի մյուս նահանգներեն ազատվածներ կան, սակայն հազիվ 5 տոկոսի համեմատությամբ: Շատ մը քաղաքներ և գյուղեր հազիվ մեկ-երկու կիներ կան այսօր: Բաղնշ ու շրջականեր, ուրկե հայ մը ազատված բլլալու լուր չունենք տակավին: Տիգրանակերտի նահանգը, ուր ոչ միայն հայերը, այլև ասորիներն ու քաղղեացիներն ալ կոտորված են: Կուսակալեն տրված ջարդի հրամանը չգործադրվելուն համար երեք թուրք զայնազամներ պաշտոնանկվելով սպանված են: Տրապիզոնի և շրջակաների հայությունը դրեթե ամբողջովին կոտորված կամ ծովամուլյն եղած է»<sup>123</sup>:

Մեծ Եղեռնի մասին գոյություն ունեն ճշգրիտ ու անհերքելի աչք վկայություններ: Մեր ժողովրդի աչք ահավոր ողբերգության վերաբերյալ հրապարակվել են բազմաթիվ ու բազմատեսակ աշխատություններ

123 Հայաստանի պետ. կենտ. պատմ. արխիվ, ֆոնդ 57, ց. 2, դ. 672, Թ. 72—73:

հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և այլ լեզուներով<sup>120</sup>:

Հայերի ցեղասպանության փաստը բացահայտվեց նաև երեք դատական պրոցեսների ժամանակ: 1919 թ. Կ. Պոլսում թուրքական նոր կառավարության կողմից ստեղծված ռազմական դատարանը, հաստատելով երիտթուրքերի հանցագործությունները, մահվան դատապարտեց մի շարք ռճրագործների, դրանց թվում և Թալեաթ, էնվեր ու Զեմալ փաշաներին<sup>130</sup> (վերջիններս դատվում էին հեռակա կարգով, քանի որ նրանք, փախչելով Թուրքիայից, ծպտված ապրում էին արտասահմանում): Երկրորդ դատավարությունը տեղի ունեցավ 1921 թ.՝ Բեռլինում: Հայտնի է, որ այդ թվականի մարտի 15-ին երիտասարդ հայերենասեր, վրիժառու Սողոմոն Թեշվիրյանը սպանեց հայ ժողովրդի սխեռիմ թշնամի Մեհմեդ Թալեաթին: Բեռլինի դատարանը, հենվելով բազմաթիվ փաստերի ու վկայությունների վրա, ապացուցված համարեց այն, որ ազգայնամուլ, ռասիստ երիտթուրքերն իրենց նվաճողական, պանթուրքիստական ծրագրերն իրականացնելու նպատակով, խսկապես կազմակերպել են հայերի 1915—1916 թթ. ցեղասպանությունը և որ կատարված ռճրագործությունների գլխավոր հեղինակը եղել է հենց ինքը՝ մեծ դահիճ Թալեաթը: Ելնելով դրանից, դատարանը արդարացրեց Թեշվիրյանին: Դատավճիռը ջերմ արձագանք գտավ շատ երկրների առաջադեմ հասարակայնության մեջ<sup>131</sup>:

Հայերի ցեղասպանության հարցը նորից քննարկվեց 1984 թ. ապրիլի 13—16-ին Փարիզում (Սորբոնի համալսարանում): Ժողովուրդների Միություն Առյուծ կոչվող դատարանը, որի կազմում ընդգրկված էին միջազգային համբավ ունեցող գիտնականներ, հասարակական ու քաղաքական գործիչներ, մի անգամ ևս անվերապահորեն ընդունեց հա-

120 Մեծ Եղեռնի մասին վերջին երկու տասնամյակում հայ պատմաբաններ Թ. Աղայանի, Ա. Բելլերյանի, Վ. Դադրյանի, Թ. Հովհաննիսյանի, Վ. Միքայելյանի, Մ. Ներսիսյանի, Ա. Օհանջանյանի, Ս. Ստեփանյանի և ուրիշների ջանքերով հրատարակվեցին ու վերահրատարակվեցին արխիվային փաստաթղթերի նոր, արժեքավոր ժողովածուներ, որոնցից մի մասը՝ հայերեն, ռուսերեն, մյուսը՝ անգլերեն, ֆրանսերեն և գերմաներեն: Հայոց ցեղասպանության պատմությունը հանգամանորեն լուսաբանված է մասնավորապես Վ. Դադրյանի 1995 թ. լույս տեսած «The History of the Armenian Genocide...» ծավալուն աշխատության մեջ:

130 Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, առաջարանը, թարգմանությունը և ծանոթագրությունները Ա. Հ. Փախալյանի Երևան, 1988:

131 Մ. Ներսիսյան (Ա. Ա.). Ինչու արդարացվեց ամբաստանյալը. տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1996, № 1—2:

յերի ցեղասպանութեան փաստը և պահանջեց, որ այն ճանաչվի բոլոր պետությունների կողմից<sup>132</sup>:

Հարկ է նկատել, որ օսմանյան պետությունը ինչպես նախորդ դարերում, այնպես էլ XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին դատան քաղաքականություն էր վարում նաև արաբ ժողովրդի նկատմամբ: Հավատարիմ իրենց էությունը, թուրքական իշխանությունները զանգվածային ջարդեր կազմակերպեցին, օրինակ, Յմենում, Լիբանանում, Պաղեստինում և Սիրիայում: Չմոռանանք, որ 1915—1916 թթ. ուղղմաշունչ պանթուրքիստ երիտթուրքերը խիստ հալածանքների ու կոտորածի ենթարկեցին, ի թիվս մյուս ժողովուրդների, նաև հույներին:

Այս բոլորից հետո, կարծում եմ, տեղին է այստեղ հիշել մեր մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանին, որը հակառակ օսմանյան պետության «քաղաքակրթական միախալի» մասին բարբառող կեղծարարների, գրել է, թե սուլթանական թուրքիան եղել է «ոչ թե պետություն, այլ սպանդանոց»<sup>133</sup>:

\* \* \*

Հայտնի է, որ Օսմանյան կայսրության ամբողջ գոյություն ընթացքում, հատկապես XVIII—XX դարերում, տեղի են ունեցել ազգային-ազատագրական բնույթի բազմաթիվ ապստամբություններ: Բնականորեն հարց է ծագում՝ ի՞նչն էր դրանց պատճառը: Պատմության կեղծարարները սովորաբար աշխատում են մոռացություն տալ այդ իրողությունը, իսկ եթե այնուամենայնիվ ստիպված են պատասխանել հարցին, ապա նորից կեղծելով պատմական փաստերը փորձում են ցույց տալ, որ դրանք հրահրել և կազմակերպել են թուրքիայի թշնամի պետությունները՝ Ռուսաստանը և երբեմն էլ Մեծ Բրիտանիան: Նորից արտառց ստախոսություն: Խնդրին վերաբերող զիտական պատմագրությունը բազմիցս ապացուցել է, որ օսմանյան պետության դեմ ուղղված

ազատագրական շարժումների գլխավոր պատճառը բուրժուական սուլթանների կողմից նվաճված երկրներում ստեղծված բարբարոսական, անտաննի ռեժիմն էր: Այդ է ճշմարտությունը: Պատահական չէ, իհարկե, որ թուրքական բռնապետության դեմ ծավալված ազատագրական այդ շարժումները զուգահեռ ու փաստաբանել են առաջադեմ և հումանիստ բաղմամբով նշանավոր դեմքեր:

Աշխարհահռչակ անգլիացի բանաստեղծ Ջորջ Գորդոն Բայրոնը, օրինակ, շատ ձիգեր թափեց, որպեսզի հույն և հայ ժողովուրդները ևս ազատագրվեն թուրքական սուլթանների լծից: Հայտնի է, որ նա, շատ մանափակվելով զաղափարական պրոպագանդայով, միացավ հույն ապստամբներին և զենքը ձեռքին պաշտպանեց ապստամբ ժողովրդին: Մեծ բանաստեղծը նշելով այն, որ Հայաստանը դարեր շարունակ գտնվել է օտար բռնապետների և մասնավորապես թուրք փաշաների տիրապետության տակ, ազատագրական պայքարի կողք էր անում նաև հայերին: Բայրոնը մտերմական կապեր հաստատեց Վենետիկի Միքիթարյանների հետ, սովորեց հայերեն, ուսումնասիրեց հայոց պատմությունը, կատարեց մի շարք թարգմանություններ հայերենից անգլերեն, բարձր գնահատական տվեց հայոց լեզվին, մշակույթին և այլն: Շատ հետաքրքիր է, որ նա խիստ գատապարտել է այն հայ հոգեբանականներին, որոնք դեմ էին հայերի ազատագրական շարժմանը: Գիմելով նրանց Բայրոնը ասել է. «Դուք վախենում եք խիստ կարծիք տակ ձեզ ճշողների մասին: Մտրուկներ և վախկոտներ, դուք արժանի եք բիրտ իշխանավորների: Դուք արժանի չեք այն մեծ ազգին, որից ծագում եք»<sup>134</sup>:

Լինելով բոլոր բռնապետությունների թշնամի, Բայրոնը խստորեն քննադատել է նաև Մեծ Բրիտանիային, որը փճոականորեն հանդես էր գալիս ազատագրական պայքար վարող ժողովուրդների դեմ: Նա, օրինակ, համարձակորեն նշում էր այն իրողությունը, որ Մերձավոր Արևելքում Անգլիայի հետապնդած դիտավոր նպատակն է պահպանել սուլթանական թուրքիայի ամբողջականությունը, այլ կերպ ասած՝ ապահովել օսմանյան բռնապետության տիրապետությունը զենքի ու ժով նվաճված ժողովուրդների վրա: Այդ էր պատճառը, որ ազատասիր բանաստեղծը իր «Չայլը Հարոլդ»-ում բնութագրել է.

И мне гласить на языке Сритания,  
Что он Аглии слезами убоен?

<sup>132</sup> A Crime of Silence. The Armenian Genocide. The Permanent People's Tribunal. The English text was edited by Gerard Libaridian. London, 1985. Չնայած Մեծ Եղեռնի մասին եղած հարուստ գիտական գրականության առկայությանը թուրքական իշխանություններն այսօր էլ համառորեն աշխատում են ժխտել հայերի 1915—1916 թթ. ցեղասպանությունը: Բնորոշ է, որ նրանք մեծ զոհաբեր են առաջարկում ԱՄՆ-ի համալսարանների այն ամբիոններին, որոնք կհրատարակեն հայոց մեծ ողբերգության փաստը ժխտող «ուսումնասիրություններ» (տե՛ս «Республика Армения», 1998, № 7, 16).

<sup>133</sup> Հ ո վ հ ա ն ն ե ս Թ ու մ ա ն յ ա ն. Երկերի ժողովածու, հատոր չմեկրորդ, Երևան, 1995, էջ 194:

Մ. Կ. Գ ա շ ա ն ն յ. Բայրոնը և հայերը. Երևան, 1959, էջ 95: Տե՛ս նաև The Ashtarak Press. The Journal of the Ashtarak Press, London, 1960.

Покрыть Европу краскою румянца,  
Сказать, что беззащитных давит он?

Сам взялся за грабеж такого рода,  
Которым брзгали и деслота и годы!<sup>135</sup>

Սուլթանական թուրքիայի դեմ ուղղված ազատագրական շարժումները ողջունել է նաև ուսու հանճարեղ գրող Ալեքսանդր Սերգեևիչ Պուշկինը: Այսպես, 1829 թ. գրած նրա մի բանաստեղծության մեջ, որն ունի «Восстань, о Греция, восстань» խորագիրը, կան այսպիսի տողեր.

Восстань, о Греция, восстань,  
Недаром напрягала силы,  
Недаром потрясала брань  
Олимп и Пинд и Фермопилы,

Страна героев и богов  
Расторгла рабские вериги  
При пеньи пламенных стихов  
Тиргея, Байрона и Риги!<sup>136</sup>

Նկատենք, որ հույների նկատմամբ ջերմ վերաբերմունք ունեին իր ժամանակի առաջավոր ուսու մտավորականները և առաջին հերթին դեկարրիստները, որոնցից շատերը ցանկություն հայտնեցին մասնակցելու Հունաստանում ծավալված ապստամբական շարժմանը:

Հայտնի դեկարրիստ, բանաստեղծ Վ. Կյուխելբեկերը ջերմորեն ողջունելով հույների ապստամբությունը, կոչ է արել.

Друзья! Нас ждут сыны Эллады!  
Кто даст нам крылья? Полетим!  
Сокройтесь горы, реки, грады—  
Они нас ждут—скорее к ним!<sup>137</sup>

Երևաասարդ Վիկտոր Հյուգոն 1827 թ. գրել է.

Скорее в Грецию! Пора! Ей вся любовь!  
Пусть мученик-народ отмстит врагам за кровь,  
Которую там проливают.

Скорее в Грецию, друзья! Свобода! Месть!  
Тюрбан на голове.—кривая сабля есть...

Скорей! Пусть мне коня седлают!...<sup>138</sup>

Ավելի ուշ, 1866 թ. Կրետե կղզում օսմանյան պետության դեմ ծագած ապստամբության կապակցությամբ Հյուգոն «Orient» պարբերականի գլխավոր խմբագրին հայտնել է, որ ինքը պատրաստ է Բալքոնի օրինակով կռիվ ապստամբների հաղթանակի համար<sup>139</sup>:

\* \* \*

Կանգ առնենք մի հարցի վրա ևս: Պատմության կեղծարարները, ինչպես հայտնի է, պնդում են, որ հայոց Մեծ Եղեռնի հիմնական պատճառը փեր եղել է 1914 թ. կազմակերպված հայկական կամավորական ջոկատների հակաօսմանյան գործունեությունը և Վանի հայության 1915 թ. ապստամբությունն ուղղված տիրող կարգերի դեմ: Միանգամայն անհիմն ու շինծու պատճառաբանություններ: Նախ նկատենք, որ Վանի հայերը ոչ թե ապստամբել են, այլ ստիպված են եղել դիմել ինքնապաշտպանական կռիվների: Իրականում Մեծ ոճիրի պատճառը թուրք ազգայնամոլների պանթուրքիստական ծրագրերն էին, ծրագրեր, որոնք մշակվեցին և ընդունվեցին իթթիհաթականների (երտթուրքերի) կողմից դեռևս 1910—1911 թթ. Սալոնիկում կայացած նրանց գաղտնի ժողովներում ու համադրմարում: Այդ մասին գրել են ոչ քիչ հեղինակներ և ամենից առաջ Անգլիայի փոխհյուպատոս Արթուր Բ. Հերնը: 1910 թ. օգոստոսի 28-ի իր ղեկուցադրում ուղղված Կ. Պոլսի Անգլիայի դեսպան Լոութերին, նա հայտնում էր. «Ես գաղտնի աղբյուրներից ձեռք եմ բերել բովանդակությունը այն ձևով, որ վերջերս Թալեաթն արտասանել է Սալոնիկի գաղտնի խորհրդակցության ժամանակ՝ «Միություն և առաջադիմություն» տեղական կոմիտեի անդամների առաջ»: Թալեաթը ասել է. Սահմանադրության համաձայն պիտի հաստատվի հայասարություն մուսուլմանների և գյավուրների միջև, բայց դուք գիտեք, որ դա անիրագործելի է: Շարիաթը, մեր ողջ անցյալ պատմությունը, հարյուր հազարավոր մուսուլմանների և նույնիսկ հենց իրենց՝ գյավուրների զգացմունքները դեմ են դրան: «Գյավուրները համառորեն դիմադրում են օսմանիզացիային: Ուստի չի կարող նույնիսկ խոսք լինել հավասարության մասին»<sup>140</sup>: Եղբակացությունը պարզ էր՝ պետք

<sup>135</sup> Байрон. Избранные произведения в одном томе. М., 1935, с. 41.

<sup>136</sup> А. С. Пушкин. Собр. соч. в шести томах. Т. I, М.—Л., 1936, с. 593. Պուշկինի այս բանաստեղծությունը առաջին անգամ լույս տեսավ 1903 թ.:

<sup>137</sup> В. Кюхельбекер. Стихотворения, М., 1939, с. 73.

<sup>138</sup> Виктор Гюго. Собр. соч., в 15-ти томах. Т. I, М., 1943, с. 376.

<sup>139</sup> Նույն տեղում, էջ 590:

<sup>140</sup> British Documents on the origins of the War, 1898—1914, vol. IX, London, 1933, p. 23—209.

է ոչնչացվեն բոլոր գյավուրները և առաջին հերթին հայերը և հունները, քանի որ նրանք չեն ցանկանում դառնալ օսմանցիներ: Համապատասխան որոշումներ ընդունվեցին իթթիհաթականների հաջորդ խորհրդակցություններում:

Խիստ հատկանշական է, որ արդեն 1912—1913 թթ. տեղի ունեցան հայ բնակչության ջարդեր, կոզոպուտներ և թալան ամբողջ կայսրության մեջ: Ահա մի քանի վկայություններ: 1912 թ. սեպտեմբերի 4-ին Կ. Պալատ պատրիարք Հովհաննես արքեպիսկոպոս Արշարունին էջմիածնի կաթողիկոսին գրած իր նամակում նշում էր, որ շնայած օսման լայն սահմանադրության առկայությանը, արևմտահայերի վիճակը վատանում է: Ամենուրեք կատարվում են նոր շարագործություններ, շարունակվում են հայերի սպանությունները, հայկական գյուղերի թալանը և ավերումը: «Վերջերս մեզ հասած հեռագրերը գուցեցին սպանությունների, ավարտությունների, առևանգումների, բռնի իսլամացումների մասին: Հայ ժողովրդին սպանում է իսլամ չքանալու վտանգը, համընդհանուր կոտորածը»: 1912 թ. սեպտեմբերի 25-ին Երևանի ազգային, բարեգործական-կրթական հաստատությունների 32 ներկայացուցիչներ Ամենայն Հայոց կաթողիկոսին գրում էին. «Վերսկսվել են մասնակի կոտորածներ, տաճկահայ ժողովուրդը կրկին կանգնած է սպանացող մեծ վտանգի առաջ: Ստեղծվել է մի դրություն, որը կարող է առաջ բերել 1895—1896 թթ. ողբալի դեպքերը... Վանի, Բաղեշի, Մուշի, Տիգրանակերտի և Կիլիկիայի կողմերից ստացվող հուղիչ լուրերը, այստեղ՝ Ռուսաստանում ցնցել են հայ հազարակուսյան յայն խավերը»: Նամակի հեղինակները խնդրում էին դիմել Ռուսաստանի կայսրին, որպեսզի նա պաշտպանի արևմտահայությունը: Կաթողիկոսը նման խնդրագրեր ստացավ նաև Թիֆլիսի, Ախալցխայի, Վանի, Բաղեշի և այլ քաղաքների հայ բնակչությունից: 1913 թ. հուլիսին Կ. Պալատի հայ պատրիարքը նորից հաղորդում էր էջմիածնի կաթողիկոսին, որ ըստ գավառներից ստացած հավաստի տեղեկությունների «հայ ժողովրդի վիճակը հետզհետե կը վատթարանա և հայկական ընդհանուր կոտորածի մը վերահաս վտանգին տակ կը գտնվի»<sup>141</sup>:

Հայ, ռուս, ինչպես և շատ երկրների մամուլը 1912—1913 թթ. գրում էր, որ թուրքական իշխանությունները ծավալում են հակահայկական պրոպագանդա, կազմակերպում են ջարդարարների, ավազակների խմբեր և նրանց միջոցով ավերում բազմաթիվ գյուղեր ու բնա-

<sup>141</sup> էջմիածնի կաթողիկոսական արխիվում պահվում են հարյուրավոր նման խընդրագրեր (անո՞ւ 2<sup>0</sup>14<sup>0</sup> արխիվ):

կալայրեր: Որտեղ թերթեր ճիշտ կուհեցին, որ նախապատրաստվում են մտառայական, համատարած կոտորածներ: Այդ եղրակացությունը եկավ մտանավորապես Ս. Պետերբուրգի «Բիրժեվիյե վեդոմոստի» թերթի աշխատակից, հայտնի հրատարակախոս Տ. Օլգենինը, որը 1913 թ. փետրվար-մայիս ամիսներին այցելել էր Արևմտյան Հայաստանի մի շարք գավառներ և ակնատես եղել դրանցում կատարվող իրադարձություններին: Նա հաղորդում էր, որ թուրք բարձրաստիճան մի շարք պաշտոնյաներ, պառլամենտի անդամներ ու տեղական իշխանություններ չեն ներկայացուցիչներ աշխատում են մտամեղական բնակչությանը պաշտպանելու գնդակերպել նոր գանդավածային կոտորածներ, որ իշխանությունների բացահայտ հովանավորությամբ տեղի են ունենում ջարդեր ու կոզոպուտ: Բազմաթիվ հաղորդումներում և հատկապես «Անհետացող Հայաստանը» խորագրերը կրող իր հոդվածում Օլգենինը եկավ այն եզրակացության, որ պատրաստվում է ավերվոր ոճիր, յոթկաջի ողբերգություն հայերի համար<sup>142</sup>: Այսպիսով, ակներև է, որ Մեծ Եղեռնի պատճառը ոչ թե 1914 թ. ստեղծված կամավորական ջոկատներն են եղել և ոչ էլ Վանի հայ բնակչության 1915 թ. ինքնապաշտպանական կռիվները, այլ շուրջիստ երիտթուրքերի պանթուրքիստական, դավաճանական ծրագրերը, որոնք մշակվեցին դեռևս 1910—1911 թթ. և 1913 թ. սկսած վերածվեցին պետական ֆաղափակություն:

Վերադառնալով մեր հոդվածում քննարկվող հիմնական խնդրին, մենք հարկ ենք համարում նորից րնդգծել, որ բոլոր նրանք, ովքեր խոսում են օսմանյան պետության «ֆաղափակրքական միսիայի» մասին՝ պատմության բացահայտ կեղծարարներ և ստախոսներ են: Նրանց քաղաքները ոչ մի առնչություն չունեն պատմական ճշմարտության հետ:

\* \* \*

Ի դեպ, մի քանի խոսք հետևյալ իրողության մասին: Երևանում լույս տեսնող «Ազգ» թերթի 1998 թ. մարտի 19-ի №-ում տպագրվեց «Կուլիֆորնիա կուրիեր» պարբերականի խմբագիր Հարութ Սասունյանի հարցաձեռն, ուր ասված է, որ Բերքլիի (Կալիֆորնիա) համալսարանի դեկան Սասունյանը կազմել է ընդարձակ ծրագիր, ըստ որի նա պետք է ձևանարկի բազմաթիվ միջոցառումներ՝ նպատակ ունենալով ամեն կերպ նպաստելու թուրքալիստության և ընդհանրապես թուրքական մշակույթի

<sup>142</sup> Ա. Հ. Ղաքուրյան. Ռուս հրատարակախոս Տ. Օլգենինը Հայաստանի և Հայկական Հարդի մասին. տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1939, № 4 (127):

զարգացմանը, քանի որ Թուրքիան «ԱՄՆ-ի դաշնակիցը լինելուց չափի, առաջատար դեր է կատարում նաև ասիական և եվրոպական ֆադաֆա-կրքությունների զարգացման գործում»:

Սովորաբար այդպիսի դեպքերում է, որ ասում են՝ ստախոսությունը ևս պետք է իր սահմանն ունենա: Ում հաշտնի չէ, թե այսօր ինչ «քաղաքակրթական» գործունեություն է ծավալել Թուրքիան քուրդ ժողովրդի նկատմամբ, ինչպիսի պրեհիլ վաղաքականություն է վարում նա Կիպրոսում, ինչպես են սանահարվում անհատի իրավունքը երկրում, որքան ազատամիտ մարդիկ են տանջվում բանտերում և ալլն, և այլն: Սասունյանը ճիշտ է նկատում, որ Թուրքիային դոզերգելու համար անբարո մի շարք «գիտնականներ» ստանում են համապատասխան շափի դոլլարներ: Նրանք վարձատրվում են ինչպես պատմական անցյալը կեղծելու, այնպես էլ մեր օրերին կատարվող իրադարձությունների իմաստը խեղաթյուրելու համար:

#### О «ЦИВИЛИЗАТОРСКОЙ МИССИИ» ОСМАНСКОГО ГОСУДАРСТВА

##### Резюме

Турецкие фальсификаторы истории приложили большие усилия, чтобы «научно» обосновать ими же придуманную легенду о том, что будто бы Османское государство было одним из самых цивилизованных государств мира, что будто турецкие султаны распространяли цивилизацию во многих странах, даровали народам свободу, устанавливали мир и законность в их странах, что якобы в Турции были идеальные порядки, что султанское государство распространяло передовые идеи и так далее. Более того. Немало историков без малейшего стыда утверждали, что первые «факелы культуры» были зажжены именно турками. Эти нелепые мысли в той или иной форме высказывали многие высокопоставленные пантюркисты, военные деятели, националистически настроенные публицисты и другие. Но все это постыдная ложь. Как показывают исторические факты, Османское государство было весьма отсталой военно-феодальной деспотией. Турецкие султаны и представители феодальной верхушки основным источником своего дохода делали грабительские походы, войны, разорение захваченных стран, массовый угон пленных, насильственный сбор разных тяжелых налогов. В статье приводятся многочисленные факты и свидетельства, в том числе сообщения турецких летописцев, об ужасающем варварстве и злодеяниях османских тиранов. Не случайно, что об этом писали многие выдающиеся ученые, писатели, востоковеды и другие авторы. К. Маркс, например, отмечал, что турецкие султаны «предавали огню и мечу города и

села, свирепствовали как каннибалы». В. Гладстон писал, что османцы повсюду, где появлялись, «оставляли глубокий кровавый след, и на всей подвластной им территории исчезала цивилизация». Эту же мысль высказали Виктор Гюго, Н. Г. Чернышевский и другие. Историки-специалисты показали, что османское иго было подлинной катастрофой для всех захваченных султанами стран. Османский деспотизм продолжал свое варварство также в XIX—начале XX вв. В 1870-х годах в крови было потоплено национально-освободительное движение, развернувшееся в Сербии, Греции, Боснии, Герцеговине и Болгарии. В 1890-х годах свирепый деспот султан Абдул Гамид II организовал геноцид армян в Западной Армении и по всей империи. В 1915—1916 гг. был совершен новый чудовищный геноцид западных армян. Пришедшие к власти иттихадисты (младотурки) уничтожили около полутора миллиона армян, Западная Армения превратилась в дымящуюся пустыню. Такова «цивилизаторская миссия» Османского государства.

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ԸՆԹՈՒԽՄԸ  
ՕՍՄԱՆՅԱՆ ԲՈՒՆԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ  
ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԿԵՂՇԱՐԱՐՆԵՐԸ

1

Թուրք-օսմանյան ծանր արհեստագործության դեմ XIX դարի երկրորդ կեսին ծավալված հայ ազատագրական շարժումն առանձին տեղ է գրավում մեր ժողովրդի ազատագրական պայքարի դարավոր պատմության մեջ: Եթե խոսենք նրա մի քանի հիմնական առանձնահատկությունների մասին, առանձնահատկություններ, որոնք պայմանավորված էին իր ժամանակի սոցիալ-տնտեսական, քաղաքական պայմաններով ու միջազգային հարաբերություններով, ապա նախ և առաջ պետք է նկատել, որ այդ շարժումը հանդես եկավ բավական լայն ընդգրկումով, արտահայտվեց տարբեր ձևերով ու երանգներով, ունեցավ մի շարք դրանորումներ, որոնց թվում՝ ժողովրդական ինքնաբուխ ապստամբական ելույթներ, զաղտնի խմբակների, կազմակերպությունների ու քաղաքական կուսակցությունների գործունեություն, կամավորական շարժում, հայդուկային պայքար, ձևավորված ու հասարակական մեծ ազդեցություն ունեցող զաղափարախոսություն և այլն:

Ժողովրդական ապստամբություններ, ինքնապաշտպանական կռիվներ ու այլ կարգի մասսայական ընդվզումներ տեղի ունեցան Զեյթունում (1862, 1878 և 1895 թթ.), Մշո և Զարսանջակի գավառներում (1863, 1865 թթ.), Վասպուրականում (1880-ական թթ.), Սասունում (1894 թ.) և այլ վայրերում: Թուրքական իշխանությունների, բեյլերի ու շեյխերի անօրինակ բռնություններին ու հարստահարություններին ի պատասխան հայ գյուղացիական գանգվածները դիմել են զենքի իջնաց կյանքը, զույլքը և պատիվը փրկելու համար: Զեյթունցիների 1862 թ. ապստամբությունը մեզ այստեղ հետաքրքրող ժամանակաշրջանի առաջին ծավալուն ժողովրդական ելույթն էր, որի ընթացքում քաջարի զեռնակահանները ծանր պարտության մատնեցին սուլթանական զորքերին:

Ժողովրդական ելույթների հետ մեկտեղ հիմնվեցին մի շարք զաղափարի խմբակներ ու ընկերություններ, ավելի ուշ նաև ազգային-քաղաքա-

կան կուսակցություններ, որոնց նպատակն էր կազմակերպել և ուղղություն տալ արևմտահայերի ազատագրական պայքարին ու լուծել Հայկական Հարցը: Հիշատակենք, օրինակ, Վանում 1872 թ. ստեղծված «Միություն ի փրկություն» խմբակը, որը հետևորդներ ուներ ոչ միայն քաղաքում, այլև գավառի մի շարք գյուղերում: Բնորոշ է, որ Միության կոչում կան այսպիսի տողեր. «Գնաց մեր պատիվը, պղծվեցան մեր եկեղեցիք, առեանգվեցին մեր հարսուներն ու երիտասարդուներ. հայտնապես կխլեն մեր իրավունքը մեր ձեռքեն և իսպառ սպուռ մեր ազգության սերունդը ջնջելու կճգնին: Վասնորո կամ պետք է մեռնել ու շտեմնել այս սարսափելի վիճակը, և կամ վերակենդանություն ստանալ ի ծոց հայրենյաց: Այլ ի՞նչ կապասենք. կյանք շունինք, մահե կվախնանք, ստացվածքնիս ու վաստակնիս մերը չէ, եկեղեցիք ունինք ամեն օր հալածանաց մեջ է, ու կնախատվի: Զասոնք հերիք սեպելով՝ պահ մը արթնանաք: Միախորհուրդ երգնունք ի խաչ և... փրկություն միջոց փնտրենք, ապա թե ոչ կորուստ մեջ է իսպառ»:

Էրզրումում (Կարինում) 1881 թ. հիմնված «Պաշտպան հայրենյաց» զաղափարի ընկերությունը, որը համեմատաբար ավելի խոշոր կազմակերպություն էր, կապեր ուներ ոչ միայն Արևմտյան Հայաստանի մի շարք գավառների հայրենասեր տարրերի, այլև Կովկասի հայկական որոշ շրջանների հետ: Էրզրումի ռուսական հյուպատոս գեներալ Դեննետը իր զաղափարի գեկուցագրում, գրված 1882 թ. դեկտեմբերի 11-ին, նշում էր, որ ընկերությունը ցանկացել է կազմակերպել «դիմված ապստամբություն թուրքական կառավարության դեմ», որ խուզարկության ժամանակ «հայտնաբերված են թուրքիկներ և գեներալ»: Զեկուցագրում այնուհետև ասվում էր, թե զաղափարի ընկերությունը ունեցել էր իր հեկտոգրաֆը, որի միջոցով տպվել են անդամատմասեր, երգումնագրեր, կոչեր և այլն: Երզրում տեքստում ի միջի այլոց գրված էր, թե ընկերության անդամը «երզրում է մինչև իր արյան վերջին կաթիլը զենքը ձեռքին պաշտպանել հայրենիքի շահերը»: Ավելի ուշ ռուսական հյուպատոսը հայտնում էր, որ կազմակերպության անդամները կապեր են ունեցել ոչ միայն գավառների, այլև Կ. Պոլսի հայերի, ինչպես նաև Թիֆլիսի և ապա «Ռուսաստանի նիհիլիստների հետ»:

Քաղաքական կուսակցություններից ազատագրական շարժմանը մասնակցեցին հատկապես հնչակյաններն ու դաշնակցականներն, որոնք հակասուլթանական ելույթներ կազմակերպեցին Կ. Պոլսում, Սասունում և այլուր: Արևմտյան Հայաստանում ստեղծված իրենց խմբակների միջոցով նրանք զգալի աշխուժություն մտցրին 1880—1890-ական թթ. հայ ազատագրական շարժման մեջ:

Ազատագրական շարժման ճի ինքնատիպ արտահայտությունը պետք է համարել նաև այն փաստը, որ արևմտահայություն, ինչպես նաև կովկասահայություն մի մասը մասնակցություն ունեցավ 1853—1856 թթ. Արևելյան (Ղրիմի) և մասնավորապես ռուս-թուրքական 1877—1878 թթ. պատերազմներին: Օսմանյան ծանր լծից ազատագրվելու իր հույսը կապելով ռուսական բանակի հաղթանակի հետ, հայ բնակչությունը այնտեղ, որտեղ այդ հնարավոր էր, ամեն կերպ օգնում էր ռուսական զորքերին և հաճախ զենքը ձեռքին, ռուս զինվորների հետ միասին հերոսաբար կռվում թուրքական հարստահարիչների դեմ:

1870-ական թթ. վերջերից սկսած հայ իրականություն, գլխավորապես կովկասահայություն մեջ, ծայր առավ կամավորական շարժում, որի մեջ ընդգրկվեց ժամանակի հայ երիտասարդ հայրենասերները մի մասը: Կամավորները ձգտում էին գնալ Արևմտյան Հայաստան, օգնել թուրքական բռնապետության տակ հեծող ժողովրդին, կազմակերպել ապստամբական շարժումներ և այդ ճանապարհով իրականացնել արևմտահայ եղբայրների ազատագրության գործը: Կատարվեցին գործնական քայլեր: Արխիվային նյութերը վկայում են, որ տասնյակ է հարյուրավոր հայ ռուսանոցներ Նրեանից, Թբիլիսիից ու Մոսկվայից, ապա զինված չոկատներ Ալեքսանդրապոլից, Կարսից ու Ախալցխայից 1880-ական թթ. ճանապարհվել են Արևմտյան Հայաստան, գլխավորապես Վան: Նույնանման փաստեր տեղի ունեցան նաև հետագայում՝ 1890-ական թթ.: Կամավորական այս շարժումը ևս պետք է դիտել որպես XIX դարի երկրորդ կեսի հայ ազգային-ազատագրական շարժման մի բաղկացուցիչ մասը:

Նույնը պետք է ասել նաև ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսության մասին, գաղափարախոսություն, որի պարագլուխներն էին ժամանակի հայ հասարակական-քաղաքական մտքի և մշակույթի նշանավոր ներկայացուցիչները: Ազատագրական գաղափարների պրոպագանդան ու տարածման գործում զգալի դեր խաղացին նաև մեր պարբերական մամուլի մի շարք օրգաններ («Արծվի Վասպուրական», «Մեղու», «Ծագիկ», «Մշակ», «Պսակ» և այլն):

Այսպիսով, մեզ այստեղ հետաքրքրող ժամանակահատվածի ազատագրական շարժման օրյեկտիվ, գիտական պատմությունը հնարավոր է միայն այն դեպքում, երբ տրվեն այդ բազմերանգ շարժման բոլոր դրսևորումները իրենց անբակտելի ամբողջություն մեջ:

XIX դարի երկրորդ կեսի ազգային-ազատագրական շարժումը, ի տարբերություն նախորդ շրջանների ազատագրական պայքարի, ուներ համազգային բնույթ: Եվ դա հասկանալի է, որովհետև XIX դարի 50—

60-ական թթ. արդեն ամբացան արևմտահայություն և արևելահայություն տեսնական, մշակութային, գաղափարական և քաղաքական կապերը, ծաղկեցին և յուրատեսակ վերածնություն ապրեցին մշակույթի գրեթե բոլոր ճյուղերը, ուժեղացավ հայրենասիրական ու ազատասիրական գաղափարների պրոպագանդան և այլն: Բնորոշ է, օրինակ, որ այդ տարիներին Ռաֆայել Պատկանյանը և մի շարք այլ գրողներ ու հասարակական-քաղաքական գործիչներ առաջ էին քաշում ազգային համախմբման գաղափարները: Կ. Սրվանձությանը «Արծվի Վասպուրականի» էջերից խիստ հարձակումներ էր գործում նրանց վրա, ովքեր մտածում էին ոչ թե ամբողջ Հայաստանի բախտի, ամբողջ ազգի մասին, այլ իրենց նեղ շահերի, իրենց քաղաքի կամ դավառի մասին: Ոչ թե «գավառասիրություն», այլ «հայրենասիրություն»—ահա նրա նշանաբանը: Մկրտիչ Պեշիկիթաշյանը կոչ էր անում մի կողմ նետել ներքին, կրոնադավանաբանական վեճերը և միացյալ ուժերով դարբնել «ազգի բախտը»:

Նման պատմական իրադրության մեջ բնականորեն հայ ազատագրական ելույթները դուրս եկան իրենց նեղ, դավառական սահմաններից, ջերմ արձագանք գտան հայության լայն շրջաններում և ստացան համազգային կերպարանք ու նշանակություն: Այս տեսակետից շատ ակնհայտ է ղեկավարների 1862 թ. ապստամբության օրինակը: Զեյթունցիներն առաջին անգամ չէ, որ ապստամբում էին թուրքական իշխանությունների դեմ, բայց առաջնորդում այդ ելույթները ստանում էին լուրջ շարժման բնույթ և ֆեոդալական մասնատվածության պայմաններում գրեթե անկատ էին մնում հայության մյուս հատվածների համար: Դրությունը այլ էր 1862 թ.: Զեյթունցիների այս ապստամբության մասին հողվածներ տպագրվեցին պարբերական մամուլի շատ օրգաններում և մասնավորապես «Փարիզ», «Կոստնկ Հալոց աշխարհին», «Ծագիկ», «Մասիս» թերթերում ու հանդեսներում: Հերոսամարտը երգեցին շատերը, որոնց թվում Մ. Պեշիկիթաշյանը Կ. Պոլսում և Մ. Շահպաղը՝ Մոսկվայում: Ժամանակակիցներից մեկը՝ Մ. Երիցյանը, գրել է. «Զեյթունի անցքերը մեծ ազդեցություն ունեցան Պոլսո և այլ տեղերի հայության վրա. ամենայն ոք Կիլիկիան ուներ ի բերան, ամենայն ոք մասնակից էր դրամական հանդանակությանը»: Թբիլիսիի հայ երիտասարդությունը հանդանակություն սկսեց ապստամբների օգտին: Այս կապակցությամբ «Կոստնկ Հալոց աշխարհին» հանդեսում տպագրվեց հատուկ կոչ, ուր ի միջի այլոց ասված էր. «Ուրախ ենք, որ մեր քաջասիրտ Զեյթունի հայերն իրանց աջու կռան ուժով» թշնամիների «ակոճքը փշրել են հենց էն գլխեմեն և թույլ չեն տվել, որ նրանց կատաղությունը

նը իր ուզածն անի»: Այնուհետև Ռուսաստանի հայերին կոչ էր արվում դրամ հավաքել և ուղարկել նրանց: «Էս ազնիվ խորհուրդը մենք շատ հայերի բերանից լսում ենք էս օրերումս, միայն գործադրությունն է հարկավոր: Թող աշխարհ ամենայն վկա լինի, որ Ռուսաստանի հայերն էլ շեն մոռանում խորը Տաճկաստանում կրակի ու սրի տակ հալումաշ կողո իրանց եղբարցը»:

Ազգային գարթոնք ապրող հայությունն, ինչպես տեսնում ենք, անմիջական ուշադրություն դարձրեց և հայրենասիրական ջերմ վերաբերմունք ցուցաբերեց գեղթունցիներին 1862 թ. ապստամբության նկատմամբ: Նման վերաբերմունքի արժանացան XIX դարի երկրորդ կեսին թուրքական բռնապետության դեմ ուղղված նաև մյուս ժողովրդական ելույթներն ու բնզվզումները, որովհետև դավաճասիրությունը, Գ. Սըրվանձադյանցի բառերով ասած, իր տեղը արդեն զիջել էր հայրենասիրությանը, այլ կերպ ասած՝ համազգային: գաղափարախոսությունը:

Սոցիալ-դասակարգային ի՞նչ բովանդակություն ունեւ XIX դարի երկրորդ կեսի հայ ազգային-ազատագրական շարժումը, որո՞նք էին նրա սոցիալական գլխավոր շարժիչ ուժերը: Հայտնի է, որ նախորդ ժամանակաշրջաններում օտար զավթիչների դեմ ուղղված հայ ազատագրական պայքարին ժողովրդական զանգվածների հետ միասին մասնակցում էին իշխող դասակարգերն ու խավերը, ընդ որում առաջադրվող հիմնական նպատակն էր վերականգնել հայկական թագավորությունը: XVI—XVIII դարերում, օրինակ, հայ ազատագրական շարժման ղեկավարությունը, ինչպես հայտնի է, գտնվում էր ազնվականության (մեղիքների), եկեղեցու (բարձր հոգևորականության) և առևտրական (խոջայական) կապիտալի ներկայացուցիչների ձեռքում: Օտար տիրապետության դեմ ուղղված քաղաքական-ազատագրական պայքարը (ի բացառյալ XVIII դարի երկրորդ կեսին հանդես եկած հայ լուսավորիչներ Հովսեփ Էմինի, Շահամիր Շահամիրյանի ու Մովսես Բաղրամյանի ծրագրերի) դեռևս առաջ չէր քաշում սոցիալ-տնտեսական փոփոխությունների հարցը, մասնավորապես ֆեոդալական կարգերի ու հարաբերությունների վերացման խնդիրը:

Դրությունը փոխվեց XIX դարի երկրորդ կեսին: Այս շրջանի ազգային-ազատագրական պայքարի գլխավոր շարժիչ ուժն արդեն գյուղացիությունն էր, գյուղի ու քաղաքի մանր բուրժուազիան, դեմոկրատական, առաջավոր մտավորականությունը: Օսմանյան տիրապետության դեմ Զեյթունում, Վասպուրականում, Սասունում և այլուր ժողովրդական ելույթներում կենտրոնական ու որոշիչ ուժը գյուղացիական մասսաներն էին, որոնք ենթարկվում էին ոչ միայն ազգային անլուր

ճնշումների, այլև ֆեոդալ բռնապետների՝ բազմաթիվ բեյերի, շեյխերի ու այլ ավատատերերի անասելի սոցիալական կեղեքումներին, ավատատերեր, որոնք Արևմտյան Հայաստանում միաժամանակ կիրառում էին և՛ ազգային, և՛ սոցիալական ճնշումներ ու հարստահարություններ: Այսպիսի պայմաններում, հասկանալի է, որ գյուղացիության հակասովթանական ազգային-ազատագրական պայքարն ուներ նաև հակաֆեոդալական, դեմոկրատական բնույթ:

Հայ ազգային-ազատագրական շարժման ղեմնկրատական բնույթի մասին է վկայում նաև այն փաստը, որ օսմանյան կարգերի դեմ պայքարի նրած հայ հայրենասերների զաղտնի խմբակներում ու կազմակերպություններում ընդգրկված անդամների ճնշող մեծամասնությունը գյուղացիներ, արհեստավորներ, բուսուցիչներ և ժողովրդի ծոցից ելած այլ մտավորականներ էին: Բավական է նշել, որ էրզրումի «Պաշտպան հայրենյաց» զաղտնի կազմակերպությանը պատկանելու մեղադրանքով ձեռքադրված 70 մարդկանցից 20-ը գյուղացիներ էին, 3-ը՝ ուսուցիչ և ընթերցարանի պետ, մեկը՝ նկարիչ, 3-ը՝ առևտրականներ, 13-ը՝ կոշկակարներ, 6-ը՝ դերձակներ, մնացածները՝ դարբիններ, հյուաներ, ջրաղացպաններ և այլն: էրզրումի առևտրական դեսպան գեներալ-մայոր Գեննետի ղեկուցադրերում ասվում էր, որ բնկերության անդամները մեծ մասամբ արհեստավորներ, մանր առևտրականներ և ընդհանրապես «ցածր դասակարգի» ներկայացուցիչներ էին: Նույն բանը նշում էր «Մշակ» լրագրի թղթակիցը: Ընկերության անդամները, գրում էր նա, «պատկանում են ընդհանրապես աղքատ, շքավոր դասակարգին»:

Մտավորապես նման սոցիալական կազմ ունեին նաև մյուս գաղտնի կազմակերպությունները և կամավորական այն ջոկատները, որոնք Կովկասից մեկնում էին դեպի «երկիր»՝ Արևմտյան Հայաստան՝ մասնակցելու այնտեղ տեղի ունեցող հակասովթանական շարժմանը: Ինչպես տեսնում ենք, այս փաստերը ևս կասկած չեն թողնում այն մասին, որ XIX դարի երկրորդ կեսի հայ ազգային-ազատագրական պայքարի գլխավոր շարժիչ ուժը եղել է գյուղացիությունը, մանր սեփականատեր ընդհանրապես: Եվ պատահական չէր, որ ազատագրական շարժման ղեկավարությունը գտնվում էր ժողովրդի իղձերն արտահայտող տարատիճան (ռազմոչին), ազգային-ազատագրական պայքարի գաղափարներով տոգորված ռազմիկայ, դեմոկրատական մտավորականության ձեռքում:

Ի՞նչ զիրք բռնեց հայ բուրժուազիան: Արևմտահայ հղիացած խոշոր բուրժուազիան՝ ամիրանները, սառաֆները և նույն դասին պատկանող ու փաստորեն ազգային դեմքը կորցրած բարձրաստիճան հայ

էֆենդիները անվերապահորեն հանդես եկան ազատագրական շարժման դեմ: Բազմաթիվ թեկերով կապված լինելով սուլթանական կառավարութեան հետ՝ նրանք շահագրգռված էին տիրող ռեժիմի պահպանման մեջ և ունեին այն տեսակետը, թե ամբողջ հույսը պետք է դնել «բարեխնամ կայսեր», այսինքն՝ սուլթանի վրա ու ոչ մի դեպքում չպետք է հանդես գալ նրա դեմ: Բնորոշ է, որ դատապարտելով ազատագրական-քաղաքական շարժման կողմնակիցներին, Ազգային ժողովի պատգամավոր, ամիրայական ռեակցիայի ներկայացուցիչներից մեկը՝ Խոճասարյան Օթսեն էֆենդին, օրինակ, ակնհայտորեն կեղծելով պատմական փաստերը, բարբառում էր. «Մեր ազգը երբեք ապստամբություն չըրած չէ և չընեք, մեր բոլոր ըրածը խնդիր է, խնդիր դրով և բերանացի»: Մեծահարուստ հայ ազան ստորաքար ծառայի նման միայն ողորմածութիւն էր խնդրում և վճռականորեն մերժում էր որևէ շարժում՝ ուղղված տիրող կարգերի դեմ:

Ազգային-ազատագրական շարժման նկատմամբ բացասական դիրք բռնեցին նաև նրանք, ովքեր ձգտում էին «մեծ պետութիւնների» միջամտութեամբ բարենորոգումներ կիրառել Արևմտյան Հայաստանում: Այս տեսակետն էր դավանում նաև արևմտահայ վերնախավի այն խումբակցութիւնը, որի պարազլուխն էր պատրիարք Ներսես Վարժապետյանը:

Ոգևորվելով սահմանադրական շարժմամբ և մեծ հույսեր կապելով նրա հետ՝ հայ լիբերալ հոսանքի մի շարք ներկայացուցիչներ (Գ. Օտյան, Ն. Ռուսինյան, Սերվիչեն և ուրիշներ), ժխտելով քաղաքական-ազատագրական շարժման անհրաժեշտութիւնը, քարոզում էին այն տեսակետը, թե պետք է լուսավորութիւն, գիտութիւն տարածելու, դանազան կուլտուր-կրթական ու երկրագործական-գյուղատնտեսական ընկերութիւններ ստեղծելու և այլ խաղաղ միջոցառումներով բարելավել հայ բնակչության վիճակը: Արտահայտելով հայ սահմանադրականների այս տեսակետը, Կ. Պոլսի «Սեր» թերթը գրում էր. «Մենք տարակույս չունինք, որ քաղաքակրթութիւնը հաղթական պիտի ելնե, բայց ոչ թե արլունահեղ պատերազմներով, այլ խաղաղութեամբ, հանդարտութեամբ և լուսավորութեամբ»:

Ի տարբերութիւն հայ բուրժուազիայի մյուս խավերի, հայ ազգային-ազատագրական շարժմանը մասնակցում էր արևմտահայ գաղափարական բուրժուազիան, այն հայ առևտրականներն ու արդյունաբեր-ժողովները, որոնք ապրելով և գործելով բուն երկրի՝ Արևմտյան Հայաստանի գաղափարներում մշտապես գտնվում էին ահ ու սարսափի մեջ, թալանի ու կողոպտւտի վտանգի տակ, ազգային ճնշումների ու հարստա-

հարութիւնների դժնդակ պայմաններում: Կենսականորեն շահագրգռված լինելով օսմանյան ռազմաֆեոդալական կարգերի վերացմամբ՝ հայ բուրժուազիայի այս հատվածը միանում էր ժողովրդական զանգվածների ազատագրական պայքարին, քանի որ սովյալ ժամանակաշրջանում այդ պայքարի նպատակակետն էր ստեղծել օտար տիրապետութիւնից ազատ բուրժուա-դեմոկրատական կարգեր: Ինքնին հասկանալի է, որ խիստ հետամնաց օսմանյան ռազմաֆեոդալական բռնապետութիւնն զբաղված հայ ազգային-ազատագրական շարժման մեջ պիտի մասնակցեր նաև դավաճանական, այլ կերպ ասած՝ միջին բուրժուազիան, քանի որ նա նույնպես ենթարկվում էր անխնա ճնշումների, հալածվում և կեղեքվում էր թուրքական իշխանութիւնների ու տեղական փաշաների կողմից: Բայց նորից ենք կրկնում, որ XIX դարի երկրորդ կեսի հայ ազատագրական շարժման գլխավոր շարժիչ ուժը, այնուամենայնիվ, մնում էին գյուղացիական ժողովրդական զանգվածները, որոնց իր ժամանակին արտահայտել են քաղաքական կազմակերպութիւններն ու կուսակցութիւնները:

\* \* \*

Մի քանի խոսք հայ ազատագրական պայքարի գաղափարախոսութեան մասին: Խիստ հետաքրքիր է այն հանգամանքը, որ հայ ազատագրական պայքարի գաղափարախոսութիւնը երբեք չի եղել այնքան ծավալուն, մարտական ու տեսականորեն հիմնավորված, որքան XIX դարի երկրորդ կեսին: 1860—1880-ական թթ. հանդես եկան այնպիսի ակաճավոր դեմքեր, ինչպիսիք են՝ Միքայել Նալբանդյանը, Ռաֆայել Պատկանյանը, Բաֆֆին, Գրիգոր Արծրունին և ուրիշներ, որոնք վճռական դեր խաղացին ազատագրական գաղափարների ձևավորման ու պրոպագանդման գործում: Պատահական չէ, որ ազատագրական գաղափարները նշված ժամանակաշրջանում խոր արձագանք գտան ժողովրդի լայն խավերում և մասնավորապես հայրենասեր երիտասարդութեան մեջ: Ազատագրական շարժումը հիմնականում ղեկավարեցին արմենականները, հնչակյանները ու Հայ հեղափոխական դաշակցութիւնը: 1880—1890-ական թթ. հայ ազատագրական շարժման վրա զգալի ազդեցութիւն ունեցան ռուս ռեյուցիոն նարոդնիկական գաղափարները: Այդ առանձնապես արտահայտվեց «Հայրենասերների միութիւն» և «Հնչակյան կուսակցութիւն» ծրագրերում ու գաղափարական պրոպագանդայում:

Ազատագրական շարժման գաղափարախոսութիւնն ընդհանուր առմամբ ուներ ռազիկալ, դեմոկրատական բնույթ, քանի որ ազատագրական շարժումը ժողովրդական-դեմոկրատական էր:

Հարկ է խոսել նաև հայ ազատագրական շարժման քաղաքական կողմնորոշման մասին: Հայ ժողովրդի ավանդական ուսուսական օրինակաբան անփոփոխ մնաց նաև մեզ այստեղ հետաքրքրող ժամանակաշրջանում: Ահա մի քանի փաստեր: Արիմի պատերազմի կողմնակա ճակատի ռազմական գործողությունների մասնակից գեներալ-մայոր Լիխտաինը գրում էր, որ արևմտահայերը պարզ գիտակցում էն, որ իրենք կարող են օգնություն սպասել միայն Ռուսաստանից: Միքայել Նալբանդյանը 1861 թ. նշում էր այն փաստը, որ Արևմտյան Հայաստանի բնակչությունը ջերմորեն պաշտպանում է ռուսական կողմնորոշումը. «...Հայերն ամբողջ Թուրքիայում,—գրում էր Նալբանդյանը,— տրամադրված են Ռուսաստանի օգտին»:

Կ. Պոլսի անգլիական դեսպանը 1876 թ. գեկուցում էր իր կառավարությանը, որ արևմտահայ ժողովրդական զանգվածները, որոնց հարստահարությունները ծայր աստիճանի են հասնում, ուժեղ ձգտում ունեն դեպի Ռուսաստան:

Վասպուրականի մի քանի հարյուր հազար հայ բնակչության ներկայացուցչական ժողովը 1880 թ. մարտ ամսին հատուկ դիմում ուղարկեց ռուսական կառավարությանը: Նկարագրելով ստեղծված վիճակը և նշելով այն, որ սուլթանական կառավարությունը հայ ժողովրդի նկատմամբ վարում է ֆիզիկական բնաջնջման քաղաքականություն, ժողովը խնդրում էր Ռուսաստանի օգնությունը: Դիմումի մեջ ասված էր, որ հայ ժողովուրդը Ռուսաստանից սպասում է այնպիսի ազատագրական միտք, ինչպիսին նա կատարել է բուլղար ժողովրդի համար: Երկու տարի հետո, 1882 թ. փետրվարին, Վանի հայ բնակչությունը նոր դիմում ուղարկեց ռուսական կառավարությանը: Այդ նույն ժամանակ, 1882 թ. ապրիլին, Կ. Պոլսի ռուսական դեսպան Նովիկովը գեկուցում էր արտաքին գործերի մինիստր Գիրսին, որ անձնական խոսակցության ժամանակ արևմտահայերի պատրիարք Ներսեսը հայտարարել է, թե հայերն իրենց հայացքն ուղղել են դեպի Ռուսաստան, որպես Արևելքի ճնշված ժողովուրդների միակ պաշտպանի ու ազատագրողի:

Ռուսաստան ուղարկված դիմումների ու խնդրագրերի հոսանքն ավելի ուժեղացավ հետագա տարիներին: 1895 թ., օրինակ, Սասունի, Շապին-Գարահիսարի, Մարզվանի և այլ զավառների հայ բնակչությունը դիմումներ ուղարկեց ռուսական համապատասխան հյուպատոսություններին՝ թուրքական բռնակալության ծանր լծից իրենց ազատագրելու մասին:

Ժողովրդական լայն խավերի այս դիրքորոշումը բաժանեցին նաև իր ժամանակի արևմտահայ գրեթե բոլոր առաջադեմ հասարակական ու

քաղաքական գործիչները, ազատագրական շարժման պարագլուխները, զաղտնի խմբակներն ու կազմակերպությունները: Եվ դա պատահական չէր: Այն ժամանակ, երբ Ռուսաստանի օգնությունը օսմանյան լծից ազատագրվեցին սերբերը, հուլիները, բուլղարները և բալկանյան մյուս ժողովուրդները, երբ ռուսական կառավարությունը, ելնելով իր արտաքին քաղաքականության շահերից, առաջ էր քաշում Հայկական Հարցը, Արևմտյան Հայաստանում բարեփոխություններ անցկացնելու խնդիրը և այլն, այդ նույն ժամանակ արևմտյան պետությունները և առաջին հերթին Անգլիան, Ավստրիան ու Ֆրանսիան անում էին ամեն ինչ, որպեսզի անխախտ մնա թուրք սուլթանների բռնապետությունը, և կանխվեն հպատակ ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները: Ելնելով իրենց նվաճողական ծրագրերից, արևմտյան պետությունները Օսմանյան կայսրության նկատմամբ վարում էին այսպես կոչված status quo-ի քաղաքականությունը, քաղաքականություն, որի էությունը դեռ իր ժամանակ շատ դիպուկ կերպով բացահայտել է Ֆրիդրիխ Էնգելսը. նոսելով այս հարցի մասին նա 1853 թ. գրել է. «Ի՞նչ է նշանակում այդ status quo-ն: Բարձրագույն Դոան քրիստոնյա հպատակների համար այդ պարզապես նշանակում է նրանց հարստահարության հավերժացումը Թուրքիայի կողմից» (К. Маркс и Ф. Энгельс. Соч., т. 9, էջ 31):

Երեստ բնորոշ է հեռույալ փաստը: Երբ բռնկվեց գեյթունցիներին 1862 թ. ապստամբությունը, Կ. Պոլսի անգլիական դեսպան Հենրի Պոլիվերը բացահայտ կերպով արտահայտվեց այդ շարժման դեմ, և ինչպես վկայում է վիպագիր Մերենցը, հերոս գեյթունցիներին անամոթաբար անվանեց ավազակներ, որովհետև նրանք պարտության են մատնել թուրքական զորքերին: Կ. Պոլսի անգլիական դեսպանության օրդան «Լեանտ Հերալդ» թերթը հրապարակեց մի շարք հոդվածներ, որոնցում ամեն կերպ վատաբանում էր գեյթունցիներին և արգարացնում թուրքական սուլթանների ճնշումների ու հալածանքների քաղաքականությունը նրանց նկատմամբ:

Հայ ազատագրական շարժման հանդեպ նման վերաբերմունք ունեին նաև արևմտյան մյուս պետությունները: Այս հանգամանքը, իհարկե, չէր կարող վրիպել հայ քաղաքական գործիչների ուշադրությունից: Արտահայտելով տիրող տրամադրությունը, Գրիգոր Արծրունին 1876 թ. «Մշակ» թերթում գրում էր. «Արևմտյան Եվրոպան՝ սկսած խաչակիր պատերազմներից, միշտ ծառայեցրել է իր օգուտներին արևելյան ազգերը... Այժմ երբ որ հայերը կարոտ են Եվրոպայի օգնությանը, ոչ մի Եվրոպական պետություն չի օգնի նրանց: Միակ պետությունը,

որի վրա հայերը կարող են հույս դնել—այդ Ռուսաստանն է»։ Մոտավորապես այսպես էին դատում հայ ազատագրական շարժման գրեթե բոլոր գործիչները։ Ռուսական կողմնորոշումն, այսպիսով, միանգամայն պատճառաբանված ու օրինաչափ երևույթ էր նաև հայ իրակա-նությունից համար։

XIX դարի երկրորդ կեսի ազգային-ազատագրական շարժումը փաստորեն հանդիսանում էր Օսմանյան կայսրության մեջ սուլթանա-կան բռնապետության դեմ նույն դարում ծավալված ազգային-ազատա-գրական շարժման ընդհանուր շղթայի մի օղակը։ Սերբերի, հույների, բուլղարների և բալկանյան մյուս ժողովուրդների հակաթուրքական ազա-տագրական պայքարը շատ ընդհանրություններ ունեն հայ ազատա-գրական շարժման հետ։ Առկա էին փոխազդեցություններ, գաղափարա-կան ու գործնական-բաղաբական կապեր, ընդհանուր իշխման դեմ միա-տեղ պայքարելու ձգտում ու փորձեր և այլն։ Հետաքրքիր է հետևյալ փաստը։ Հույն ականավոր հայրենասեր, հեղափոխական-դեմոկրատ Ռիզաս Վելիսարիլիսը (1757—1798) դեռ իր ժամանակ կոչ էր անում.

Բուլղարներ և ալբաններ, հայեր և հույներ  
Սևեր ու սպիտակներ ոտքի ելնենք միասին  
Ազատության համար զինվենք բոլորս սրերով  
Եվ թող որոտա ձայնը մեր քաջ հերոսների։

Զգալի կապեր են հաստատվել մասնավորապես բուլղար և հայ գործիչ-ների միջև։ Կան, օրինակ, հետաքրքիր տեղեկություններ այն մասին, որ սուլթանական կառավարության կողմից 1870-ական թթ. Գիարբե-քի քաղաքում բուլղար հեղափոխականները քաղաքական կապեր են հաստատել տեղի հայ հայրենասերների հետ։ Բուլղար ժողովրդի հա-կաթուրքական հերոսական պայքարը խորապես ոգևորել է հայությանը և նրա դեմոկրատական մտավորականությանը։ Հայ ազատագրական շարժման գործիչները կոչ էին անում հետևել բուլղար ժողովրդի օրի-նակին։ Գեորգի Ռակովսկու, Վասիլ Լևսկու և Խրիստո Բոտևի հեղափո-խական գործունեությունը, 1876 թ. ապրիլյան զինված ապստամբու-թյունը ողջունվել և լուսաբանվել է հայ պարբերական մամուլի էջերում։ Բուլղարական մամուլում և զրականության մեջ, իր հերթին, ապագրվել են հոգվածներ արևմտահայերի ծանր վիճակի և նրանց պայքարի մասին։

Նշենք նաև հետևյալ փաստը։ 1877 թ. Ռուսաստանում ծավալվեց լայն շարժում թուրքական դահիճների կողմից կոտորածի ու կոշտապետի-

նեթարկվող բուլղար ժողովրդին օգնելու համար։ Այդ շարժումը մեծ արձագանք գտավ նաև հայ իրականության մեջ։ Կազմակերպվեցին բուլղարներին օգնող հատուկ հանձնաժողովներ, տեղի ունեցավ հան-դանակություն, որին մասնակցեցին հասարակության լայն խավերը։

Հայ ազգային-ազատագրական շարժման կապերը օսմանյան տի-րապետության տակ հեծող մյուս ժողովուրդների համապատասխան շարժումների հետ պետք է ենթարկվեն մանրամասն ուսումնասիրու-թյան։ Այդ մեծապես կնպաստի ինչպես հայ, այնպես էլ մյուս ժողո-վուրդների պատմության մի շարք հարցերի, այդ թվում նաև ազատա-գրական պայքարի բազմակողմանի և գիտական ուսումնասիրության գործին։

## 2

Վերջին մի քանի տասնամյակների ընթացքում թուրքական պատ-մագրությունը ծավալել է խիստ աշխույժ գործունեություն։ Հրատարակ-վել և հրատարակվում են բազմաթիվ ժողովածուներ, զանազան ազ-բյուրներ, հոդվածներ և այլն։ Նպատակը մեկն է. կոպիտ կերպով կեղ-ծելով պատմական փաստերը՝ ամեն կերպ զունազարգել ու իդեալա-նացնել օսմանյան պետության պատմությունը, արյունարբու և բար-բարոս սուլթաններին ներկայացնել որպես արդարամիտ ու օրինապահ միապետներ, համոզել ընթերցողներին, որ օսմանյան նվաճումները եղել են առաջադիմական, քանի որ զբաղված երկրներում հաստատ-վել են կարգ ու կանոն, որ փառիշահների տիրապետության տակ զարն-վող ժողովուրդները օգտվել են լայն արտոնություններից, ունեցել են բարեկեցիկ կյանք և այլն։

Զավեշտական այս հեքիաթը դեռևս 1930-ական թթ. լայնորեն շքե-ջանադության մեջ դրեց թուրքական ղեկավար շրջանների կամքով ստեղծված «Թարիհ» (Պատմություն) բազմահատորյակը, ընդ որում պաշտոնական բնույթ ունեցող այդ հրատարակության շինծու տեսա-կանները ստացան ղեկավար ցուցումների ուժ։ Պատմական իրականու-թյունը կեղծող այդ նույն ոգով այնուհետև հանդես եկան հետադեմ և նացիոնալիստ պատմաբաններ Մահմեդ Յուսուֆ Կյուպուլուն, Քայիբ Գոկրիզին, Հոսեյին Նամիկ Օրկունը, Շինասի Ալթինդաղը և ուրիշներ։

Սակայն ս՞րն է պատմական ճշմարտությունը։ Գիտության մեջ վաղուց ի վեր հաստատված է այն իրողությունը, որ XIV դարի սկզբը-նիվրին Փորթ Ասիայի հյուսիսարևմտյան տարածքում կազմավորված օսմանյան պետությունը ուներ բացարձակ բռնապետական ու ծայրա-

հեղ ռազմաֆեոդալական բնույթ: Իշխանությունն զուրի անցած ռազմիկ ավատատերերն ու սուլթանները իրենց նյութական ապահովության ու հարստացման հիմնական աղբյուրը դարձրին նվաճողական արշավանքներն ու պատերազմները, օտար երկրների գրավումը և կողոպուտը, դրանց բնակչության և մասնավորապես «անհավատների» դերեվարությունը, ռազմատուգանքի և անասելի ծանր հարկերի բռնագանձումը:

Օսմանյան նվաճումները ամենուրեք կատարվում էին հրով ու սրով, անասելի կոտորածներով ու ասպատակություններով: Կրոնական ֆանատիզմով շնչող օսմանյան սուլթանները զրավված երկրներում հաստատեցին բռնի ստրկացման, դաժան ճնշումների ու հարստահարությունների ռեժիմ: Նվաճված երկրներում ստեղծված օսմանյան ռեժիմը, նշել է Կ. Մարքսը, ոչ այլ ինչ էր, եթե ոչ «ռազմական օկուպանտները» ռեժիմ:

Հպատակ երկրներում օսմանյան պետությունը վարում էր բացարձակ բռնություն, կամայականության, ստրկացման և անլուր ճնշումների քաղաքականություն: Նվաճված ժողովուրդների համար օսման-թուրքերի տիրապետությունը բերում էր ռազմաֆեոդալական դաժան շահագործում, սոցիալական անասելի կեղեքում, արտատնտեսական ճնշման ամենավայրենի ձևեր, աղզային և կրոնական բարբարոսական հալածանքներ ու հարստահարություններ:

Այդօրինակ քաղաքականություն կիրառվում էր նաև Օսմանյան կայսրության մի մասը կազմող Արևմտյան Հայաստանում, ուր XVI դարում երկարատև ու ավերիչ արշավանքներից հետո իրենց տիրապետությունը հաստատեցին թուրքական սուլթանները: Աղզային ճնշումները, հարստահարությունները, կողոպուտը և թալանը ստացան այլանդակ ձևեր: Պատահական չէ, որ XVII—XVIII դդ. հայ պատմիչները, ժամանակագիրներն ու հիշատակարանների հեղինակները ողբում էին իրենց ժամանակի դառն իրականությունը: Իր ուղեգրական նոթերի մեջ լեհահայ Սիմեոն դպիրն, օրինակ, գրում էր, թե արևմտահայերը ենթարկվում են բազմապիսի ծանր տառապանքների, «վասն որոյ յոյժ աղբատ եւ շքավոր են, զի միշտ զրկեն, տուգեն, զրպարտեն եւ առավել հարկս պահանջեն... ամեն տեղ թալան եւ ետզմայ եւ զուրում»: Նույն XVII դարի մի այլ ժամանակագիր բացականշում էր. «Արդ զնեղութիւն և զդառնութիւն վշտաշատ ժամանակիս ո՞վ կարէ ընդ գրով արկանել, ո՞վ եղբարք»: Ժողովրդի ծանր դրությունն մասին Հակոբ Կարենցին հայտնում էր. «Հարկապահանջութիւնն և կեղեքելն անասելի է և անպատմելի»:

Արևմտահայության դրությունը, սակայն, ավելի ծանրացավ XIX դարի երկրորդ կեսին, երբ սուլթանական կառավարությունը ազգային և սոցիալական ճնշումներն ու հարստահարությունները ուժեղացնելու հետ մեկտեղ սկսեց վարել պետական ծրագրի ուժ ունեցող իր արյունոտ քաղաքականությունը, որի իմաստն էր Հայկական Հարցը լուծել հայերին ոչնչացնելու միջոցով: Ահա մի քանի փաստ արևմտահայերի այդ շրջանի ողբերգական ու կրիտիկական վեճակի մասին:

Մեր ահանազան բանահավաք Գարեգին Սրվանձությանցը Մշո գավառում տիրող դրությունը 1864 թ. պատկերում էր հետևյալ ձևով. «Գնդակներու հարձակում, արյան հոսում, ընչից ավար, ընտանյաց բռնաբարություն, կեղեքոց կողոպուտ, օրինաց եղծում, կենաց գրավում»:

Քրի գավառի հայ բնակչության մասին ահանատեսը 1869 թ. գրում էր. «Այս ժողովուրդը բարոյապես և ֆիզիքապես կորսվելու վրա է, իրենց կյանքն ալ, ստացվածքն ալ վտանգի մեջ է, ամեն օր կսպանվին, կվիրավորվին, կկողոպտվին, կհարստահարվին»:

Արևմտյան Հայաստանի մի շարք գավառներում գյուղացիությունը գտնվում էր ճորտական վիճակում: Այդ մասին կան բազմաթիվ վկայություններ ու տեղեկություններ, որ թողել են ժամանակակիցիցները, ահանատեսները և օտար աղբյուրները: «Հայկական աշխարհ» պարբերականը 1868 թ. Սղեբը գավառի գյուղացիների մասին գրում էր, որ բնիկըր անսահմանափակ կերպով նրանց գնում և վաճառում են որպես բանող անասունների:

Չարսանջախի հայ բնակիչները էջմիածնի կաթողիկոսին ուղղած իրենց բողոքագրում հայտնում էին, որ իրենք ստիպված են կատարել բնիկի ու աղաների բոլոր ցանկությունները և կամայականությունները: Ամուսնության իրավունք ստանալու համար, գրում էին նրանք, պետք է աղաչին վճարենք հարյուրից մինչև 1000 ղուրուշ կանխիկ գրամ: Ամեն մարդ «ձրի և առանց հացի ու հացիդինս մեր քսակեն հետերինս առնելով արոտեից, այգեստանցայ և պարտիղայ մշակությունը անխափան պիտի կատարենք. ամեն տուն իր աղաչին հիսուն վաթսուն բեռ փայտ տարուց տարի պիտի հատուցե, նաև որքան որ պետք ըլլա իշխանին համար չուղ, ոչխար, գառ, մուճակ ամենալն կարևոր պիտուլըր ձրիաբար պիտի հատուցանենք: Եթե ընդդիմանանք կամ զանց առնենք և կամ սակավ ինչ ուշանա, շղթա, գելան, մահաղեղ, սուր, հրացան արդեն մեզի համար պատրաստված է»:

Կ. Պոլսի հայ պատրիարք Ներսես Վարժապետյանը սուլթանական կառավարությանն ուղղված իր մի բողոքագրի մեջ խոսելով Մոկու գա-

վառի մասին, գրում էր, թե «պեյերը գյուղացի հայերն իրենց մեջ իրրև գերի կվաճառեն»:

Արևմտյան Հայաստանի որոշ մասերում գոյություն ունեցող ճորտական իրավունքի մասին խոսում են նաև ուսական, անգլիական, ֆրանսիական և այլ աղբյուրները: Կ. Պոլսի ուսական դեսպան Զինովին ուղղած իր ղեկուցադրում Վանի ուսական փոխհյուպատոս Թումանովսկին Սասունի մասին գրում էր. «Այնտեղ գոյություն ունի խաֆիրների սոցիալ-իրավական ինստիտուտ: Դա հայերի համարյա թե ճորտային կախվածությունն է բեկերից: Դեպի Սասուն կատարած իմ անցյալ տարվա ճանապարհորդության վերաբերյալ ղեկուցագրի մեջ ես արդեն առիթ եմ ունեցել մատնանշելու նման կախվածության գոյությունը, բայց այն ժամանակ ես չէի կասկածում, որ գործ ունեմ կառավարության կողմից հաստատված իրավական նորմաների հետ: Այդ նորմաների համաձայն յուրաքանչյուր հայ պատկանում է որևէ աղայի և պարտավոր է ամեն տարի իր տիրոջը հասցնել մեկ եղ կամ կով, մեկ ոչխար, մեկ այծ, բուրգ՝ մի զույգ շալվարի համար, մի զույգ գուլպա, մի զույգ քոշ (տրեխ) և 20 պիաստր դրամ... Փողի կարիքի դեպքում բեկերը վաճառում էին իրենց գյուղացիներին»: Անգլիական հայտնի ճանապարհորդ Լինչը նշում էր. «Ճորտական իրավունքը անհայտ չէ այս երկրի համար... Ճորտ հայերը հայտնի են Զեր-կուրի անվան տակ, որ նշանակում է ոսկով գնվածներ: Եվ իսկպես, նրանք գնվում և վաճառվում են քուրդ բեկերի ու աղաների կողմից, ձիշտ այնպես, ինչպես որ գնվում և վաճառվում են ոչխարներն ու տավարը: Միակ տարբերությունն այն է, որ այդ մարդիկ չեն կտրվում իրենց հողից և վաճառվում են հողի հետ միասին, որը նրանք մշակում են»: Ֆրանսիացի զինվորական Ֆրիդրիխ Միլինգենը, որ Օսման Սեյֆի բեյ անունով ծառայում էր թուրքական բանակում, նույնպես գրում էր հայ գյուղացիների ճորտական վիճակի մասին Մուշում և Զարսանջակում:

Հայ բնակչության վիճակը Արևմտյան Հայաստանում գնալով ավելի տաղանապալի էր դառնում: 1870-ական թթ. օսմանյան կառավարությունը սկսեց ծրագրեր մշակել հայկական ջարդեր կազմակերպելու համար: 1876 թ. դեկտեմբերին թուրքական իշխանությունների հրահրմամբ կազմակերպվեցին հրդեհներ Վան քաղաքում: Կրակի ձարակ դարձան բազմաթիվ շինություններ, թալանվեցին հայերի գրեթե բոլոր խանութները, կատարվեցին սպանություններ ու ձերբակալություններ: Մեկ տարի հետո, 1877 թ., երբ սկսվեց ուս-թուրքական պատերազմը, սուլթանական բանակի հրամանատարությունը կազմակերպեց հայ գյուղացիության մասսայական ջարդեր Վանի, Ալաշկերտի ու Բայազետի շրջ-

ջաններում: 1880-ական թթ. սուլթան Աբդուլ Համիդի պայատում ծրագրեր մշակվեցին նոր մասսայական կոտորածների համար, ծրագրեր, որոնք իրականացվեցին 1890-ական թթ.:

Այսպիսին է պատմական իրողությունը: Կեղծարարները, սակայն, ինչպես հայտնի է, հաշվի չեն նստում ո՛չ փաստերի, ո՛չ ճշմարտության հետ: Մի շարք թուրք «պատմաբաններ»՝ էսաթ Ուրասը, Սադիկ Կոչաշը, Աբդուլլա Յամանը, էնվեր Քարալը, Բիլել Շիմշիրը և ուրիշներ, որոնք հատուկ աշխատություններ են նվիրել արևմտահայության պատմությանը, Հայկական Հարցին ու հայ ազատագրական շարժմանը, համոտրեն պնդում են, որ արևմտահայերը Օսմանյան կայսրության մեջ ունեցել են բարեկեցիկ վիճակ, չեն ենթարկվել ճնշումների ու հարքստահարությունների: Ի դեպ նկատենք, որ այդ տեսակետը դեռ ժամանակ առաջ է քաշել ոչ անհայտ Զամալ փաշան՝ Մեծ Եղեռնի գլխավոր կազմակերպիչներից մեկը: Հայերը պատճառներ չեն ունեցել դրժողոհելու սուլթանական կառավարությունից, որովհետև, ինչպես գրում է Բ. Շիմշիրը 1982 թ. Անկարայում հրատարակված փաստաթղթերի մի ժողովածուի առաջաբանում (ժողովածուն նվիրված է արևմտահայության վիճակին), նրանք և ընդհանրապես բոլոր քրիստոնյաները ունեցել են ապահով կյանք և անգամ գոնվել են ավելի լավ վիճակում, քան թուրք բնակչությունը: Եվ եթե չնայած այս բոլորին, շարունակում են պատմության կեղծարարները, այնուամենայնիվ երբեմն բռնկվել են հակասուլթանական ելույթներ, ապա դրանք չեն ունեցել սոցիալ-տրնտեսական և քաղաքական լուրջ հիմքեր ու պատճառներ, այլ ստեղծվել են արհեստականորեն օտար պետությունների ինտրիգների և արկածախնդիր մարդկանցից կազմված զանազան հայկական «կոմիտեների» գործունեության հետևանքով: Օտար պետություններ ասելով թուրք պատմաբանները նկատի ունեն հիմնականում Ռուսաստանը, իսկ «արկածախնդիրների կոմիտեներ» են անվանում հայ հայրենասիրական այն խմբակներն ու կազմակերպությունները, որոնք պայքարում էին օսմանյան լծի դեմ:

Թուրք հեղինակներին զարմանալի ստրկամտությամբ կրկնում են արևմտյան մի շարք «պատմաբաններ», որոնց համար, բոս էրևույթին, կարևորը ոչ թե գիտական օբյեկտիվությունն է, այլ քաղաքական և այլ նկատառումները: Այսպես, Քեմերիջի համալսարանի հրատարակությամբ 1976—1977 թթ. լույս տեսան երկու ծավալուն հատորներ՝ նվիրված Թուրքիայի պատմությանը, որոնց հեղինակները Ս. Զ. Շոուն և Ե. Կ. Շոուն ջանում են, հակառակ պատմական փաստերի, գովելով Օսմանյան կայսրության մեջ տիրող կարգերը և գործը պատկերել այն-

պէս, որ իբր սուլթանները իրենց հպատակ ազգութիւնների նկատմամբ վարել են մեղմ և հանդուրժողական քաղաքականութիւն: Խոսելով արեւմըտահայութեան մասին՝ նրանք նորից կրկնում են այն հեքիաթը, թե Ռայերը դժգոհ չեն եղել իրենց վիճակից, իսկ եթե XIX դարի 70-ական թթ. հետ դրութիւնը վատացել է, ապա դրա մեղավորները հայկական կոմիտեաներն են, որոնք իրենց գործունեութեամբ մեծ վնասներ են պատճառել թուրքերին: Ամերիկայի հեղինակ, ծագումով թուրք Ք. Հ. Կարպատը, բաժանելով Երուսաղեմի արևմտեան կողմից, միաժամանակ աշխատում է յուրյց տալ, որ XIX դարում հայերի թիւը Արևմտյան Հայաստանում եղել է շատ փոքր: Կարպատը կեղծում է փաստերը, նա հաշիւ է նստում միայն թուրքական աղբյուրների հետ, որոնց օբյեկտիվութիւնը վաղուց մերժել է պատմագիտութեան կողմից:

Կեղծարարների այն պնդումը, թե Օսմանյան կայսրութեան մեջ հայերն ունեցել են ապահով վիճակ և հետևապէս չեն պայքարել օսմանյան տիրապետութեան դեմ, խիստ ստահող է: Այդ մասին, ինչպէս հայտնի է, կան բազմաթիւ անհերքելի փաստեր և հարուստ գիտական գրականութիւն:

Ստահող է նաև այն թեզը, որ իբր XIX դարի երկրորդ կեսին Արևմըտյան Հայաստանում բռնկված հակասութեանական ելույթները կազմակերպվել են զանազան հայկական «կոմիտեաների» կողմից և չեն ունեցել ժողովրդական բնույթ: Հերքելու համար այդ կեղծիքը բավական է հիշել 1862 թ. ապստամբութիւնը Զեյթունում, ապստամբութիւնը, որ իսկապէս ինքնաբոխ համաժողովրդական ինքնապաշտպանական շարժում էր և չէր կազմակերպվել որեւէ կոմիտեի կողմից: Հայտնի է, որ այդ շրջանում դեռևս գոյութիւն չունեին նման «կոմիտեաներ»: Ի դեպ, ավելորդ չէ հիշել, որ օսմանյան բռնապետութեան դեմ հայ ժողովուրդը հերոսական կռիւներ է վարել նաև նախորդ շրջաններում, թեկուզ, օրինակ, 1720-ական թթ., երբ դարձյալ խոսք չէր կարող լինել «կոմիտեաների» գոյութեան մասին: Իրականութեան այն է, որ ինչպէս արդեն նշվեց վերևում, XIX դարի երկրորդ կեսին ծավալվեց ժողովրդողակտն ազատագրական շարժում, որին մասնակցեցին նաև հայրենապիրական զաղափարներով սողորված, ժողովրդի հետ կապված ու նրա իղձերն արտահայտող զանազան խմբակներ, կազմակերպութիւններ ու կուսակցութիւններ: Սա միանգամայն բնական ու օրինաշատ էր:

Կեղծարարները երբեմն գործն այնպէս են ներկայացնում, որ արևմըտահայերի ազատագրական շարժումը իբր զավաղրական մի ակտ էր՝ ուղղված «գլխախրտ» սուլթանների դեմ, և որ այն, ինչպէս նաև

մյուս ժողովուրդների ազատագրական շարժումները, նպաստում էին Օսմանյան կայսրութեան քայքայմանը: Բայց ո՞ւմ հայտնի չէ, որ օտար զավթիչների կողմից կեղեքվող ու հարստահարվող յուրաքանչյուր ժողովուրդի իրավունքը և սրբազան պարտականութեանն է ոտքի կանգնել իր կյանքը, զույն ու պատիվը, իր աղաչին անկախութիւնը և ազատութիւնը ապահովելու համար: Համաշխարհային պատմութիւնը հարուստ է ազատագրական շարժման բազմաթիւ հերոսական էջերով: Եվ պատահական չէ, որ առաջավոր մարդկութիւնը, նրա բոլոր ականավոր ներկայացուցիչները, միշտ էլ ողջունել ու պաշտպանել են ճնշված ժողովուրդների ազատագրական պայքարը: Մյուս կողմից, չպէտք է մոռանալ նաև այն հանգամանքը, որ բռնապետութիւնների, մասնավորապէս օսմանյան տիպի ռազմաֆեոդալական կայսրութիւնների անկումը միշտ նպաստել է բազմաթիւ ժողովուրդների ազատագրման գործին և մարդկային հասարակութեան առաջադիմութեան պրոցեսին ընդհանրապէս:

Թուրքական և արևմտյան ռեակցիոն պատմագրութեան մեջ հաճախ առաջ է քաշվում այն թեզը, որ հայ ազգային-ազատագրական շարժումը հրահրվել է ռուսական պետութեան կողմից: Հարցադրումը խիստ պարզունակ է: Բանն այն է, և դա դադարիք չէ, որ ռուսական պետութիւնը ինչպէս XVIII, այնպէս էլ մասնավորապէս XIX դարում, ելնելով իր արտաքին քաղաքականութեան նկատառումներից, հովանավորել է Օսմանյան կայսրութեան մեջ հեծող բազմաթիւ ազգութիւններին ազատագրական պայքարը: Այս դեպքում համընկել են Ռուսաստանի և Թուրքիայում հարստահարվող ժողովուրդների շահերը: Հայտնի է, որ Ռուսաստանի օգնութեամբ իրենց անկախութիւնը ձեռք բերեցին սերբերը, հույները, բուլղարները և բալկանյան մյուս ժողովուրդները: Ռուսական կառավարութիւնը 1870—1880-ական թթ. մոտավորապէս նման քաղաքականութիւն վարեց նաև արևմտահայութեան նկատմամբ, քաղաքականութիւն, որի հաջողութեան դեպքում Արևմտյան Հայաստանի խնդիրը կստանար այլ՝ քիչ թե շատ բարեհաջող լուծում:

XIX դարի երկրորդ կեսի հայ ազգային-ազատագրական շարժման շատ հարցեր դեռ կարիք ունեն խորը ու համակողմանի ուսումնասիրութեան: Միաժամանակ խիստ կարևոր է այդ շարժման պատմութեան կեղծարարներին քողազերծ անել հանգամանորեն և պարբերաբար:

АРМЯНСКОЕ НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНОЕ  
ДВИЖЕНИЕ ПРОТИВ ОСМАНСКОГО ДЕСПОТИЗМА  
И ФАЛЬСИФИКАТОРЫ ИСТОРИИ

Резюме

Во второй половине XIX в. в Западной Армении, находившейся под игом османского деспотизма, развернулось национально-освободительное движение, основной силой которого было крестьянство. В ответ на невыносимый национальный и социальный гнет и жестокую политику погромов и резни в стране вспыхнули народные восстания. Имели место вооруженные столкновения с угнетателями, возникли союзы и партии для организации самообороны народа и т. д. В освободительном движении приняла активное участие демократическая интеллигенция.

Современные фальсификаторы истории (как в Турции, так и в западных странах), пытаясь отрицать наличие национально-освободительного движения в Западной Армении, утверждают, что армяне не имели причин для восстания, поскольку они были довольны османским режимом, что против султанского правительства происходили лишь отдельные незначительные вспышки, искусственно организуемые армянскими анархистами. Разумеется, фальсификаторы истории беспардонно искажают историческую правду.

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՅԵՐԻ ՄԱՍԻՆ

1

Վերջին երեք հարյուրամյակների հայ-ռուսական քաղաքական հարաբերությունների պատմության մասին ստեղծվել է բավական հարուստ գրականություն: Հայտնի է, որ այս պրոբլեմով զբաղվել են անվանի պատմաբաններ Կարապետ Եղյանը, Ստեփանոս Պալասանյանը, Ալեքսանդր Երիցյանը, ավելի ուշ՝ Լեոն, Աշոտ Հովհաննիսյանը և ուրիշներ: Հայաստանի խորհրդային Հանրապետության տարիներին (1920—1930-ական թթ.) հայ-ռուսական այլևայլ կապերի ու հարաբերությունների վերաբերյալ հրատարակվել են տասնյակ աշխատություններ, որոնք չնայած իրենց որոշ սխալներին ու թերություններին, զգալի շահով նպաստել են խնդրի լուսաբանմանը: Միաժամանակ, խոշոր գործ է կատարված համապատասխան արխիվային նյութերի հրատարակման ուղղությամբ: Հիշատակության արժանի են, հատկապես, արխիվային փաստաթղթերի այն մեծածավալ ժողովածուները (վեց հատոր), որոնք լույս տեսան Հայաստանի գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի գիտաշխատողների ջանքերով 1950—1980-ական թթ.: Արխիվային արժեքավոր նյութեր հրատարակվեցին նաև պարբերական մամուլում, մասնավորապես, «Պատմա-բանասիրական հանդես», ՀԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.) և «Բանբեր Հայաստանի արխիվներին» պարբերականներում:

Եթե փորձենք ամփոփել մասնագետ պատմաբանների կարծիքները մեզ այստեղ հետաքրքրող հարցի՝ հայ-ռուսական քաղաքական հարաբերությունների և մասնավորապես հայության ռուսական օրիենտացիայի վերաբերյալ, ապա կստացվի այսպիսի եզրակացություն. չնայած ռուսական պետության բռնապետական էությանը ու ցարիզմի մեծապետական, գաղութային ֆալսիֆիկացիային բոլոր դրսևորումներին, այնուամենայնիվ, հայության ռուսական կողմնորոշումը (օրիենտացիան) պատմականորեն արդարացված անհրաժեշտություն էր, քանի որ ընդհանուր առմամբ ժողովրդի կենսական շահերից:

Եզրակացութիւնն, իհարկե, ճիշտ է: Հիշենք մի քանի պատմական փաստեր: Ինչպես հայտնի է, XVI—XVII դդ. հայ քաղաքական մի շարք գործիչներ քանիցս դիմեցին արեւմտյան պետութիւններին՝ օգնութեան գալու հայ ժողովրդին, որը, գտնվելով օսմանյան սուլթանների ու պարսկական շահերի խիստ ծանր լծի տակ, ենթակա էր դաժան հաշտօններին ու ջարդերին: Այս կարգի բոլոր դիմումները, սակայն, ապարդյուն անցան: Հաջորդ դարերին հայ ազատագրական շարժման ներկայացուցիչներն ընտրեցին այլ ճանապարհ: Գիտակցվեց այն իրողութիւնը, թէ միակ հզոր պետութիւնը, որ կարող է ու ցանկութիւն ունի օգնել հայերին, Ռուսաստանն է: Եվ իրոք: Վերջինս, որ հետևողականորեն նվաճողական քաղաքականութիւն էր վարում Մերձավոր ու Միջին Արևելքում, ելնելով իր արտաքին քաղաքականութեան հեռանկարներից, հանդես եկավ որպէս հայերին հովանավորող պետութիւն: Յարակա՞ն կառավարութիւնն աշխատեց ապահովել հայութեան ֆիզիկական գոյութիւնը, նրա գոյատևումը՝ լավ հասկանալով, որ հայ ժողովուրդը կանխամեն ինչ, որպէսզի օգնի Ռուսաստանին ընդդէմ թուրքական ու պարսկական բռնապետութիւններին: Այստեղ ևս գործել սկսեց մեծ ու փոքր երկրների շահերի «համընկնման օրենքը»: Այսպիսով հայերի ռուսական կողմնորոշումը ոչ թէ «ախալ հաշիվների» հետևանք էր, ինչպէս պնդում են առանձին ռուսոֆորներ, այլ ռեալ իրողութիւնների ճիշտ գնահատման և ազգային շահերը զիտակցող առողջ մտածողութեան արդյունք: Պատահական չէր, որ դեռ իր ժամանակ ռուսական օրինատացիայի ջերմ կողմնակիցների դերում հանդես եկան մեր հեռատես ու հայրենասեր կաթողիկոսները, խոջաները, մելիքները և հայ ազատագրական շարժման մյուս ներկայացուցիչներ Իսրայել Օրին, Հովսէփ Էմինը, Շահամիր Շահամիրյանը, Մովսէս Բաղրամյանը, Խաչատուր Աբովյանը և ուրիշներ:

Հանրահայտ է, որ թուրք փաշաների և պարսիկ խաների բարբարոսական լծի տակ գտնվող հայ ժողովրդական ղանգվածները ևս մեծ հույսեր էին կապում Ռուսաստանի հետ: Բերենք մի քանի փաստ: 1806 թ. Հին Բայազետի մոտ 10 հազար հայ բնակիչներ գրել էին ռուսական կովկասյան բանակի գեներալ Նեպետաևին, որ իրենք ցանկանում են գաղթել Արևելյան Հայաստան, բայց սպասում են, որ ռուսական զորքերը գրավեն Երևանը: 1820-ական թթ. Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում շրջադասած անգլիացի ճանապարհորդ Ի. Բ. Արմստրոնգը գրում էր, որ արևմտահայերը «մեծ շահագրգռվածութիւն են հանդես բերում դեպի ռուսական զորքերի տաջիսաղացումը և ռուսներին համարում են փրկարարներ»: Անգլիացի մի այլ հեղինակ՝ Թոմ-

մաս Այկոկը, որը նույն թվականներին այցելել է Արևմտյան Հայաստան, պատմում է, որ հայերը մեծ սպասելիքներ ունեն ռուսներից: «Մի անգամ մտնելով եկեղեցի, որտեղ նրանք աղոթում էին, համոզվեցինք, որ ավելի շատ աղոթում են ռուսների տաջիսաղացման, քան թէ այլ նպատակների համար»: 1861 թ. Միքայել Նալբանդյանը գրում էր, որ հայերը թուրքիայում տրամադրված են Ռուսաստանի օգտին, որ նրանք ունեն ռուսական կողմնորոշում: Խիստ բնորոշ է նաև հետևյալ հանգամանքը: Ռուս-թուրքական զրեթե բոլոր պատերազմներում և հատկապէս 1828—1829 ու 1877—1878 թթ. պատերազմների ժամանակ հարյուրավոր ու հազարավոր հայ կամավորներ արիաբար կռվում էին ռուսական զորքերի շարքում՝ ցանկանալով օգնութեան դալ ծանր լծի տակ գտնվող արևմտահայ հայրենակիցներին:

Այսպիսով, հայութեան ռուսական կողմնորոշումը դարձավ համաժողովրդական: Դրան զգալի շահով օժանդակեց այն հանգամանքը, որ արևմտյան պետութիւնները ոչ միայն չօգնեցին հայերին, այլև ելնելով իրենց տնտեսական ու քաղաքական շահերից, Թուրքիայի նկատմամբ վարեցին այսպէս կոչված, «ստատուս-քվոյի» քաղաքականութիւն, այսինքն՝ հանդես եկան որպէս Օսմանյան կայսրութեան ամբողջականութեան ու անձեռնմխելիութեան կողմնակիցներ և, հետևապէս, սուլթանների լծի տակ հեծող ժողովուրդների ազատագրութեան թշնամիներ: Այս լավ նկատել էր դեռևս հանրահայտ լորդ Բայրոնը: Ավելի ուշ, 1877 թ. անգլիացի հրապարակախոս Էդվարդ Ֆրիմանը գրում էր, որ արևմտյան պետութիւնները վարելով «ստատուս-քվոյի» քաղաքականութիւն, ամբարպնդում ու հավերժացնում են ազգային ճնշումներն ու հարստահարութիւնները Օսմանյան կայսրութեան մեջ: «Այն ամենը, ինչ որ որևէ պետութիւն կարող է անել մյուս պետութեանը օգնելու համար, կատարվել է Թուրքիայի համար, թեև այն ամենը ինչ որ կատարվում է Թուրքիայի համար, կատարվում է հարստահարվող ժողովուրդների դեմ» (E. Freeman. The Ottoman power in Europe, London, 1877, p. 204).

Եվ իսկապէս, երբ 1862 թ. բռնկվեց զեյթունցիների համաժողովրդական շարժումը թուրք բռնակալների դեմ, Կ. Պոլսի անգլիական դեսպան Հենրի Պուլիվերը ինքնապաշտպանութեան դիմած զեյթունցիներին որակեց որպէս ավազակներ, որոնք համարձակվել են ոտքի ելնել «օրինական» իշխանութիւնների դեմ (տե՛ս «Փորձ», 1873 թ., № 11):

Հաշիվ նստելով պատմական փաստերի հետ՝ XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին հայ գործիչները ևս, շարունակելով իրենց հայ-

րենասեր նախնիների ավանդական քաղաքականությունը, հավատարիմ մնացին ռուսական օրինատացիային: Այդպես վարվեցին, օրինակ, Սոփիանոս Նազարյանը, Միքայել Նալբանդյանը, Բաֆֆին, Գրիգոր Արծրունին, Արփիար Արփիարյանը և շատ ուրիշներ: Հռչակավոր «Հյուսիս-սահայիք» խմբագիր Ստ. Նազարյանցը ամենայն համոզվածությամբ քնդգծում էր. «Հայերը ճշմարտապես և իրավացի շնորհակալ են Ռուսաստանին, որ ազատել է նորանց մի անտանելի, անարգական ստորկույթությունից, և բացել նոցա առաջ մի նոր քաղաքական կյանքի ապարեզ»: 1876 թ. Գրիգոր Արծրունին «Մշակում» գրել է. «Այն խռոթերը, թե Անդլիան պատրաստ է պահանջել ինքնավարությունը Ռենսիայի, էփիրոսի և Հայաստանի համար սուտ, դարդակ, կեղծավոր խոսքեր են: Մենք նրանց չենք հավատում... Արևմտյան եվրոպան՝ սկսած իտալիկից պատերազմներից, միշտ ծառայեցրել է իր օգուտներին առեկյան ազգերը... Այժմ, երբ հայերը կարող են եվրոպայի օգնությանը, ոչ մի եվրոպական պետություն չի օգնի նրանց: Միակ օգնությունը, որի վրա հայերը կարող են հույս դնել—այդ Ռուսաստանն է» (քնդգծումը մերն է—Մ. Ն.):

Դժբախտաբար, ոչ բոլոր հայ գործիչները համաձայնվեցին Գր. Արծրունու և մյուս հեռատես հայ քաղաքագետների հետ: Ռուսական օրինատացիայի դեմ հանդես եկան նախ և առաջ օսմանյան կառավարության հետ զանազան կապեր ունեցող և Բ. Դոան պալատներում տեղ դրած մեծահարուստ էֆենդիները, որոնք ջարդարար Աբդուլ Համիդ Նրկորդին համարում էին «բարեխնամ» սուլթան, նրանից ապաստելով ողորմածություն ու շնորհներ:

Ելնելով այլ դիրքերից, առաջ քաշելով ուրիշ փաստարկներ, բայց նորից թուրքոֆիլական մտածողություն ցուցաբերեցին այսպես կոչված հայ պահպանողական հոսանքի շատ ներկայացուցիչներ ինչպես Արևմրտյան, այնպես էլ Արևելյան Հայաստանում XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին: Նրանք, անտեսելով փաստերը, քննելով մոլորություն մեջ, գտնում էին, որ հայությունը իր բարենպաստ ապագան պետք է փնտրի ոչ թե Ռուսաստանում, այլ Օսմանյան կայսրության մեջ: 1880-ական թթ. Թիֆլիսում հրատարակվող «Մեղու Հայաստանի» թերթը, օրինակ, գրում էր, որ «ապերախտություն կլինի եթե արևմտահայերը ապստամբեն «օրինական» կառավարության (սուլթանի) դեմ»: Կրադի գլխավոր թղթակիցներից մեկը՝ Եղիշ քահանա Գեղամյանը, ջընդունելով ռուսական կողմնորոշումը, խիստ հարձակումներ գործեց Բաֆֆու հայրենասիրական, հակաօսմանյան դադափարների վրա:

Հետագայում, ռուսական կողմնորոշման դեմ հանդես եկան նաև մի շարք քաղաքական գործիչներ, որոնք, հաշվի չառնելով պատմության դասերը և չկարողանալով տարբերել սեր սպիտակից, թույլ տվեցին կոպիտ սխալներ: Այդ կարգի գործիչներից է ոչ անհայտ Ռուբեն Դարբինյանը, որը, օրինակ, գրել է այսպիսի տողեր. «Կարելի է առանց չափազանցության ասել, թե ռուսական հախուռն այն օրինատացիան, որ մենք ընդունել ենք ազգովին, ոչ թե արդյունք էր սեալ քաղաքական մտածողության կամ հաշիվների, այլ մի անհաղթելի հասարակական պահիսող էր, մասսայական խենթություն»:

Այստեղ մենք գործ ունենք արտաոռց հերյուրանքի հետ: Բացահայտորեն կեղծելով պատմական փաստերը, Դարբինյանը ծանր մեղադրանքներ է բարդում ռուսական օրինատացիա ունեցող հայ ժողովրդի ու նրա շահերի համար պայքարող մեր իմաստուն նախնիների վրա: Քաղաքական այդ գործիչը հանդես է բերել ծայրահեղ սուրբկոպիտիզմ, թույլ է տվել շարախոսություն և զրպարտություն: Ավելացնենք, որ 1920 թ. գրած իր հոդվածաշարում, որը հրատարակվեց «Ռուսական վտանգը» քնդհանուր վերնագրով, Դարբինյանը չի տարբերում ռուսինքնակալություն և ռուս ժողովուրդը հասկացությունները, փորձում է գոհճիկորեն վարկաբեկել ռուսական մշակույթն և ռուսական առաջավոր մտավորականությունը:

Հարկ է նկատել, որ իրենց հակառուսական հայացքները հիմնավորելու նպատակով մեր առաջնորդները հորինել են նաև այլ «տեսություններ», որոնք նույնպես ոչ մի աղերս չունեն ճշմարտության հետ: Արևմրտյանը էֆենդիներից և հայ պահպանողականներից ումանք, օրինակ, քիչ ճիշդ չեն գործադրել որպեսզի «ապացուցեն», թե արևմտահայերը Օսմանյան կայսրության մեջ գտնվել և գտնվում են բարձր վիճակում, որ նրանք օգտվել և օգտվում են շատ իրավունքներից ու արտոնություններից: Կ. Պոլսում, Ջմյունիայում ապրող մեծահարուստ հայ ամիրաները և նրանց գաղափարախոսները չէին ուզում տեսնել Արևմտյան Հայաստանի հայ բնակչության անօրինակ ծանր վիճակը: Իսկ դրությունը իսկապես օրհասական էր: 1805 թ. Արևմտյան Հայաստանի տարածքով անցած ֆրանսիացի արևելագետ Պ. Ա. Ժոբերը Բայազետի փաշայության մասին գրում էր. «Իդուր է հողագործն այստեղ սերմեր ցանում: Հունձը խլում են դեռ չհասունացած: Ավազակների կատաղությունից և նահանջում իշխող փաշաների հարստահարություններից ազատվելու համար գյուղացին ստիպված է լքել դաշտերը, փախչել ընտանիքով և իր հոտերով: Այս դժբախտ երկրում գոյություն չունի ոչ հայրենիք, ոչ ապահովություն, ոչ հանդիստ»: 1864 թ. Գարեգին Սրվանձատյանցը Մշ

զավառում տիրող դրուժյունը պատկերում էր այսպես. «...արյան հոսում, ընչից ավար, բնտանյաց բռնաբարություն, եկեղեցոց կողոպտում, օրինաց եղծում, կենաց գրավում»: «Հայկական աշխարհ» պարբերականը Սղերդի զավառի հայ գյուղացիների մասին 1868 թ. գրում էր, որ նրանք գտնվում են ճորտական դրուժյան մեջ, որ բեկերը նրանց գնում ու վաճառում են որպես բանող անասունների: 1894 թ. օգոստոսին էրզրումի վոյսկյուպատոս Մանսկին Կ. Պոլսի դեսպան Նեխիդովին ներկայացրած իր ղեկուցագրում Սասունի հայ բնակչության մասին հայտնում էր. «Սասունի յուրաքանչյուր հայ բնտանիք իր գույքի և հողի հետ միասին գտնվում է յուրատեսակ ճորտական կախման մեջ այս կամ այն ազգից: Եթե վերջինս անբավական է իր հայրից, ապա նրան վաճառում է ուրիշին. որքան հայր շատ երեխա ունի, այնքան նրա գինը բարձր է»: Այդ նույն ժամանակ էմիլ Իրլանդ, անձամբ ծանոթանալով արևմտահայ գյուղացիության վիճակին, եկավ այն եզրակացություն, որ Արևմտյան Հայաստանի նահանգներում հաստատված է կառավարման մի այնպիսի համակարգ, որ ավելի վատ է, քան ճորտատիրական կարգերը:

Այսպիսին էր իրականությունը: Սակայն Թուրքիայի քաղաքներում կամ այդ երկրից դուրս ապրող շատ մեծահարուստ ամիրաներ, հայ էֆենդիներ կամ պահպանողական հոսանքի շատ ներկայացուցիչներ, ինչպես նշեցինք վերը, աչք փակեցին իրականության հանդեպ, «չհասկացան», որ արևմտահայ ազգային-ազատագրական շարժումը ուներ հիմնականում ինֆնապաշտպանական բնույթ, որ օսմանյան բարբարոսական կարգերի դեմ ուղղված ազատագրական պայքարը միանգամայն բնական ու արդարացի էր: Լինելով թուրքֆիլներ, նրանք քարոզներ կարդացին հավատարիմ ու հնազանդ մնալու սովորներին:

Ռուսաստանցիների մյուս մասը փորձեր էր անում անտեսել, թաքցնել այն իրողությունը, որ Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, որ տեղի ունեցավ ռուս-պարսկական 1826—1828 թթ. պատերազմի հետևանքով, որոշակիորեն բարենպաստ ազդեցություն ունեցավ արևելահայերի տնտեսական-հասարակական-քաղաքական կյանքում, նրանց մշակութի դարգացման գործում: Հնարավորություն չունենալով այստեղ հանգամանորեն անդրադառնալ այդ հարցին, նշենք միայն այն շատ կարևոր հանգամանքը, որ հայ ժողովրդի հավաքական գոյությունը, գանգվածային աճը, ազգահավաքը կամ այլ կերպ ասած ազգային կոնսոլիդացիան տեղի ունեցավ միայն Ռուսական կայսրության կազմում, կոնսոլիդացիա, առանց որի չէին կարող ստեղծվել Հայաստանի ս'չ 1918—1920 թթ. հանրապետությունը, ո'չ նրան հաջորդող խորհրդային հանրապետությունը: Վերջապես, բնականորեն հարց է ծագում.

կթե չլիներ Ռուսաստանը, հայերի ռուսական կողմնորոշումը, արդյո՞ք արևելահայերի հետ տեղի չէր ունենա այն, ինչ կատարվեց արևմտահայերի հետ:

2

Միայն և խիստ շփոթ տեսակետներ են արտահայտվել հատկապես 1890-ական թթ. հայ-ռուսական հարաբերությունների պատմության վերաբերյալ: XIX դարի վերջին—XX դարի սկզբին մամուլում, հրատարակախոսության մեջ առաջ քաշվեց այն տեսակետը, որ իբր ցարական կառավարությունը ցանկանում է հայազրկել Արևմտյան Հայաստանը և ապա գրավել այն, այլ կերպ ասած՝ վարում է մի քաղաքականություն, որի նպատակն է ձեռք բերել «Հայաստանը առանց հայերի»: Այս շինծու առասպելը հորինեցին անգլիացի ռուսոֆոբները: Նրանց հաջողվեց մեծ ազմուկ բարձրացնել Ռուսաստանի դեմ: 1896 թ. անգլիական մամուլում, մասնավորապես Լոնդոնի «Թայմսում» հրատարակվեց թերթի թղթակցի հաղորդումը այն մասին, որ Ռոստոմովը բարձրաստիճան մի ռուս պաշտոնյա (անունը չի տրվում) իրեն ասել է, թե այժմ Ռուսաստանը ցանկանում է գրավել Արևմտյան Հայաստանը, սակայն առանց հայերի: Թերթերի հաղորդումը լայն արձագանք գտավ ինչպես Մեծ Բրիտանիայում, Ռուսաստանում, այնպես էլ հայ հասարակության մեջ: Ցարական կառավարության դեմ հանդես եկան հասարակական-քաղաքական շատ կազմակերպություններ ու կուսակցություններ, առանձին գործիչներ ու մտավորականներ: Հորինված թեզը լայնորեն օգտագործեցին էսէները, սոցիալ-դեմոկրատները, Ռուսաստանում գործող ազգային կուսակցությունները, անգամ կադետները և բոլոր նրանք, ովքեր պայքարում էին տիրող ռեժիմի դեմ կամ այս կամ այն շափով դժգոհ էին ցարիզմից: Լոնդոնում ստեղծված հեքիաթը օգտագործեցին հատկապես հայ բուլղեիկները: Նրանք ոչ միայն դարասկզբին, այլև շատ ավելի ուշ՝ 1920—1930-ական թթ., երբ խորհրդային պատմագիտություն մեջ իշխում էին ն. Պոկրովսկու վուլգար-սոցիոլոգիական դոգմաները, բացահայտորեն միակողմանի, ամենասև գույներով ներկայացրին Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը Մերձավոր Արևելքում: Նույն վուլգար դիքերից «Ռուսաբանվեց» նաև ռուսական կառավարության դիքերորոշումը Հայկական Հարցում: Անգամ մեր բազմալատակ պրոֆեսոր Լեոն, գաղափարական նոր հոսանքի հղոր ազդեցության տակ վերանայեց իր նախկին մի շարք կարծիքները և տուրք տվեց ժամանակի իշխող հակադիտական դոգմաներին (տե՛ս նրա «Անցյա-

լից» հուշերը և խնդրին վերաբերող այն աշխատությունները, որոնք գրվել են 1920-ական թթ.): Առասպելն ավելի ցցուն ձևով կրկնվեց Բ. Բորջյանի «Հայաստանը, միջազգային դիվանագիտությունը և Սովետական Միությունը» (ռուսերեն երկհատորյակ) աշխատության մեջ, որը լույս տեսավ 1928—1929 թթ. Մոսկվայում: Անհիմն թեզը իր արտահայտությունը գտավ նաև սփյուռքահայ մի շարք հրատարակություններում (տե՛ս, օրինակ, Գ. Կազյան, Հայաստանը և Հայ դատը հայ-ռուս հարաբերությունների լույսին տակ աշխատությունը):

Բայց ո՞րն է պատմական ճշմարտությունը: Իրականում ի՞նչ քաղաքականություն է վարել ցարական Ռուսաստանը Հայկական Հարցում 1830-ական թթ.: Արդյոք ճիշտ է որ նշված տարիներին նա ունեցել է արևմտահայությունը բնաջնջելու դավադրական ծրարիր: Փորձենք պատասխանել այդ հարցին որքան հնարավոր է այդ անել մի ղեկուցման մեջ:

Հայտնի է, որ Մեծ Բրիտանիան, հակառակ իր դարավոր «թուրքոֆիլությունը», 1890-ական թթ. Թուրքիայի նկատմամբ վարեց ագրեսիվ քաղաքականություն՝ ձգտելով նրան, որ Բ. Դուռը իրեն զիջի մասնավորապես նգիպտոսը: Հակառակ դեպքում նա սպառնում էր խիստ ճնշումներ գործադրել Թուրքիայի վրա, բարձրացնել Հայկական Հարցը և անգամ առաջ քաշել Օսմանյան կայսրության տրոհման խնդիրը: Ռուսաստանը, որ Անգլիայի հիմնական ախոյանն էր Մերձավոր և Միջին Արևելքում, ինչպես նաև Ֆրանսիան, Ավստրո-Հունգարիան մերժեցին Մեծ Բրիտանիայի մենատիրական նկրտումները և հանդես եկան որպես Օսմանյան կայսրության ամբողջականության ու անձեռնմխելիության կողմնակիցներ: Բայց այս հողի վրա հաստատելով լույս բարեկամական հարաբերություններ Բ. Դուռն հետ, նշված պետությունները այնուամենայնիվ չպաշտպանեցին սուլթանի վարած կոտորածները քաղաքականությունը: Մասնավորելով խոսքը Ռուսաստանի նկատմամբ, պիտի ասել, որ նա, պաշտպան կանգնելով Բ. Դուռը ընդդեմ Անգլիայի, միաժամանակ հանդես եկավ հայություն մասսայական կոտորածների դեմ՝ պահանջելով Աբդուլ Համիդից անհապաղ վերջ տալ հայկական ցարդերին:

Քննարկվող հարցի վերաբերյալ շատ կարևոր տեղեկություններ կան անգլիական պաշտոնական աղբյուրներում: Առանձնապես արժեքավոր են Մեծ Բրիտանիայի՝ Կ. Պոլսի դեսպանության 1896 թ. ղեկուցադրերը ուղղված վարչապետ լորդ Սոլսբերիին: Քանն այն է, որ դեսպանության հույժ զաղտնի ղեկուցադրերում ու հաղորդումների մեջ նկարագրված են հայկական կոտորածները, բերված են միաժամանակ շատ հետաքրք-

բիր փաստեր այն մասին, թե արևմտահայերի կոտորածների նկատմամբ ինչ դիրք են գրավել Ռուսաստանը և եվրոպական մյուս պետությունները: Անգլիացի պատմաբան Ջեյմս Գրինվիլը, որ հանգամանորեն ուսումնասիրել է Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի արխիվում պահվող նշված գաղտնի նյութերը, հանդել է այն եզրակացություն, որ հայկական կոտորածների դեմ Կ. Պոլսում գործող եվրոպական դեսպաններին մեղադրեց վճռականորեն հանդես է եկել միայն ռուսական դեսպան Ա. Բ. Նելիդովը, որն անձնական տեսակցություն ունենալով սուլթան Աբդուլ Համիդի հետ անգամ սպառնացել է, որ ինքը՝ Նելիդովը հրաման կտա ռուսական նավատորմին ուժակոծել սուլթանի պալատները, եթե անհապաղ չդադարեցվեն կոտորածները: Սուլթանը տեղի է տվել: Հաջորդ օրը, իսկապես, դադարեցին կոտորածները Կ. Պոլսում: Ահա մի քաղվածք պատմաբան Գրինվիլի հարուստ փաստերով հագեցված ուսումնասիրությունից.

«Հայերի կոտորածները Կ. Պոլսում տեղի ունեցան օգոստոսի 26 և 27-ին: 30 ժամ հայերին որսում էին անասունների նման: Չէին խնայում ո՛չ կանանց, ո՛չ երեխաներին: Հայերը գրկվեցին կյանքից, նրանց ունեցվածքը թալանվեց: Այդ սարսափները մարտահրավեր էին քաղաքակիրթ եվրոպային, մարտահրավեր, որը Կ. Պոլսում շանտեսեցին եվրոպայի ներկայացուցիչները:

Դեսպանները գործեցին անսովոր միաբանությունը և ետանդով... Բայց այնուամենայնիվ ռուսական դեսպան Նելիդովն էր, որ իր ձեռք վերցրեց կոտորածը դադարեցնելու նախաձեռնությունը: Նա չբավարարվեց միայն բողոքի անհետևանք նոտաներ ուղարկելով, որոնք դեսպանները կազմում էին իրենց ամեհօրյա հանդիպումների ժամանակ: Նա անձամբ զգուշացրեց սուլթանին, որ եթե սպանող չդադարեցվի, ինքը կհրամայի ռուսական նավերին ուժակոծելու Բոյուկդարեն... Սուլթանը վախեցած Նելիդովի զայրույթից հրաման արձակեց ցրվել մայրաքաղաքի խումանին» (ընդգծումը մերն է—Մ. Ն. տե՛ս Lord Salisbury and Foreign Policy the Close of the Nineteenth Century, by J. A. S. Grenville, London, 1934, p. 75):

Ինչպես տեսնում ենք, անգլիական չհրապարակված հույժ գաղտնի փաստաթղթերը չեն հաստատում Լոնդոնի ռուսոֆորների կողմից հորինված և մամուլում լայն տարածում գտած առասպելը: Գաղտնի փաստաթղթերում ասվում է մի բան, իսկ մամուլում պրոպագանդում էր բարոսովին այլ բան: Նկատենք, որ նշված գաղտնի փաստաթղթերը լույս շտեպան նաև 1890-ական թթ. Թուրքիայում կատարված ոճրաբործությունների վերաբերյալ հրապարակված անգլիական հայտնի

«Կապույտ գրքերում», շնայած դրանք ևս պաշտոնական հրատարակություններ էին:

Ռուսաստանի դեմ ուղղված հերյուրանքը ժխտում են նաև գերմանական հեղինակավոր աղբյուրները: Հարցին ուղղակի պատասխան է տալիս գերմանացի հայտնի զորավար, կյանքի վերջին տարիներին գեներալ-ֆելդմարշալ Կոլմար Ֆրայեր ֆոն դեր Գոլցը: Ի դեպ, բացահայտ թուրքոֆիլության, սուլթան Աբդուլ Համիդի ու երիտթուրքերի հետ ունեցած սերտ կապերի համար սովորաբար նրան կոչում էին նաև «Գոլց փաշա»: 1894—1895 թթ. նա գլխավորում էր գերմանական ռազմական միսիան թուրքիայում և որպես այդպիսին մեծ ազդեցություն ունեցր դաժան, բայց միաժամանակ երկշոտ ու կասկածամիտ սուլթանի վրա: Մեկ անգամ չէ, որ գերմանացի զինվորականի (այդ տարիներին մայոր) «համառ խորհուրդների ու ճնշման տակ» Բ. Գոլցը «ճշգրտում» էր իր քաղաքականությունը ինչպես և երբին, այնպես էլ արտաքին գործերում: Եվ ահա այդ ամենակարող Գոլց փաշան իր նոթերում, ավելի ճիշտ՝ գրառումներում, նշում է այն հանգամանքը, որ 1894—1895 թթ. Ռուսաստանը արևմտահայերի ջարդերին վերջ տալու նպատակով փորձեր է արել զորքեր մտցնել թուրքիա: Գոլցի գրառումները վերամշակել ու մեկնաբանություններով հրատարակել է նրա որդի Ֆրիդրիխ Ֆրայերը հոր մահից հետո, 1929 թ. (տե՛ս General Feldmarschal Kolmar Freiherr von der Goltz, *Denkwürdigkeiten*, Berlin, 192), S. 68): Այս փաստի վրա տարիներ առաջ ուշադրություն դարձրեց Վիեննայում ապրող ու գործող մեր հայրենակից Արտեմ Օհանջանյանը, որը ուսումնասիրություն և փաստաթղթերի մի քանի սովարածավալ հատորներ է հրատարակել հայ-ավստրոհունդարական հարաբերությունների մասին: «Հայկական հարցը և հայոց ցեղասպանությունը թուրքիայում ըստ ավստրիական արխիվների նյութերի» իր աշխատության մեջ Օհանջանյանը, խոսելով 1894—1895 թթ. մասին, գրել է.

«Հայերին պաշտպանելու համար Ռուսաստանը թուրքիային սպառնաց մտնել Հայաստան: Իրավիճակը սրվեց, բայց շնորհիվ անհնապաղ ռազմական միջոցների, որոնք մայոր Գոլցի համառ խորհրդի և անդադար պահանջների արդյունք էին, Ռուսաստանը հրաժարվեց Հայաստան մտնելուց: Գոլցը կարգադրել էր աշխարհագրային դիվիզիաներ ուղարկել եվրոպական զավառներն ու Հայաստան: Բացի այդ, նա կարգադրել էր ռազմական դրուբյուն մտցնել էրզրումում»:

Պատմաբանի այս եզրակացությունը, որ հիմնված է փաստերի վրա, լիովին հերքում է ռուսոֆոբների հնարած հեքիաթը:

Մի քանի խոսք ֆրանսիական կառավարության ու նրա պաշտոնական փաստաթղթերի մասին: XIX դարի 90-ական թթ. միջազգային հարաբերությունների պատմությանը նվիրված հարուստ գրականության մեջ վաղուց արդեն նշված է, որ Մեծ Բրիտանիայի ու Գերմանիայի ազդեցիվ մերձավորարևելյան քաղաքականության առկայության պայմաններում ֆրանսիական կառավարությունը բացահայտորեն պաշտպան է կանգնել Օսմանյան կայսրության ամբողջականությունն ու անձեռնմխելիությունը և այդ պատճառով էլ չի ձեռնարկել իրական ու վնասակար միջոցառումներ՝ ստիպելու Աբդուլ Համիդին վերջ դնելու հայկական կոտորածներին, այլ սահմանափակվել է միայն նրանով, որ ձևականորեն պաշտպանել է «մեծ տերությունների» առաջարկները Օսմանյան կայսրության մեջ ռեֆորմներ մտցնելու մասին: Այդ է պատճառը, որ Ֆրանսիայի առաջավոր մտավորականության շատ ներկայացուցիչներ վճռական բողոք հայտնեցին իրենց կառավարության քաղաքականության դեմ: Ի դեպ, այդ կառավարությանը խիստ քննադատության ենթարկեց նաև մեր անվանի բանաստեղծ ու հրատարակախոս Սմբատ Շահազիզը հատկապես ընդգծելով այն փաստը, որ անցյալում բարձր գաղափարներ քարոզող Ֆրանսիան 1890-ական թթ. «պապանձվեց և ծպտուն շահանց ի պաշտպանություն իր դավանած սկզբունքներին»: Մակայն մի կողմ թողնելով այդ հարցը, այստեղ նշենք միայն հետևյալը: 1897 թ. Փարիզում լույս տեսավ ֆրանսիական փաստաթղթերի երկու հատորից բաղկացած ժողովածուն («Գեղին գիրքը»), որը հաղորդում է արժեքավոր տեղեկություններ 1890-ական թթ. հայկական կոտորածների մասին (տե՛ս Ministère des Affaires Étrangères. Documents diplomatiques. Affaires Arméniennes. Projets de Réformes dans l'Empire Ottoman, 1893—1897, Paris, 1897): Լինելով լուրջ, պաշտոնական հրատարակում, այդ ժողովածուն ևս չի հաստատում հորինված առասպելը: Չենք կարծում, իհարկե, թե ֆրանսիական պաշտոնական շրջաններն ինչ-ինչ նկատառումներով «խնայել են» վարկաբեկել ցարական կառավարությանը:

Այժմ Ռուսաստանի մասին: Ի՞նչ քաղաքականություն էր վարում ցարական կառավարությունը Հայկական Հարցում 1890-ական թթ. և այդ խնդրի վերաբերյալ ի՞նչ են ասում ռուսական պաշտոնական փաստաթղթերը: Հակառակ իր դարավոր հակասօսմանյան քաղաքականությանը, Ռուսաստանը 1890-ական թթ. պաշտպանեց Օսմանյան կայսրության ամբողջականությունը և անձեռնմխելիությունը: Դրա հիմնական պատճառը նորից Անգլիայի մերձավորարևելյան ազդեցիվ քաղաքականությունն էր, որը գլխավորապես ուղղված էր Ռուսաստանի դեմ:

Մտեղծված նոր իրադրություն մեջ մի շարք հարցերում համընկան ցարական կառավարության և Բ. Դոան քաղաքական շահերը: Մտեղծվեցին «բարեկամական» հարաբերություններ ցարի և սուլթանի միջև: Մյուս կողմից հայ-ռուսական հարաբերությունների վրա խիստ բացասական ազդեցություն ունեցավ ցարական կառավարության ռեակցիոն ներքին քաղաքականությունը (հայկական ծխական դպրոցների ու բարեպետական ընկերությունների փակումը, ընդհանրապես մեծապետական շուվի-նիզմի ուժեղացումը և այլն): Յարական իշխանությունները պայքար ծավալեցին Կովկասից Թուրքիա գնացող հայ կամավորների, հայ ազդային կուսակցությունների ու կազմակերպությունների, մասնավորապես ռուս «նիժիլիսանների» ու եվրոպական սոցիալիստների գաղափարները բաժանող Հեշակյան և Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությունների դեմ: Այս խնդրում անգամ հաճախ գործակցում էին ռուսական ժանդարմերիան և թուրքական ոստիկանությունը: Յարական կառավարությանը վնասվանքեմ դեմ եղավ, որ իր կայսրության սահմանների վրա, այսինքն Արևմտյան Հայաստանում 1890-ական թթ. ստեղծվի հայկական ավտոնոմիա կամ «անկախ» պետականություն, քանի որ դա ձեռնառն էր Մեծ Բրիտանիային՝ ռուսական առաջխաղացումը Մերձավոր Արևելքում կանգնեցնելու համար: Այս ամենը, իհարկե, պատմական ճշմարտություն է: Բայց միաժամանակ ճիշտ է նաև այն, որ ցարական կառավարությունը, շնայած այդ բոլորին, չի ցանկացել ունչացնել արևմտահայությունը, քանի որ դա չէր համապատասխանում Մերձավոր Արևելքում ռուսական կառավարության ռազմատարատեղիական քաղաքականության հիմնական սկզբունքներին: Այդ է պատճառը, որ անգամ 1890-ական թթ. ռուսական կառավարությունը վճռական քայլեր է կատարել արևմտահայության մասսայական կոտորածները դադարեցնելու համար: Այս խնդրի վերաբերյալ կան կարևոր տեղեկություններ նաև Կ. Պոլսի ռուսական դեսպան, գաղտնի խորհրդակցական Ա. Ի. Նելիդովի պաշտոնական թղթերում: Ահա դրանցից մեկը: 1894 թ. Սասունի հայ բնակչության կոտորածների առիթով ստեղծված հանձնաժողովի գործունեության կապակցությամբ Նելիդովը իր գաղտնի հրահանգում՝ ուղղված էրզրումի ռուս հյուպատոսին, գրել է.

«Համակված լինելով մարդասիրության անկեղծ զգացմունքով և Փոքր Ասիայի ֆրիստոնյա բնակչության գոյության ծանր պայմանները քննադատելու ցանկությամբ, մենք, սակայն, հետո եմք խրախուսելու հայերի ֆաղափական բաղձախնեքը, որոնք կազմում են Եվրոպայում գտնվող հայկական կոմիտեների գործունեության առարկան և Արևմուտքից ու Երբեմն ռուսահայերի կողմից, որոնք վարակված են հեղափո-

խական եզով և այնտեղ դառնում են ազգային պրոպագանդայի ագենտներ, անբաժվում են բուրժուալայերի մեջ» (Архив внешней политики России, политархив, д. № 3435).

Մի կողմ թողնելով դեսպանի անհիմն պնդումը հակասամայան հայ ազատագրական շարժման պատճառների մասին՝ հարկ ենք համարում այնտեղ նշել այն, որ այդ տարիներին ցարական կառավարությունը արևմտահայերի նկատմամբ իսկապես վարում էր երկակի քաղաքականություն: Մի կողմից նպատակ ուներ բարելավել նրանց ծանր վիճակը, ապահովել նրանց ֆիզիկական գոյությունը, մյուս կողմից պայքարում էր հայ ազգային կուսակցությունների «ֆաղափական բաղձախնեքը» ու «սեպարատիստական» ձգտումների դեմ: Չմոռանանք ավելացնել, որ ցարական կառավարությանը խիստ անհանգստացնում էր նաև այն հանգամանքը, որ Արևմտյան Հայաստանում ծավալված աղյուսագրական շարժումը կարող է արձագանքներ գտնել Կովկասում, արևելահայության մեջ:

Վկայակոչենք մի այլ փաստաթուղթ, որ խոսվում է այն մասին, թե ինչ դիրք է բռնել Կ. Պոլսի ռուսական դեսպան Նելիդովը, Կ. Պոլսում 1896 թ. օգոստոսին տեղի ունեցած հայկական ջարդերի օրերին: Կ. Պոլսի ռուսական ռազմական ներկայացուցիչ գնդապետ Պեշկովի նույն թվականի օգոստոսի 19 թվակիր գաղտնի գեկուցման մեջ, ուղարկված ռազմական մինիստրությանը, ասված է.

«Կ. Պոլսում, երկու օրվա ընթացքում սպանվել են 5.500 անպաշտպան հայեր, այդ թվում և շատ այլ քրիստոնյաներ: Պարզված է, որ ջարդերը իրագործել են կառավարության կողմից նախօրոք ստեղծված բանդաները ոստիկանության ղեկավարությամբ: Դիվանագիտական կորուպցիա և հատկապես մեր դեսպանի վնասական գործողությունների շնորհիվ երեկ և այսօր հանգիստ է, բայց խուճապը շարունակվում է» (ընդգծումը մերն է—Մ. Ն., տե՛ս АВПР, политархив, д. 3443):

Ինչպես տեսնում ենք, գնդապետ Պեշկովը ռուսական դեսպան Նելիդովի մասին հայտնել է այն, ինչ որ գրել են Կ. Պոլսի անգլիական դեսպանին փոխարինող Արթուր Հերբերտը և գերմանացի մայոր Ֆոն դեր Գոլցը (այս մասին արդեն խոսեցինք): Տարբեր երկրների պաշտոնական անձանց կարծիքների ընդհանրությունն, իհարկե, պատահական չէ: Այդ կարևոր հանգամանքը չի կարելի անտեսել:

Հայկական կոտորածները կանխելու ուղղությամբ Նելիդովի մտահոգության մասին են վկայում նաև այլ փաստեր: Այսպես, օրինակ, Կ. Պոլսի ռուսական դեսպանը արտաքին գործոց մինիստրությանն ուղղված իր գեկուցագրերից մեկում հարց բարձրացրեց ուժեղացնել

ուսական նախատորմը Աև և Միջերկրական ծովերում, որպեսզի այն-  
թույլ շտա ծովափնյա քրիստոնյա՝ այդ թվում և հայ բնակչության նոր  
կատարածներ:

Ի՞նչ դիրք բռնեց Ա. Նելիզովը Արևմտյան Հայաստանում բարեփո-  
խություններ անցկացնելու խնդրի վերաբերյալ: Այդ մասին ևս կան ոչ  
քիչ արժանահավատ տեղեկություններ: Ահա դրանցից մեկը: Կ. Պոլսի  
անգլիական դեսպան Ֆիլիպ Քերրին 1895 թ. ապրիլի 18-ի թվակիր զե-  
կուցադրում ուղղված արտաքին գործոց մինիստր Կիմբեռլիին, գրում  
էր, որ իր հետ ունեցած պաշտոնական հանդիպման ժամանակ «Նելի-  
զովն արտահայտեց անկեղծ ցանկություն կարգավորել գաղթերը քուր-  
ճական նահանգներում, որպեսզի բարելավվի հայերի վիճակը և ապա-  
հովիտի հանգստությունը սահմանների վրա» (տե՛ս Blue Book, Turkey,  
№ 1 (1895), p. 28):

Ռուսաֆորները իրենց հորինած առասպելը հիմնավորելու նպատա-  
կով հաճախ փորձում են վկայակոչել 1895—1896 թթ. Ռուսաստանի  
արտաքին գործերի մինիստր իշխան Ա. Բ. Լոբանով-Ռոստովսկուն,  
նշելով, որ իբր վերջինս բացահայտ հայտարարություն է արել այն  
մասին, թե Ռուսաստանին Արևմտյան Հայաստանը պետք է առանց հա-  
յերի: Այս կարծիքը քարոզողներից և ոչ մեկը, սակայն, նեղություն չի  
կրում բերել որևէ փաստաթուղթ կամ որևէ պաշտոնական աղբյուր: Կա-  
տարելի է միայն լսել հայտարարություն: Ռուսական արխիվային նյութ-  
երը, այդ թվում և ամենադազանի նյութերը նայել և ուսումնասիրել  
են բազմաթիվ պատմաբաններ (նկատեմ, որ մենք ևս տարբեր շա-  
րունակ աշխատել ենք այդ արխիվներում): Բայց ոչ որ նրանցից չի  
հայտնաբերել Լոբանով-Ռոստովսկուն վերաբերվող «հայտարարությու-  
նը»: Իրականում տեղի է ունեցել հետևյալը. իշխանը մի քանի անգամ  
առիթներ է ունեցել հայտարարելու, որ Ռուսաստանը դեմ է, որ իր հա-  
րավային սահմաններում ստեղծվի հայերի թագավորություն՝ հետ Բոլ-  
ղարի: Միայն այսքանը: Կարծում եմ, դժվար չէ հասկանալ, որ նըշ-  
ված խոսքերի ու հորինված առասպելի միջև կա շատ մեծ տարբերու-  
թյուն: Մեր ռուսաֆորները չեն նկատում այդ: Ի դեպ, նրանք արդյոք  
դիտե՞ն, որ բրիտանական դեսպանի հետ ունեցած մի գրույցի ժամա-  
նակ Լոբանով-Ռոստովսկին ասել է, թե Ռուսաստանը բախտավոր կլի-  
նի, եթե ապահովվեն սուլթանի և նիվա հպատակ քրիստոնյաների  
կյանքն ու գույքը (տե՛ս А. Дж. Киракосян. Великобритания и Ар-  
мянский вопрос. 90-е годы XIX века, Ереван, 1990, с. 135):

Բայց հարցը քննելը նաև այլ տեսանկյունից: Ենթադրենք Լոբանով-  
Ռոստովսկին ինչ-որ մեկին, բանավոր զրույցի ժամանակ, սթափ թե

անսթափ վիճակում, թույլ է ավել իրեն գործածել սենսացիոն մի ար-  
տահայտություն, հիմար մի ֆրազ: Մի՞թե դա ավելի կարևոր է, քան  
ցարական արխիվներում պահվող բազմաթիվ պաշտոնական զեկուցա-  
դրերը, հրահանգները կամ թե, ասենք, Կ. Պոլսի ռուսական դեսպանի  
ակնհայտ գործունեությունը, օտարերկրյա կառավարությունների պաշ-  
տոնական հաղորդումները և այլն:

Վեցշապես շմոռանանք նաև մի այլ հանգամանք: Ռուսաստանում  
միշտ էլ եղել են ազգայնամոլ, խիստ սեպեցիոն բարձրաստիճան պաշ-  
տոնյաներ ու շինծվելիներ, որոնք քարոզել են մեծապետական շովի-  
նիզմի ծայրահեղ հետադեմ գաղափարները: Հիշենք Գրյազնովին, Գո-  
լիցինին, Վելիշկոյին և մյուսներին: Մի՞թե կարելի է սեհարյուրյակա-  
յին բանդայի բթամիտ ներկայացուցիչների բոլոր ցնդաբանությունները  
նույնացնել ռուսական պետության պաշտոնական քաղաքականության  
հետ: Իհարկե, ոչ: Ահա մի օրինակ: Կովկասի փոխարքա իշխան Գոլի-  
ցինը, որ ռուս սեհարյուրյակայինների գլխավոր դեմքերից մեկն էր,  
կազմեց ծրագիր, որի համաձայն կովկասահայերն իրենց հեղափոխա-  
կան, սեպարատիստական (անջատողական) գործունեության համար  
պետք է դադարեցվեին Միբիր: Փոխարքայի բոլոր ջանքերը, սակայն,  
ապարդյուն անցան: Յարական կառավարությունը մերժեց նրա այդ  
տխմար «մտահղացումը», քանի որ այն հակասում էր հայերի նկատ-  
մամբ ռուսական կառավարության վարած ավանդական հովանավորո-  
ղական քաղաքականությանը: Չպետք է մոռանալ, որ 1890-ական թթ.  
վերը հիշված ծայրահեղ հետադեմներից բացի Ռուսաստանում գործում  
էին նաև մի շարք հասարակական-քաղաքական հեղափոխական կազ-  
մակերպություններ ու կուսակցություններ, ինչպես նաև բազմաթիվ  
առաջավոր ու մարդասեր մտավորականներ, որոնց թվում՝ Յու. Վեսե-  
լովսկին, Լ. Կամարովսկին, Մ. Կովալսկին, Վ. Գոլմստերմը, Վ. Սուլով-  
յովը, Բալմոնտը և շատ ուրիշներ, որոնք իրենց մարդասիրական ձայնը  
բարձրացրին ի պաշտպանություն հալածվող ու հետապնդվող արևմտա-  
հայկական, ի պաշտպանություն Հայկական Հարցի բարեհաջող լուծ-  
ման: Չպետք է անտեսել նաև այն, որ այդ նույն մտավորականության  
ջանքերով ու կառավարական օրգանների համաձայնությամբ կազմա-  
կերպվեց հանգանակություն, որից ստացված զուամրները տրամադր-  
վեցին Կովկաս և բնդհանրապես Ռուսաստան անցած արևմտահայ գաղ-  
թականներին (1896 թ. դեկտեմբերի 12-ին ռուսական կառավարությու-  
նը հատուկ որոշում ընդունեց՝ ամբողջ երկրում հանգանակություն անց-  
կացնել արևմտահայ գաղթականներին օգնելու նպատակով): Հետաքրք-  
րիր է նաև հետևյալ փաստը: Ռուս և ռուսահայ մի խումբ գիտնական-

ների ու մշակույթի գործիչների նախաձեռնությամբ 1897 թ. Մոսկվայում լույս տեսավ «Սերբարական օգնություն թուրքիայում տուժած հայերին» խորագիրը կրող բազմաբովանդակ ու մեծածավալ մի գիրք, որտեղ զետեղված են գիտական հոդվածներ, գեղարվեստական ստեղծագործություններ և այլևայլ կարևոր նյութեր: Նրա վաճառքից գոյացած գումարը որոշվեց տրամադրել թուրքիայից Կովկաս ու Ռուսաստան ճորտարած արևմտահայ գաղթականներին: Շատ տեսակետներից հետաքրքրական ու արժեքավոր այդ ժողովածուում տպագրվեց նաև մեծ գրող Լ. Ն. Տոլստոյի հետևյալ նամակը (Ֆոտոպատճեն) ուղղված գրքի փաստացի խմբագիր Գրիգոր Ավետովիչ Ջանշինին:

«Милостивый государь Григорий Аветович!

Очень сожалею о том, что не мог принять деятельного участия в предпринятом Вами добром деле. Болезнь и другие обстоятельства помешали мне докончить то, что я намеревался предложить Вам в Сборник.

От всей души желаю ему успеха и достижения цели, ради которой он предпринят.

С совершенным уважением остаюсь готовым к услугам.

17 апреля 1897 г.

Лев Толстой.

Բայց նորից անցնենք հիմնական հարցին: Փաստերը խոսում են այն մասին, որ 1890-ական թթ. պատմական անցքերի աղավաղման ու կեղծման: զխավոր մեղքը ընկնում է Մեծ Բրիտանիայի ղեկավար շրջանների վրա: Հակառակ անգլիական առաջավոր, ազնիվ մտավորականության շատ ներկայացուցիչների մարդասիրական-հայասիրական ելույթներին, անգլիական կառավարությունը շարունակեց վարել իր նախկին տարիների խարդախ քաղաքականությունը: Այնպես, ռուսահարեյով մարդկային բարոյականության տարրական նորմերը, նա, ինչպես տեսանք, գազանի պահեց և ժամանակին չհրապարակեց իր արամադրության տակ եղած հավաստի այն տեղեկությունները (Կ. Պոլսի անգլիական դեսպանությունը վերը նշված ղեկուցադրերը), որոնք քույր էին տալիս, որ ռուսական կառավարությունը մի շարք ռեալ քայլեր է կատարել ձգտելով դադարեցնել հայերի կոտորածները թուրքիայում: Այսպիսով, արվեց ամեն ինչ, որպեսզի խիստ սև գույներով ներկայացվի հայերի նկատմամբ ցարական կառավարության վարած քաղաքականությունը: Եվ ահա անգլիական այդ հզոր պրոպագանդան ունեցավ իր հետևորդները. ապակողմնորոշվեցին, ղեզօրիենտացիայի ենթարկվեցին շատերը ինչպես Ռուսաստանում, եվրոպական երկրներում, այնպես էլ հայ

իրականության մեջ: Բազմաթիվ գործիչներ, որոնք արդարաչափորեն դժգոհ էին ցարիզմի ներքին և արտաքին քաղաքականությունից, օգտագործեցին կոնգոնում ստեղծված հերյուրանքը: Դյուրահավատ մեր շատ թերթեր, միանալով կոնգոնում ծավալված պրոպագանդային, հայկական կոտորածների մեղքը գցեցին Ռուսաստանի վրա: Տպագրվեցին լուրեր այն մասին, որ իբր ռուսական ղեկավար ներկողը սուլթան Աբդուլ Համիդին ասել է. «Կոտորեցեք, Ձերը մեծություն, կոտորեցեք հայերին»: Այս կապակցությամբ հիշենք հետևյալ փաստը: Յարական կառավարության թշնամի, պրող, հրապարակախոս հայագետ Ա. Վ. Սմիթ-տեսարովը ներկուրվի հետ ունեցած իր զրույցից հետո, 1906 թ. վճռականորեն հերքեց թերթերի այդ լուրերը, պնդելով, որ ներկողին վերագրված խոսքերը սուտ են: Սակայն դրանից հետո էլ չդադարեց հակառուսական պրոպագանդան: Հայ շատ քաղաքական գործիչներ շարունակեցին իրենց քարոզները այն մասին, որ հայկական կոտորածների զլխավոր մեղավորը Ռուսաստանն է: Եղավ մի պահ, երբ անդամ երիմյան: Հայրիկը ապակողմնորոշվեց այդ հարցում, բայց շուտով, 1907 թ. նա նիկոլայ II կայսրին ուղարկած իր նամակ-գիմումում նորից ընդգծեց այն հանգամանքը, որ հայությունն իր հույսը կապում է հիմնականում Ռուսաստանի հետ (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1903, № 1—2, էջ 166):

Նշելով այս բոլորը, սակայն, հարկ է նկատել, որ ժամանակի հայ անվանի գործիչների ու մտավորականության մի զգալի մասը հավատ չընծայեց անգլիացի ռուսոֆոբներին: Բնորոշ է, որ XX դարի սկզբներին, երբ կոնգոնում ղեռ ուժեղ էր հակառուսական պրոպագանդան, նա շարունակեց վարձագնել այն տեսակետը, որ հայ ժողովրդի հուսալի բարեկամը Ռուսաստանն է: Բերենք մի քանի օրինակ:

1907 թ. Արշակ Չոպանյանն իր «Անահիտ» հայտնի հանդեսում խիստ քննադատության ենթարկեց անցյալի արևմտահայ քաղաքական այն գործիչներին, որոնք ժամանակին չհասկացան, որ անգլիացիները փաստորեն միշտ էլ ղեմ են եղել հայության «սուրբ բաղձանքներուն, մինչ ռուսը իր շահերուն բերմամբ՝ զաշնակից էր հայուն»: 1912 թ. Գրիգոր Չոհրապը պնդում էր, որ «Հայկական Հարցում մեր զխավոր հենարանը Ռուսաստանն է, քանի որ նա մեր հարևանն է և շահագրգրված է մեզանով» (նույն տեղում, 1922 թ., № 1, էջ 211): Նույն թվականի ղեկտեմբերին Կոմիտասը Ա. Չոպանյանին գրած նամակում, շարադրելով իր հայացքները Հայկական Հարցի հնարավոր լուծման մասին, եղրակացնում էր. «Ուրեմն չի՞ փրկույալու արտախ Ռուսիա... Չպետք է խաբվենք Եվրոպայի զանազան խոստումնային խաբկանքնե-

րին» (ՊԲՀ, 1958 թ., № 1, էջ 264): 1913 թ. հունվարին Հովհաննես Թումանյանը հրատարակեց «Հայկական հարցը ու իր լուծումը» հոդվածը, ուր, շմոռանալով հիշել ցարական կառավարության գաղութային քաղաքականությունը, գրեց հետևյալ խորհմաստ տողերը. «Հայկական հարցը վայրենի կոտորածների և կեղեքումների հարց է, հալածանքների ու գաղթականությունների հարց է. նա գերազանցորեն ֆիզիկական գոյության խնդիր է: Եվ նրա հաջողությունը միշտ կապված է Ռուսաստանի հաջողության հետ: Ով վեր է կացել Ռուսաստանի հաջողության դեմ, վեր է կացել Հայկական հարցի հաջողության դեմ, և ով Ռուսաստանի դեմ պաշտպանել է Տանկաստանին, նա մեղսակից է տանկական գազանություններին ու հայկական սարսափներին... Անգլիան հայ ժողովրդի սարսափին ու աղերսական դիմումին տվեց հայտնի պատասխանը. «Մեր նավերը չեն կարող լողալ հայոց լեռների գագաթներին»: Մինչդեռ աշխարհին հայտնի է, որ սուլթան Աբդուլ Համիդը նստում էր ոչ թե հայոց լեռների գագաթներին, այլ Բոսֆորի ջրերի ափերին, ուր միշտ կանգնում էն անգլիական նավերը» («Հորիզոն», 1913 թ., № 9): Կարգացրեց զորավար Անդրանիկի ելույթները 1917—1918 թթ. մեր մամուլում, հետևեց նրա գործունեությանը այդ և հետագա տարիներին—միշտ ռուսական օրինակաբանության համոզված կողմնակից: Որպեսզի ավելի պարզ պատկերացնենք անգլիացի ռուսատյացների հորինած ստերի շաքախոսական բնույթը և Հայկական Հարցում Մեծ Բրիտանիայի վարած հակահայ քաղաքականությունը, լսենք անգլիական նշանավոր քաղաքական ու պետական գործիչ Լյուդ Ջորջի խոստովանությունը: «Ճշմարտությունը հաշտության պայմանագրերի մասին» իր հայտնի աշխատության մեջ նա գրել է.

«Սան-Ստեֆանոյի հաշտությամբ ռուսական զորքերը պետք է օկուպացնեին Հայաստանը, մինչև որ իրականացվեին անհրաժեշտ բարենորոգումները: Այդ որոշումը չեղյալ հայտարարվեց Բեռլինի 1878 թվականի պայմանագրով, որը մեր սպաննալից ճնշման արդյունք էր և մեր կողմից հռչակվում էր իբրև Անգլիայի մեծագույն հաղթանակ, որը «պատվավոր հաշտություն» բերեց: Հայաստանը զոհաբերվեց մեր կերտած հաղթական զոհասեղանին: Ռուսները հարկադրված էին հեռանալ, տարաբախտ հայերը նորից ճգմվեցին իրենց կեղծքիչների կրեկով, որոնք պարտավորվել էին «բարեկամումներ և բարեփոխություններ» անցկացնել հայաբնակ նահանգներում: Բոլորիս հայտնի է, թե այդ պարտավորությունները ինչպես էին խախտվում քառասուն տարի շարունակ... Բեխտանական կառավարության ֆալսիֆիկացումները և հակաազգային անխուսափելիությամբ հանգեցրեց 1895—1897 և 1909 թվա-

կանների ահավոր սպանդներին և 1915 թվականի զաբուրելի եղեռնին» (ընդգծումը մերն է—Մ. Ն.):

Չի կարելի չհամաձայնվել պատմական փաստերից բխող այս եզրակացության հետ:

### 3

Մի գեկուցման մեջ, հասկանալի է, որ անհնարին է հանգամանորեն ու պատշաճ մակարդակով ներկայացնել մեզ այստեղ հետաքրքրող խնդիրը: Նպատակ ենք ունեցել միայն համառոտ շարադրել մեր կարծիքը հատկապես 1890-ական թթ. հայ-ռուսական հարաբերությունների պատմության մի կարևոր հարցի վերաբերյալ, հարց, որը դեռևս չի դարձել հատուկ ուսումնասիրության առարկա: Ճիշտ է, մեր մի շարք պատմաբաններ՝ Գ. Հարությունյանը, Լ. Բալյաճյանը և Ա. Կիրակոսյանը, ուսումնասիրելով Հայկական հարցում Մեծ Բրիտանիայի այդ տարիների վարած քաղաքականությունը, միաժամանակ խոսում են նաև եվրոպական մյուս պետությունների, այդ թվում և Ռուսաստանի քաղաքականության մասին: Եվ կարևոր է նկատել, որ հիշված հեղինակները, խիստ քննադատելով ցարական կառավարության այդ տարիների օհակցիոն, թուրքֆիլիական քաղաքականությունը, այնուամենայնիվ չեն դալիս այն եզրակացության, թե իբր Ռուսաստանը նպատակ է ունեցել «դրավել Արևմտյան Հայաստանն առանց հայերի»:

Ավելորդ համարելով բերել նոր վկայություններ կամ այլ արխիվային փաստաթղթեր, մենք սակայն ցանկանում ենք նորից ընդգծել հետևյալ հանգամանքը: Յարական բռնապետությունը, հարկավ, վարում էր գաղութային, ազգային ճնշման քաղաքականություն ինչպես կայսրության մյուս ժողովուրդների, այնպես էլ հայ ժողովրդի նկատմամբ: Սակայն ելնելով իր արտաքին քաղաքականության շահերից նա հաճախ պաշտպանում էր թուրք սուլթանների և պարսիկ շահերի դեմ ուղղված հայ ազատագրական պայքարը, պաշտպանում էր, իհարկե, այնքանով, որքանով այդ չէր հակասում իր քաղաքական ծրագրերին: Ռուսաստանի վարած բազմաթիվ պատերազմները Թուրքիայի դեմ, օրինակ, օբյեկտիվորեն օգնում էին օսմանյան լծի տակ գտնվող ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումներին: Հիշենք, թե ինչպիսի վճռական դեր խաղաց Ռուսաստանը սերբերի, հույների, բուլղարների և մի շարք այլ ժողովուրդների ազատագրման գործում: Չմոռանանք նաև այն դրական, առաջադիմական դերը, որ ունեցավ նա արևելահայկական պատմական բախտում: Հայտնի է, որ 1826—1828 թթ. Արաբատյան

դաշտում սուսական Կովկասյան բանակի հաղթանակները նոր հուսա-  
տքը հորիզոններ բացեցին արևելահայաստանյան համար: Բայց այլ պա-  
րագաներում նույն ցարական կառավարությունը խստորեն հետապնդել  
է հայ ազատագրական շարժումը: Այսպիսով, պետք է խուսափել միա-  
նշանակ դեմահատականներից և աշխատել հարցերը քննարկել կոնկրետ  
իրազրություններում: Կարևոր է ընդգծել նաև հետևյալը. ցարական կա-  
ռավարությանը կարելի է և պետք է մեղադրել շատ հարցերում, բայց  
ասել, թե նա 1890-ական թթ. ձգտել է իրականացնել «Հայաստանի  
առանց հայերի» ծրագիր, անհիմն է. և չի համապատասխանում պատ-  
մական փաստերին: Իրականում այդպիսի նպատակ ունեցել է օսման-  
յան պետությունը, բայց ոչ Ռուսաստանը: Այս, իհարկև, հայտնի ճշ-  
մարտություն է, որի մասին գրել են ոչ միայն հայ և ռուս, այլև արև-  
մարտյան հեղինակները: Ահա դրանցից մեկի՝ Հարվարդի համալսարանի  
հայտնի պրոֆեսոր, պատմաբան Վիլյամ Լանգերի լիովին հիմնավոր-  
ված եզրակացությունը. «Բուլտրովին պարզ է, որ սուլթանը (խոսքը վե-  
րաբերում է Աբդուլ Համիդին—Մ. Ն.) որոշեց վերջ տալ Հայկական հար-  
ցին հայերին ոչնչացնելու միջոցով» (տե՛ս W. L. Langer. The  
Diplomacy of Imperialism 1890—1902. New York, 1935, p. 203).  
Անկասկած, սա է ճշմարտությունը և ոչ թե Լանգերում հորինված մեղ  
ծանոթ առասպելը:

Զեկուցման վերջում կցանկանալի ձեր ուշադրությունը հրավիրել  
մի այլ հանգամանքի վրա: Ահա մի քանի տարի է, որ մեր պարբերա-  
կան մամուլում լույս են տեսնում ոչ քիչ հոդվածներ, որոնցում արգա-  
րացիորեն քննադատվում են մեր անցյալի, հատկապես Հայաստանի  
Խորհրդային Հանրապետության ժամանակաշրջանի պատմագիտության  
սխալները: Բայց դրան զուգընթաց մի շարք ոչ մասնագետ, դիվետանտ  
հեղինակներ փորձեր են անում նորից քարոզել XIX դարի երկրորդ կեսի  
արևմտահայ էֆենդիների ու պահպանողական հոսանքների ներկայա-  
ցուցիչների տեսակետները: Այսպես, օրինակ, փորձում են մեղ հա-  
մառել, որ հայ ժողովուրդը չպետք է ոտքի ելներ օսմանյան տիրապե-  
տության դեմ, քանի որ ավելորդ և վնասակար է եղել հայ ազատագրա-  
կան շարժումը, որ հայությունը պետք է ունենար ոչ թե ռուսական, այլ  
արևմտյան օրինատացիա: Այս «տեսակետները», իհարկև, խիստ ան-  
լուրջ, մակերեսային ու հակադիտական են: Ի դեպ նկատենք, որ եթե  
XIX դարում թույլ էին տրվում նման սխալներ, ապա դա կարելի է  
որոշ չափով բացատրել ու հասկանալ, քանի որ շատ հարցեր այն ժա-  
մանակ դեռևս պարզ չէին: Բայց դարմանալին այն է, որ մեր օրերի  
մի շարք «գիտուններ», որոնց պետք է հայտնի լինի 1915 թ. Մեծ Եղեռ-

նի պատմությունը, քեմալականների հայաչինջ ծրագրերը, Լոզանի  
1922—23 թթ. կոնֆերանսի հայտնի որոշումները՝ Հայկական Հարցը  
արևմտյան պետությունների օժանդակությամբ գերեզմանոցում թաղե-  
լու մասին և այլն, համառորեն կրկնում են անցյալում թույլ տրված  
սխալները:

Մեր դիվետանտներից մի քանիսը խստորեն քննադատում են հայ  
քաղաքական գործիչներին, որ նրանք, փորձելով ազատվել օտարների  
տիրապետությունից, չեն հենվել սեփական ուժը վրա, այլ դիմել են  
«Երեւոզ ուժի» օգնությունը: Այս կարծիքն ունեցողները պարզապես մո-  
ռանում են, չեն գիտակցում այն կարևոր հանգամանքը, որ հայ ժողո-  
վուրդը, ինչպես Արևմտյան, այնպես էլ Արևելյան Հայաստանում, ապ-  
րում էր մեծ մասամբ թվական գերակշռություն ունեցող մահմեդական  
բնակչության մեջ, չէր կազմում միաձուլյալ ու հզոր հավաքական ուժ,  
ուստի ի վիճակի չէր սեփական ուժերով, առանց օգնության թոթափել  
դեռևս բավական ուժեղ բռնապետությունների ծանր լուծը: Այսպիսով,  
անցյալի մեր գործիչներն այս հարցում ևս ավելի իրատես մարդիկ էին,  
քան մակերեսային մտածողություն ունեցող այսօրվա ռուս հայրենա-  
սերները:

Անհիմն է նաև այն մեղադրանքը, թե մեր նախնիները, լինելով  
միամիտ ու «պրիմիտիվ», դիմել են եվրոպական զանազան պետությու-  
ններին, Լըանցից սպասելով սեղան օգնություն: Նորից անգիտություն,  
նորից շատ տարածված անիծյալ դիվետանտիզմ: Պատմությունը քիչ թե  
շատ ծանոթ յուրաքանչյուր մտավորական լավ գիտի, որ եղել են բազ-  
մաթիվ դեպքեր, երբ օսմանյան տիրապետության տակ հեծող շատ ժո-  
ղովուրդներ իրենց ազատությունը և անկախությունը ստացել են մեծ  
տերությունների միջամտության և օգնության շնորհիվ: Հայտնի է, որ  
այդ միջամտությունից օգտվել են հույները, սերբերը, բուլղարները,  
մակեդոնացիները, 1862 թ. Լիբանանի քրիստոնյա մարտիստները, ավե-  
լի ուշ արաբական մի շարք երկրներ և այլն: Իհարկև, դժվար չէ հաս-  
կանալ, որ մեծ տերությունների նշված միջամտությունները պայմա-  
նավորված էին նրանց անտեսական ու քաղաքական որոշակի շահերով:  
Իհարկև, ճիշտ է նաև այն, որ այդ նույն պետություններն այլ պարա-  
զանքում մի անգամ չէ, որ փոքր ժողովուրդների նկատմամբ վարել են  
երկերեսանի, խաբեբայական, անգամ հանցավոր քաղաքականություն:  
Բայց այդ բոլորով հանդերձ փաստը մնում է փաստ, որ պատմական  
որոշ իրադրություններում տեղի է ունեցել «մեծերի» ու «փոքերի» շա-  
հերի համընկնում, որից և օգտվել են նաև փոքր ու ճնշված ժողովուրդ-  
ները:

Հայտնի է, որ մարդկության պատմությունը ընթանում է ոչ հարթ ճանապարհով, այլ հակասություններով ու բարդ զիզզագնորով: Ի դեպ, մեր նշանավոր նախնիները ևս իր ժամանակին զգացել են մեծ տերությունների քաղաքականության ինչպես բացասական, այնպես էլ դրական հետևանքները: Ուստի առնվազն ամբարտավանություն է նրանց մեղադրել «պրիմիտիվության» կամ «քծնության» մեջ: Վերջապես մեր նախնիները շէին հակադրում «սեփական» և «երրորդ» ուժերը: Նրանք անհրաժեշտ էին համարում, եթե այդ հնարավորությունը կար, դիմել և՛ մեկին, և՛ մյուսին: Բայց դիվետանները պատմությունն աղավաղում են նաև այս հարցում: Մնում է նորից հիշեցնել դիվետանտիզմի (սիրողականության) վնասակարությունն ինչպես հասարակական կյանքի մյուս բնագավառներում, այնպես էլ պատմագիտության մեջ: Ճիշտ է ասված, որ կոշկակարը պետք է զբաղվի կոշկակարությամբ, վիրաբույժը՝ վիրաբուժությամբ, կարճ ասած, ամեն մեկը իր գործով:

#### О НЕКОТОРЫХ ВОПРОСАХ ИСТОРИИ АРМЯНО-РУССКИХ ПОЛИТИЧЕСКИХ ОТНОШЕНИИ

##### Резюме

Более трехсот лет тому назад наши предки-патриоты установили политические связи с Российским государством, стремясь с его помощью освободить армянский народ от жестокого ига турецких пашей и персидских ханов. В XVII—XVIII веках поборниками русской ориентации выступали дальновидные армянские католикосы, ходжи-торговцы, мелики и все известные деятели освободительного движения. В XIX веке и в начале XX века на этих позициях стояли такие выдающиеся деятели, как Нерсес Аштаракец, М. Тагнадян, Х. Абовян, Ст. Назарян, М. Налбандян, Р. Патканян, Раффи, Г. Арцруни, Комитас, Гр. Зограб, Ов. Туманян, полководец Андраник, А. Чоланян и другие. С Россией связывали свои надежды и широкие народные массы. Однако в среде армянского общества сформировалось также незначительное течение русофобов, которое усилилось особенно в 1890-х годах, когда в английской печати был выдуман миф о том, будто Россия намеревается уничтожить западных армян и захватить их страну («Армения без армян»). Эта инсинуация получила широкое распространение как в западных странах, так и в России и армянской действительности. На основе английских, немецких и русских секретных документов и других официальных источников опровергаются эти лживые измышления английских русофобов. В действительности в 1890-х годах и в течение нескольких последующих лет имело место следующее: в ответ на весьма агрессивную политику Великобритании на Ближнем

Востоке царское правительство признало неприкосновенность Османской империи, заняло по отношению к армянскому освободительному движению и армянским политическим партиям враждебную позицию, в частности, выступало против идеи создания на южных границах России армянского государства. С другой стороны, российское правительство предприняло реальные шаги, направленные на прекращение развязанных султаном Абдул Гамидом массовых погромов армян. Этого требовали интересы основной, непреходящей внешней политики России, а также вековые традиции армяно-русских отношений. Царское правительство можно обвинить во многих вопросах, но утверждение, что в 1890-х годах оно стремилось захватить «Армению без армян», безосновательно, не соответствует исторической действительности.

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԵՐ ՈՂՐԵՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Մեծ Եղեռնի 80-ամյակի առթիվ)

1

Հայ ժողովրդի դարավոր պատմությունն ունի ոչ քիչ ողբերգական էջեր: Մեկ անգամ չէ, որ այլևայլ վաշկատուն ցեղեր ու ազգերի՛վ պետություններ նվաճել, ասպատակել, ավերել ու թալանել են Հայաստանը, մեկ անգամ չէ, որ տեղի են ունեցել հայության ջարդեր ու կոտորածներ: Բայց այն, ինչ կատարվեց թուրք-օսմանյան պետության կողմից 1915—16 թթ., եզակի ու աննախընթաց մի ոճրազործություն էր, որը դարձավ մեր ժողովրդի ամենամեծ ողբերգությունը: Ազգայնամուլ, ռասիստ երիտթուրքերը երկու տարվա ընթացքում ոչնչացրին արևմուտահայ բնակչության կեսից ավելին: Իրականացվեց XX դարի առաջին ցեղասպանությունը (գենոցիդ):

Թուրքական կառավարության այդ ահավոր ոճիրի մասին գրել են ոչ միայն հայերը, այլև շատ ժողովուրդների պետական գործիչներ և գիտություն ու մշակույթի բազմաթիվ անվանի ներկայացուցիչներ, գրել են ազնիվ ցասումով ու սրտի խորը կսկիծով: Հենրի Մորգենթաուեն, օրինակ, որ 1913—1916 թթ. զբաղեցնում էր Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանի պաշտոնը Կ. Պոլսում և լավատեղյակ էր Օսմանյան կայսրության մեջ տեղի ունեցող զազանություններին, նշել է. «Ես վստահ եմ, որ մարդկության համայն պատմության մեջ չկան այնպիսի դարձուրելի փաստեր, ինչպիսին այս կոտորածն էր: Այն մեծ կոտորածներն ու հալածանքները, որոնք տեղի են ունեցել անցյալում, համարյա աննշան բան են թվում հայ ազգի 1915 թ. կրած տառապանքների հետ համեմատած»<sup>1</sup>:

Ռուս անվանի արևելագետ Վլադիմիր Ալեքսանդրովիչ Գորոյնսկին, որին վիճակվեց պատերազմի տարիներին այցելել ռուսական զորքերի

կողմից քրավված Արևմտյան Հայաստանի մի շարք բաղաքներ ու դուրդեր, խոսելով հայերի կոտորածների մասին հաղորդել է. «Դա սպանող էր, ժողովրդի աննախադեպ ջարդ: Մարդիկ ասես կորցրել էին խիղճը: Բայց ամաչել էր ներատը և լաց եղել արյուն արցունքով: Մուշի մոտակա կամուրջը իր վրա տակավին պահպանում է շերտերը, այն հետքերը, երբ գետն արյունից վարարել էր: Այդպես զոհվեցին մեկ միլիոնից ավելի հայեր»<sup>2</sup>:

Ավելի ուշ հանրահռչակ Ֆրիայոֆ Նանսենը բազում փաստերի հիման վրա եկավ այն եզրակացության, որ հայերի նկատմամբ երիտթուրքերի գազանությունները «իրենց չափերով և բառմնելի դաժանությամբ դերազանցում են այն բոլորը, ինչ հայտնի է պատմությանը... Թուրքական արյունոտ պատմությանը ավելացավ այնպիսի մի ահավոր գլուխ, որը ստվերում է թողնում նախընթաց բոլորը»<sup>3</sup>:

Արևմտահայության ցեղասպանության փաստը հաստատել են գիտությունն ու մշակույթի բազմաթիվ այլ ներկայացուցիչներ, պետական գործիչներ, գրողներ ու հրապարակախոսներ Ջեյմս Բրայսը, Արնոլդ Ռոյնքիֆ, Անրի Բարբին, Հովհաննես Լեփսիուսը, Արմին Վեգները, Մաքսիմ Գորկին, Վալերի Բրյուսովը, Անատոլ Ֆրանսը, Յոզեֆ Մարկվարտը, Հերբերտ Գիբբոնսը, Գեվիդ Լյուդ Ջորջը, Ուինստոն Չերչիլը և ուրիշներ:

Հրապարակվել են արխիվային կարևոր նյութեր, ակնատեսներին ու ջարդերից փրկված մարդկանց հուշերը, ցուցմունքները և այլն: Լույս են տեսել շատ ուսումնասիրություններ ինչպես Հայաստանում, Միջուրում, այնպես էլ Ռուսաստանում ու արևմտյան երկրներում: Այսօր էլ շարունակում են հրապարակվել գիտական աշխատություններ, որոնցում նորանոր տվյալներով հաստատվում է արևմտահայության ցեղասպանության փաստը Օսմանյան կայսրության մեջ:

Սակայն շնայած այդ ամենին՝ թուրքական պատմագիտությունը, պաշտոնական ու ոչ պաշտոնական մամուլը, կառավարական ղեկավար անձինք, թուրքական մտավորականության ներկայացուցիչներ մինչև օրս էլ համատեր են ժխտում կամ արևմտահայության ցեղասպանությունը Պատմության թուրք կեղծարարներին այս կամ այն չափով ձայնակցում են մի շարք պատմաբաններ ԱՄՆ-ում, Ֆրանսիայում և այլ երկրներում, փորձեր են արվում գործը պատկերացնել այնպես, որ իբր

<sup>1</sup> Henry Morgenthau, Ambassador Morgenthau's Story, New York, 1918, p. 310.

<sup>2</sup> Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов под редакцией проф. М. Г. Персисяна. Ереван, 1966, с. 450—451.

<sup>3</sup> Fridtjof Nansen, L'Arménie et la Proche Orient, Paris, 1918, p. 357.

երիտթուրքերի կառավարությունը չի ունեցել հայերի կոտորածների կանխամատածված ծրագիր, որ նա Թուսաստանի սահմանակից նահանգներից արևմտահայերին տեղափոխել է երկրի խորքերը ուսմական նկատառումներով, որ պատերազմի տարիներին անխուսափելիորեն գոհեր են տվել ինչպես թուրքերը, այնպես էլ հայերը: Այս պատճառաբանությունները, անշուշտ, անհիմն են ու բացահայտորեն կեղծ:

Մասնագետ պատմաբաններին քաջ հայտնի է, որ դեռևս 1910—11 թթ. երիտթուրքերի՝ Սալունիկում կայացած գաղտնի հանդիպումներում ու խորհրդաժողովներում ընդունվել է որոշում օսմանիկացիայի ենթարկել կայսրություն բոլոր ոչ թուրք ժողովուրդներին: 1910 թ. օգոստոսի 28-ին Մոնաստիրի անգլիական փոխհյուպատոսը Կ. Պոլսի իր դեսպանին ղեկուցում էր, որ ինքը գաղտնի աղբյուրներից ձեռք է բերել «բովանդակությունն այն ճառի», որը վերջերս արտասանել է Թալեաթ բեյը Սալունիկում կայացած գաղտնի խորհրդակցության ժամանակ՝ «Միություն և առաջադիմություն» տեղական կոմիտեի անդամների առաջ: Փոխհյուպատոսն այնուհետև հաղորդել է, որ երիտթուրքերի ղեկավարներից մեկը՝ Թալեաթ բեյը, իր ճառում ասել է մոտավորապես հետևյալը. «... Երեք դիտեք, որ սահմանադրության համաձայն, հաստատված է մուսուլմանների ու գյավուրների հավասարություն, բայց դուք բոլորը միասին և չուրաքանչյուրը առանձին գիտեք և զգում եք, որ սա անիրագործելի իրեալ է: Շարիաթը, մեր ողջ անցյալ պատմությունը, հարյուր հազարավոր մուսուլմանների զգացմունքները և նույնիսկ հենց իրենց՝ գյավուրների զգացմունքները, որոնք համառորեն դիմադրում են իրենց օսմանացմանը, անհաղթահարելի խոչընդոտ են ներկայացնում իրական հավասարություն հաստատելու համար: Մենք անհաջող փորձեր արեցինք, որպեսզի գյավուրներին դարձնեինք օրինապահ օսմանցիներ: Նման բոլոր ջանքերը մշտապես անհաջողություն են կրելու...»<sup>5</sup>:

Եզրակացությունը պարզ էր. պետք է դիմել բռնի միջոցների: Եվ այլազգիներին վերացնելու որոշումը վերջնականապես հաստատվեց նույն Սալունիկում 1911 թ. տեղի ունեցած գաղտնի ժողովում: Հենց այդ տարիներին արդեն պարզ դարձավ, որ երիտթուրքերը նախապատրաստում են դանգվածային կոտորածներ: Ծիշտ է ասված, որ «Երիտասարդ թուրքերի ղեկավարները դեռ նոր էին անցել իշխանության գլուխ, երբ սկսեցին մոլեգին ատելություն սերմանել քրիստոնյաների, մասնա-

վորապես հայերի դեմ»<sup>6</sup>: Առաջին հարվածը պետք է հասցվեր հայերին: Այդ զգում ու հասկանում էին շատերը: Բնորոշ է, որ 1912 թ. արդեն 3000 վասպուրականցիներ Գեորգ V կաթողիկոսին ուղղած իրենց նամակում մեծ տագնապով գրում էին, որ երիտթուրքերը շարունակում և ավելի են խորացնում սուլթան Աբդուլ Համիդի շարդարարական քաղաքականությունը<sup>6</sup>: 1913 թ. ապրիլին էրզրումի ուսական գլխավոր հյուպատոս Աղամովը Կ. Պոլսի դեսպան Գիրսին հաղորդում էր, որ էրզրումից ոչ հեռու գտնվող Հասան Կալա գյուղի պանդուկում Բասենի Ղարաքիլիսայից եկած հետևակային կապիտան Հասան աղան, չբաշկևուլ հայերի ներկայությունից, իր շուրջը հավաքված բրդական աշիրեթային հեծելազորի մի քանի սպաների բացերեաց քարոզել է հայերին շուտափույթ կոտորելու անհրաժեշտության մասին: «Մեր այժմյան բոլոր դժբախտությունները,—ասել է խանը,—մեր քրիստոնյա ուսուցից են գալիս... Ես իմ կողմից ձեռք եմ առել անհրաժեշտ միջոցներ և Բասենի կազաչի բրդական բոլոր գյուղերի քրդերին հորդորել եմ այլևս չհասպանել կոտորելու հայերին և նրանց ունեցվածքը թալանելու: Այդ նույն խորհրդով դիմում եմ և ձեզ»<sup>7</sup>: Նույն թվականի ապրիլին Գիարբեքիի ֆրանսիական հյուպատոսը ղեկուցում էր, որ վիլայեթում լայն ծավալ են ստացել քրիստոնյաների կոռուպտիաները, սպանությունները և շեն րացառվում հայերի զանգվածային ջարդերը<sup>8</sup>: 1912—1913 թթ. հայկական, ուսական և եվրոպական երկրների պարբերական մամուլում հրապարակվեցին բազմաթիվ նյութեր արևմտահայությանը սպառնացող նոր կոտորածների մասին:

Այսպիսով, բացահայտ կեղծիք ու դատարկ շաղակրատանք է թուրք հեղինակների, ինչպես նաև նրանց հետևող այլազգի առանձին «պատմաբանների» այն պնդումը, որ եթե 1914 թ. չկազմակերպվեին հայ կամավորական իմքերը, ու տեղի չունենար վանի 1915 թ. ապրիլյան հերոսական ինքնապաշտպանությունը, ապա արևմտահայությունը զերծ կմնար ցեղասպանությունից: Ուրեմն, բոտ պատմության կեղծարարների, ստացվում է, որ հայկական կոտորածների պատճառը հենց իրենք հայերն էին: Ինչպիսի ցինիզմ ու ստախոսություն...:

Հարկ է նկատել, որ երիտթուրքերի որդեգրած ցեղասպանության քաղաքականությունը անցյալում ընդունել են մի շարք թուրք գործիչ-

<sup>5</sup> Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 1, էջ 37:

<sup>6</sup> ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 57, ց. 5, գ. 15, թ. 64—66:

<sup>7</sup> Архив внешней политики России (Москва), посольство в Константинополе, д. 2684, л. 36—37.

<sup>8</sup> АВПР. Политархив, д. 3460, л. 136.

<sup>4</sup> Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում. փաստաթղթերի և նյութերի ժողովածու Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ. Երևան, 1991, էջ 266:

ներ և նրանց զինակից զերմանացի պաշտոնական անձինք: Բերենք մի քանի օրինակ: 1916 թ. Հալեպում գործող թուրքական կառավարական կոմիտեի պաշտոնյաներից մեկը՝ Նալիմ բեյը (կոմիտեի խնդիրն էր Սիրիայի անապատներն աքսորել բռնադաշտված հայ կանանց, երեխաներին ու ծերունիներին) իր հուշերում պատմում է, որ նշված կոմիտեին կենտրոնական կառավարության կողմից ուղարկված գաղտնի հրամաններից մեկում պարզ ու հստակ ասված էր. «Քեև հայ տարրը բնաջնջելու հարցը, որը դարեր շարունակ ջանում էր ավերել մեր Կայսրության ամրակուռ հիմքը, իսկ ներկայումս իրական վտանգ է դարձել, վճռվել էր ավելի վաղ, սակայն հանգամանքները թույլ չէին տալիս իրագործել այդ սրբազան գործը: Այժմ, երբ բոլոր արգելքները վերացված են և հասել է մեր հայրենիքը այդ վտանգավոր տարրից ազատելու ժամանակը, հաստատակամորեն խորհուրդ է տրվում շինթարկվել կարեկցանքի զգացմունքին՝ ի տես նրանց թշվառ վիճակի, այլ վերջ տալ բոլորին և ամեն կերպ ջանալ ոչնչացնել բուն «Հայաստան» անվանումը թուրքիայում: Հետևեք, որ նրանք, ում կվստահվի այդ խնդրի իրագործումը, հայրենասեր և հուսալի մարդիկ լինեն»:

Մասնակից և ականատես լինելով կատարվող անցքերին, Նալիմ բեյը համարձակություն ունեցավ զրելու հետևյալ տողերը. «Ես կարծում եմ, որ հայերի աքսորն ու կոտորածը... իրենց հավասարը չունեն անմարդկային արարքների մասին մինչև այժմ գրված պատմությունների մեջ: Թուրքիայի ընդարձակ տարածքի որ անկյունն էլ որ հայացք նետես, որ խոր կիրճն էլ որ նայես՝ ամենուրեք կարելի է գտնել ամենադաժան կերպով խողխողված ու այլանդակված հազարավոր հայերի դիակներ ու կմախքներ»<sup>9</sup>:

Թուրքական հանրապետության հիմնադիր Քեմալ փաշան, որը 1919—22 թթ. կոտորածի եթարկեց հարյուր-հազարավոր հայեր ու հույներ, նույնպես հաստատել է Մեծ Եղեռնի փաստը: 1926 թ. շվեդական լրագրողներից մեկին տված իր հարցազրույցի ժամանակ նա հայտարարեց, որ երիտթուրքերը պետք է պատասխան տան միլիոնավոր քրիստոնյաների կոտորածների համար<sup>10</sup>:

Կարևոր վկայություններ կան գերմանական արխիվներում: Կ. Պոլսի գերմանական դեսպան բարոն Վանդենհայմը, որ երիտթուրքերի պա-

րագլուխների բարեկամներըց ու խորհրդատուներից մեկն էր, իր գաղտնի զեկուցագրերում ուղղված ռալխականցիլերին, հայտնում էր, որ երիտթուրքերի կառավարությունը վարում է արևմտահայությունը վերացնելու քաղաքականություն: 1915 թ. հուլիսի 7 թվակիր զեկուցագրում, հաղորդելով հայերի բռնի աքսորների մասին, նա եզրակացնում էր, որ իսկապես, երիտթուրքերի կառավարությունը «նպատակ ունի ոչնչացնել հայոց ազգը թուրքական պետության մեջ»<sup>11</sup>: Կ. Պոլսի գերմանական դեսպանության պատասխանատու պաշտոնյա կյուպերաի կողմից 1915 թ. օգոստոսի 31-ին կազմված արձանագրության մեջ նըշվում էր, որ թուրքական կառավարության ներքին գործերի մինիստր Ռալեաթ բեյը, այցելելով դեսպանություն, հայտարարել է, որ հայերի վեմ ուղղված գործողությունները հիմնականում իրականացվել են և որ «Հայկական Հարցն» այլևս գոյություն չունի<sup>12</sup>: 1915 թ. նոյեմբերին Վանդենհայմի մասից հետո նոր դեսպան նշանակված կոմս Վոլֆ Մետերնիխը իր գաղտնի զեկուցագրում կանցլեր Բեհաման-Հոլվեգին հաղորդում էր, որ երիտթուրքերի կուսակցության կենտրոնական կոմիտեն «պահանջում է ոչնչացնել հայերի վերջին մնացորդներին»<sup>13</sup>:

Ահա և շարքային գերմանացու վկայությունը: Հալեպի գերմանական դպրոցի ուսուցիչ Մարտին Նիսլայեն գրել է. «1915 թ. սեպտեմբերին, երեքամսյա արձակուրդից հետո, Բեյրութից Հալեպ վերադառնալով, ես սարսափով իմացա, որ սկսվել է հայերի կոտորածների մի նոր ժամանակաշրջան, շատ ավելի ահավոր, քան Աբդուլ Համիդի օրոք էր եղել, որը նպատակ ուներ ամբողջովին ոչնչացնել հայ ժողովրդին՝ խելացի, աշխատասեր, առաջադիմության ծարավի այդ ժողովրդին:

Սկզբում հրաժարվում էի հավատալ դրան: Ինձ պատմեցին, որ Հալեպի տարբեր մասերում հանգիպում են սովալլուկ և ուժասպառ մարդկանց բազմություններ՝ խղճուկ մնացորդները նրանց, ովքեր հայտնի էին որպես «տեղահանվածների քարավաններ»: Որպեսզի թաքցնեին հայոց ազգի ոչնչացումը քաղաքականության դիմակի տակ, սկսեցին պնդել, որ իբր ռազմական նկատառումներն են իրենց ստիպել այսպես սելու հայերին նրանց հարազատ վայրերից, որտեղ նրանք ապրել են 2500 տարի, և ուղարկել Արաբական անապատ: Այդ միջոցառումներն արդարացվում էին նաև նրանով, որ որոշ հայեր մեղադրվում էին լըրտեսություն մեջ:

<sup>9</sup> The memoirs of Naim Bey. Turkish official documents relating to the Deportations and Massacres of Armenians. Compiled by Ara n Andonian. London, 1920, p. 1—10.

<sup>10</sup> Los Angeles Examiner, 1 August 1926.

<sup>11</sup> Johannes Lepsius. Deutschland und Armenien 1914—1918. Sammlung diplomatischer Aktenstücke. Potsdam, 1919, S. 94.

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 146:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 247:

Ես տեղեկութիւններ հաճաքեցի այդ փաստերի վերաբերյալ և բազմակողմանի ինֆորմացիա ստանալով՝ եկա այն եզրակացութիւն, որ հայերի դեմ առաջ քաշված մեղադրանքները վերաբերում են սակավանշանակ առանձին զեպքերի, որոնք սոսկ առիթ են ծառայում մեկ մեղավորի պատճառով տասնյակ հազարավոր անմեղ մարդկանց ոչնչացնելու համար, կանանց ու երեխաների դեմ դաժանագոյն գործողութիւններ կատարելու և արքայազններին սովի դատապարտելու համար՝ նրանց համատարած ոչնչացման նպատակով»<sup>14</sup>:

Բերենք նաև պարսիկ ու արաբ ահանատեսների հաղորդումները: Պարսիկ Քերպելա Ալի Մեհմեթը պատմել է. «Ես ռազմամթերք կը փոխադրեի Երզնկային Կարին: Մի անգամ 1915 հունիսի մեջ, երբ եկա ետժուրի կամուրջին մոտ, մի ահուկ տեսարան ներկայացավ իմ աչքերու: Անթիվ-անհամար մարդու դիակներ մեծ կամուրջին 12 կամարները լեցուցած էին, դեմ էին առած, և ջուրը իր ընթացքը փոխած կամուրջին անդին կը վազեր: Սոսկալի էր տեսիլքը, երկար սպասեցի քարավանովս, մինչև որ այդ դիակները քշվեցան և կարողացա կամուրջին անցնիլ: Սակայն կամուրջին մինչև ձիւնիս ամբողջ ճանապարհը լեցուն էր դիակներով. ծերեր, կիներ, երեխաներ արգեն հոտած, նեխված և ուռած: Այնպիսի մեծ գաղափարներ կար, որ անցնիլ այդ ճանապարհով անհնար էր: Իմ երկու ուղտապաններս արգեն հոտեն հիվանդանալով՝ մեռան, և ես ստիպվեցա ճանապարհս փոխել: Անլուր և զարհուրելի ռճրագործութեան զոհեր և հետքեր էին ասոնք: Իսկ բոլոր դիակները հայեր, թշվառ հայեր էին»<sup>15</sup>:

Թուրքական իշխանութիւնների կողմից դավադրութեան մեղադրանքով բանտարկված արաբ փաստաբան Յայեզ էլ Հուսայնին 1915 թ. Լիբանանից փոխադրեցին Դիարբեքիր: Բանտարկյալին վիճակվեց ճանապարհորդութեան ընթացքում ականատես լինել հայերի նկատմամբ գործադրվող զազանութիւններին: Ուրֆայի շրջակայքում, զրել է նա իր հուշերում, «...տեսա հետիոտն ընթացող մարդկանց ամբոխներ: Հեռվից նրանց զորամասերի տեղ դրեցի, բայց երբ մոտեցանք, տեսա, որ դրանք հայ կանայք են, որոնք գնում էին սովոր շարքերով, բոկոտն ու հլուծված, իսկ նրանց առջևից ու հետևից գնում էին ժանդարմները: Եթե կանանցից որեւէ մեկը ուժասպառ լինելուց հետ էր մնում, ապա ժանդարմները խզակոթով ծեծում էին նրան, ստիպելով հասնել իր ուղեկիցներին: Իսկ նրանց, ուղքեր ուժասպառ էին լինում հիվանդաւ-

թիւնից, թողնում էին մեն-մենակ, ճանապարհի մեջտեղում՝ հոշոտվելու վայրի զազանների կողմից, կամ էլ ժանդարմները զնդակահարում էին նրանց...»<sup>16</sup>:

Այսպիսով, այլազգի հեղինակների, ինչպես և ջարդերից փրկված հայերի վկայութիւնները, որոնց թիվը նույնպես մեծ է, կասկած չեն թողնում այն մասին, որ երիտթուրքերի կառավարութիւնը 1915—1916 թթ. իրոք կազմակերպել է արևմտահայութեան Մեծ եղեռնը:

## 2

Հայոց ցեղասպանութեան վերաբերյալ կարևոր տեղեկութիւններ ու վկայութիւններ են պարունակում այն նյութերը, որոնք հրատարակվեցին 1919 թ. 4. Պոլսում և 1921 թ. Բեռլինում տեղի ունեցած դատավարութիւնների ժամանակ:

Թուրքիայի և նրա գաղնակիցների պարտութիւնից հետո հաղթանակած Անտանտի մի շարք պետութիւնների և միջազգային հասարակական կարծիքի ճնշման տակ թուրքական սուլթան Մեհմեդ VI վահիդէդինը 1919 թ. մարտի 8-ին հրաման արձակեց ռազմական արտակարգ ատյանի (Տրիբունալի) միջոցով քննութեան ենթարկել երիտթուրքերի ղեկավարների հանցավոր գործունեութիւնը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: Առաջ քաշվեցին զանազան մեղադրանքներ, այդ թվում և հայերի նկատմամբ կատարած նրանց ոճրագործութիւնների հարցը: Գլխավոր հանցագործներից ոմանք՝ Թարեաթի, էնվեր, Ջամալ փաշաները, Նազըմ բեյը, Բեհաէդդին Շաքիր բեյը և ուրիշներ կարողացել էին ձողոպրել այլ երկրներ, ուստի նրանք դատվում էին հեռակա կարգով:

Ատյանի մեղադրական եզրակացութեան մեջ նշված էր, որ հայկական ջարդերը կատարվել են կանխամտածված ծրագրով, երիտթուրքերի կառավարութեան ու կուսակցութեան կենտկոմի ցուցումներով, որ հայութեան կոտորածներն արագացնելու նպատակով ստեղծվել է հատուկ զազանի կազմակերպութիւն՝ «Թեշքիլատ-ը մահսուսե» անունով, որտեղ ընդգրկվել են քրեական, հանցագործ տարրեր: Գատարանի մեղադրական եզրակացութեան մեջ նշվում է, որ «հայերի նկատմամբ կատարված վայրագութիւններն ու կոտորածները, նրանց ունեցվածքի թալանն ու կողոպուտը որոշված է եղել երիտթուրքերի կուսակցութեան կենտրոնական կոմիտեի կողմից: Եվ այդ կոտորածների, ինչպես նաև բոլոր զազանութիւնների իրագործման համար Բեհաէդդին

14 Հայերի ցեղասպանութեան Օսմանյան կայսրութիւնում..., էջ 390:

15 22 ՊՊԿԱ, ֆ. 57, ց. 5, ք. 106, թ. 13:

16 Հայերի ցեղասպանութեան Օսմանյան կայսրութիւնում..., էջ 483:

Շաբիր բեյը երրորդ բանակի շրջանում պատրաստել է հատուկ մարդասպաններ և անձամբ ղեկավարել նրանց... Նրա կողմից հավաքագրված մարդկանց մի մասը եղել են մահապատժի ենթակա հանցագործներ, իսկ մի մասն էլ՝ արնախում ժանդարմներ»<sup>17</sup>:

Տրոպիկոնի վիլայեթում հայ բնակչության ջարդերը կազմակերպողների գործը քննող դատարանի որոշման մեջ ասված է, որ Տրոպիկոնի վայրին ու երիտթուրքերի կուսակցության տեղական պատասխանատու քարտուղարը, կատարելով կենտրոնական իշխանության հրահանգները, անխնա կոտորել են անգին ու անպաշտպան հայ բնակչությանը: Շտապ տեղահանված հայերի քարավանները քաղաքից հեռացնելուց հետո, ամալի վայրերում տղամարդկանց առանձնացրել են կանանցից և «հանցագործներից կազմված շեփեների հրոսակախմբերը հարձակվելով՝ կողոպտել են նրանց իրերը և այնուհետև աներևակայելի դաժանություններ սպանել ու բնաջնջել բոլորին: Իսկ խեղճ կանանց մի ալլ վայր տանելով հափշտակել են նրանց զարդեղեններն ու շորերը... Տրոպիկոնում մահացած կանանց ու երեխաների մի մասին իբրև թե պաշտպանելու պատրվակով տեղավորել են հիվանդանոցներում ու դերվիշների տներում: Այնուհետև... խմբերով նստեցրել են նավերը և տեսադաշտից հեռու, ծովի խորքերը տանելով՝ նետել են ջուրը և խեղդելով ոչնչացրել բոլորին: Այս դատավարության վերջին նիստում պարզվեց և բոլորս համազված ենք, որ կոտորածն ու կողոպուտը մտահոգացված են եղել ոչ թե Տրոպիկոնում, այլ նրա սահմաններից դուրս, այն էլ՝ կանոնավոր ու խիստ կազմակերպված»<sup>18</sup>:

Թուրք ազգայնամոլները նախօրոք կազմված ծրագրի համաձայն այսպես են վարվել նաև Արևմտյան Հայաստանի մյուս վիլայեթներում ու Մերձավոր Արևելքի հայաբնակ շրջաններում: Այդ են ցույց տալիս Կ. Պոլսում 1919 թ. տեղի ունեցած դատավարության ժամանակ հրապարակված մյուս նյութերն ու վկայությունները:

Մեծ Եղեռնի պատմության մի շարք հարցեր ավելի լուսաբանվեցին 1921 թ., երբ Թալեաթ փաշայի սպանության կապակցությամբ տեղի ունեցավ հատուկ դատավարություն Բեռլինում: Նշված թվականի մարտի 15-ին երիտասարդ հայրենասեր Սողոմոն Թեհլիրյանը Գերմանիայի մայրաքաղաքի փողոցներից մեկում սպանեց մեծ ոճրագործ Թա-

լեաթ փաշային: Հունիսի 2-ին և 3-ին տեղի ունեցան Բեռլինի նահանգական դատարանի նիստերը, որոնցում հանդես եկան հայերի ցեղասպանության ակնատեսներ, հասարակական-քաղաքական ու զինվորական գործիչներ, փաստաբաններ, փորձագետներ և այլք: «Մեղադրյալ» Թեհլիրյանը մանրամասնորեն պատմեց այն նախճիրների մասին, որոնց ակնատես է եղել անձամբ ինքը, ապա լավեցին ջարդերից հրաշքով փրկված տիկին Թերզիբաշյանի, եպիսկոպոս Գրիգորիս Պալաքյանի և մյուսների վկայությունները: Վերջինս իրեն ուղղված մի հարցի առիթով հաղորդեց հետևյալը. «Երբ 1915-ին Չանկր էի և սեպտեմբերի մեջ ամբողջ Անատոլու հայերե դատարկված էր և հայերը սպանված էին, էրզրումե՝ ռուս-թրքական ռազմաճակատին հազարապետ մը եկավ Չանկր, և կուզեր անկե Կ. Պոլիս երթալ: Սա մեծ սխրություն մը քսավ մեզի. ինչ որ մեր նախկին սուլթանները չըրին, մենք ըրինք՝ պատմական ազգ մը Ձ ամսվան մեջ մեռուցինք»<sup>19</sup>:

Անվանի հումանիստ Յոհանես Լեփսիուսը, որ ճշգրիտ տեղեկություններ ուներ Թուրքիայում 1915—1916 թթ. հայկական մասսայական կոտորածների մասին, անվերապահորեն մերկացրեց գերմանական կառավարության դաշնակից երիտթուրքերին: Դատական ատյանին տված իր ցուցմունքներում նա հայտարարեց. «Համընդհանուր տեղահանությունը սրբուծը կայացրել էր երիտթուրքական կոմիտեն, այդ հրամանը տվել էր ներքին գործերի մինիստր Թալեաթ փաշան ռազմական մինիստր էնվեր փաշայի հետ համատեղ»: Լեփսիուսը հարկ է համարել ընդգծել, որ Թալեաթի հրամաններում «տեղափոխություն» (դեպորտացիա) և «բնաջնջում» բառերը ունեցել են նույն նշանակությունը: Նա այնուհետև ավելացրել է. «Արևելյան Անատոլիայի վիլայեթներից տեղահանված ողջ բնակչության սոսկ 10 տոկոսը հասավ արքայազններ: Մնացած 90 տոկոսը կոտորվեց արքայի ճանապարհին... Իսկ Արևմտյան Անատոլիայից, Կիլիկիայից և Հյուսիսային Միջագետքից անապատ արքայազն հայերին հավաքել էին համակենտրոնացման ճամբարներում, որտեղ աստիճանաբար մեծ թվով մարդիկ կուտակվեցին: Հետագայում նրանք բոլորը ոչնչացվեցին սխտեմատիկ սովի և պարբերական ջարդերի հետևանքով: Երբ ճամբարները լցվում էին արքայազնների նոր խմբերով և մարդկանց համար այլևս տեղ չէր մնում, նրանց մեծ խումբերով քշում էին անապատ և այնտեղ սպանում... Պաշտոնապես հայտարարվում էր, որ այդ տեղահանությունները լոկ նախազդուրական

<sup>19</sup> Դատավարություն Թալեաթ փաշայի. սրագրական ղեկուցում. Վիեննա, Միլիթարյան տպարան, 1921, էջ 109:

<sup>17</sup> ՀՀ ՊՊԿԱ, Ֆոնդ 200, ց. 1, գ. 237, թ. 62:  
<sup>18</sup> Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի. Առաջաբանը, թարգմանությունը և ծանոթագրությունները Ա. Հ. Փափայանի. Յրենան, 1988, էջ 167—168:

միջոցառումներ են, բայց առանձին հեղինակավոր անձինք միանգամայն բացելիքաց խոստովանում էին, որ աքսորի նպատակը հայ ազգի բնաջնջումն է»<sup>20</sup>:

Իր ընդարձակ ճառում Թեհլիրյանի պաշտպան Ադոլֆ Ֆոն Ֆորդոնը հանդամանորեն կանգ առավ հայերի կոտորածների վրա, ձգտելով բարոյական ու իրավագիտական փաստարկումներով արդարացնել Թեհլիրյանին: Մեղադրյալի մյուս պաշտպան, գաղտնի խորհրդակցան, պրոֆեսոր Նիմայերը բազմաթիվ փաստերով հիմնավորեց այն ճշմարտությունը, թե հայերի բնաջնջման ամբողջ պատասխանատվությունն ընկնում է երիտթուրքերի կոտակցության հենտկոմի և մասնավորապես նրա ամենաազդեցիկ անդամներից մեկի՝ Թալեաթի վրա: Մեծ սպաւորություն թողնելու պաշտպանի այն խոսքերը, թե այժմ Թեհլիրյանը հանդես է գալիս որպես «ներկայացուցիչը ճշմարտությանը՝ ընդդեմ ճշմարտությանը»: Նույն կերպ հանուն մեկ միլիոն սպանվածներու ընդդեմ մեկուն, որը ուրիշների հետ միասին՝ այդ ոճիրներու մեղքը ունի: Ան կու գա իբրև ներկայացուցիչը իր ծնոջքին, իր քույրերուն, իր քեռայրին ու եղբայրներուն, և ի վերջո իբրև ներկայացուցիչը իր քրոջ երկուուկես տարեկան մանկան: Հայ ազգը, հազար տարիե ի վեր մինչև ամենեն փոքրիկ երեխան, կանգնած է ահոր հետին: Ան կը կրե դրոշակը արդարության, դրոշակը մարդկայնության, դրոշակը վրեժխնդրության՝ իր քույրերու և ազգականներու պատվին համար: Այս խոհերով ան կ'ելլե ընդդեմ անոր, որ պղծել տվավ իր ընտանիքին պատիվը, ոչնչացնել տվավ ամենքին բարօրությունը, ամբողջ ժողովուրդ մը բնաջինջ անել տվավ մարմնապես»<sup>21</sup>:

Գերմանական հանրապետության դատարանը գտնվեց իր բարձրության վրա և, հակառակ թուրքֆիլների մեծ աղմուկին ու սպառնալիքներին, արդարացրեց Թեհլիրյանին: Աշխարհի առաջավոր մարդկությունը ողջունեց դատարանի արդարացի դատավճիռը: Դատավարության նյութերը նույն 1921 թ. լույս տեսան գերմաներեն և ապա հայերեն: Միլիոնավոր մարդիկ հնարավորություն ունեցան ծանոթանալու հայության ցեղասպանության մանրամասներին:

Տասնյակ տարիներ հետո՝ 1984 թ. հայության ցեղասպանության շատ հարցեր քննության առարկա դարձան ժողովուրդների Մնայուն Ատյան միջազգային կազմակերպության կողմից Փարիզում (Սորբոնում) կազմակերպված հատուկ նստաշրջանում, որի դատակազմի մեջ

ընդգրկվել էին տարբեր երկրների նշանավոր անձինք՝ Նոբելյան մրցանակի արժանացած գիտնականներ, իրավաբաններ, տնտեսագետներ և այլն: Չորս օր շարունակ, ապրիլի 13-ից 16-ը, քննարկվեցին ոչ միայն ցեղասպանության, այլև Հայկական Հարցի վերաբերյալ խնդիրներ: Զեկուցումներով հանդես եկան պատճառներ Ռիչարդ Հովհաննիսյանը («Հայկական հարցը 1878—1923 թթ.»), Ժիրայր Լիպարիտյանը («Երիտթուրքական շարժման գաղափարախոսությունը»), անգլիացի պատմաբան Բրիտտոն Ուորդերը («Երիտանական աղբյուրները հայերի ցեղասպանության վերաբերյալ»), Բեռլինի Ազատ համալսարանի պրոֆեսոր Տեսա Հոֆմանը («Գերմանացի ականատեսների հաղորդումները հայերի ցեղասպանության մասին»), ֆրանսիացի պատմաբան, հրապարակախոս Իվ. Տերնոնը («Հայերի գենոցիդը Օսմանյան կայսրությունում 1915—1916 թթ.»), պրոֆ. Տիգրան Կուլումջյանը («Հայկական պատմական հուշարձանների ոչնչացումը որպես թուրքական գենոցիդի քաղաքականության շարունակություն») և այլք: Դատարանում հանդես եկան նաև ՄԱԿ-ի ենթակոմիտեի նախկին տնօրեն պրոֆ. Թ. Վան Բոյվինը, Կալիֆորնիայի համալսարանի պրոֆեսոր, սոցիոլոգ Լ. Կուպերը, պրոֆ. Ժ. Վերհովենը և ուրիշներ:

Ժողովուրդների Մնայուն Ատյանը, նկատի ունենալով գիտնականների զեկուցումները, ձեռքի տակ ունենալով բազմաթիվ փաստաթղթեր, ականատեսների ցուցումները և այլ նյութեր, ընդունեց դատավճիռ, որով անվերապահորեն հաստատեց այն փաստը, որ հայերի ցեղասպանության «մեղավորը երիտասարդ թուրքերի կառավարությունն է»<sup>22</sup>: Դատավճռում ասված էր նաև, որ «Ատյանը կհաստատե, թե թրքական կառավարության մեջբերած զանազան պատճառաբանությունները (ըմբոստություն, դավաճանություն և այլն), ջարդերուն առ ի արդարացում, անհիմն են... որ հայ ժողովրդի ցեղասպանության ամբաստանությունն, բանաձևած (ուղղված) թուրք իշխանությունների հասցեին, հիմնավոր է ու փաստացի»: Դատավարության նյութերը կասկած չեն թողնում, որ երիտթուրքերը հայերի կոտորածները կազմակերպել են կանխամտածված ծրագրով և հետապնդել են պանթուրքիստական նպատակներ: Փարիզի Ատյանի (Տրիբունալի) դատավարությունը լայն արձագանք գտավ շատ երկրներում:

Հարկ եմ համարում ընթերցողի ուշադրությունը հրավիրել մի հանդամանքի վրա: Ցեղասպանության մասին դրոշ մի շարք հեղինակներ

20 Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, էջ 702:

21 Դատավարություն Թալեաթի փառալի..., էջ 188:

22 A Crime of Silence. The Armenian Genocide. The Permanent People's Tribunal. London, 1985, p. 227.

նշել են այն իրողությունը, որ ազգայնամուլ երիտթուրքերի ու հիտլերական ֆաշիստների միջև գոյություն է ունեցել որոշակի ընդհանրություն ինչպես գաղափարախոսական, այնպես էլ գործնական հարցերում: Գերմանուհի պրոֆեսոր Տեսաս Հոֆմանը, օրինակ, Ադոլֆ Հիտլերին համարում է Թալեաթի հոգևոր ժառանգը: Իսկապես, Հիտլերը կրկնում էր թուրք գահիճներին, երբ ամենայն դաժանությամբ ոչնչացնում էր հրեաներին, լեհերին, բոլոր սլավոններին, երբ պահանջում էր առանց զիջում սպանել երեխաներին, ծերերին ու կանանց: Պատահական չէ, որ ֆաշիստների պարազուլքը 1939 թ. օգոստոսի 22-ին՝ Լեհաստան ներխուժելու նախօրեին՝ իր գեներալներին ասում էր, թե ամեն ինչ կմոռացվի, այժմ «Ո՞վ է հիշում հայերի ոչնչացման մասին»<sup>23</sup>: Ահա մի մանրամասնություն: 1915 թ. Երզնկայի հիվանդանոցներում թուրք բժիշկները «գիտական» փորձեր են կատարել ոչ թե ճաղարների ու ծովախոզուկների, այլ հայ մարդկանց վրա<sup>24</sup>: Հայտնի է, որ նման «գիտական» փորձեր կատարեցին նաև ֆաշիստ բժիշկները ոչ «արիացիների» վրա Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին: Հիտլերյան ֆաշիստները հետևեցին թուրք ոճրագործներին նաև մի շարք այլ հարցերում:

### 3

Երիտթուրքերի ոճրագործ քաղաքականությունը հայ ժողովրդի նկատմամբ շարունակվեց նաև հետագա տարիներին, մասնավորապես 1918 թ., երբ թուրքական բանակին հաջողվեց ներխուժել Արևելյան Հայաստան ու Անդրկովկաս: Նորից կոտորածներ, նորից ավեր ու թալան: Այդ իրադարձությունների մասին Հայաստանի պետ. պատմական կենտրոնական արխիվում պահվում է 1918 թ. դեկտեմբերին կազմված շատ արժեքավոր մի փաստաթուղթ, որը ստորագրել է մեր մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը, որպես Հայոց հայրենակցական միությունների կենտրոնական խորհրդի նախագահ: Մի քանի քաղվածք այդ վավերագրից: Ալեքսանդրապոլ քաղաքում և գավառում կատարված անցքերի մասին այնտեղ ասված է. «Չնայելով Բրեստ-Լիտովսկու հաշ-

տության պայմանագրի պայմաններին, թուրքերը Ալեքսանդրապոլ քաղաքի անակնկալ հարձակումով խուճապի մատնեցին վերջինիս բնակչությունը, հարձակման անցան ամբողջ գծով մեկ, հրի ու թալանի մատնեցին գյուղերն ու բնակչությունը, որը իր դեմ գործադրված խելակորույս գաղանթություններից փախավ Ղարաքիլիսայի լեռնանցքները ու ձորերը: Այստեղ թուրքական կանոնավոր զորամասերն իրենց դաշնակիցների՝ մուսուլմանական հրոսակների հետ անասելի վայրագություններ կատարեցին՝ կանանց բռնաբարում, երեխաների սպանում, տղամարդկանց զանգվածային բնաջնջում... Ջրհորները, փոսերը, ձորերը, գետերն առ այսօր էլ լի են սպանվածների նեխած դիակներով: Ալեքսանդրապոլի գավառի տեղերում մնացած բնակչությունից, որը չէր հասցրել փախչել, ավելի քան 10 000 երիտասարդներ ըզվեցին Թուրքահայաստանի խորքը՝ դեպի էրզրում, որտեղ նրանք զոհվեցին ասկյարների՝ զնդակներից ու հարվածներից, սովից, սրտից ու հիվանդություններից»<sup>25</sup>:

Միայնալիքի գավառի մասին փաստաթղթում հաղորդվում է. «Չավիլեով Ալալքայաքի գավառը, թուրքերը կոտորեցին մնացած ամբողջ հայ բնակչությանը, բացի հայ կաթուղիներից: Այսպես, շիլովին սրի են քաշված Թախա և Խորենիա գյուղերի երկու հազար զուգացիները, որոնք չէին հասցրել փախչել... գավառի 85 հազար գաղթական հայերից 5 ամսում զոհվեցին ավելի քան 40 հազար մարդ: Հիվանդություններից, սրտից ու սովից օրական միջին հաշվով 300 մարդ է մեռնում»: Փամբակի շրջանի մասին կարգում ենք. «Այս շրջանի 28 հայաբնակ գյուղերից փրկվել է միայն Համգաշիման գյուղը, ուր թուրքերը չեն մտել, իսկ մնացած 27 գյուղերը ենթարկվեցին թուրք-թաթարական զորքերի ու հրոսակախմբերի բոլոր սարսափներին: Գաղանթությունների ձեռքը և տեսակները հայտնի են. մարդիկ կոտորվել են զանգվածաբար՝ միմյանց կապկապված զնդակահարվել են հարյուրներով... Թուրքերն իրենց զոհերին ստիպում էին դերեզմաններ փորել իրենց համար և ողջ ողջ թաղում էին նրանց»:

Փաստաթղթում խոսվում է նաև այն վայրագությունների մասին, որոնք տեղի են ունեցել հայերի նկատմամբ Ելիզավետպոլում, Շամախիում և Գյոխչայում, Նուխի ու Արեշի գավառներում, Օրգուրագ-Ազուլիսի շրջանում, Բաբու քաղաքում և այլուր: Պարզ էր, որ թուրք ազգայ-

<sup>23</sup> K. B. Bardakjian. Hitler and the Armenian Genocide. Cambridge, Massachusetts: Zoryan Institute. Special Report, 1:8, 81 p.

<sup>24</sup> Dadrian Vahagn. The Role of Turkish Physicians in the World War Genocide of Ottoman Armenians (Holocaust and Genocide Studies 1:2, 1986, 169-192).

<sup>25</sup> ՀՀ ԿԳՊԱ, Թ. Հովհաննիսյանի հավաքածու, միկրոֆոտոկոնքեր: ՏՆՍ նաև ՊԲՀ, 1987, № 2, էջ 240-243:

նամբները ձգտում էին իրագործել հայերի ցեղասպանությունը նաև Անդրկովկասում: Բայց այդ նրանց չհաջողվեց, քանի որ շորս տարի տևող համաշխարհային պատերազմում ի վերջո հաղթեցին Անտանտի պետությունները, պարսվեցին Թուրքիան և նրա դաշնակիցները, թուրքական կառավարությունը ստիպված եղավ Անդրկովկասից հեռաբանել իր սերունդները:

Սակայն այդ երկար շտեկաց: Իշխանության գլուխ անցած քեմալականները 1919—1922 թթ. կազմակերպեցին հայերի ու հույների նոր կոտորածներ, որոնց ընթացքում զոհվեցին մի քանի հարյուր հազար մարդ: Եվ եթե այս անգամ ևս թուրք ազգայնամոլներին չհաջողվեց ոչնչացնել արևելահայությունը, ապա շնորհիվ ուստական 11-րդ բանակի վճռական միջամտության, շնորհիվ այն բանի, որ 1920 թ. գեկտեմբերին Հայաստանում հաստատվեց խորհրդային իշխանություն: Հետագայում է նկատել, որ թուրք ոճրագործները 1890-ական թթ. և XX դարի սկզբին իրենց գլխավոր հարվածն ուղղեցին հայերի ու հույների, իսկ ավելի ուշ՝ քրդերի դեմ: Այս, իհարկե, պետական քաղաքականություն ու կանխամտածված ծրագիր էր:

Ութ տասնամյակ է անցել արևմտահայության 1915 թ. ցեղասպանությունից: Տեղի են ունեցել խոշոր իրադարձություններ, կատարվել են շատ փոփոխություններ, սակայն մեր ժողովուրդը միշտ էլ իր բարոյական պարտքն է համարել շմոռանալ ու պատշաճ հարգանքով նշել մեկ ու կես միլիոն անմեղ զոհերի հիշատակը: Բայց խոսել անցյալի մասին, նշանակում է խոսել նաև մեր ներկայի ու ապագայի մասին, նշանակում է լինել զգոն ու սթափ, հաշվի առնել պատմության դասերը, որպեսզի խույս տանք նոր կոտորածներից ու ողբերգություններից: Գրա անհրաժեշտությունը զգացվում է հատկապես այսօր, երբ ժամանակակից պանթուրքիստական ուժերը և նրանց թիկունքում կանգնած պետությունները բացահայտ աշխուժություն են ցուցաբերում Անդրկովկասի և ընդհանրապես ամբողջ Կովկասի նկատմամբ: Անշուշտ պատահական չէ այն, որ առաջ են քաշվում «Կովկասյան տուն», «Կովկասյան դաշնություն» ստեղծելու ծրագրերը, ծրագրեր, որոնց իրականացումը մեր բազմաշարժար ժողովրդին կբերի միայն նոր աղետ, նոր ցեղասպանություն: Իհարկե չպետք է մոռացության տրվի նաև այն իրողությունը, որ արևմտյան պետությունները, հակառակ իրենց շատ խոստումների, դործնականում ոչ մի օգնություն ցույց չտվեցին 1918—1920-ական թթ. խիստ ծանր վիճակում գտնվող հայ ժողովրդին: Արդյո՞ք այդ չի կրկրնվի նաև մեր ժամանակներում:

Տարիներ առաջ ամերիկահայ նշանավոր գրող, մեծ հայրենասեր Վիլյամ Սարոյանը գրել է. «Մեզ համար մեծ բախտ է, որ մեզ զորավիգ է սուս ժողովուրդը: Մենք շենք կառող զոյատեկ առանց գորավոր պաշտպանության (ընդգծումը մերն է—Մ. Ն.)... ուսները մեր եղբայրներն են, մեր բարեկամները: 50 տարի այդ բարեկամությունը տալիս է իր պտուղները»<sup>26</sup>: Սարոյանը, այսպիսով, անվերապահորեն կողմնակից էր ուսական կողմնորոշմանը, նա պաշտպանում էր Իսրայել Օրոն, Հովսեփ Էմինի, Շահամիր Շահամիրյանի, Խաչատուր Աբովյանի, Ներսես Աշտարակեցու, Բաֆֆու, Գրիգոր Արծրունու, Կոմիտասի, Գրիգոր Զոհրապի, Հովհաննես Թումանյանի, Ավետիք Իսահակյանի և մեր մյուս իմաստուն նախնիների տեսակետը: Կարծում ենք, որ մեր օրերի այն քաղաքագետները, որոնք փորձում են նոր «դյուտեր» անելու ու նոր ուղիներ փնտրելու նպատակով վերանայել ամեն ինչ, կատարում են կոպիտ սխալ: Նրանք չպետք է անտեսեն պատմության դասերը, մեր հեռուստես նախնիների պատգամները:

## ВЕЛИКАЯ ТРАГЕДИЯ АРМЯНСКОГО НАРОДА

### Резюме

Геноцид армян 1915—1916 гг.—одна из самых черных страниц истории человечества. Пантюркистское правительство младотурок по заранее продуманной и запланированной программе в течение двух лет уничтожило до полутора миллиона армян. Был осуществлен первый геноцид XX века. Об этом страшном преступлении турецкого правительства создана обширная литература, об этом искали не только армяне, но и многие иностранные ученые, и официальные лица. Факт геноцида всесторонне был доказан также во время судебных процессов, проведенных в Константинополе (1919 г.), Берлине (1921 г.), Париже (1984 г.). Но, несмотря на это, в Турции, как раньше, так и сегодня, грубо фальсифицируя историю, отрицают геноцид армян. Достойно внимания то обстоятельство, что современные пантюркисты разрабатывают, особенно после развала СССР, агрессивные планы в отношении Закавказья и Кавказа. Возникает вопрос—если эти планы осуществляются, не повторится ли преступление 1915—1916 гг.? Думаю, не следует забывать уроков истории, завета наших мудрых предков о том, что могущественная Россия является традиционным, надежным и верным союзником Армении.

<sup>26</sup> Տե՛ս «Սովետական Հայաստան» հանդեսը, 1981 թ. նոյեմբեր, էջ 17:

ՄԻ ԲԱՆԱՎԵՃ ԶՄՅՈՒՌՆԻԱՅԻ 1922 ԹՎԱԿԱՆԻ  
ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(Զմյուռնիայի հայ և հույն բնակչության ջարդերի 70-ամյակի առթիվ)

1965 թ. ապրիլի սկզբներին ամերիկյան հայտնի «Թայմ» («Time») հանգեսը ապագրեց գրախոսական անվիացի լորդ Կինրոսի «Աթաթուրք» խորագիրը կրող մեծածավալ գրքի մասին<sup>1</sup>: Ընդհանուր առմամբ դրական գնահատական տալով այդ աշխատությանը, պարբերալիստը, սակայն, սխալ էր համարում գրքում բերված այն տեղեկությունները, որոնք վերաբերում էին Զմյուռնիայում 1922 թ. սեպտեմբերին կատարված ոճրագործություններին: Հատուկ ծանոթագրության մեջ հանգեսը անհրաժեշտ համարեց նշել այն հանգամանքը, որ Կինրոսը ճիշտ չէ, նրբ հիմք ընդունելով Ամերիկայի Միացյալ Նահանգների պետական ղեկավարամենտի տվյալները գրել է, թե Զմյուռնիայում 1922 թ. սեպտեմբերին զոհված հույների և հայերի ընդհանուր թիվը կազմել է ընդամենը 2000: Հանգեսը ճիշտ չէր համարում գրքի հեղինակի նաև այն տեսակետը, որ քաղաքի համատարած հրդեհը իբր ծագել է պատահարա:

Առարկելով անվիացի լորդին «Time»-ը պնդում էր, որ Զմյուռնիայում կատարված ջարդերի հետևանքով զոհերի թիվը եղել է 100 000, իսկ ավերել հրդեհը կազմակերպել են քաղաքը գրաված թուրք զինվորները իրենց հրամանատարների ցուցումներով: Պարբերականում ասված էր.

„The scandalous Smyrna massacre of 1922, in which 100 000 Greeks and Armenians were allegedly consumed in a conflagration lit by the victorious Turks, is minimized by Kinross, who accepts the U. S. State Department's conclusions: the death toll was about 2000 and the fire was started by accident“<sup>2</sup>.

<sup>1</sup> Kinross, Lord. *Ataturk*. New York, 1965.

<sup>2</sup> „Time“, April 9, vol. 85, № 15, p. 63.

Ամերիկյան նշանավոր հանդեսի այս իրավացի առարկությունները, իհարկե, շնորհունեցին ո՛չ թուրքերը և ո՛չ էլ նրանց այլազգի «բարեկամները»: Արգելվեց շաբաթաթերթի այդ համարի տարածումը թուրքիայում, ի պաշտպանություն Կինրոսի հանդես եկան թուրքաֆիլ մի շարք հեղինակներ: Խոսենք դրանցից մեկի մասին:

Ապրիլի վերջերին բանավեճին միջամտեց Մոսկվայում լույս տեսնող «За рубежом» շաբաթաթերթի աշխատակից, լրագրող Գ. Արիևիչը: Առանց խորանալու փաստերի մեջ կամ թե հատուկ դիտավորություններ, նա շտապեց հրապարակել մի հոդված, ուր պաշտպանելով Կինրոսի տեսակետը՝ փորձեց ցույց տալ, որ իբր Իզմիրը հրդեհել են ոչ թե թուրքերը, այլ «ինտերվենտները» (այսինքն անգլիացիները, հույները, հայերը), և որ Զմյուռնիայի սեպտեմբերյան անցքերը պետք է համարել ոչ թե «ամոթալի ջարդեր», ինչպես գրում է «Թայմը», այլ թուրքական «ազատագրական շարժման ավարտ» («За рубежом», 23—29 ապրիլի 1965 թ., № 17):

Արևմտահայերի ցեղասպանության 50-րդ տարեդարձի օրերին մեծ տպաքանակ ունեցող շաբաթաթերթում հրապարակված այս ամոթալի տողերը չէին կարող զայրույթ չառաջացնել հարցին տեղյակ մարդկանց մեջ: Մայիսի վերջերին կարդալով Գ. Արիևիչի հոդվածը, ես բողոք արտահայտող մի նամակ ուղարկեցի շաբաթաթերթի խմբագրությանը: Ահա մի քանի քաղվածք այդ նամակից:

«В редакционную коллегию журнала «За рубежом». Уважаемые товарищи! В 17-м номере Вашего еженедельника (от 23—29 апреля 1965 г.) напечатана заметка Г. Ариевича «Последователи Медиуса». Автор делает вид, будто разоблачает клеветников из американского журнала «Тайм», а на самом деле грубо искажает факты. Что пишет «Тайм»? «Позорная измирская резня в 1922 году, когда 100 000 греков и армян было истреблено во время большого пожара, устроенного победоносными турками, преуменьшена Кинроссом, который соглашается с заключением Государственного департамента о том, что общее число жертв было всего 2 тысячи и что пожар возник случайно» («Тайм» от 9 апреля 1965 г., т. 85, № 15, с. 63).

Ариевич, по-видимому, плохо знает историю. Проявляя недопустимую легкомысленность, он негодует: «Вопреки исторической истине в статье (в статье «Тайм».—М. Н.) утверждается, что в сентябре 1922 года Измир был якобы подожжен не интервентами, бежавшими от турецкой армии, а самими турками. Огробож-

дение же города, завершившее национально-освободительную борьбу, журнал называет «постыдной резней» (с. 18).

Читаешь эти строки и краснеешь за их автора. Ведь как раз Ариевич пытается отрицать историческую истину, по существу выступает в роли адвоката турецких палачей и в данном вопросе защищает точку зрения Госдепартамента. Ведь неопровержимые факты говорят о том, что в сентябре 1922 года в Измире турецкие войска действительно истребили около 100 000 греков и армян и подожгли кварталы города, населенные ими. Измирская резня и погромы не были случайными явлениями. Те же турецкие (кемалистские) войска, как известно, в 1920—1921 гг. в Восточной (Закавказской) Армении истребили 198 000 армян (см.: Советская историческая энциклопедия, т. 1. М., 1961, с. 753).

Отрицая общеизвестные факты, Г. Ариевич допускает фальсификацию истории и надругательство над памятью десятков тысяч безвинных людей, зверски уничтоженных в 1922 г. Более того, он оскорбляет вполне понятные чувства всех греков и армян, не забывших трагическую участь своих соотечественников.

Следует отметить, что заметка Ариевича была опубликована в конце апреля с. г., то есть в те дни, когда армянский народ отмечал 50-летие своей самой большой трагедии—истребления полутора миллиона армян в Турции в 1915—1916 годах. Ариевич и другие, очевидно, лишены чувства элементарного такта. Публикация заметки Г. Ариевича—грубая ошибка. Остается надеяться, что подобные факты не будут повторяться».

Այս բողոքին միացավ Հայաստանի գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը, որը նամակին ավելացրեց հետևյալ տողերը.

«Полностью согласен с письмом академика АН АрмССР Нерсисяна. Удивительно, что среди советских журналистов нашелся человек, защищающий гнусных палачей. Академик В. Амбарцумян. 1. VI. 1965».

Մոսկվայի շաբաթաթերթի արձագանքը շուշացավ: Շուտով տպագրեց հետևյալ պատասխանը.

«Уважаемый тов. Нерсисян! Ваше письмо о действительно недопустимой ошибке Г. Ариевича обсуждалось на редколлегии

нашего еженедельника. Редколлегия постановила расследовать причины этой ошибки и наказать виновных. С уважением—ответственный секретарь редакции еженедельника «За рубежом» К. Беляев. 17 июня 1965 г.» Ի դեպ, խմբագրությունն այս պատասխանը, ինչպես նաև հայերի ցեղասպանության հիսուսամյակի առթիվ «Правда» թերթում տպագրված մի հոդված<sup>3</sup>, պետք եղավ օգտագործել մեկ տարի հետո, երբ առաջ քաշվեց մեղադրանք այն մասին, թե առանց ԽՍՀՄ արտաքին գործերի մինիստրության թուղտվության Երևանում, Հայաստանի գիտությունների ակադեմիայի կողմից հրատարակվել է «Геноцид армян в Османской империи» փաստաթղթերի ժողովածուն<sup>4</sup>:

Ռուպեսզի ցույց տրվի, թե Գ. Արիևիչը ինչպես է նենգափոխել պատմությունը, ես նամակին կցել էի Ռենե Պյուսի «La mort de Smyrne» գրքուկի մի քանի գլուխների ուսերեն թարգմանությունը: Յրանսիացի հեղինակի այս աշխատությունը, որը լույս է տեսել Փարիզում 1922 թ. վերջերին, Զմյուռնիայի ջարդերի մասին գոյություն ունեցող գրականության մեջ ամենահավաստի աղբյուրներից մեկն է<sup>5</sup>: Այն գրված է կատարված ոճրագործության ականատեսների (ընդ որում տարբեր աղբյուրյունների պատկանող մարդկանց) անհերքելի ցուցմունքների ու վկայությունների հիման վրա: Այսօր Զմյուռնիայի արյունոտ անցքերի 70-ամյակի կապակցությամբ ավելորդ չենք համարում նրանից բերել մի շարք քաղվածքներ, որոնք իրենց նշանակությունը չեն կորցրել նաև մեր օրերի համար:

Նշելով այն փաստը, որ 1922 թ. սեպտեմբերի 9-ին (շաբաթ օրը) քեմալական հեծելազորը ներխուժեց Զմյուռնիա, Ռենե Պյուսն գրում է (քաղվածքները բերում ենք Մոսկվայի շաբաթաթերթին ուղարկված ուսերեն թարգմանությունից) .

«Все свидетельства сходятся в том, что вскоре после своего вступления в Смирну турки оцепили армянский квартал. Один британский резидент заявил константинопольскому корреспонденту

<sup>3</sup> 1965 թ. ապրիլի 24-ին «Պրավդա»-ում հրատարակվեց իմ և պրոֆ. Ն. Ուշակովի «Գնացրեք ամենամանր հանցագործությունն է մարդկության հանդեպ» հոդվածը, որտեղ ուղղակի ասված էր. «Հիսուն տարի առաջ երիտթուրքերի կառավարությունը բնաջնջեց մոտավորապես մեկ ու կես միլիոն հայ» (հայերեն թարգմ. տե՛ս «Սովետական Հայաստան», 25 ապրիլի 1965 թ.):

<sup>4</sup> Տե՛ս Գեոցիդ արмян в Османской империи. Сборник документов и материалов, под редакцией проф. М. Г. Нерсисяна, Ереван, 1966.

<sup>5</sup> Rene Puaux. La mort de Smyrne Deuxième édition, Paris, 1922.

ту «Таймс», что он собственными глазами видел в армянском квартале улицы, усталые трупы мужчин и женщин.

Доктор Уильфред Пост из Нью-Йорка заявляет, что убийства и грабежи начались задолго до пожара. «На улицах,—говорит он.—было столько трупов, что я вынужден был выйти из машины и отодвинуть их в сторону, чтобы дать возможность машине пройти».

В то время как в армянском квартале резня разгоралась с каждым часом, турки из регулярных и нерегулярных частей растекались по греческому кварталу дальше на север.

Похищение женщин и девушек—старая традиция турецких солдат, и относящиеся к этому многочисленные свидетельства вызывают чувство возмущения. Женщин насиловали на глазах у мужей и отцов, которых убивали при попытке помешать преступлению. Один грек, служащий английской фирмы, присутствовал при убийстве отца и изнасиловании жены и дочери. Один левантинец, натурализованный в Америке, покончил с собой после того, как был свидетелем такого же зрелища. Что касается арестов и ограбления прохожих, даже европейцев, то это было обычным явлением.

Охота на армян, убийства и грабежи продолжались весь день 12-го. Господин Т. Рой Трэлор сообщает, что 11-го армян разбили на группы по 100 человек в каждой, отвели в Конак (дворец губернатора) и перебили там. Истребление армянского населения продолжалось и во вторник [12-го] вечером; тысячи армян были вырезаны. На следующий день от трупов был такой смрад, что не было никакой возможности подойти близко к некоторым кварталам. Т. Рой Трэлор добавляет: «Господин Добсон, английский пастор, который подвергался величайшим опасностям, пытаясь похоронить мертвых и облегчить страдания живых, видел собственными глазами самые омерзительные зверства; все мы: он, я и другие очевидцы—готовы предстать перед любой комиссией и рассказать о том, что мы видели»<sup>6</sup>.

Գրքուկի հաջորդ բաժնում խոսվում է Ջեյուսնիսյում բռնկված հրդեհի մասին: Բերվում են բազմաթիվ փաստեր, վկայություններ,

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 8—12:

որոնք ցույց են տալիս, որ հակառակ կեղծարարների պնդումներին, հրդեհը ու նրան ուղեկցող թալանը, ավերը կազմակերպել են թուրք զինվորները:

«Турки, разграбив армянский квартал и перебив большую часть его населения, прибегли к огню, чтобы замести следы своих злодеяний. Таково совершенно определенное мнение многочисленных свидетелей. Первая телеграмма, прибывшая в Европу, была послана специальным корреспондентом «Чикаго Трибюн» Джоном Клейтоном; в телеграмме воспроизводились показания мисс Минни Миллс, директрисы американской школы, расположенной в центре армянского квартала. Она видела, как турецкий унтер-офицер регулярной армии вошел в армянский дом поблизости от ее школы. В руках у него были бидоны. Вскоре после его ухода дом запылал.

Специальный корреспондент «Таймс» на Мальте телеграфировал 18-го после опроса беженцев, что пожар начался одновременно в трех кварталах. Господин Т. Рой Трэлор сообщает, что первый пожар начался 13-го в 2 часа дня. В пять часов заметили четыре новых очага пожара. «По мнению многих видных англичан, проживающих в Смирне,—пишет Трэлор,—к пожару прибегли, чтобы скрыть следы чудовищной бойни в армянском квартале». Он добавляет, что имеются доказательства того, что турки баррикадировали дома, прежде чем их поджечь, и разливали керосин в армянском квартале.

Марсельский корреспондент «Эко де Пари» слышал от пассажира «Фригии» (20 сентября), что число очагов пожара дошло до двадцати. Один из спасшихся от пожара сказал, что «коммуналы оценили армянский квартал и начали поджигать дома при помощи бомб и керосина».

Константинопольский корреспондент «Манчестер Гардиан» телеграфировал 20-го, что после опроса беженцев, прибывших из Смирны, у него создалась уверенность в том, что поджог был совершен умышленно турками. Один из свидетелей видел, как турецкие солдаты лили керосин.

Американские свидетели, прибывшие 20-го в Константинополь на борту эсминца «Симпсон», в один голос возлагали ответственность за катастрофу на турок. Эти беспристрастные свидетели заявили:

«Кемалисты ненавидят армян гораздо сильнее, чем греков. С момента вступления в город турки решили истребить армян. После того, как пожар бушевал уже в течение нескольких часов, ветер внезапно переменял направление с севера на юг, и искры полетели в европейский квартал. Тогда турки поняли свою ошибку; кемалисты отнюдь не собирались уничтожить весь город, за обладание которым они боролись на протяжении долгих лет; причем борьба эта стоила им больших жертв и людьми и деньгами».

Американские моряки из циркулировавших по городу патрулей сообщают, что они видели, как турецкие солдаты поджигали дома. Константинопольский корреспондент «Морнинг Пост» телеграфировал 19-го: «Сопоставив заявления целого ряда беженцев: англичан, сербов и граждан других национальностей, принадлежащих к культурным слоям населения, я считаю необходимым заявить, что все они в один голос утверждали, что поджог был совершен нерегулярными турецкими войсками при соучастии регулярных войск и при очевидном попустительстве всенных властей»<sup>7</sup>.

Ռեննե Պյուտլի գրքովում այնուհետև բերվում են փաստեր այն բարբարոսությունների մասին, որոնք տեղի են ունեցել Զմյուռնի քաղաքի երկու արվարձաններում: Այսպես, օրինակ, Բուսնարաթ արվարձանում կատարված ոճրագործությունների մասին կարդում էէք.

«Турки не только отдали на поток и разграбление Бурнабат, но и зверски вырезали все христианское население, вплоть до греческих и армянских служанок английских семейств этого поселка. Господин Сайкс, один из главных британских резидентов, видел, как турки вырезали 26 несчастных служанок. Другая партия служанок, 20—25 девушек, искала убежища в одном английском имении, но безуспешно: девушки были там настигнуты и убиты после гнусных надругательств»<sup>8</sup>.

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 13—15:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 18. Զմյուռնիայի ավերման, բրիտանյա բնակչության շարքերի մասին մանրամասն ու հավաստի տեղեկություններ է հրատարակել ամերիկացի հրաշահավոր գրող Էռնեստ Հեմինգուեյը, որը այդ ժամանակ որպես կանադացի «The Toronto Daily Star» թերթի թղթակից գտնվում էր Զմյուռնիայում (անս Ernest Hemingway. In Our Time. New York, 1936): Հետագա տարիներին լույս տեսած գրքերից առանձնապես հիշատակության արժանի են Մ. Հովսեփյանի «The Smyrna Affair» գիրքը (N. Y., 1966, 1968, 1972 թթ.) և ապա («Smyrna 1922», Destruction of a City» աշխատությունը (N. Y., 1988)

Մանթեթայնիում «За рубежом» շաբաթաթերթի խմբագրությունը Ռեննե Պյուտլի աշխատությունը՝ հս միաժամանակ նամակում գրել էի, որ Ֆրանսիացի հեղինակի կողմից բերված հարուստ տեղեկությունները ցույց են տալիս, թե որքան անբարեխիղճ ու ստախոս են այն թուրքասեր հեղինակները, որոնք փորձում են նենգափոխել Զմյուռնիա քաղաքում 1922 թ. կատարված ոճրագործությունների պատմությունը: Գրքովում իրավացիորեն նշված է, որ բացահայտ կեղծարարների ճամբարում գտնվեցին նաև մի շարք պետությունների, մասնավորապես Ֆրանսիայի պետական շատ գործիչներ ու ԱՄՆ-ի պետական ղեկավար-տամենափ ղեկավարներ, որոնց հետաքրքրում էր ոչ թե պատմական ճշմարտությունը, այլ իրենց քաղաքական շահը: Հեղինակը նշում է նաև այն հանգամանքը, որ արևմտյան պետությունները Զմյուռնիայի արյունոտ ղեկավարի նկատմամբ ցուցաբերեցին հանցավոր անտարբերություն: Այդ է պատճառը, որ նա իր գրքովը վերջացնում է հետևյալ սուղերով.

«Если солидарность между людьми—не пустое слово, если на этой грешной земле есть все же еще что-то кроме борьбы политиканов и финансовых дельцов, то да прекратится ненависть—и соперничество среди христиан Запада перед лицом этого огромного бедствия, да искупит Европа свой преступный эгоизм лобальным и большим вкладом в дело милосердия»<sup>9</sup>.

Ռեննե Պյուտլի 70 տարի առաջ գրված խոսքերը արևմտյան պետությունների «հանցավոր էգոիզմի» վերաբերյալ զարմանալիորեն այժմեական են նաև մեր օրերի համար: Բանն այն է, որ ընկած ամենուրեք ազդարարվող մարդասիրական գաղափարներին և ազգերի ինքնորոշման իրավունքի շերտ քարոզներին, պահանջ է, որ ԱՄՆ-ում ու եվրոպական մի շարք պետություններում «թուրքոֆիլությունը» նորից դարձել է ստրատեգիական խոշոր նպատակներ հետապնդող պետական քաղաքականություն: Մի՞թե պատահական է, երբ արևմտյան շատ քաղաքագետների աչքից «վրիպում է» այն իրողությունը, որ, շփոխելով իր էությունը, խիստ աշխուժացել է այժմ արդեն «քաղաքակրթություն» անունից հանդես եկող, բայց մեկ բոլորիս լավ ծանոթ, պանթուրֆիզմը:

<sup>9</sup> Ֆրանսիական կառավարող շրջանների թուրքոֆիլական դիրքորոշումն իր անարդարության և անարդարությունը գտավ, օրինակ, Փարիզի «Ֆիզարտ» հայտնի թերթում 1932 թ. սեպտեմբերի երկրորդ կեսին հրատարակված հոդվածներում ու լրատվական նյութերում:

Կարծում եմ խիստ բնորոշ է, օրինակ, այն հանգամանքը, որ իր ժամանակ երիտթուրքերի կողմից առաջ քաշված «Կովկասյան տուն» ստեղծելու գաղափարը այսօր էլ լայն տարածում է գտել թուրք հասարակության տարբեր շրջաններում և կովկասյան այն ավզայնամուլ լեռնականները մեզ, որոնք գործում են Ռուսաստանի դեմ:

Վերջացնելով ասելիքս բանավեճի մասին հարկ եմ համարում նկատել, որ այս հաղորդման գլխավոր նպատակն է վերհիշել 70 տարի առաջ տեղի ունեցած արյունոտ անցքերը, որպեսզի կատարելով մեր բարոյական պարտքը մոռացության չտանք տասնյակ հազարավոր հայ և հույն զոհերի հիշատակը<sup>10</sup>: Այդ կարևոր է անել առանձնապես այսօր, երբ առանձին հայ քաղաքագետներ, ելնելով իրր պրագմատիկ որոշ նկատառումներից, փորձում են լուսթյան մատնել մեր ժողովրդի պատմության ինչպես հերոսական, այնպես էլ ողբերգական դրվագները:

ԱՐԵՎՏՏԱՀԱՅԵՐԻ 1915—1916 ԹԹ. ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ԾՈՒՐՋԸ<sup>1</sup>

Արևմտահայերի 1915—1916 թթ. ցեղասպանության՝ Մեծ եղեռնի մասին, ինչպես հայտնի է, գոյություն ունի հարուստ գրականություն: Գեոեա Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին գրվեցին և հրատարակվեցին արժեքավոր աշխատություններ, որոնցում լուսաբանված են հայ ժողովրդի այդ մեծ ողբերգության պատմության շատ էջերը: Ճշմարտությունը բացահայտող գրքերով ու հոդվածներով հանդես եկան ոչ միայն հայազգի հեղինակներ, այլև ռուս, անգլիացի, ֆրանսիացի, ամերիկացի, գերմանացի և այլ ժողովուրդների գիտնական պատմաբաններ ու առաջավոր հրատարակիչները: Հայ ընթերցողն այսօր էլ հարգանքով ու երախտագիտությամբ է արտասանում լորդ Զեյմս Բրաչտի, Առնոլդ Քոչնբի, Յուրի Վեսելովսկու, Վալերի Բրյուսովի, Անատոլ Ֆրանսի, Անրի Բարբիսի, Հենրի Մորգենթաուի, Հերբերտ Ադամս Հեբբոնսի, Յոհանես Լեփսիուսի, Արմին Վեգների և բազմաթիվ այլ ազնիվ ու արի մարդկանց անունները: Ավագ սերնդի այդ ներկայացուցիչներին ավելի ուշ փոխարինեցին երիտասարդ ուսումնասիրողներ, որոնք, շարունակելով նախորդների գործը, լույս ընծայեցին գիտական նոր աշխատություններ: Ես այստեղ չեմ թվում անուններ, քանի որ նրանք մեզ լավ հայտնի են:

Վերջին տարիներին տեղի ունեցան միջազգային գիտաժողովներ ինչպես Հայաստանում, այնպես էլ արտասահմանում: Հիշենք, օրինակ, որ հինգ տարի առաջ Հայաստանի գիտությունների ակադեմիայի նախաձեռնությամբ 1990 թ. ապրիլին Երևանում կայացավ միջազգային գիտաժողով նվիրված հայերի ցեղասպանության պատմության և տեսության հարցերին: Գիտաժողովում ղեկուցումներով հանդես եկան մեծ թվով անվանի մասնագետներ Հայաստանից, Ամերիկայի Միացյալ Նա-

<sup>10</sup> Վազինակ Ս. Բյուրատի ավյալներով Զմյուռնիայի անկման հետևանքով հայ զոհերի թիվը կազմել է մոտ 35 000 (տե՛ս նրա ձեռագիր աշխատությունը 296 պատմության ինտիտուտի արխիվում):

<sup>1</sup> Հոդվածի համառոտ տեքստը գեկուցված է Մեծ եղեռնի 80-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովում, որը տեղի ունեցավ Երևանում 1995 թ. ապրիլի 21—23-ին:

հանգանակից, Ավստրիայից, Գերմանիայից, Եգիպտոսից, Իտալիայից, Քորսիկայից, Կանադայից, Ռուսաստանից, Ֆրանսիայից և մի շարք այլ երկրներից: Ինչպես մյուս միջազգային, այնպես էլ այդ գիտաժողովը զգալի շահով նպաստեց հայերի ցեղասպանությունից պատմությունը շատ հարցերի լուսաբանմանն ու մեկնաբանմանը<sup>2</sup>:

Մակայն, ընդդեմում ու լիովին ընդունելով կատարված դրական մեծ գործը, այնուամենայնիվ, չպետք է անտեսել այն հանգամանքը, որ Մեծ Եղեռնի պատմության մի շարք հարցեր դեռևս կարիք ունեն հանգամանալից ուսումնասիրության: Ավելին. քննարկվող ինքրի վերաբերյալ հրապարակված որոշ աշխատություններում առկա են զգալի թերություններ ու սխալներ: Հիշատակենք դրանցից մի քանիսը:

Առաջին. երիտթուրքերի՝ իթթիհաթականների մասին տարբեր լեզուներով գրված մի շարք աշխատություններում անբավարար է լուսաբանվել 1909—1914 թթ. նրանց վարած քաղաքականությունը ազգային հարցում: Մասնավորապես, բացահայտված չեն երիտթուրքերի այդ տարիներին ունեցած հակահայկական ծրագրերը: Հաճախ մոռացություն են ստեղծվել կիրիկիահայերի կոտորածները: Հարկ եղած խորությամբ ուսումնասիրված չեն Սալոնիկ քաղաքում երիտթուրքերի 1910—11 թթ. կայացած գաղտնի խորհրդակցությունների և համագումարի խիստ ազգայնամտական, շուվիհիստական բնույթի որոշումները, որոշումներ, որոնցում արտահայտված են իթթիհաթականների պանիսլամիստական, պանթուրքական ծրագրերը ինչպես հայերի, այնպես էլ բոլոր ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ: Գաղտնիք չէ, որ գլխավորապես հենց այդ որոշումները կանխորոշեցին 1915—16 թթ. ցեղասպանությունը: Պետք է ավելացնել, որ շատ աշխատություններում անտեսվել ու չեն հիշատակվել բավաբանիվ փաստեր, որոնք ցույց են տալիս, որ արդեն 1912—13 թթ. երիտթուրքերը գործնական քայլեր են կատարել հայերի համընդհանուր կոտորածներ կազմակերպելու ուղղությամբ: Այդ մասին կան հարուստ նյութեր և կարևոր վկայություններ ինչպես պետական արխիվներում, այնպես էլ իր ժամանակի պարբերական մամուլում: Կարծում եմ ավելորդ չէ բերել մի քանի օրինակ:

Գեռևս 1911 թ. հոկտեմբերի 8-ին Ռուսաստանի դեսպանը Կ. Պոլսում իր արտաքին գործոց մինիստրությունը ուղղած շտապ հաղորդման մեջ նշում էր այն հանգամանքը, որ Թուրքիայի հայ բնակչության

<sup>2</sup> Միջազգային այդ գիտաժողովի մասին մանրամասն ինֆորմացիոն տպագրվել է «Պատմա-բանասիրական հանդեսում», տե՛ս 1990, № 2:

նկատմամբ խիստ ուժեղացել են հալածանքները, որ հայերի սպանություններն ու թալանը, բռնի խլամպուցումը և այդ կարգի այլ գործողությունները դարձել են ավելի հաճախակի: Առանձնապես ընդգծվում էր այն, որ հայերի դեմ կատարվող այդ հալածանքներին գործուն մասնակցություն են ունենում պաշտոնական անձինք և որ թուրքական կառավարության հրամանով հայերից գրավում են նրանց բոլոր տեսակի զենքերը<sup>3</sup>: 1912 թ. սեպտեմբերին Կ. Պոլսի հայ պատրիարքին ուղարկված ղեկուցման մեջ Աղթամարի կաթողիկոսության ներկայացուցիչները հայտնում էին այն հալածանքների, սպանությունների մասին, որոնք տեղի են ունենում թեմի ավաններում ու գյուղերում<sup>4</sup>: էրզրումի ոռոսական գլխավոր հյուպատոս Աղամովը 1913 թ. դեկտեմբերի 7-ին հեռագրում էր Կ. Պոլսի իր դեսպանին, որ քաղաքում մահմեդականների արհեստականորեն գրգռում են հայերի դեմ: Այդ արվում է իթթիհաթականների (երիտթուրքերի) տներում տեղի ունեցող գաղտնի ժողովներում: Իթթիհաթականների միությունը քաղաքային կոմիսար Ահմեդ Նիլմի գլխավորությամբ վարում է խիստ հակահայկական պրոպագանդա<sup>5</sup>: Նույն Աղամովի 1913 թ. դեկտեմբերի 29-ի հեռագրում հաղորդվում էր. «Այստեղ (էրզրումում) տեղի ունեցող գաղտնի ժողովներում սկսել են խոսել հայկական կոտորածների մասին: Մոլլաների հրամանով մահմեդականները սկսել են գլուխները ծածկել սպիտակ շալվաշներով: Ըստ տարածված լուրերի ամեն ինչ պատրաստ է ջարդերի համար, միայն սպասում են մալրաքաղաքի (Կ. Պոլսի) ազդանշանին»<sup>6</sup>:

Նման փաստերի մասին խոսում էին նաև շատ լրագրեր: Այսպես, Լոնդոնի «Թայմս» թերթը հայտնում էր, որ Կ. Պոլսի հայ պատրիարքը 1912 թ. դեկտեմբերին այցելել է թուրքական կառավարության ներքին գործոց մինիստրին և բողոքել, որ թուրքական թերթերը սանձաբեկ պրոպագանդա են ծավալել հայերի դեմ<sup>7</sup>: Նույն թերթը 1913 թ. փետրվարի 6-ին գրել է, որ Վաշինգտոնից ու Սզերգից ստացվել են հեռագրեր այն մասին, որ հայերի ու մահմեդականների հարաբերությունները օրեցօր

<sup>3</sup> S. S. Genocide of Armenians in the Ottoman Empire, Сборник документов в материалах под редакцией проф. М. Г. Нерсисяна, Ереван, Изд. АН АрмССР, 1966, с. 201—202.

<sup>4</sup> Архив внешней политики России (АВПР), Политархив, д. 3459, л. 68—69.

<sup>5</sup> Сборник документов Министерства иностранных дел России, Пг., 1915, с. 125.

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 133:

<sup>7</sup> The Times, London, 20, 12, 1912.

արվում են<sup>8</sup>: նույնանման բազմաթիվ տեղեկություններ հրատարակվեցին նաև հայկական, ռուսական ու ֆրանսիական թերթերում:

Այս բոլոր կատարվում էր 1911—1913 թթ., այսինքն մի ժամանակ, երբ ոչ մի խոսք չկար հայերի «ապստամբությունների» մասին: Իսկ ինչպես հայտնի է պատմության թուրք կեղծարարները հայերի դեպորտացիայի ու կոտորածի պատճառը համարում են 1915 թ. «հայկական ապստամբությունները»: Զարմանալի տրամաբանություն:

Այսպիսով, կարելի է ասել, որ եթե հանգամանորեն բացահայտվեր երիտթուրքերի 1909—1914 թթ. շովինիստական քաղաքականությունը, ապա այդ մեծածայր կնպաստեր ավելի հստակ պատկերացնելու և հասկանալու Մեծ Եղեռնի պատմության հետ կապված շատ հարցեր:

**Ներդրոյ.** Թուրքիայի նոր պատմությունը նվիրված պատմագիտական մե շարք ուսումնասիրություններում զարգացվում է այն տեսակետը, թե Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին գերմանացիներն են ղեկավարել Թուրքիայի ինչպես արտաքին, այնպես էլ ներքին քաղաքականությունը, որ երիտթուրքերը միայն կատարել են գերմանացի զինվորականների ու զիվանագետների կամքը: Այս սխալ կարծիքը արտահայտել է, օրինակ, ռուս նշանավոր թուրքագետ Անատոլի Միլլերը իր մի քանի գրքերում ու հոդվածներում՝ նվիրված Թուրքիայի նոր և նորագույն պատմության հարցերին<sup>9</sup>:

Իրականությունը, սակայն, այն է, որ 1915—16 թթ. ցեղասպանությունը ոչ այլ ինչ էր, եթե ոչ երիտթուրքերի տարիներ առաջ մտածված ու մշակված բարբարոսական ծրագրերի իրագործումը: Գերմանացի ազդեցություններն, իհարկե, հանդես են եկել երիտթուրքերի հետ միասին ու պաշտպանել նրանց: Հայտնի է, որ գերմանական բանակի շատ սպաներ անդամ մասնակցել են հայերի կոտորածներին, բայց այնուհանդերձ կասկածից վեր է, որ Մեծ Եղեռնի գլխավոր, հիմնական մեղքը ընկնում է էնվեր, Քալեբաթ, Ջեմալ փաշաների և մյուս ռազմաշունչ գործիչների վրա, գործիչներ, որոնք Հայկական Հարցում հետևողականորեն և ամենայն համառությամբ հետապնդում էին իրենց խիստ էֆուպանիոնիստական, շարժարարական ու ավանտյուրիստական ծրագրերը: Նրանք ձգտում էին սնչացնել Հայաստանը, հայությունը, որպեսզի դրանով իսկ նպաստեն իրենց պանթուրքիստական նպատակների իրա-

գործմանը: Եթե գերմանացիները օգտագործում էին երիտթուրքերին, ապա վերջիններս էլ օգտագործում էին գերմանացիներին: Հայտնի է, որ երբեմն առաջանում էին լուրջ տարաձայնություններ նրանց միջև: Դա ամենայն սրությամբ տեղի ունեցավ հատկապես 1918 թ., երբ թուրքական զորքերը ներխուժեցին Անդրկովկաս: Այսպիսով, երիտթուրքերը սոսկ գործակալներ և կամակատարներ չէին, այլ ունեին իրենց սեփական մտածված ու մշակված ծրագրերը:

Հայերի ցեղասպանության պատճառների մասին գոյություն ունի նաև այլ սխալ կարծիք: Այսպես, անգլիացի տականավոր պատմաբան Վ. Գոտլիբը «Գաղտնի դիվանագիտությունը Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ» արժեքավոր աշխատության մեջ հայերի ցեղասպանության հարցում խիստ գերազնահատում է կրոնական գործունք, հայ և թուրք բուրժուազիայի միջև եղած հակամարտության հանգամանքն ու քրդական ավագակախմբերի դերը: Նա անհրաժեշտ հրատառությամբ չի ընդգծում այն ճշմարտությունը, որ Մեծ Եղեռնի գլխավոր պատասխանատվությունն ընկնում է թուրք մոլեռանդ ու ռազմաշունչ զինվորականների կլիկի վրա<sup>10</sup>:

**Մեռոյ.** կարծում եմ զգալի թերություն պետք է համարվի այն հանգամանքը, որ հայերի ցեղասպանությունը նվիրված աշխատություններում, մասնավորապես, արևմտակարողական ու ամերիկյան հեղինակների ուսումնասիրություններում դեռևս քիչ են օգտագործված Ռուսաստանի պետական արխիվներում պահպանված փաստաթղթերը: Իհարկե, շատ կարևոր նյութեր կան Ամերիկայի Միացյալ Նահանգների, Գերմանիայի, Ավստրիայի, Ֆրանսիայի արխիվներում, դա անվիճելի է: Բայց չի կարելի թերազնահատել ու շօգտագործել այն փաստաթղթերը, որոնք կան ռուսական արխիվներում: Ավելորդ չեմ համարում նշել, որ տարիներ շարունակ ես աշխատել եմ այդ արխիվներում, ուստի և կարող եմ ասել, որ դրանցում գտնվող հարուստ նյութը կարևոր նշանակություն ունի հայերի ցեղասպանության, Հայկական Հարցի և ընդհանրապես հայ ժողովրդի նոր պատմության շատ հարցերի բազմապիստեպի ուսումնասիրության համար: Ի դեպ, հարկ եմ համարում նշել, որ ռուսական արխիվների պաշտոնական նյութերը հիմնովին հերքում են ռուսաֆոբների հնարած այն առասպելը, թե ռուսական պետությունը ինչպես 1890-ական թթ., այնպես էլ Առաջին համաշխարհային պա-

<sup>8</sup> Նույն տեղում, 6, 2, 1913:

<sup>9</sup> Տե՛ս А. Ф. Миллер. Очерки новейшей истории Турции. М., 1948: Оппе. Турция под гнетом германского империализма в годы мировой войны (1914—1918 гг.).—Исторический журнал, 1942, № 12.

<sup>10</sup> В. В. Готлиб. Тайная дипломатия во время первой мировой войны. М., 1960 տե՛ս անգլերենը՝ W. W. Gottlieb. Studies in Secret Diplomacy during the First World War. London, 1957.

տերազմի տարիներին իբր ցանկացել է «գրավել Արևմտյան Հայաստանը առանց հայերի»: Պատմութեան կեղծարարների այդ թեզը, որ ժամանակին լայն տարածում գտավ թե՛ Կովկասում, թե՛ Եվրոպայում, ճիշտ չէ: Զի կարելի առանձին հետադեմ, սեհարյուրակալին շինովնիկների հայացքները նույնացնել ռուսական պետութեան քաղաքականութեան հետ, ինչպես փորձել են կատարել քաղաքական նպատակներ հետապնդող շատ հրապարակախոսներ:

Հայերի 1915—16 թթ. ցեղասպանութեան մասին հարուստ, կարևոր նյութեր են պարունակում իր ժամանակի նաև ռուսական պարբերական մամուլը, ինչպես և Մոսկվայում, Ս. Պետերբուրգում, Թիֆլիսում, Յդեսայում ու այլ քաղաքներում լույս տեսնող ռուսահայերի բազմաթիվ ռուսալեզու թերթերը և հանդեսները: Վերջիններս հրատարակվում էին մուսաստանում գործող հայ հասարակական-քաղաքական ու բարեգործական կազմակերպությունների կողմից:

Հարկ է նշել, որ համեմատաբար քիչ են օգտագործված նաև Հայաստանի արխիվներում ու գրադարաններում պահվող փաստաթղթերը, որոնցում կան կարևոր տեղեկություններ հայկական կոտորածների, երիտթուրքերի անօրինակ գաղանթությունների, հայ կամավորական շարժման, հայութեան քաղաքական կողմնորոշման և այլ հարցերի մասին: Այդ նյութերը կասկած չեն թողնում մասնավորապես այն մասին, որ հակառակ թուրք պատմաբանների պնդումների, արևմտահայերը կազմակերպել են ոչ թե «գավազրական ապստամբություններ», այլ ստիպված են եղել դիմելու ինքնապաշտպանական մարտերի, որոնցից մի մասը ավարտվեց հաղթանակով: Փաստերը խոսում են նաև այն մասին, որ ռուսական բանակի կազմում կռվող հայ կամավորական ջոկատները զգալի դեր են խաղացել արևմտահայ խաղաղ բնակչության փրկութեան գործում: Այս հարցերի վերաբերյալ հարուստ նյութեր են կենտրոնացված հանրապետության պետական արխիվներում, էջմիածնի կաթողիկոսութեան դիվանում ու Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում:

Չորրորդ. մի շարք պատմաբաններ ու հրապարակախոսներ այն կարծիքն են հայտնել, որ անցյալ դարի 90-ական թթ. Աբդուլ Համիդ II սուլթանի կողմից իրականացված հայկական կոտորածները չպետք է համարել ցեղասպանություն, այլ պատժողական նպատակներ հետապնդող ջարդեր ու հալածանքներ, որոնք ձեռնարկվել են ի պատասխան հայկական հեղափոխական կոմիտեների գործունեության: Այս տեսակետն արտահայտողները կամա թե ակամա սուրբ են տվել պատ-

մութեան կեղծարարներին: Պատմական փաստերի բարեխիղճ ու մանրադնին ուսումնասիրությունը բերում է այն եզրակացության, որ գաղանաբար «կարմիր սուլթանը» նույնպես կիրառել է ցեղասպանության քաղաքականություն, այնպիսի քաղաքականություն, ինչպիսին իրապորտեցին երիտթուրքերը 1915—16 թթ.: Այստեղ կարևորը զոհերի քանակը չէ. մի դեպքում 300 հազար, մյուս դեպքում միլիոնովեա: Մենք պետք է, որ լինում են ինչպես մեծ, այնպես էլ փոքր ծավալի ցեղասպանություններ:

Հինգերորդ. Օսմանյան կայսրության պատմությանը նվիրված շատ աշխատություններում բավարար չափով բացահայտված չէ թուրքական սուլթանների ու փաշաների թալանների, դաժան ճնշումների ու ջարդերի այն քաղաքականությունը, որ կիրառվում էր ոչ թուրք ժողովուրդների, հատկապես քրիստոնյաների նկատմամբ: Շատ հեղինակների վրա բոս կրեւոյթին ազդել է թուրք պատմաբանների այն կեղծ քարոզչությունը, ըստ որի հայերն իբր մինչև XIX դարի երկրորդ կեսը ունեցել են ապահով կյանք ու լայն իրավունքներ, որ իբր Բ. Գուրը դիմել է ճնշումների միայն այն ժամանակ, երբ «ոչ երախտապարտ» հայերը սկսել են խռովություն ու ապստամբություններ օսմանյան պետության դեմ: Կարծում եմ՝ պետք է վճռականորեն հերքվի այս շինծու և արտառոց հեքիաթը, պետք է հրապարակել բոլոր աղբյուրներն ու ճշգրիտ վկայություններն այն մասին, որ հայերը Օսմանյան կայսրության մեջ ապրել են ստրկական ու ճորտական վիճակում, որ նրանք մշտապես ենթարկվել են ջարդերի, բարբարոսական ճնշումների և անտանելի կեղծքրտմանների: Բերենք մի քանի վկայություն:

Տրանսիացի հայտնի արևելագետ ու դիվանագետ Ա. Ժոբերը 1805 թ. Արևմտյան Հայաստանի մասին գրել է. «Այս երկրում հողագործք իզուր է սերմեր ցանում: Հունձը խլում են դեռ չհասունացած: Ավազակների կատաղությունից և նահանգում իշխող փաշաների հարստահարությունից ազատվելու համար գյուղացին ստիպված է լքել դաշտերը, փախչել ընտանիքով և իր հոտերով: Այս դժբախտ երկրում գոյություն չունի ո՛չ հայրենիք, ո՛չ ապահովություն, ո՛չ հանգիստ»<sup>11</sup>:

Ռուս գեներալ Մ. Լիխտոտինը, որի զորամասերը 1854 թ. գրավեցին Արևմտյան Հայաստանի Անդրկովկասին սահմանակից գավառները, տարիներ հետո գրած իր հուշերում խոսելով արևմտահայ գյուղա-

<sup>11</sup> Հ ո Վ Տ. Հ ա կ ո Ր Մ ա ն. Ուղեգրություններ, հատոր 2, ԺԹ դարի տուշին քառասուն: Հրատարակություն Մեկրոնյան ֆոնդի, Երևան, 1934, էջ 150:

ցիւների ծանր վիճակի մասին, նշել է. «Հայերի, ինչպես և մյուս քրիստոնյաների դրուձյունը թուրքիայում անտանելի է... Սա տեսա մի քանի հայեր կտրված ականջներով ու քիկերով, մի բան, որ արված էր ոչ թե դատարանով, այլ կամայականութեամբ ու բռնութեամբ այս կամ այն ազգեցիկ և հարուստ գյուղացեաի կամ տեղական գատարանի անգամի կողմից: Հայերը մշտապես գտնվում էին տապանապի մեջ, ունեին անաբեկվածի տեսք»<sup>12</sup>:

Մեր ականավոր ազգային գործիչ, ազդագրագետ Գարեգին Մըրվանձտյանը Մուշ գավառում տիրող վիճակը 1864 թ. պատկերել է հետևյալ ձևով. «Գնդակների արձակում, արշան հոսում, ընչից ավար, բնաանյաց բռնաբարություն, եկեղեցու կողոպտում, օրինաց եղծում, կենաց դրավում...»<sup>13</sup>:

1876 թ. արևմտահայերի մի մեծ խումբ՝ դիմելով էջմիածնի կաթողիկոս Գևորգ Գ-ին, գրում էր. «Զօր ու գիշեր տաղնապի մեջ ենք. դառնորեն տառապում ենք զավառական պաշտոնյաների, հարկահանների, կառավարիչների և այլ բռնակալների ձեռքին, ընդհուպ մինչև այն, որ նրանք անպատվում են մեր եկեղեցական հովիվին, մեր կանանց համեստությունը, մեր աղջիկների պատիվը, հեղում են մեր երթապարգեների և ծերերի արյունը, անարդում են մեր տաճարի ու ծեփերի սրբությունը»<sup>14</sup>:

Նվրոպայում գործող հայ հայրենասերների կոմիտեն 1885 թ. գիմելով մեծ տերություններին նշում էր այն հանգամանքը, որ Բ. Գոան կողմից նախօրոք մշակված ծրագրի համաձայն Արևմտյան Հայաստանում «զոհվում են մարդիկ, ավերվում են անտեսություններ, կենսագործվում է ժողովրդի բնաջնջման քաղաքականություն: Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածի ընդունումից հետո թուրքական կառավարությունը իր բոլոր ջանքերը գաղտնի ուղղում է հայ ազգը իր հայրենիքում ոչնչացնելու նպատակին»<sup>15</sup>:

Իսլանդացի հռչակավոր արևելագետ էմիլ Գիլլոնը խոսելով արևմտահայերի ծանր վիճակի մասին, նշել է, որ Արևմտյան Հայաստա-

նում հաստատված է կառավարման գազանային այնպիսի սիստեմ, որի հետ համեմատած Ամերիկայի Միացյալ Նահանգների հարավային շտատներում մի ժամանակ գոյություն ունեցող ստրկական կարգերի «գաժանությունները միայն աննշան շարաշահություններ են»<sup>16</sup>: Նույն Գիլլոնը մի այլ կապակցությամբ գրել է. «Օտարերկրացի նշանավոր մի պետական գործիչ, որը սովորաբար համարվում է համոզված թուրքասեր, վերջերս ինձ հետ ունեցած մասնավոր խոսակցության ժամանակ նկատեց, որ թուրքական տիրապետությունը Հայաստանում կարելի է ճիշտ բնորոշել որպես կազմակերպված ավաղակություն, օրինականացված սպանություն և վարձատրվող անբարոյականություն»<sup>17</sup>:

Այս կարգի վկայությունները, որոնց թիվը շատ մեծ է, իհարկե, անհերքելի են: Ուստի դժվար չէ հասկանալ, որ խիստ ծանր, օրհասական պայմաններում գտնվող ժողովուրդը պետք է սաքի կանգներ, պայքարեր իր կյանքը, պատիվը, գոյությունը պահպանելու համար: Այդ նրա բարոյական իրավունքն էր ու սրբազան պարտքը: Բայց զարմանալիս այն է, որ մի շարք պատմաբաններ, փոխանակ նշելու հայ ազատագրական պայքարի ներքին սոցիալ-տնտեսական ու քաղաքական յուրջ պատճառները, գրել են, որ այդ շարժումը դրսի ուժերի, մասնավորապես, ռուսահայ մտավորականների կողմից արհեստականորեն հրահրված գործ էր: Նման տեսակետ արտահայտել է, օրինակ, մեր բազմավաստակ պատմաբան, պրոֆեսոր Լևոն իր այն աշխատություններում, որոնք նա ստեղծեց խորհրդային շրջանում՝ 1920-ական թթ. ռուս հայտնի պատմաբան Միխայիլ Պոկրոսկու վուլգար-սոցիոլոգիական դոգմաների ազդեցության տակ: Ուստի նշված տարիներին Լեոյի գրած մի շարք աշխատությունների նկատմամբ պետք է հանդես բերել քննադատական մոտեցում: Մի ուրիշ հեղինակ՝ Բագրատ Բորչյանը, ղեկավարվելով նույն վուլգար դոգմաներով ու քաղաքական այլևայլ նկատառումներով, այնքան հեռու գնաց, որ հակառակ պատմական փաստերին, նորից կրկնեց այն արտաոսոց տեսակետը, թե Օսմանյան կայսրության լծի տակ գտնվող հայ բնակչությունը եղել է ապահով ու բարեկեցիկ վիճակում<sup>18</sup>: Բորչյանը և նրա հետևորդները փաստորեն կրկնել են պատմության բացահայտ կեղծարարներին:

<sup>12</sup> М. Лихутин. Русские в Азиатской Турции в 1854—1855 годах. СПб., 1863, с. 168.

<sup>13</sup> Մ. Գ. Ներսիսյան. Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բնապետության դեմ 1850—1870 թթ., Երևան, 1955, էջ 70:

<sup>14</sup> Մաշտոցի անվան Մատենադարան (Երևան), կաթողիկոսական դիվան, 1928, 228, փաստաթուղթ 2:

<sup>15</sup> Архив внешней политики России. Посольство в Константинополе, № 3133, лл. 27—28.

<sup>16</sup> E. J. Dillon. The Condition of Armenia (The Contemporary Review, N. Y., London, August, 1895)

<sup>17</sup> Նույն տեղում: Տե՛ս նաև՝ Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ, Երևան, «Հայաստան» հրատ., 1991, էջ 87:

<sup>18</sup> Б. Борьян. Армения, международная дипломатия и СССР. Ч. I. М.—Л., Госиздат, 1928.

**Վեցերորդ.** Մի շարք աշխատություններում արտահայտված է այն կարծիքը, թե հայերի ցեղասպանության հարցում բոլոր մեծ պետությունները ցուցաբերել են անտարբերություն և ոչինչ չեն ձեռնարկել դադարեցնելու երիտթուրքերի ոճրագործությունները: Այս տեսակետը, որ իշխում է նաև մամուլում տպագրված հրապարակախոսական հոդվածներում, թերի է և չի բացահայտում ամբողջ ճշմարտությունը: Բանն այն է, որ մեզ այստեղ հետաքրքրող հարցերում տարբեր պետություններ վարել են տարբեր քաղաքականություն:

Հանրահայտ է, որ կալսերական Գերմանիան՝ Թուրքիայի ռազմական գաշնակիցը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, ամեն կերպ հովանավորել ու պաշտպանել է թուրք ռասիստներին: Ավելին. գերմանական իմպերիալիստները մասնակցություն են ունեցել արևմտահայերի դեպորտացիայի (բռնի տեղահանություն) ու մասսայական կոտորածների ծրագրերը մշակելու և իրականացնելու գործում: Այլ քաղաքականություն են վարել Անգլիան ու Ֆրանսիան, որոնք պատերազմում էին Թուրքիայի ու Գերմանիայի դեմ և այդ տարիներին շունեին հակահայկական ծրագրեր, Ամերիկայի Միացյալ Նահանգները, որ 1914—1916 թթ. չէին մասնակցում պատերազմին և կարող էին որոշ ճնշում գործ դնել երիտթուրքերի վրա: Բայց ամերիկյան կառավարությունը, չցանկանալով իր հարաբերությունները սրել Թուրքիայի ու Գերմանիայի հետ, իսկապես, բռնեց անտարբեր դիրք, չնայած նրան, որ ամերիկյան առաջավոր, մարդասեր շատ գործիչներ ու այլևայլ հասարակական կազմակերպություններ իրենց բողոքի ձայնը բարձրացրին թուրքական վայրագությունների դեմ: Հիշենք թեկուզ Հենրի Մորգենթաուի ազնիվ և համարձակ ելույթները թուրք բարբարոսների դեմ:

Ինչպիսի՞ն էր ցարական Ռուսաստանի դիրքորոշումը: Յարական կառավարությունը, իհարկե, բռնապետություն էր, վարում էր սոցիալական ու ազգային ճնշման քաղաքականություն, մերժում էր հայկական պետականություն ստեղծելու գաղափարները, նա էր, որ փակեց հայկական դպրոցների մեծ մասը, XX դարի սկզբին բռնագրավեց հայոց եկեղեցու գույքն ու կալվածքները և այլն, և այլն: Դրանք հայտնի փաստեր են: Սակայն չնայած այդ բոլորին Ռուսաստանը, ելնելով իր արտաքին քաղաքականության շահերից, հավատարիմ հայ-ռուսական բարեկամական հարաբերությունների դարավոր ավանդույթներին, 1915—1917 թթ., ինչպես նաև նախորդ ավելի քան երկուհարյուր տարիների ժամանակաշրջանում, աշխատել է ապահովել, պահպանել հայության ֆիզիկական գոյությունը, հանդես է եկել թուրք շովինիստների հայաջինջ քաղաքականության դեմ, փորձել է խաթարել պանթուրքիստների

ծրագրերը: Հայկական հարցում համընկել են Ռուսաստանի և հայ ժողովրդի շահերը:

Մենք արդեն նկատեցինք, որ մի շարք հեղինակներ անտեսելով փաստերը փորձում են հիմնավորել այն կարծիքը, որ իբր ինչպես 1890-ական թթ., այնպես էլ 1915—16 թթ. Ռուսաստանը ցանկացել է գրավել Արևմտյան Հայաստանը և այն հայաթափ անել: Որոշ հեղինակներ պնդում են, որ ռուսական բանակի 1915 թ. ամռան նահանջը, օրինակ, հետապնդել է մի նպատակ՝ հնարավորություն տալ թուրքական զորքերին կազմակերպել արևմտահայ բնակչության նոր կոտորած: Համառ ռուսաֆոբների այս և այլ «փաստարկները» իհարկե չեն համապատասխանում իրականությանը: Տարիներ առաջ դա հաջողություն մեք ցույց է տվել Հայաստանի արխիվների վարչության պետ, պատմական գիտությունների դոկտոր, գեղագետ Աշոտ Հարությունյանը և այլ հեղինակներ<sup>19</sup>: Հարկ է այստեղ մեկ անգամ ևս ընդգծել այն հանգամանքը, որ չի կարելի դիմավորական առանձին գործիչների արամագրությունները և ցանկությունները նույնացնել Ռուսաստանի պետական քաղաքականության հետ:

Ռուսաստան, թուրքոֆիլ ու արևմտյան կողմնորոշում ունեցող հեղինակները վարմանալիորեն անտեսում, «մոռանում են» փաստերը: Սակայն ո՞ւմ հայտնի չէ, օրինակ, որ 1915 թ. մայիսի սկզբին ռուսական զորքերը փրկեցին Վանում պաշարված հայությունը անխուսափելի կոտորածից: Ինչո՞ւ չհիշել այն փաստը, որ միայն 1916 թ. ռուսական կառավարությունը արևմտահայ գաղթականությունը օգնելու համար տրամադրել է 250 միլիոն ռուբլի (ոսկով): Հայ գաղթականությունը ո՞վ պատսպարեց Հյուսիսային Կովկասում, սևծովյան քաղաքներում ու Ռուսաստանի այլ վայրերում: Մի՞թե հայտնի չէ, որ Կովկասյան ֆրոնտում քաջաբար կռվող ռուս զինվորներն ու կազակները փրկեցին հազարավոր հայ որբ երեխաներ: Ի դեպ, այդ մասին շատ կարևոր նյութեր են տպագրվել «Արմյանսկի վեստնիկ», «Արմյանի ի վայնա» և այլ պարբերականներում: Բայց սահմանափակվենք այսքանով:

Ի վերջո, հարկ է կանգ առնել նաև մի այլ հարցի վրա: Հայտնի է, որ մեր պատմագրությունը միշտ էլ բավական լրջությամբ իր քննադատական խոսքն է ասել պատմության թուրք և օտարերկրյա կեղծարար-

<sup>19</sup> Ա. Օ. Արությունյան. Кавказский фронт. 1914—1917. Ереван, изд. «Абастган», 1971: Մ. Ներսիսյան. Հայ-ռուսական քաղաքական հարաբերությունների պատմության մի քանի հարցերի շուրջը («Պատմա-բանասիրական հանդես», 1994, № 1—2):

ների մասին: Բայց անհասկանալի պատճառներով լուսթյուն է պահպանվում այն հայ հեղինակների նկատմամբ, որոնք նույնպես ազավաղում են մեր ժողովրդի նոր պատմության շատ կարևոր էջերը: Ահա մի օրինակ:

Երկու տարի առաջ, 1993 թ. վեներտիկում լույս տեսավ «Նյութեր հայ ժամանակակից քաղաքական պատմության» խորագիրը կրող մի աշխատություն<sup>20</sup>, որը հրատարակության է պատրաստել Հ. Տաճատ վրդ. Եարտրմյանը: Հավաքելով ու կարգի բերելով վրդ. Սահակ Տեր Մովսեսյանի (1878—1956) մեր դարի սկզբին (1912—1915 թթ.) կատարած գրառումները, վարդապետ Եարտրմյանին հաջողվել է լույս աշխարհ բերել մի գիրք, որի մասին նա գրում է. «Մեր համեստ կարծիքով, հանրության մատուցած այս հրատարակությունը, վերլուծումներու և տեսություններու թերևս ամենևն հանդուգն ու շահեկան ուսումնասիրությունն է, որ ցարգ հրապարակելած ըլլա, մեր ազգային նորագույն պատմության ամենևն զժբախտ ժամանակաշրջանին նվիրված» (տե՛ս «Առաջաբանը», էջ 6):

Աշխատության մեջ, իհարկե, կան իրատես դատողություններ և քննադատական ճիշտ դիտողություններ: Բայց զժբախտաբար մեր ժողովրդի պատմության շատ կարևոր դրվագների մասին այդ գրքում թույլ են տրված մի շարք կուպիտ սխալներ ու արտաոտց մտքեր: Այնտեղ, օրինակ, փաստորեն զարգացվում է այն տեսակետը, որ Մեծ Եղեռնի մեղքը ընկնում է Կ. Պոլսի հայ պատրիարքի և արևմտյան ուսասեր մտավորականության վրա: Քարոզ է կարդացվում այն մասին, որ արևմրտահայերը պետք է ընդունեին երիտթուրքերի առաջարկները և հրաժարվեին ուսակական կողմնորոշումից: Եթե այդ կատարվեր, ապա երիտթուրքերը կիրականացնեին նախատեսված բարենորոգումները Արևմրտյան Հայաստանում, և գրանով իսկ կկանխվեր ցեղասպանությունը: Անտեսելով պատմական փաստերը, մեր հարգելի վարդապետները, ոգևորված իրենց «վերլուծումներով», փորձում են համոզել ընթերցողին, թե ցարական կառավարությունը եղել է արևմտահայության թշնամին, որ նա է ինչպես 1890-ական թթ. կոտորածների, այնպես էլ Մեծ Եղեռնի գլխավոր մեղավորը: Ավելորդ համարելով կանգ առնել մյուս անհիմն կարծիքների վրա, նշենք, սակայն, որ գրքում կան նաև հակասական պնդումներ ու փաստական սխալներ:

<sup>20</sup> Տե՛ս Հ. Սահակ վրդ. Տեր-Մովսեսյան. Նյութեր հայ ժամանակակից քաղաքական պատմության (1912—1915). Պատմաքաղաքական վերլուծումներ, վեներտիկ, Սր. Աղաբ, 1993, 347 էջ:

Հետաքրքիր է նկատել, որ Մեծ Եղեռնի պատմությունն ազավաղող նման կարծիքներ վերջին տարիներին արտահայտեցին նաև այլ հայ հեղինակներ: Այսպես, Հայաստանի պարբերական մամուլի մի շարք օրգաններում տպագրվեցին հոգվածներ, որոնցում փորձեր արվեցին տարածել հակառուսական, ըստ էության թուրքոֆիլական գաղափարներ: Այդ պրոպագանդան, սակայն, ինչպես որ պետք էր սպասել, հաջողություն չունեցավ, մեր հասարակայնության լայն շրջանները մերժեցին այն:

Հարց է ծագում: Ինչո՞վ բացատրել հայ մարդկանց վերք նշված կուպիտ սխալները: Գլխավոր պատճառը իմ կարծիքով այն է, որ պատմության հարցերի մասին գրող այդ հեղինակները ոչ թե մասնագետներ, պրոֆեսիոնալներ են, այլ պարզապես դիլետանտներ, սիրողներ: Գիտական խորը ուսումնասիրությունների փոխարեն նրանք լույս աշխարհ են հանում մակերեսային, գիտության հետ առնչություն չունեցող աշխատություններ: Զարմանալի է հատկապես այն է, որ նրանք անտեսում են մեր իմաստուն նախնիներին՝ Հովսեփ Էմինի, Շահամիր Շահամիրյանի, Հովսեփ Արղունյանի, Ներսես Աշտարակեցու, Խաչատուր Աբովյանի, Մտեփանոս Նազարյանի, Գրիգոր Արծրունու, Բաֆֆու, Կոմիտասի, Հովհաննես Թումանյանի, զորավար Անդրանիկի, Ավետիք Իսահակյանի, Վիլյամ Մարտյանի և ուրիշ ակնավոր գործիչների վկայություններն ու պատգամները, անտեսում են պատմության դասերը:

Այսպիսի պարագաներում մասնագետները պետք է վճռականորեն դատապարտեն նաև հարցին անտեղյակ հայ հեղինակներին: Կարծում եմ, նրանք քաջություն կունենան ընդունելու իրենց սխալները: Այդպիսի դեպքեր եղել են անցյալում: Հիշենք դրանցից միայն մեկը:

Հայ նշանավոր քաղաքական գործիչ Արմեն Գարոն հայերի քաղաքական կողմնորոշման մասին XIX դարի վերջերին և XX դարի սկզբին ուներ այլ տեսակետ: Բայց պատմական իրադարձությունների ազդեցության տակ նա իր կյանքի վերջին տարիներին եկավ ուրիշ եզրակացության: 1921 թ. դեկտեմբերին գտնվելով Վաշինգտոնում Ա. Գարոն Բոստոնում լույս տեսնող «Հայրենիք» թերթի խմբագրին հղեց մի նամակ, որ կան այսպիսի տողեր:

«Առանց ուսակական activ աջակցության մենք հնարավորություն չենք ունենար գտնել կիսով չափ իրականացնել մեր ազգային իդեալը՝ ունենալու սեփական հայրենիք մը՝ անկախ կամ թեկուզ կիսանկախ, ուր մեր ժողովուրդը հնարավորություն ունենա յուր հալալ աշխատանքով ապրելու հեռու թրքական սուրեն և հուրեն... Միայն Ռուսաստանն է, որ կարող է մանգառայոր լինել: Ուրիշ ոչ ոք չի գնալու Հայաստանի

սարհրու վրա յուր զինվորները սառցնելու: Այս վերջին կետը խնդրեմ ամուր մը խոթես մեր բյուզանդական և եգիպտական հոստաներու գըլխին մեջ»<sup>21</sup>:

Նշանավոր հայրենասերի այս եզրակացությունը անհերքելի է: Նրա վերը բերած իրատես մտքերը ճշմարիտ և խիստ այժմեական են նաև մեր օրերի համար:

## О НЕКОТОРЫХ ВОПРОСАХ ИСТОРИИ ГЕНОЦИДА ЗАПАДНЫХ АРМЯН 1915—1916 гг.

### Резюме

О геноциде армян 1915—1916 гг. создана богатая литература, за прошедшие восемь десятилетий вышло в свет немало серьезных научных исследований. Однако, несмотря на это, в деле изучения и освещения истории этой большой трагедии армянского народа еще имеется ряд упущений, недостатков и ошибок. По нашему мнению, например, еще недостаточно глубоко исследованы националистическая расистская идеология и политика младотурок-иттихадистов в период 1909—1914 гг., не раскрыты и не оценены решения их тайных собраний 1910—1911 гг., решения, в которых был предопределен геноцид западных армян 1915 г. Некоторые историки и публицисты, говоря о причинах геноцида западных армян, допускают ошибки, не отделяя главного от второстепенного. Серьезным недостатком следует считать то обстоятельство, что европейская и американская историография этого вопроса очень мало использовала те богатые материалы, которые имеются в государственных архивах России и Армении. Думаю, необходимо публиковать новые сборники этих документов.

21 «Հայրենիք» տարեգիրք, Բոստոն, 1946:

## ԻՆՉՈՒ ԱՐԴԱՐԱՅՎԵՑ ԱՄԲԱՍՏԱՆՅԱԼԸ

(Սողոմոն Թեհիրյանի ծննդյան 100-ամյակի առթիվ)

Դեռևս 1915 թ. մայիսին, երբ արդեն բոլորովին պարզ դարձավ այն իրողությունը, թե ազգայնամոլ երիտթուրքերի կուսակցությունն ու կառավարությունը բացահայտորեն իրագործում են Արևմտյան Հայաստանի, Թուրքիայի և ամբողջ Փոքր Ասիայի հայ բնակչությունը ոչնչացնելու իրենց նախօրոք մշակած բարբարոսական ծրագիրը, Անտանտի երեք գլխավոր պետությունները՝ Ռուսաստանը, Ֆրանսիան ու Անգլիան ուսական կառավարության արտաքին գործոց մինիստր Ս. Գ. Սազոնովի նախաձեռնությամբ հրապարակեցին պաշտոնական մի հայտարարություն, որ հայերի նկատմամբ կատարվող թուրքական վայրագությունները որակելով որպես մարդկության և քաղաքակրթության դեմ ուղղված գործողություններ, ազգարարեցին, որ այդ ցեղասպանությունը կազմակերպող անձինք պետք է ենթարկվեն քրեական պատասխանատվության:

Անցան տարիներ, 1918 թ. աշնանը վերջացավ Առաջին համաշխարհային պատերազմը, Թուրքիան և նրա դաշնակիցները կանգնեցին հաղթանակած Անտանտի պետությունների դատաստանի առջև: Պարտվածները այս կամ այն կերպ ստացան իրենց «պատիժը»: Սակայն անպատիժ մնացին հայերի զահիճները և առաջին հերթին հայ ժողովրդի ոխերիմ թշնամի, թուրքական պետության ներքին գործոց մինիստր ու մեծ վեզիր, մարտնչող պանթուրքիստ Մահմեդ Թալեաթը: Ավելին, թուրք ռեժիմները ոչ միայն շենթարկվեցին պատասխանատվության, այլև Ս. Թեհիրյանի խոսքերով ասած «նույնիսկ պաշտպանություն տակ առնվեցին»<sup>1</sup>:

1 Տե՛ս Սողոմոն Թեհիրյան. Վերհիշումներ (Թալեաթի ահաբեկումը), դրի առավ Վահան Մինախորյան, Գահիրե, 1953, էջ 236: Այս գիրքը լույս տեսավ երկրորդ անգամ 1956 թ., նորից Կահիրեում, և դգալի կրճատումներով՝ Նրևանոս 1993 թ.:

Այս հանգամանքը բնականաբար առաջ բերեց խորը հիասթափու-  
թյուն և դժգոհություն հայ ժողովրդի լայն խավերում: «Ինքանզակ հա-  
յությունը, ամեն տեղ վրդովված էր Դաշնակիցների վերաբերումից. մի  
ամբողջ ժողովուրդ էր բնաջնջված... և հաղթական Դաշնակիցները, հա-  
կառակ հանգիսավոր խոստումների, մատը մատին չզարկին ոճրագործ-  
ներին արգարագատուսթյան ենթարկելու համար: Ամեն կողմից ժողո-  
վուրդը արդար հատուցում էր պահանջում»<sup>2</sup>: Զկատարվեցին հայերին  
արված խոստումները:

Բարբարոս ջարդարարներին պատժելու ցանկությունը ուժեղ ար-  
տահայտվեց մասնավորապես երիտասարդ հայրենասերների մեջ: Դրան-  
ցից մեկին էր Մեծ Եղեռնից հրաշքով փրկված Սողոմոն Թեհլիրյանը,  
որի գերզաստանի մեծ մասը դաժանորեն ոչնչացվեց 1915—1916 թթ.:  
Էի վրեժի զգացումով, Թեհլիրյանը որոշում է սպանել Թալեաթին:  
«Մնում էր մի բան, ինչպե՞ս կարելի է Պոլիս ընկնել և Թալեաթը գտնել:  
Միայն նրա մահը կարող էր քիչ-շատ ամոքել ասպրած կսկիծս: Տեսկան  
մղձավանջի պես երբեք հանգիստ չէր տալիս ինձ այս գաղափարը. եր-  
բեմն նա համակում էր ինձ այնպես, որ մոռանում էի ամեն բան»<sup>3</sup>:  
Հայուսթյան մեջ ուժեղանում էր այն մտայնությունը, թե սեփական ուժե-  
րով պետք է պատժել թուրք ջարդարարներին: Այս տեսակետը, ինչպես  
պատմում է Թեհլիրյանը, պաշտպանում էր հատկապես հայ ազատա-  
գրական շարժման անվանի գործիչ Արմեն Գարոն (Գարեգին Փաստըր-  
մաճյանը): Սակայն Թեհլիրյանին ու նրա համախոհներին չհաջողվեց  
իրենց նպատակին հասնել ո՛չ 1916—1917 թթ. և ո՛չ էլ հետագա մի  
քանի տարիներին:

Հետաքրքիր է նկատել, որ հանցագործներին պատժելու մի փորձ  
տեղի ունեցավ 1919 թ.: Երիտթուրքերի պետության անկումից հետո  
Թուրքիայում կազմված նոր կառավարությունը, որ գտնվում էր հա-  
կաթթթիհասթական ուժերի ձեռքում և հաղթանակած պետությունների  
ազդեցության տակ, 1919 թ. գարնանը դատական պրոցես սկսեց երիտ-  
թուրքերի պարագլուխների դեմ, նրանց մեղադրելով ինչպես մի շարք  
այլ հարցերում, այնպես էլ հայկական շարժեր կազմակերպելու հա-  
մար: Վերջին խնդրում, իհարկե, հաշվի առնվեց նաև համաշխարհային  
առաջավոր հասարակայնության պահանջը: Թուրքական ոսպմական  
գատարանը պատժեց մի շարք հանցագործների, բայց Թալեաթ, էնվեր  
փաշաների, դոկտոր Բեհանգդին Շաքիրի և մի քանի այլ մեղադրյալ-

ներքի մասին կայացած մահվան դատավճիռները մնացին միայն թղթի  
վրա. քանի որ նրանք դատվում էին հեռակա կարգով: Բանն այն է, որ  
վերջիններս կարողացան ժամանակին փախչել Թուրքիայից, խուսափել  
բանտարկությունից և ապաստան գտնել եվրոպական երկրներում:

Թալեաթին պատժելու համաժողովրդական ցանկությունը, սակայն,  
այնուամենայնիվ, կատարվեց: Գործադրելով շատ ջանքեր, հաղթահա-  
րելով ոչ քիչ դժվարություններ՝ Սողոմոն Թեհլիրյանը 1921 թ. սպա-  
նեց մեծ ոճրագործին: Բայց, նախ մի քանի կենսագրական տեղեկու-  
թյուններ երիտասարդ վրիժառուի մասին:



Սոգոմոն Թեհլիրյան

Սողոմոն Խաչատուրի Թեհլիրյանը ծնվել է 1896 թ. ապրիլի 2(14)-ին  
Արևմտյան Հայաստանի Կամախ գավառի Ներքին Բազառիձ գյուղում:  
Միջնակարգ կրթությունը ստացել է Երզնկայում: 18 տարեկան հասա-  
կում ընդգրկվել է հայ կառավարության շարժման մեջ, շարժում, որի  
գլխավոր նպատակն էր փրկել արևմտահայերին մասսայական բնաջն-  
ջումից: Զորավար Անդրատենի առեւ ցամաքում մասնակցել է Առաջին

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 83:

Տամաշխարհային պատերազմի կովկասյան ճակատում տեղի ունեցած ռազմական մի շարք գործողությունների: Վերավորվել է 1916 թ., ապա-  
քինվել է Թիֆլիս քաղաքում: 1919 թ. գարնանը Թեհլիրյանը գալիս է  
Կ. Պոլիս ու այնտեղ սպանում Թալեաթի կառավարությունից գործակալ,  
մատնիչ Հարություն Մկրտչյանին: Այս գազրելի գավաճանի կազմած  
ցուցակներով ու տվյալներով բանտարկվեցին ու ոչնչացվեցին հարյու-  
րավոր հայ մտավորականներ:

Բայց հարկավոր էր գտնել զլխավոր դահիճին՝ Թալեաթին: Երկար  
պրպտումներից հետո Ս. Թեհլիրյանին և նրան օգնող ընկերներին հա-  
ջողվում է պարզել Բեռլինում կեղծ անունով ապրող Թալեաթ փաշայի  
բնակարանի հասցեն: Եվ ահա 1921 թ. մարտի 15-ին, առավոտյան,  
25-ամյա Թեհլիրյանը ասրճանակի գնդակով գետին է գլորում մեծ  
ոճրագործ Մահմեդ Թալեաթին: Հայ վրիժառուն բանտարկվում է, նրան  
դատում է նորաստեղծ գերմանական հանրապետության երզվյալ ատե-  
նակալների Բեռլինի 3-րդ շրջանային դատարանը: Թուրքիայի մեծ վե-  
զիրի սպանությունից ակտը, սկսված դատավարությունը, որ տեղի ունե-  
ցավ նույն թվականի հունիսի 2-ին և 3-ին, առաջ բերեց մեծ հետա-  
քրքրություն:

Դատարանի նախագահ դր. Լեմբերգը շատ ջանքեր է գործադրում,  
որպեսզի պարզվեն սպանությունից հանգամանքները, բացահայտվեն կա-  
տարված անցքի պատճառները: Հարցաքննվում է նախ և առաջ Թեհ-  
լիրյանը, որն ընդունում է, թե ինքը վրեժ է լուծել Թալեաթից, այն  
մարդուց, որի հրամաններով բարբարոսաբար կոտորվեցին իր հարա-  
զատները ու միլիոնից ավելի հայրենակիցները: Ամբաստանյալը բե-  
րում է բազմաթիվ կոնկրետ փաստեր թուրք ջարդարանների բարբարո-  
սությունների վերաբերյալ, խոսում է իր հոգեկան ծանր ապրումների  
մասին, նշում է այն, որ ինքը հանցագործ չէ, քանի որ սպանել է վայ-  
րագ դահիճի, շարագործ ոճրագործի ու զազրելի մարդասպանի:

Հարցաքննվում են շատ վկաներ և մասնավորապես Մեծ Եղեռնի  
ականատեսներ ախլին Թերզիբաշյանը և եպիսկոպոս Գրիգորիս Պալաք-  
յանը, որոնք հրապարակում են անհերքելի փաստեր Թալեաթի և նրա  
գործակիցների ոճրագործությունների մասին: Նույն հարցի վերաբե-  
րյալ արժեքավոր տեղեկություններ է հաղորդում որպես հեղինակավոր  
էքսպերտ դատարան հրավիրված Յոհաննես Լեփսիուսը: Գերմանացի  
այդ նշանավոր հայագետ-հումանիստը առանձնապես նշում է այն հան-  
գամանքը, որ երիտթուրքերի կառավարության պարագլուխները հայու-  
թյան ցեղասպանությունը Թուրքիայում իրագործել են հայերի տեղա-  
հանման՝ դեպորտացիայի անվան տակ: Բնորոշ է, որ Թալեաթի գաղտ-

նի հրամաններում ասվում էր, թե «տեղահանություն» նշանակում է  
«ոչնչացում»: Պատահական չէ, որ Միջագետքի անսպասուհի հասավ  
աքաղաքների միայն տաս տոկոսը, իսկ մնացած 90 տոկոսը ոչնչաց-  
վեց երկրում՝ բնակավայրերում, դեպի Միջագետք տանող ճանապարհ-  
ներին, մեծ մասամբ անմարդաբնակ ձորերում ու լեռների կիրճերում<sup>4</sup>:  
Լեփսիուսը հարկ էր համարել ավելացնել, որ հայերի կոտորածները  
կատարվում էին ամենավայրագ ձևերով: Ի դեպ, ավելորդ չենք համա-  
քում նկատել, որ Լեփսիուսի, ինչպես և մյուս գերմանացի էքսպերտ,  
գեներալ Օտտո Լիման ֆոն Սանդերսի (գերմանական ռազմական մի-  
սիայի ղեկավարը Թուրքիայում) ելույթներում նկատվում է միտում  
նվազեցնելու կայդերական Գերմանիայի մեղսակցությունը հայերի  
1915—1918 թթ. ցեղասպանության գործում:

Դատավարության երկրորդ օրը (1921 թ. հունիսի 3-ին) հանդես  
եկավ ավագ դատախազ Գոլնիկը: Յանկանյալով հիմնավորել ամբաս-  
տանյալին խիստ պատժի ենթարկելու իր պահանջը, նա Թալեաթին հա-  
մարեց նշանավոր քաղաքական գործիչ, Գերմանիայի հավատարիմ  
դաշնակից, որ զոհ դարձավ քաղաքական վրեժխնդրության: Խոսելով  
Մեծ վեզիրի մյուս «բարեմասնությունների» մասին դատախազը զար-  
գացրեց այն տեսակետը, որ իբր հայերի տեղահանումը (դեպորտա-  
ցիան) անհրաժեշտ միջոցառում էր օսմանյան պետության անվտան-  
գությունն ապահովելու համար, որ տեղի ունեցած ողբերգական անց-  
քերի համար պատասխանատվություն է կրում ոչ թե Թալեաթը, այլ  
աեղահանությունը իրականացնող ցածր պաշտոնեությունը: Մեղադրյալ  
Թեհլիրյանը, պահանջել է դատախազը, պետք է ենթարկվի խիստ  
պատժի, քանի որ նա կատարել է կանխամտածված սպանություն:

Դատախազի ելույթից հետո խոսքը տրվում է մեղադրյալ Թեհլիր-  
յանի առաջին պաշտպան, գաղտնի խորհրդական Ադոլֆ ֆոն Գորդոնին:  
Նա անվիճելի է համարում այն ճշմարտությունը, որ հայերի ցեղասպա-  
նությունը կազմակերպել են երիտթուրքերի պետության պարագլուխնե-  
րը, մասնավորապես ներքին գործոց մինիստր ու մեծ վեզիր Թալեաթը:  
Հենվելով Պալաքյանի ու մյուս վկաների ու էքսպերտների տված ցու-  
ցումների վրա ապացուցված է համարում այն փաստը, որ հենց Թա-  
լեաթն է, որ ստորագրել է այն հրամանները, որոնցով և իրականացվել  
է հայերի ցեղասպանությունը: «Թալեաթի կառավարության միջոցով  
է, որ թափվեցավ արյունի ամբողջ ծով մը՝ առնվազն մեկ միլիոն հա-  
յերու—երեսխաներու, կիներու, ծերերու և քաջ ու կարող այրերու»<sup>5</sup>:

<sup>4</sup> Դատավարության Թալեաթ փաշայի, սղագրական ղեկուցում, Վիննա, 1921,  
էջ 90:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 166:

Քերհով մի շարք հետաքրքիր կենսագրական անդեկություններ ՔեհՆիլիբյանի մասին, Գորգոնը այնուհետև խոսում է նրա դժբախտ կյանքի, կրած տառապանքների մասին և խնդրում է դատարանին, որ դատավճիռ ընդունելու ժամանակ հաշվի առնվի նաև այն, որ մեղադրությանը դիմել է սպանության հոգեկան ծանր ապրումների ժամանակ:

Դատարանում ընդարձակ ճառով հանդես եկավ մեղադրյալ ՔեհՆիլիբյանի մյուս պաշտպանը՝ իրավաբան Յոհաննես Վերթաուերը: Համաձայնելով Գորգոնի հետ, թե թալեաթը և իր համախոհները կատարել են ծանր հանցագործություններ հայ ժողովրդի նկատմամբ, նա նշում է, որ դերմանական օրենսդրությունը լրիվ հնարավորություն է տալիս դատարանին աղատելու քրեական պատասխանատվությունից ահաբեկիչ ՔեհՆիլիբյանին, որովհետև վերջինս սպանել է ոնրագործի: Դատախազը ճիշտ չէ, երբ պնդում է, թե թալեաթը եղել է դերմանական ժողովրդի դաշնակից ու բարեկամ: «Թալեաթը և իր կոմիտեն դաշնակիցներ էին պրոսակական և դերմանական նախկին վրնվորական կառավարության: Գերման ժողովրդի դաշնակիցներ այդ մարդիկը երբեք եղած չեն... այդ Երիտասարդ թուրք մարդիկը երբեք դերման ժողովրդի դաշնակիցները չէին»:

Իրավաբանը բարբաջանք ու ստախոսություն համարեց այն տեսակետը, թե իբր թուրքական պետության համար հայերի տեղահանությունը անհրաժեշտություն էր: Երիտթուրքերի կառավարությունը պարզապես օգտագործեց Առաջին համաշխարհային պատերազմը՝ հայ ժողովրդին ոչնչացնելու համար: Երբ 1921 թ. մարտի 15-ի առավոտյան ժամը 11-ին ՔեհՆիլիբյանը սպանեց թալեաթին, ապա դրանով իսկ նրիտասարդ վրիժառուն պատժեց դաժան ոճրագործին, հանդես եկավ սրպես «ներկայացուցիչը մարդկայնության ընդդեմ հակամարդկայնության, ներկայացուցիչը արևային իրավունքի ընդդեմ խավար անիրավություն», իբրև «ներկայացուցիչը իր ծնողին, իր քույրերուն», իբր թուրքավոր անմեղ հայրենակիցների, որոնք կոտորվեցին անօրինակ բարբարոսությամբ: Դիմելով պատկերավոր ոճին՝ պաշտպան Վերթաուերն ասաց, որ ՔեհՆիլիբյանը բարձրացրեց «դրոշակը արդարության, դրոշակը մարդկայնության, դրոշակը վրեժխնդրության»: Վերջացնելով իր ճառը՝ նա դիմեց դատարանին. «Մարդկության հայացքը ուղղված է ձեր որոշումին, որ արդարության աչքը, կատարյալ համաձայնությամբ

մարդկության զգացումներուն հետ, ձեզի կսպասե: Ըսեք պարզապես. «Ան» (ՔեհՆիլիբյանը) հանցավոր չէ»:

ՔեհՆիլիբյանի երրորդ պաշտպանը՝ դադանի խորհրդական, Քիլի համալսարանի պրոֆ. Նիմայերը, հատկապես նշեց հետևյալ հանգամանքը. «Ես կատարելապես համոզված եմ ու կը խորհիմ, թե դուք ամենքդ ալ պետք է համոզված ըլլաք, որ մաքուր խիղճը, զոր անպայման ունի ամբաստանյալը, զոր ան՝ լիովին ընդունելով հանդերձ կատարված իրողությունը, որ կը ծանրանա իրեն վրա, այնուամենայնիվ կը պահպանե առաջին իսկ վայրկյանն ու ամեն կացություն մեջ՝ այս մաքուր խիղճը կնշանակե... թե ինքը գործեր է իրավունքին համաձայն, ոչ մեկ կերպով հակառակ ճշմարիտ, իսկական իրավունքին, որպիսին միայն արժեք ունի իրեն համար»:

Շոշափելով հայկական կոտորածների հետ կապված մի շարք այլ հարցեր, պրոֆ. Նիմայերը այնուհետև դիմելով դատավորներին ասել է. «Դուք չեք կրնար ՔեհՆիլիբյանը պատասխանատու գտնել: Ան գործեց այնպես, ինչպես պետք էր, որ գործեր, ան ըրավ այն, ինչ որ չէր կրնար չընել»:

Ս. ՔեհՆիլիբյանի երկրորդ պաշտպան, իրավաբան Վերթաուերը իր վերջին ելույթում հայտարարեց, որ երիտթուրքերի պարագլուխներ էնվեր, թալեաթ փաշաների ու մյուսների մեղքով «հայ ժողովրդին նկատմամբ գործվեցան այնպիսի սոսկալի ոճիրներ, որոնց նմանը չի գիտեր մարդկային պատմությունը... Մենք պաշտպաններս այստեղ արգեն քանիցս շնչտեցինք, թե մենք գթություն չենք մուրար, թե մենք զգացումե բխած բան մը չէ, որ կուզենք, ալ այն, որ կիրառվի պատժական իրավունքը»:

Դատարանի նախագահ զոկտոր Լեմբերգի համառոտ խոսքից հետո երգվյալ ատենակալները առանձնանում են և մոտ մեկ ժամից հետո հայտարարում իրենց որոշումն այն մասին, որ ամբաստանյալ Սոզոմոն ՔեհՆիլիբյանը հանցավոր չէ: Դատարանի նախագահը համաձայնում է նրանց հետ և ընդունում հետևյալ դատավճիռը. «Արդարացնել ամբաստանյալին... Չեղյալ հայտարարել ամբաստանյալին բանապակելու հրամանը»:

Բեռլինի դատարանի միանգամայն հիմնավոր ու արդար այս վճիռը, որ գրեթե աննախադեպ էր համաշխարհային արդարագատություն պատմության մեջ, լայն արձագանք գտավ շատ երկրներում: Այն ողջու-

6 Նույն տեղում, էջ 182:

7 Նույն տեղում, էջ 188:

8 Նույն տեղում, էջ 194:

9 Նույն տեղում, էջ 198:

10 Նույն տեղում, էջ 203—204:

Նեցին հայ ժողովրդի բարձր խավերը, միջազգային առաջավոր հասարակայնությունը, եվրոպական ու ընդհանրապես արևմտյան մամուլի մեծ մասը: Ողջունողներից մեկն էր նաև ազգային հերոս, զորահրամանատար Անդրանիկ Օզանյանը: Նա իր նկարը ուղարկեց Քեմալիսիին՝ հետևյալ մակագրությամբ. «Ի հիշատակ իմ ազնիվ զինվորին՝ Ս. Քեմալիսիին. Անդրանիկ. 1921 թ. 8 դեկտեմբերի»<sup>11</sup>: Իհարկե, եղան նաև գեթոհաներ: Դատավճռի դեմ բողոքեցին ինչպես թուրք ազգայնականները, այնպես էլ թուրքամետ գերմանացիները:

\* \* \*

Թալեաթի սպանությունը և Բեռլինի դատարանի ընդունած վճիռը Քեմալիսիին արդարացնելու մասին լայն արձագանք գտավ իր ժամանակի պարբերական մամուլում: Ավելորդ շենք համարում բերել մի շարք քաղվածքներ:

ԱՄՆ-ում հրատարակվող «Հայրենիք» թերթն արդեն 1921 թ. մարտի 18-ին գրեց այսպիսի տողեր. «Վերջապես արդարություն ձեռք բերվեց և դեռևս գլորեց բյուրավոր զոհերու տխրահռչակ դահիճը, օսմանյան ավազակապետության նախկին վեզիրը, Թալեաթ փաշան... Թալեաթ կը մնա իբրև արյունաբու գազան մը, զուրկ՝ մարդկային բույր զգացումներեն և հատկանիշներեն... Եթե Թալեաթ ապրեր այս աշխարհի վրա, և իր բնական մահով երթար հողին տակ, հայության խիղճին վրա պիտի ծանրանար ասավոր մղձավանջ մը, և բյուրավոր զոհերու ոսկորները պիտի խլրտեն իրենց անծանոթ հողակույտերուն մեջ: Լավ է, որ այդ անիրավությունը խնայվեցավ հայության և անոր բյուրավոր հայ զոհերուն, որոնց վրեժը կը գոռա և պիտի գոռա դալիք դարերու ընթացքին՝ վերապրող հայության հոգիին մեջ... Թալեաթ ամելի վատ եղավ, քան իր նախորդը՝ Ապտուլ Համիտ, ավելի հանդուգն և անասնձ, քան բոլոր թուրք ջարդարարներն ու թալանչիները, և այդ իսկ պատճառով, հակառակ իր բոլոր խորամանկություններուն և զգուշություններուն, ինքզինք գտավ հայության մեկ մեծ զավիին, անվեհեր և վրեժխնդիր զավիին առջև, որ վարկենաբար փշոցեց կոտորածներ և նախճիրներ ծրագրող իր զիվային ուղեղը»:

Բոստոնում հրատարակվող «Ազգ» թերթը նույն թվականի մարտի 19-ի խմբագրականում նշում էր, որ Թալեաթ փաշայի՝ հայության այդ

ամենազայրագ թշնամու սպանությունը «ցնցեց հայ սրտերն ի սփյուռեաշխարհի, և հպարտ զոհունակությունը անզուսպ հրձվանքով մը դուրս ժայթքեց ամեն մեկ հայու ճնշված կուրծքին... Մենք ապրողներս հրձվանքով կը ծափահարենք հայ արդար վրեժի այս գործադրությունը ոճրագործի մը վրա, որ պարզ ամբաստանյալ մը չէր, այլ դատապարտյալ մը՝ թե իր իսկ երկրին Պատժական դատարանեն, թե միջազգային օրենքեն և թե մարդկային բարոյականին ու խղճին առջև»: Նկատենք, որ նույն ոգով, նույն զգացումներով ու տեսակետներով հանդես եկան իր ժամանակի սփյուռքահայ գրեթե բոլոր թերթերը:

Ինչ դիրք բռնեց արևմտյան պետությունների մամուլը: Մոսկոյում, իհարկե, միանշանակ չէր: Պարբերականների մի մասը միայն ուղջունեց Բեռլինի դատարանի վճիռը և զրվատեց, փառաբանեց Սողոմոն Քեմալիսիին: Այսպես, օրինակ, Նյու Յորքում լույս տեսնող Current History ամսագրի հուլիսյան հատորում տպագրվեց հայ-ամերիկյան ընկերության նախագահ Ջորջ Ռ. Մոնտգոմերիի հոդվածը, ուր արդարացվում էր Քեմալիսի խիզախ արարքը: Հոդվածում բերված են բազմաթիվ փաստեր այն մասին, ինչ ինչ ոճրագործություններ է կատարել Թալեաթ փաշան հայերի նկատմամբ<sup>12</sup>: Գերմանացի հայտնի գրող Հ. Ֆրեյլյուխերը Քեմալիսիին անվանեց Հայ Վիլհելմ Տեյլ:

Խոսելով արևելահայերի ծանր վիճակի մասին՝ մեր մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանը, որպես ականատես, վկայում է. «Մարդ ո՞ք հողք տա գլխին, դառաստան չկա, իրավունք չկա... աղջիկն ասեն՝ քաշում են, տղեն ասես՝ տանում, շատ անգամ թուրքացնում, հավա-

տից հանում, շատ անգամ էլ պուխը կարում, էրում, նահատակում: Ոչ տունն էր իրանը, ոչ մալը, ոչ ապրանքը, ոչ ջանը, ոչ օղուշաղը»:

Հայ ժողովրդի վիճակը օրհասական էր, նրա ֆիզիկական գոյությունը վտանգի էր ենթարկված: Ո՞րն էր փրկության ուղին: Հայ ազատագրական շարժման անվանի գործիչներ Իսրայել Օրին, Հովսեփ Էմինը, Շահամիր Շահամիրյանը և ուրիշներ իրավացիորեն գտնում էին, որ հայերին կարող է օգնել միայն Ռուսաստանը, քանի որ այդ հզոր պետության և հայ ժողովրդի շահերը քաղաքական մի շարք կարևոր հարցերում համընկնում են: Ընդարձակելով իր հարավային սահմանները Ռուսաստանը ազատագրում էր մահմեդական բռնապետությունների տակ հեծող հայերին: Այդ է պատճառը, որ նրանք մեծ հույսեր էին կապում Ռուսաստանի հետ:

XIX դարի սկզբին, երբ Վրաստանը միացվեց Ռուսաստանին, Հայաստանի հյուսիսարևելյան մի քանի շրջաններ ևս ընդգրկվեցին Ռուսական կայսրության մեջ: Ռուս-պարսկական 1804—1813 թթ. պատերազմի հետևանքով, 1813 թվականի գյուլիստանի պայմանագրով Ռուսաստանին միացվեցին Արցախը (Ղարաբաղը) և մի շարք դավառներ:

Արևելյան Հայաստանի հիմնական մասը՝ Արարատյան դաշտավայրը Երևան քաղաքով ազատագրվեց ռուս-պարսկական 1826—1828 թթ. պատերազմի հետևանքով: Այս պատմական ակտը վավերացվեց և իրավական ձևավորում ստացավ Քուրքմինչայ գյուղում 1828 թ. փետրվարի 10-ին կնքված պայմանագրով:

1826—28 թթ. ռուս-պարսկական պատերազմին զործուն մասնակցություն ունեցան հայ ժողովրդի լայն խավերը:

Բնապետական ծանր լծից ազատագրվելու իրենց հույսերը կապելով ռուսական ղեկավարների հետ՝ նրանք կատարեցին ամեն ինչ ռուսական բանակի հաղթանակն ապահովելու համար: Բնակչությունն իր ուժերի ներածին շափով ռուսական զորքերին օգնեց ոչ միայն սննդամթերքով, անհրաժեշտ տեղեկություններ հաղորդելով և բազմաթիվ այլ ծառայություններ ու հանձնարարություններ կատարելով, այլև զինված պայքարով: Պատերազմական գործողությունների ժամանակ գյուղացիությունը հաճախ զենքի էր ղիմում: Ռուսական զորքերի շարքերում արիաբար կռվում էին բազմաթիվ հայ կամավորներ ու աշխարհազորայիններ:

1826 թ. ամռանը, երբ դեռ նոր էր սկսվել ռուս-պարսկական պատերազմը, Շամշադինում Գրիգոր Մանուշարյանի ղեկավարությամբ կազմակերպվեց կամավորական մի ջոկատ, որը կարճ ժամանակամիջոցում իր շարքերում ընդգրկեց 500-ի չափ հեծյալ մարտիկներ: Կով-

կասի՝ առասկան բանակի զինավոր հրամանատարության ցուցումներով նա ազմական գործողություններ ծավալեց Երևանի սարդարի հրոսակախմբերի ղեմ և աչքի ընկնող ծառայություններ մատուցեց ռուսական զորքերին: Նույն 1826 թ. աշնանը գեներալ Մադաթովի նախաձեռնությամբ կամավորական մի ջոկատ ստեղծվեց Ղարաբաղի հայերից: Արիաբար կռվելով ռուսական զորքերի շարքերում՝ այդ ջոկատը հաջողությամբ կատարեց մի շարք մարտական առաջադրանքներ:

1827 թ. մարտ ամսին Ներսես Աշտարակեցու, բանաստեղծ Հարություն Ալամդարյանի և Քիֆլիսի նահանգապետ, գեներալ Սիպյազինի նախաձեռնությամբ Քիֆլիսում ստեղծվեց հայկական կամավորական հետևակ զույգ: Հետագայում այն տեղափոխվեց Երևան և առաջապահ զորամասերի կազմում մասնակցեց մարտական գործողություններին:

Ռուս-պարսկական պատերազմի տարիներին շատ աշխույժ գործունեություն ծավալեց ռուսական կողմնորոշման ջերմ պաշտպան, մեծանուն արքեպիսկոպոս Ներսես Աշտարակեցին: 1827 թ. գարնանից սկսած մշտապես գտնվելով Արարատյան դաշտավայրում՝ գործող ռուսական բանակում՝ նա ողևորում էր տեղի հայ բնակչությանը և ամեն կերպ օգնում ռուսական զորահրամանատարությանը: Ռուս գեներալ Պոտտոն իրավացիորեն գրել է. «Պարսկական պատերազմի ժամանակ նա արգեն 66 տարեկան էր, բայց տարիները չթուլացրին սրբազանի եռանդն ու կայտառությունը, որը պատրաստ էր ամեն ինչ գոհելու, միայն թե տեսներ հայրենիքի ազատագրությունը... Ներսեսի ներկայությունը ռուսական բանակում ողևորում էր հայ ժողովրդին, հայրենասիրության զգացումը նրանում հասցնում սիրազորության, հերոսության և ինքնագոհության...»: Ի դեպ, Ներսես Աշտարակեցուն, որպես հայրենասերի ու քաղաքական ակտիվ գործիչ, բարձր գնահատական են տվել ռուսական շատ գործիչներ և, մասնավորապես, ղեկաբերիս Ե. Լաշինովը, որը անձամբ ծանոթ էր նրան:

Առանձին ուշագրություն արժանի է այն հանգամանքը, որ Արևելյան Հայաստանի ազատագրման գործին մասնակցեցին ցար Նիկոլայ Առաջինի կողմից Կովկաս արքայազմ շատ ղեկաբերիս սպաներ ու շարքային զինվորներ: Ռուսական բանակի մարտական գործողությունների ժամանակ աչքի ընկան հատկապես ղեկաբերիս Լաշինովը, Պուշինը, Ռինկեիչը, Իսկրիցկին, Օրժիցկին և ուրիշներ: Նրանք լավ զիտակցում էին, որ իրենք կռվում էին ճնշված հայության ազատագրության համար: 1826—1828 թթ. պատերազմին մասնակցեցին նաև ժամանակի ռուս մտավորականության առաջավոր գործիչներ Դենիս Դավիդովը, Ի. Բուրցովը, Ն. Ռակսկին, Վ. Վոլոսովսկին և այլք:

Արխիվային նյութերի ուսումնասիրությունը կասկած չի թողնում, որ Քուրբմենշայի պայմանագրի հայանպաստ հոգովածների մեծ մասն ընդունվել է Ալեքսանդր Սերգեևիչ Գրիբոյեդովի ջանքերով: Ռուս մեծ գրողը մասնակցել է ինչպես 1826—1828 թթ. պատերազմական գործողություններին, այնպես էլ խաղաղության բանակցություններին: Զգալի ազդեցություն ունենալով ուսական բանակի հրամանատար Պասկևիչի վրա նա կարողացավ վերջինիս միջոցով ընդունել տալ օրենք «Հայկական մարզ» ստեղծելու համար, կազմակերպել պարսկահայերի դանդաղածային գաղթը դեպի Արևելյան Հայաստան, նյութապես օգնել հայ գաղթականներին և այլն:

Արևելյան Հայաստանի ազատագրումը մեծ ոգևորություն առաջացրեց ոչ միայն կովկասահայության մեջ, այլև Ռուսաստանի և շատ երկրների հայաբնակ վայրերում: Այս տեսակետից շատ բնորոշ է օրինակ այն խանդավառությունը, որ ապրեցին Հնդկաստանի հայերը: Մադրասում և Կալկաթայում տեղի ունեցան հանդեսներ ու տոնակատարություններ: Այդ գաղթավաղորդից ստացվեցին բազմաթիվ ողջույններ ու շնորհավորանքներ: Նրանցից մեկում ասված էր. «Հնդկաստանի տարբեր քաղաքներում բնակվող հայությունը խիստ հիացած է, որ իր հին հայրենիքը Արարատյան աշխարհը, էջմիածնի դարավոր Մայր տաճարի հետ միասին գտնվում է Ռուսաստանի սահմաններում»: Հայ նշանավոր գրող Մեսրոպ Թադիաղյանն իր հայրենակիցներին (այսինքն երևանցիներին) Մադրասից ուղղած նամակում գրում էր, թե աշխարհ լույս, որ մեր քաղցր աշխարհն ազատվեց դառն շարժարանքներից:

Իհարկե, չի կարելի անտեսել այն իրողությունը, որ արևելահայությունը, անցնելով ցարական Ռուսաստանի տիրապետության տակ, շագանակեց ազգային ճնշումներից ու սոցիալական կեղեքումներից: Ցարական կառավարությունը վարում էր գաղութային քաղաքականություն, որի ծանրությունն իր վրա կրեց նաև հայ ժողովուրդը: Սակայն, շնայած դրան Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին դրական շատ մեծ դեր խաղաց մեր բազմաշարժար ժողովրդի պատմական ճակատագրում: Ստեղծված պայմաններում փրկության միակ ելքն այդ էր:

Ի՞նչ փոփոխություններ տեղի ունեցան Քուրբմենշայի պայմանագիրը կնքելուց հետո: Նախ՝ վերջ տրվեց արևելահայության բնաջնջմանը: Կանգ առավ երկրի այսպես կոչված հայաթափման պրոցեսը, արագ կերպով ավելացավ հայ բնակչության թիվը: Եթե XIX դարի սկզբին հայերի թիվը Արարատյան դաշտում չնչին էր, ապա դարի կեսերին զգալիորեն աճեց: Դրան նպաստեց հայերի գաղթը Պարսկաստանից և Քուրբիայից դեպի Արևելյան Հայաստան ու Անդրկովկաս: Կարելի է

ասել, որ փաստորեն այստեղ՝ Արևելյան Հայաստանում տեղի ունեցավ մի շատ կարևոր երևույթ՝ հայերի համախմբման, ազգային կոնսոլիդացիայի պրոցես:

Հայ բնակչության աճը շարունակվեց նաև հետագա տասնամյակներին: XX դարի սկզբին արդեն Երևանի նահանգի ընդհանուր բնակչության թիվը կազմեց ավելի քան մեկ միլիոն, ընդ որում ճնշող մեծամասնությունը հայեր էին: Նկատենք, որ հայության այս ազգային կոնսոլիդացիայի շնորհիվ է, որ 1913 թ. ստեղծվեց Հայաստանի առաջին հանրապետությունը:

Հայագտանի միացումը Ռուսաստանին առաջադիմական նշանակություն ունեցավ երկրի տնտեսական կյանքի զարգացման համար: Ռուսական կայսրության կազմում Արևելյան Հայաստանն ստացավ տնտեսական զարգացման նոր հնարավորություններ: Խաների և փաշաների տիրապետության ժամանակ երկրի տնտեսությունը լճացում ու դեգրադացիա էր ապրում: Ունենալով տնտեսական զարգացման ավելի բարձր մակարդակ՝ Ռուսաստանը խթանեց Հայաստանի տնտեսական կյանքի զարգացումը, ստեղծեց դրա համար բարենպաստ պայմաններ:

Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին խոշոր դեր խաղաց հայ մշակույթի զարգացման գործում: Ռուս ժողովրդի հարուստ ու առաջավոր կուլտուրան նպաստեց հայ գրականության, արվեստի ու գիտության ծաղկմանը: Բնորոշ է, որ մեր մեծանուն գրողներ Խաչատուր Աբովյանը, Գաբրիել Մունդուկյանը, Հովհաննես Հովհաննիսյանը, Հովհաննես Թումանյանը և ուրիշներ կրել են ռուս գրական գրականության բարերար ազդեցությունը: Խոսելով այդ մասին՝ Թումանյանը գրել է. «Սիրով ու պատկառանքով խոնարհվում եմ ռուսական մեծ ազգի հոյակապ գրականության առջև, Պուշկինի, Լերմոնտովի, Գոգոլի, Դստոևսկու, Տուրգենևի, Չեխովի, Տոլստոյի և իրենց արժանավոր ժառանգների գրականության առջև, որի վրա կրթվել են մեր գրողները ու մտավորականները շատ-շատերը»:

Նույն հարցի մասին Ավետիք Իսահակյանն ասել է. «Հայ ժողովուրդը տակավին Իվան IV-ի ժամանակ իր հայացքը հառել էր Մոսկվային և իր բախտը ձգտում էր կապել նրա հետ: XIX դարի սկզբներին միայն իրականացավ նրա փափազը և մտնելով Մոսկվայի համաստեղության մեջ սկսեց այնտեղից ստանալ լույս, գիտություն, նոր կուլտուրա»: Պատմաբան Լեոն արտահայտվել է այսպես. «Ռուսաց զենքը ոչ միայն բերում էր խաղաղություն և հանգստություն, այլև կապում էր կամուրջ այնքան դժբախտություններ տեսած մեր երկրի և եվրոպական քաղաքակրթության միջև»:

Քուրքմենչայի դաշնագրի պատմական նշանակությունը բարձր գնահատեցին նաև Ստեփանոս Նազարյանը, Գրիգոր Արծրունին, Ալեքսանդր Նրիցյանը, Ղազարոս Աղայանը, Պերճ Պոռչյանը, Կարապետ Տեղյանը, Արշակ Չոպանյանը և շատ ուրիշներ: Արտահայտելով մեր մտավորականության ու ժողովրդի ջերմ ուսասիրությունը՝ Հովհաննես Թումանյանը 1920 թ. գրել է. «Մեր փրկությունը Ռուսաստանից է եղել և Ռուսաստանից էլ պետք է լինի: Մեր ապագան, ինչպես միշտ ասել եմ, կապված է Ռուսաստանի հետ»: Ահա և մեր մեծ հայրենասերի խոսքը ու պատգամը:

\* \* \*

Քուրքմենչայի պայմանագրից հետո ավելի ամրապնդվեց ու խորացավ հայ-ռուսական բարեկամությունը և համագործակցությունը: XIX դարի երկրորդ կեսին և XX դարում տեղի ունեցած ուսու-թուրքական պատերազմներում ռուսական զորքերին օգնելու համար հայերը ստեղծեցին աշխարհազորային ջոկատներ, ժողովրդական միլիցիա, կամավորական զնդեր, քանի որ սուլթանական բռնապետության ծանր լծի տակ հեծող հայտնության ազատագրությունը կապված էր Ռուսաստանի հաղթանակի հետ:

Ռուս-հայկական բարեկամությունը շղագարեց նաև մեր օրերում, հավատարիմ դարավոր ավանդույթին, 1997 թ. օգոստոսի 29-ին Մոսկվայում Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև կնքվեց «Բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության պայմանագիր»: Պատմական այդ մեծ իրադարձությունը ջերմ ընդունելություն գտավ ինչպես Հայաստանում, Սփյուռքում, այնպես էլ Ռուսաստանում: Շատ կողմերով եզակի այդ պայմանագիրն անկասկած կարևոր նշանակություն կունենա մեր թե՛ ներկայի և թե՛ ապագայի համար:

Հարկ է ավելացնել, որ հայերի ռուսական կողմնորոշումն ունեցել է և բռնի համաժողովրդական քնույթ: Ռուսաստանին բնական և հուսալի բարեկամ են համարել մեր ժողովրդի առաջավոր և իմաստուն բոլոր գործիչները սկսած Իսրայել Օրուց, Խաչատուր Աբովյանից մինչև մեր օրերի հանրահռչակ գործիչներ Վիկտոր Համբարձումյանը, Մարտիրոս Մաբյանը, Արամ Խաչատրյանը, Վիլյամ Մարոյանը և ուրիշներ: Վ. Սաբոյանը, օրինակ, գրել է. «Մեզ համար մեծ բախտ է, որ մեզ զորավիգ է ուսու ժողովուրդը: Մենք չենք կարող գոյատևել առանց զորավոր պաշտպանության... ռուսները մեր եղբայրներն են, մեր բարեկամները»:

Հետաքրքիր է նաև հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչ Արմեն Գարոյի՝ Գարեգին Փաստրմաճյանի կարծիքը: Խորհելով 1918—1920 թթ. Հայկական Հարցի կապակցությամբ տեղի ունեցած իրադարձությունների մասին՝ նա հայտնել է հետևյալ համոզմունքը. «Առանց ռուսական ակտիվ աջակցությանը մենք հնարավորություն չենք ունենար գտնե կիսով շափ իրականացնել մեր ազգային իդեալը՝ ունենալու սեփհական հայրենիք մը՝ անկախ կամ թեկուզ կիսանկախ, որ մեր ժողովուրդը հնարավորություն ունենա յուր հայալ աշխատանքով ապրելու հետև թրքական սուրեն և հուրեն... Միայն Ռուսաստանն է, որ կարող է Հայաստանի մանդատյորը լինել. ուրիշ ոչ ոք չի գնալու Հայաստանի սարերուն վրա յուր զինվորները սառեցնելու»:

Նմանօրինակ քաղվածքներ կարելի է բերել նաև հայ տիանավոր շատ այլ հեղինակներից: Բայց այժմ սահմանափակվենք այսքանով:



տիկներս քեմենչե և կամ տայրե շալվի ամեն տեղ: Երբ որ աստված տա ուրախութեան օրերը ըլլանը ան վախան կրկին անքամ տէլլալ կանչելով իմացում կու տանք»: Մի քանի օրից հետո հրապարակվում է նոր հրաման, որն ուղղված էր հիմնականում այն կանանց դեմ, ովքեր հաշվի շառնելով երկրի «դառնաշունչ վիճակը եկեղեցի կամ այլ տեղ էրթանլը ժամանակներն իրենանք կամ ազճիկ դավակներն ոսկի գարդարանքներով կերթան...»: Հրամանում այնուհետև ասված է, որ կանանց և աղբիկներին ինչպես իրենց տներում, այնպես էլ դրսում խստիվ արդելվում է զարդարվել և ոսկի մատանիներ կրել, քանի զեռ ծանր օրերը չեն անցել:

Ռուսաստանի նկատմամբ այսպիսի հավատարմություն արտահայտող զգացմունքներ ուներ ոչ միայն Նոր Նախիջևանի, այլ Կովկասի ու ամբողջ Ռուսաստանի հայությունը: Այս է պատճառը, որ կայսր Ալեքսանդր Առաջինը 1813 թ. հատուկ հրովարտակով շնորհակալություն հայտնեց կովկասահայերին: Հրովարտակում ասված է, որ հայերն աչքի ընկան «օրինակելի հավատարմությամբ և նվիրվածությամբ... նրանց ծառայություններն ու քաջագործությունները մեզ վրա զենում են հաճելի պարտավորություն՝ հավաստել ողջ աշխարհին մեր երախտագիտությունը և բարեհաճությունը»:

Ռուս-հայ ռազմական համագործակցությունն ավելի ամրապնդվեց 1826—1828 թթ., երբ ռուսական զորքերի ու բազմահազար հայ կամավորական ջոկատների համատեղ ջանքերով Արևելյան Հայաստանը միացվեց Ռուսաստանին: Հայտնի է, որ այդ տարիներին ինչպիսի հնրոսական գործունեություն ծավալեցին ներսես Աշտարակեցին, Հարություն Ալամդարյանը և Կովկաս աքսորված դեկաբրիստները, Ա. Գրիբոյեդովը, 1812 թ. Հայրենական պատերազմի հռչակավոր պայտեփզան Դենիս Դավիդովը և այլ նշանավոր դեմքեր:

Հայ ժողովրդի լայն խավերը ռուսական զորքերին ռազմական օգնություն ցույց տվեցին նաև XIX դարում ռուս-թուրքական պատերազմների ժամանակ: 1853—1856 թթ., օրինակ, կազմվեցին աշխարհագորային գրուժինաներ ու ժողովրդական միլիցիա Հայաստանի գրեթե բոլոր գավառներում՝ Նրևանում, Ալեքսանդրապոլում (Գյումրիում), էջմիածնում, Նոր Բայազետում և այլուր: Կայսր Ալեքսանդր Երկրորդը շնորհակալություն հայտնեց հատկապես Նրևանի նահանգի բնակիչներին, որոնք նշված տարիներին աչքի ընկան իրենց հավատարմությամբ, քաջագործությամբ, ինչպես և նրանով, որ նյութական զգալի օգնություն ցույց տվեցին ռուսական բանակին:

Ռուս-հայ ռազմական համագործակցությունն ավելի խորացավ ու մեծ չափեր ընդունեց ռուս-թուրքական 1877—1878 թթ. պատերազմի ժամանակ: Արևմտյան Հայաստանի հայ բնակչությունը, որ հույս ուներ, թե Ռուսաստանի հաղթանակը կաղատադրի իրեն թուրք փաշաների ծանր լծից, նորից դիմեց բոլոր միջոցների, որպեսզի օգնի ռուսական զորքերին: Կազմակերպվեցին աշխարհագորային ջոկատներ, որոնք ակտիվ մասնակցություն ունեցան պատերազմական գործողություններին: Հետաքրքիր է, որ ղեռնա պատերազմի առաջին օրերին՝ 1877 թ. ապրիլի 17-ին Կովկասի փոխարքան հայտնում էր ցար Ալեքսանդր Երկրորդին, թե քանի որ Կարսի գավառի հայերը մեծ ցանկություն են հայտնել ծառայել ռուսական բանակում, զեներալ ազյուտանտ Լորիս Մելիքովը որոշել է նրանցից ստեղծել հեծելազորային հատուկ գունդ:

Ուշագրություն արժանի է այն հանգամանքը, որ այս պատերազմին մասնակցել են այնպիսի նշանավոր հայ զեներային, ինչպիսիք էին՝ Լորիս Մելիքովը, Ա. Տեր-Ղուկասովը, Հ. Կապարևը, Ալեքսանդրը, Շելիտվնիկովը, Քիշմիշևը և ուրիշներ: Նկատենք, որ պատերազմի ժամանակ տիրապետություններ կատարած ռուս զինվորների և հայ կամավորների մասին հրապարակվել են մի շարք գրքեր ինչպես ռուսերեն, այնպես էլ հայերեն: Այսպես օրինակ, 1915 թ. Թիֆլիսում լույս տեսավ Սալ-Մանի «Հայ ազգի պատերազմական հերոսները» աշխատությունը, որտեղ տրված են հետաքրքիր տեղեկություններ քաջարի հայերի մասին:

Ավելորդ չենք համարում այստեղ հիշատակել մի այլ օրինակ ևս: 1920 թ. վերջերին, գրավելով Արևելյան Հայաստանի զգալի մասը, թուրքական բանակը, որի հրամանատարն էր ռաաիստ ու պաթիստ Բաքու զեներալ Քյազիմ Կարաբեկիր փաշան, հպատակ ուներ ոչ միայն ոչնչացնել հայկական պետականությունը, այլև նոր ցեղասպանության միջոցով իսպառ ոչնչացնել նաև արևելահայությունը: Նվաճված տարածքում, հատկապես Շիրակում արյունարբու փաշան ավերեց ու թալանեց գրեթե բոլոր բնակավայրերը, կազմակերպեց մասսայական ջարդեր: Նա պատրաստվում էր գրավել ամբողջ Հայաստանը: Բայց այդ օրհասական օրերին միջամտեց հորհրդային Ռուսաստանի 11-րդ բանակը, որի հրամանատարությունը վճռականորեն պահանջեց, որ թուրքական զորքերը հետ քաշվեն Հայաստանից, այնպես Ռուսաստանը պատերազմ կհայտարարի Թուրքիային: Թուրք ջարդարաբները ստիպված եղան բողնել Հայաստանը: Հայությունը, այսպիսով, փրկվեց նոր եղևնից:

Մոսկովյան պայմանագրի լրիվ տեքստը, որ բաղկացած է 23 հե-տից, հրատարակվեց «Ռոսիյսկայա զազետա» թերթում (այն արգա-տպվեց Երևանում լույս տեսնող «Նովոյե վրեմյա»-ում, ան՝ 1997, № 64): Ի՞նչպես ընդունվեց այդ դաշինքի կնքումը Ռուսաստանում և Հայաստանում: Մամուլում տպագրված նյութերը հիմք են տալիս ասե-լու, որ այդ դաշնագրությունը չերոմ ընդունելություն գտավ հասարա-կության լայն խավերում: Բերենք մի քանի օրինակ: «Ռոսիյսկայա զա-դետայում տպագրված «Մոսկվան և Երևանը կտրեցին գորդյան հան-գույցը» հոդվածի հեղինակներ Վլադիմիր Կուզնեչևսկին և Բորիս Ֆի-լիպովը, անվերապահորեն ողջունելով Մոսկվայի պայմանագիրը, գրե- են, որ այն հսկայական նշանակություն կունենա երկու երկրների հե-տագա ապահով զարգացման համար: ՌԴ «Նովոստի» լրատվական գոր-ծակալության քաղաքական մեկնաբան Մարինա Շակինառիան նշե- է- «Անկասկած Ռուսաստանի հետ թմուր, փոխշահավետ և վստահելի հարաբերությունները Հայաստանի համար կայունության էական գոր-ծոն են»: Մոսկվայի պայմանագրի կարևորությունը նշվեց նաև «Ըզվես-տիա», «Պրավդա» և մի շարք այլ թերթերում:

Ռուս-հայ ռազմաքաղաքական պայմանագրի անհրաժեշտություն մասին վերջերս իր կարծիքն է հայտնել նաև Խորհրդային Միության Մինիստրների խորհրդի նախկին նախագահ, այժմ Ռուսաստանի Պե-տական Դումայի անդամ Նիկոլայ Ռիժկովը, որը, ինչպես հայտնի է, 1988 թ. Հայաստանում տեղի ունեցած երկրաշարժի ժամանակ մեծ շահ-քեր գործադրեց երկրաշարժից տուժած բնակչությանը օգնելու համար: Հայ ժողովրդի այդ ազնիվ բարեկամն ասել է. Հայաստանը Ռուսաստա-նի կարևոր ստրատեգիական պարտնյորն է: Դաշինքը օգտակար է ին-չպես Ռուսաստանի, այնպես էլ Հայաստանի համար. «Զպետք է մոռա-նալ, որ Հայաստանը սահմանակից է Թուրքիային՝ ՆԱՏՈ-ի ակտիվ ան-դամին... Ռուսաստանի և Հայաստանի հետագա մերձեցումն անխու-սափելի է, որովհետև այն համապատասխանում է երկու երկրների և նրանց ժողովուրդների ազգային շահերին ու իղձերին» («Նովոյե վրեմ-յա», 1997, № 74):

Հայաստանում ևս հասարակության լայն խավերը ողջունեցին հայ-ռուսական բարեկամության նոր դաշինքը: Համապատասխան հոդված-ներ գրվեցին հատկապես «Իեսպուբլիկա Արմենիա» «Հայաստան», «Գիտություն», «Նովոյե վրեմյա» և այլ թերթերում: ՀՀ դիտություննե-րի ազգային ակադեմիայի պաշտոնաթերթը, օրինակ, գրեց նաև այս-

պիսի տողեր. «Մենք Ռուսաստանի համար ռազմավարական հենարան ենք կովկասում ու Մեծավոր Արևելքում, իսկ Ռուսաստանը անվտան-գության վահան է թշնամիներով շրջապատված Հայաստանի համար» («Գիտություն», 1997, № 18): Հիշատակենք նաև հետևյալը: 1997 թ. հոկտեմբերի 14-ին և 15-ին Երևանում տեղի ունեցավ Գիտությունների Ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի ղեկավար նստա-ըջանը նվիրված հայ-ռուսական հարաբերությունների պատմության հարցերին: Գիտական այդ կոնֆերանսի բոլոր մասնակիցները բարձ-րահասակին մոսկովյան պայմանագիրը: Նշվեց նաև այն հասգաման-քը, որ ռազմաքաղաքական այդ պայմանագիրը կարևոր նշանակություն կունենա Անդրկովկասում քաղաքական ապահով իրադրություն ստեղ-ծելու համար («Գիտություն», 1997, № 21):

Հայ-ռուսական նոր դաշինքը չերոմ ընդունելություն գտավ նաև սփյուռքահայերի մեջ: Վերջերս Բուենոս Այրեսից Երևա: ժամանած արգենտինահայ պատմաբան Պ. Օճանյանը, իր մի ատուխում ողջու-նելով մոսկովյան պայմանագիրը, նկատել է. «Պատմական իրողություն է, որ ամեն մի ազգ ունի բնական դաշնակից: Այդ է հաստատում աշ-խարհի պատմությունը: Մեր բնական դաշնակիցը Ռուսաստանն է: Եվ բոլոր այն ժամանակներում, երբ Հայաստանը փորձել է այլ գաշնա-կից փնտրել, մեր շահերը վնասվել են» (նույն տեղում):

Խոսելով հայ-ռուսական նոր պայմանագրի մասին՝ Ռուսաստանի Դաշնության նախագահ Բորիս Ելցինն ասել է. «Ռուս և հայ ժողովուրդ-ների կյանքում մի անգամ չէ, որ այնպիսի իրադարձություններ են եղել, որոնք իրավացիորեն կոչվել են պատմական... Ստորագրված պայմա-նագրերը համապատասխանում են Ռուսաստանի Դաշնության և Հա-յաստանի Հանրապետության էական և երկարաժամանակ շահերին: Դրանք ամրապնդեցին որակապես նոր փուլը այն հարաբերությունների, որոնք բարձրացել են ռազմավարական գործակցության մակարդակին: Ռու-սաստանն ու Հայաստանը ամուր կապված են բնականոր արմատներով, մոտ են հոգևոր կյանքով, ունեն համատեղ ձեռքբերումներ, բնդանուր պատմություն: Այդ ժառանգությունը դարերով միավորել է մեր ժողո-վուրդներին: Հայ և ռուս ժողովուրդների փոխհարաբերություններն ունե-ցել են սխանչելի անցյալ, նրանք կունենան ոչ պակաս փառավոր ապա-գա» («Հայաստան», 1997, № 78):

Համաձայնելով Բորիս Ելցինի հետ նոր դաշինքի կարևորությունը նշել է նաև Հայաստանի Հանրապետության նախագահը:

Մոսկովյան պայմանագրին բարձր գնահատական են տվել նաև Ռուսաստանի Դաշնության Դումայի նախագահ Գենադի Սելեզնյովը,

արտաքին գործերի մինիստր Եվգենի Պրիմակովը և պետական ալլ գործիչները:

Առնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ Արկարդի Ղուկասյանը, խոսելով Ռուսաստանի և Հայաստանի միջև կնքված պայմանագրի մասին, ասել է. «Այն ամենը, ինչ կապված է Հայաստանի հետ, ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված է մեզ հետ: Թուրք պարագլուխների հանդուգն, ռազմատենչ հայտարարություններն, անշուշտ պոտնցիալում են մեզ, որոշակի տրամադրվածություն են առաջացնում: Այս առումով ապահովագրվածությունը՝ ռազմական դաշինք ունենալով Ռուսաստանի հետ, լավատեսություն է ներշնչում և հուսալիություն, կայունության ավելի շատ երաշխիքներ» (տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 1997, 24 հոկտեմբերի): Նույն հարցի մասին Ռուսաստանի վարչապետ Վիկտոր Չեռնոմիրովինը լրագրողներին հետ ունեցած իր մի ասուլիսում հայտարարել է, որ մոսկովյան պայմանագիրը կնպաստի Ղարաբաղյան հարցի խաղաղ կարգավորմանը:

### 3

Ռուս-հայ բարեկամության և ռազմական համագործակցության պայմանագրի կնքումը առաջ բերեց մեծ իրարանցում և զայրույթ Ադրբեյջանում, քանի որ այն խափանեց Հեյդար Ալիևի և նրա գործակիցների մշակած ծրագրերը՝ պատերազմ սկսել Առնային Ղարաբաղի և Հայաստանի դեմ: Գաղտնիք չէ, որ վերջին ժամանակները զբախ ուժերի օգնությամբ զգալի շափով հզորացավ ադրբեյջանական բանակը, որի կազմում այսօր քիչ չէ այլ երկրներից Ադրբեյջան եկած զինվորների ու սպաների թիվը և ոչ էլ զանազան ճանապարհներով այնտեղ ստացված ռազմական տեխնիկան: Սակայն այդ բոլորը՝ արժեքավորվեցին մոսկովյան պայմանագրի կնքումից հետո: Միթե պարզ չէ, որ ադրբեյջանցի ազրեսորները, ինչքան էլ լինեն ռազմատենչ, այնուամենայնիվ չեն համարձակվի գործ ունենալ ռուսական բանակի հետ: Ստեղծված նոր իրադրություն մեջ նրանց մնում է սահմանափակվել բողոքներով: Եվ իրոք: Ադրբեյջանի ղեկավարությունը այսօր փորձում է «անօրինական» համարել ռուս-հայ դաշնագրությունը: Սեպտեմբերի 4-ին արդեն պաշտոնական Բաքուն բողոքի նոտա ուղարկեց Ռուսաստանին: Բողոքի այլք բարձրացավ նաև Թուրքիայում ու Ամերիկայի Միացյալ Նահանգներում, որոնք, ինչպես հայտնի է, ամեն կերպ պաշտպանում են Ադրբեյջանին:

Ճիշտ է, ԱՄՆ որոշ շրջաններում արտահայտվեցին նաև օբյեկտիվ, անկողմնակալ կարծիքներ: Այսպես, օրինակ, Լոս Անջելեսում լույս տեսնող «Կոնտակա» թերթում հրատարակվեց ուշադրության արժանի մի հոդված, որը պատկանում է Վիտալի Լիսովսկու զրչին: Այդտեղ ասված է, որ հայ-ռուս բարեկամության ու համագործակցության պայմանագիրը ջերմ ընդունելություն գտավ հասարակության լայն խավերում, որ այն անկասկած զգալի հաջողություն է Հայաստանի համար («Ռեսպուբլիկա Արմենիա», 1997, № 198): Այս բնույթի հոդվածներ տպագրվեցին նաև ամերիկահայ մամուլում: Բայց ԱՄՆ-ի պաշտոնական շրջանները, որ հայտնի պատճառներով ակնհայտորեն պաշտպան են կանգնում Ադրբեյջանին, դժգոհ են մոսկովյան պայմանագրից: Ինչպես մի շարք այլ կարևոր, այնպես նաև այս հարցում համընկնում են ամերիկյան ու թուրքական պաշտոնական շրջանների շահերը: Ակնհայտ է, որ թե՛ ԱՄՆ և թե՛ թուրքական պետությունը աշխատում են Ռուսաստանին դուրս մղել Կովկասից և այնտեղ հաստատել իրենց գերիշխանությունը, մի ծրագիր, որի իրականացումը կատաստրոֆիկ նշանակություն կունենա մեր ժողովրդի համար:

Ի դեպ, Կովկասը Ռուսաստանից անջատելու գաղափարը նոր չէ: XVIII դարի երկրորդ կեսին, օրինակ, օսմանյան պետությունը և՛ բացահայտորեն, և՛ գաղտնի ձևով մեծ ջանքեր է գործադրել վերականգնելու իր տիրապետությունը այնտեղ: Բնորոշ է, որ իր այդ նպատակն իրականացնելու համար սուլթան Համիդ առաջինը 1784 թ. հատուկ հիքմանով կոչ էր անում Կովկասի մահմեդական լեռնականներին ուղբի ելնել Ռուսաստանի դեմ: Նույն քաղաքականությունը օսմանյան սուլթանները վարեցին նաև հետագայում, և միշտ այն ժամանակ, երբ Ռուսաստանը դանդում էր ռազմաքաղաքական ծանր վիճակում: Գրեթե անխաբար այսօր էլ ստեղծվել է նման դրություն: Օգտվելով Ռուսաստանի ներկա վիճակից՝ թուրքական որոշ ուժեր, հենվելով իր դաշնակից ԱՄՆ-ի վրա, փորձում են նորից գավթել Կովկասը:

Հայ ժողովրդական լայն զանգվածները իրավացիորեն կարևոր նշանակություն են տալիս Մոսկվայում կնքված ռուս-հայ բարեկամության և ռազմաքաղաքական պայմանագրին, դաշինք, որն ինչպես արդեն նշեցինք, դրական մեծ դեր կխաղա Հայաստանի ու Ղարաբաղի թե՛ ներկայի և թե՛ ապագայի համար: Ավելորդ չէ նկատել, որ այդ նոր դաշինքը զգալի շափով դրական նշանակություն կունենա նաև ամբողջ Կովկասի ապահովության համար, քանի որ, ինչպես հայտնի է, այսօր էլ մի շարք ազրեսիվ պետություններ ձգտում են Ռուսաստանից անջատել Կովկասը և այնտեղ հաստատել իրենց գերիշխանությունը:

ԱՐԺԵՔԱՎՈՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ  
ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՄԱՍԻՆ

Վերջերս (1990 թ.) երևանում լույս տեսավ սփյուռքահայ անվանի մտավորական Անդրանիկ Զելեպյանի «Զորավար Անդրանիկ և հայ հեղափոխական շարժումը» ծավալուն աշխատությունը, որը 1984 թ. հրատարակվել էր ԱՄՆ-ում: Գրքի հեղինակը հանգամանորեն լուսաբանում է նշանավոր հայդուկ և տաղանդավոր զորավար Անդրանիկի փառավոր կյանքի ու հայրենասիրական գործունեության ամբողջական պատմությունը: Լայնորեն օգտագործելով խնդրին վերաբերող հայ ու անգլիական գրականությունը նա կարողացել է պատկերել «հայ Գարիբալդու» հերոսական կերպարը: Նկատենք, որ օգտագործված են ոչ միայն զբոսայգիներ, ուսումնասիրություններ, այլև պարբերական մամուլում՝ հանդեսներում ու լրագրերում հրատարակված բազմաթիվ ու բազմատեսակ հոդվածներ, հուշեր և այլևայլ նյութեր:

Աշխատության հեղինակը հարկ եղած մանրամասնությամբ կանգ է առել Անդրանիկ Օզանյանի ինչպես 1890-ական թթ. ֆիզիկական, այնպես էլ XX դարի առաջին երկու տասնամյակների ռազմահրամանատարական գործունեության վրա: Հատկապես հետաքրքիր են գրքի այն էջերը, որոնցում խոսվում է զորավար Անդրանիկի 1914—1918 թթ. զինվորական գործունեության մասին: Այդ ժամանակաշրջանի վերաբերյալ գրքում բերված են կարևոր տեղեկություններ, ճշգրտված ու վերագնահատված են շատ փաստեր:

Աշխատության մեջ միաժամանակ ցույց է տրված, որ զորավար Անդրանիկը քանիցս հանդես է բերել ավելի իրատես ու ճիշտ քաղաքական մտածողություն, քան համբավ ունեցող շատ քաղաքագետներ: Այդ ակնհայտ դարձավ մասնավորապես ազգայնամոլ երիտթուրքերի հետ հայ ազգային կուսակցությունների վարած «բարեկամական» բանակցությունների ժամանակ: Անդրանիկը հաճախ զգուշացնում էր, որ չպետք է հավատ ընծայել այդ թուրք ռասիստներին, քանի որ նրանք ստախոս են ու խաբեբա: Հիմնավորելով հեռատես մեծ հայրենասերի այդ

տեսակետը՝ Զելեպյանը միաժամանակ հերքում է այն անհիմն մեղադրանքները, որ ժամանակին որոշ աշատու մարդկանց կողմից առաջ քաշվեցին ազնիվ ու քաջարի հայդուկի ու զորավարի նկատմամբ:

Հայտնի է, որ Անդրանիկը 1919 թ. թողեց հայրենիքն ու անցավ արտասահման: Զելեպյանը բացատրում է դրա պատճառները և առաջ խոսում այն մասին, թե զորավարը ինչքան ջանքեր է գործադրել, որպեսզի օգնի Կիլիկիայում գործող հայրենասերներին ու խիստ ծանր վիճակում գտնվող հարյուր-հազարավոր հայ գաղթականներին: Հիշատակության արժանի է հատկապես այն, որ եթե Անդրանիկին չհաջողվեց զնալ Կիլիկիա՝ այնտեղ մտանակցելու հայերի ազատագրական պայքարին, ապա դրա գլխավոր պատճառը ֆրանսիական պաշտոնական անձանց արգելքն էր: Քննարկվող գրքում խոսվում է տաղանդավոր զորավարի կողմից 1920—1927 թթ. արտասահմանում ծավալած գործունեության և այն մասին, թե Անդրանիկը ինչպիսի բարյացակամությամբ ու հույսով ընդունեց խորհրդային կարգերի հաստատումը Հայաստանում: Յլսպիսով, աշխատության հեղինակին հաջողվել է նոր փաստերով ու տվյալներով հիմնավորապես հաստատել պատմական այն ճշմարտությունը, որ Անդրանիկ Օզանյանը իսկապես մեր ազգային հերոսն է, հայ ազգային-ազատագրական պայքարի ակնաավոր ներկայացուցիչներից մեկը:

Զելեպյանի մոտ 700 էջից բաղկացած այս հատորի զգալի մասը նվիրված է արևմտահայերի՝ օսմանյան բռնապետության դեմ ուղղված ազատագրական շարժման հարցերին, շարժում, որը ծավալեց XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբներին: Վճռականորեն մերժելով հայ հետադեմ, ապազգայնացված տարրերի և Բ. Դոսանը զանազան ծառայություններ մատուցող Կ. Պոլսի հայ էֆենդիների պնդումներն այն մասին, թե իբր արևմտահայերի ազատագրական պայքարը օտար ուժերի և անպատասխանատու մարդկանց հրահրման արդյունքն է, Զելեպյանը, համաձայնվելով անցյալի ու ներկայի մեր մի շարք պատմաբանների հետ, հարուստ նյութերի հիման վրա ցույց է տալիս, որ արևմտահայերի ազատագրական պայքարի իսկական պատճառը եղել են Թուրքիայում տիրող բարբարոսական ուժերը, ազգային բիրտ ճնշումները և սոցիալական դաժան հարստահարությունները: Գրքի հեղինակը պաշտպանում է այն կարծիքը, որ հայերի ազատագրական շարժումը հիմնականում ունեցել է ինքնապաշտպանական բնույթ, որ այն եղել է ժողովրդական, արդարացի ու բնական: Մենք հասուկ ընդգծում ենք այս եզրակացությունը, քանի որ պատմության ինչպես թուրք, այնպես էլ հատուկենտ ալլազգի կեղծարարները այսօր, մեր օրերում ևս շարունակում են իրենց սևամեջ հակազիտական քարոզները:

Աշխատության հեղինակ Չելեպյանը կտրակաեապես մերժում է նաև այն տեսակետը, թե իբր 1915 թ. Մեծ եղեռնը տեղի չէր ունենա, եթե հայերը Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ շոգնեին Ռուսաստանին, շխալակերպեին կամավորական զնդեր ուսական բանակում, եթե շղթաներն ապստամբություններին: Զարմանալի է, որ այս արտառոց կարծիքը երբեմն տարածում են բացարձակ տգետ հայ մարդիկ, որոնք դանազան նկատառումներով կուրորեն կրկնում են թուրք կեղծարարների հնարած առասպելները: Մինչդեռ պատմաբան մասնագետներին քաջ հայտնի է, որ 1915—1916 թթ. ցեղասպանությունը պանթուրքիստների վաղուց ի վեր մշակած ծրագիրն էր, ծրագիր, որը հաստատվեց երիտթուրքերի՝ Սալուսիկում 1910—1911 թթ. կայացած պաղատնի խորհրդակցություններում ու համագումարում:

Խոսելով Արևելյան Հայաստանում 1918—1920 թթ. ստեղծված քաղաքական իրադրության մասին՝ աշխատության հեղինակը իրավաբանորեն նշում է այն հանգամանքը, որ Առաջին հանրապետության ղեկավարներից շատերը 1920 թ. թույլ տվեցին կոպիտ սխալներ, որոնց հետևանքով երկիրը կանգնեց մեծ արհավիրքի առաջ: Փոխանակ կողմնորոշվելու դեպի Ռուսաստանը և նրա հետ հաստատելու բարեկամական հարաբերություններ, նրանք, անտեսելով հայ-ուսական հարաբերությունների դարավոր արդյունավետ ավանդույթները, թեքվեցին դեպի Թուրքիան՝ նրան դիտելով որպես իրենց բարեկամն ու հովանավորը: Զարմանալի քաղաքական կուրություն, որը փաստորեն նշանակում էր հայ ժողովրդի կենսական շահերի դավաճանություն: Այս կապակցությամբ Չելեպյանը գրում է. «Հայաստանի հանրապետության ղեկավարները փաստորեն նախընտրեցին մնալ իշխանության զուլխ և կառչել իրենց նախարարական խարխլած աթոռներուն, քան չօն զիջել իշխանությունը սովետներուն, և փրկել ամենն կարևորը՝ հողը: Վրացյաններու ու խատիսյաններու հետ բաղդատած, որքան ավելի իմաստուն և իրատես էին XIX դարու քաղաքական հսկաները՝ Խաչատուր Աբովյանը, Միքայել Նալբանդյանը, Ռաֆայել Պատկանյանը (Գամառ-Քաթիպա), Մեծն Բաֆֆին, Գրիգոր Արծրունին, Մկրտիչ Պեղիկյանը և ուրիշներ, որոնք բոլորն ալ հայ ժողովրդի փրկությունը կը տեսնեին ուսական արևելումին [օրինակագրի] մեջ»: Զի կարելի չհամաձայնվել այս եզրակացություն հետ:

Հրապարակելով հարուստ նյութեր ու տվյալներ, վերլուծելով մեր ժողովրդի ողբերգական ու հերոսական պատմության շատ էջեր՝ Չելեպյանը գալիս է այն ճիշտ եզրակացության, որ հակառակ եվրոպական մի շարք պետությունների՝ մասնավորապես Գերմանիայի ու Անգլիայի

հակահայ քաղաքականությունը, Ռուսաստանը առաջադիմական դեր է խաղացել հայ ժողովրդի նոր պատմության մեջ: Ճիշտ է, ցարական կառավարությունը, լինելով բռնապետություն, վարել է գաղութային, ազգային ճնշումների քաղաքականություն, դեմ է եղել հայ ազգային պետականություն ստեղծելու գաղափարին, բայց չնայած այդ բոլորին նա միշտ էլ կանգնած է եղել հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը պահպանելու ու ապահովելու դիրքերում: Այդ են թելագրել նրա արտաքին քաղաքականության շահերը: Պատահական չէ այն, որ մեր իմաստուն և իրատես նախնիները, սկսած Իսրայել Օրուց ու Հովսեփ Էմինից մինչև Կոմիտաս, Գրիգոր Զոհրապ, Հովհաննես Թումանյան, Անդրանիկ զորավար և Վիլյամ Սարոյան, ունեցել են ուսական կողմնորոշում: Ի դեպ, աշխատության մեջ բերված են ամերիկահայ ակադեմիկոս զոր, մեծ հայրենասեր Սարոյանի հետևյալ խոսքերը, որոնք հետաքրքիր և ուսանելի են. «...Մեզ համար մեծ բախտ է, որ մեզ գորավիզ է ուս ժողովուրդը: Մենք չենք կարող գոյատևել առանց զորավոր պաշտպանության, իսկ դա Սովետական Միությունն է... Ռուսները մեր եղբայրներն են, մեր բարեկամները»:

Չելեպյանի մեծածավալ գրքում քննարկվում են նաև այլ հարցեր ու խնդիրներ: Այսպես, օրինակ, այնտեղ խոսվում է Հայկական հարցի ծագման, Սան Ստեֆանոյի նախնական պայմանագրի, Բեռլինի վեհաժողովի, հայ ազատագրական շարժման գաղափարախոսության, հայ ազգային կուսակցությունների ստեղծման, նշանավոր ֆիդայիներ Ալբյուր Սերոբի, Գեորգ Զաուրի, Սեբաստացի Մուրադի և ուրիշների անձնադրոս պայքարի, 1890-ական թթ. և հետագա ժամանակաշրջանների հայկական կոտորածների, ապա նաև Հայաստանում ու Անդրկովկասում 1917—1918 թթ. տեղի ունեցած ռազմական գործողությունների, քաղաքական անցքերի և այլ կարևոր հարցերի մասին, հարցեր ու խնդիրներ, որոնք մեծ հնչեղություն ունեն մեր օրերում:

Նրկու դիտողություն: Առաջին. իր աշխատության մեջ Չելեպյանը քանիցս վկայակոչում է մեր ականավոր, բազմավաստակ ու մեծատաղանդ պատմաբան կեռիկ (Առաքել Բաբախանյանի) աշխատությունները՝ նվիրված հայ ժողովրդի XIX—XX դարերի պատմությանը: Բայց պետք է նշվեր, որ դրանք միանշանակ չեն: Պատմաբանի այն ուսումնասիրությունները, որոնք գրված են մինչ 1920-ական թվականները, այսինքն՝ մինչ Հայաստանի խորհրդայնացումը, գրված են գիտական բարձր մակարդակով և ունեն մեծ արժեք, իսկ այն աշխատությունները, որոնք հրատարակվեցին խորհրդային շրջանում, իրենց վրա կրում են ուս պատմաբան Նիկոլայ Պոկրովսկու ստեղծած պատմագիտական դպրոցի

Վուլգար-սոցիոլոգիական դոգմաների ազդեցությունը: Դրանց թվին են պատկանում հատկապես «Անցյալից», «Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը» և մի շարք այլ գրքեր ու հոդվածներ: Կարծում եմ՝ Չելեպյանի աշխատությունը շատ կշահեր, եթե նրանում անհրաժեշտ քննադատության ենթարկվեին: այդ գրքերում արտահայտված սխալ ու անընդունելի տեսակետները: Բանն այն է, որ Լեոյի հակազդեցական այդ հայացքները լայն տարածում են գտել ոչ միայն անցյալ տասնամյակներում, այլ նաև մեր օրերում: Ավելորդ չեմ համարում հիշել, որ իր կյանքի վերջին տարիներին ստեղծած այդ աշխատություններում Լեոն գրում էր, թե սովորական բռնապետության դեմ ուղղված հայ ազատագրական շարժումը արհեստական էր ու վնասակար, չէր բխում արևմտահայերի շահերից, որ հայ ազգային կուսակցությունները (Հնչակյան ու Գաշակյան) վարել են ազգակործան քաղաքականություն, որ 1914 թ. կազմակերպված հայ կամավորական շարժումը էլատարյալ սճրագործություն էր և այլն, և այլն: Խիստ բնորոշ է օրինակ, որ իր մինչևտրոհադային շրջանի շատ աշխատություններում Լեոն Խորալյի Թրուն համարել է հայ ազատագրական շարժման փայլուն ներգայացուցիչ, իսկ հետո՝ 1920-ական թթ. գրում էր, թե նա եղել է արկածախնդիր գործիչ:

Երկրորդ դիտողությունս. Չելեպյանի գրքում մեծ տեղ է տրված լրագրային նյութերին: Յանկալի էր, որ ավելի շատ օգտագործվեին դիտական լուրջ ուսումնասիրություններ, օրինակ, ասենք, պատմական գիտությունների դոկտոր, գեղապետ Աշուտ Հարությունյանի հրատարակած գիրքը՝ նվիրված Առաջին համաշխարհային պատերազմի կովկասյան ռազմաճակատին: Իր այս արժեքավոր գրքում Հարությունյանին հաջողվել է հերքել հակառուս արամադրություններ ունեցող մի շարք անձանց փորձերը՝ ազգավաղելու այդ տարիների հայ-ռուսական հարաբերությունների պատմությունը: Իերենք մի օրինակ: Ժամանակին արտահայտվել են կարծիքներ, որ ռուսական կովկասյան զորքերի շարժումը բանակի 1915 թ. ամռանը հայտնի նահանջը, իբր, նպատակ է ունեցել կոտորել արևմտահայերին թուրքերի ձեռքով (նման տեսակետ ոմանք բարոգում են նաև այսօր): Այս արտառոց զրպարտությունը հիմնավորապես հերքում է Ա. Հարությունյանը:

Անդրանիկ Չելեպյանին հաջողվել է երկար տարիների համառ ու քրտնաջան աշխատանքի շնորհիվ ստեղծել պատմագիտական արժեքավոր աշխատություն, որը մեծ հաճույքով կկարդան ինչպես պատմաբան մասնագետները, այնպես էլ մասսայական ընթերցողը:

## ԹՈՒՐԿ ՊԱՏՄԱԲԱՆԻ ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՐՈՁՆԵՐԸ

1938 թ. Ստամբուլում լույս տեսավ թուրք պատմաբան էսաթ Ուրասի «Հայերը պատմության մեջ և Հայկական Հարցը» խորագիրը կրող աշխատությունը անգլերեն լեզվով<sup>1</sup>: Ինչպես իր մյուս գրվածքներում, այնպես էլ 1048 էջից բաղկացած այս հաստատոր հատորում Ուրասը նենդափոխում է հայ-թուրքական հարաբերությունների դարավոր պատմությունը և շարամտորեն զրպարտում հայ ժողովրդին: Շատ առումներով արտառոց այս գիրքը խիստ քննադատության ենթարկեց անդ-ժիացի անվանի պատմաբան Ուոլքեր Քրիստոֆերը: Հանդես գալով «Journal of the Royal Asiatic Society» հայտնի պարբերականի 1991 թ. 1-ին համարում, նա բացահայտեց նշված աշխատության հակադիտական էությունը, ծայրահեղ միտումնավորությունը և այն իրողությունը, որ գրքի հեղինակը ազավաղում ու կեղծում է պատմական փաստերը:

Իր գրախոսականի սկզբում Ուոլքերը հարկ է համարել ընթերցողին աշխատությունը հրավիրել այն կարևոր հանգամանքի վրա, որ էսաթ Ուրասի աշխատությունն ամենայն հավանականությամբ ոչ թե «ազատ վաճառքի օրենքներով աշխարհ եկած հրատարակություն է, այլ իշխանությունների պաշտոնական նախաձեռնության ծնունդ»<sup>2</sup>:

Անդրադառնալով Ուրասի աշխատության ընդհանուր գնահատականին՝ անգլիացի պատմաբանը գրում է. «Աշխատությունն ամբողջովին նվիրված է անբարեհավատության յուրաքանչյուր այն հայի նկատմամբ, որը համարձակվել է որևէ բան ասել կամ անել, բացի իր թուրք «տերերին» լիակատար հարգանքներ մատուցելուց: Անտեսված են մշակույթը և զրականությունը, ինչպես և սրանցից գրեթե անխուսափելիորեն ծնունդ առնող ազգային ինքնագիտակցությունը: Գրքի այսպիսի տոնը

<sup>1</sup> Esat Uras. The Armenians in History and the Armenian question. Istanbul, 1938.

<sup>2</sup> Ուոլքերի գրախոսության հայերեն թարգմանությունը, որ կատարել է պատմաբան Արմեն Ալվազյանը, տպագրվել է «Փյունիկ»-ի 1991 թ. № 11-ում, որից և օգտվում եմ:

և բովանդակությունը հասկանալու համար, թերևս, բանալի կարող է լինել մի նախադասություն թուրքերեն հրատարակության առաջաբանից, որն անգլիերեն թարգմանությունից գուրս է հանված, բայց որի նշանակությունը, զիրքն ընթերցելուն զուգընթաց, ավելի է հասկացվում: Բնագրում այս նախադասությունը գրված է եղել մեծատառերով. «Ամենից կարևոր և անհրաժեշտ եմ համարում ընդգծել այն, որ Հայաստանը չի կարող լինել որևէ այլ բան, քան աշխարհագրության վրա հիմնված հասարակ հիշողություն, տարածքն՝ առանց քաղաքական սահմանների: Սա, հավանորեն, Ուրասի գլխավոր գրույթն է, գուցե և ամբողջ գրքի միակ անկեղծ գաղափարը»:

Փորձելով արատավորել հայոց լեզուն՝ ազգայնամոլ էսաթ Ուրասը գրում է, որ հայերեն շատ բաներ ունեն թուրքական ծագում: Ավելին: «Նույնիսկ այսօր, — ավելացնում է նա, — կարելի է բաժանել ութ տարբեր բարբառների, որոնք մեծ մասամբ ազավազված են բացարձակորեն անհամատեղելի»: Այս կապակցությամբ Քրիստոֆեր Ուոլբերը նկատում է, որ Ուրասի այս փորձերն անկասկած կապված են թուրքերեն աշխատության առաջաբանում «տեղ գտած գլխավոր գաղափարի հետ՝ ջջել հայ ազգի ինքնակամ գոյության մասին որևէ միտք»: Ետևելով հայ ժողովրդի ծագման և հարակից հարցերի մասին՝ Ուրասը բոլորովին անտեսում է ականավոր գիտնականներ Վ. Իվանովի, Բ. Դիակոնովի, Թ. Գամկրելիձիի և ուրիշների ուսումնասիրությունները:

է. Ուրասը ոչինչ չի գրում այն մասին, որ հայերը, ինչպես նաև թուրքական տիրապետության տակ գտնվող բոլոր ոչ թուրք ժողովուրդները, միշտ ենթարկվել են դաժան ճնշումների ու կեղեքումների: Ընդհակառակը, նա կրկնում է այն առասպելը, որ իբր հայերը «օսմանյան պայծառ, վառվռուն ու հեքիաթալին աշխարհում» ունեցել են բարեկեցիկ կյանք:

Հավատարիմ իր էությունը Ուրասը վճռականորեն միտում է արևմրտահայության ինչպես 1890-ական, այնպես էլ 1915—1916 թթ. ցեղասպանությունները: Այդ հարցի վերաբերյալ տարբեր երկրներում և տարբեր լեզուներով սակզված հարուստ գրականությունը նա համարում է սխալ ու միտումնավոր:

Քրիստոֆեր Ուոլբերի գրախոսականում բացահայտված է էսաթ Ուրասի գրքի կեղծարարության միայն մի մասը: Ուստի հարկ ենք համարում շարունակել անգլիացի պատմաբանի շնորհակալ աշխատանքը և խոսել Ուրասի մի քանի այլ կեղծարարությունների ու խարդախությունների մասին:

Թուրք պատմաբանը, իր գրքին լուրջ կերպարանք տալու նպատակով, հաճախ քաղվածքներ է բերում արևմտյան, մասնավորապես անգլիական, հայատալաց թուրքոֆիլ հեղինակներից: Բայց համառորեն անտեսում է, օրինակ, այնպիսի ազնիվ և բարեխիղճ գիտնականների, ինչպիսիք էին՝ լորդ Ջեյմս Բրայսը, էմիլ Դիլլոնը, Ծ. Բլիսը, Ֆ. Գրինը, Ա. Ռոյբլեն, Հ. Մորդենթաուն և ուրիշներ, որոնք իրենց աշխատություններում ցույց են տվել, թե ինչպիսի ճնշումների, կեղեքումների ու մասսայական կոտորածների են ենթարկվել հայերը Օսմանյան կայսրության մեջ: Նույն ձևով ռասիստ թուրք «պատմաբանը» բոլորովին անտեսում է նաև զերմանացի ականավոր հումանիստ Ֆոհանենս Կեփսիուսին, Արմին Վեգներին և մյուսներին, որոնց հրապարակած անհերքելի պաշտոնական փաստաթղթերը ոչ մի կասկած չեն թողնում թուրքական իշխանությունների կողմից 1915—1916 թթ. իրականացված հայերի ցեղասպանության մասին: Այսպիսով, արհամարհվում են հայ ժողովրդի ծանր ողբերգությունը նվիրված բազմաթիվ գիտական ուսումնասիրությունները:

Ուրասը հաճախ քաղվածքներ է բերում նաև հայ հեղինակներից, բայց աղավաղում է նրանց մտքերը, թույլ է տալիս այլ խարդախություններ: Եթե հավատանք կեղծարարին, ապա կստացվի այն, որ հայ հեղինակները ևս համաձայն են թուրք զրպարուշի հետ: Անհեթեթ եզրակացություն:

Ի դեպ, քննարկվող գրքի մի բաժինը գրել է դոկտորի կոչում ունեցող ոմն Չենգիզ Քյուրշատը, որի կեղծարարությունը շունի ոչ մի սահմանա կոտեժով հայ հաբեկիչների մասին՝ Քյուրշատը հորինում է ծիծաղելի առասպելներ և վճռականորեն մերժում է այն փաստը, որ հայերը ենթարկվել են տեղահանումների ու ցեղասպանության: Չմոռանանք և կատի, որ Քյուրշատը իր վայրիվերո մտքերը շարադրում է խառնիխառն ձևով, անհաշող դպրոցական աշակերտի նման:

Ամեն կերպ փառաբանելով օսմանյան պետությունը էսաթ Ուրասը «մոռանում է» գրել այն մասին, թե ինչպիսի բարբարոսությունների ու գաղաճությունների են ենթարկվել ոչ թուրք ժողովուրդները նրա կողմից: Բայց, ահա տեսնենք, թե ինչ է գրել, օրինակ, թուրք հայտնի պատմագիր Փեչևի Իբրահիմը օսմանյան բանակի՝ դեպի Անդրկովկաս ու Իրան 1563 թ. կատարած արշավանքի մասին: Իր «Թարիհի Փեչևի» հայտնի գրքում նա գրում է, որ թուրքական զորքերը նախ գրավեցին Շորաչյալը (Շիրակը). «Այս երկիրը շատ բարեշեն է եղել, ունեցել է մշակված հողերով հարուստ բազմաթիվ դուռեր: Երկիրը լեռնային է: Հաղթական բանակը քանդեց ու ավերեց նրա բարեշեն գյուղերը. շի-

նությունները ոչնչացրեց և հողին հավասարեցրեց»։ Այնտեղից բանակը շարժվեց դեպի Շարաբխանե կոչված վայրը, այնուհետև Նիլ-Ֆրանկ կոչված մենզիլը և ապա՝ Նրևան քաղաքը, որտեղ ամեն ինչ այրեցին և հողին հավասարեցրին։

Օսմանյան զորքերը, շարունակում է պատմիչը, 27-րդ օրը «հասան Նախիջևանի դաշտը։ Հաղթական բանակի սարսափից քաղաքներն ու գյուղերը, տներն ու բնակավայրերը այն աստիճան ամայացել, ավերվել և բուերի ու ագռավների բնակավայր էին դարձել, որ սեանողներին սարսափ էին պատճառում։ Որսի և ավարի ծարավ «աթ-օղլանները» և այլ զինվորներ հարձակվեցին շահի և նրա որդու պալատների և բնակավայրերի վրա, կողոպտեցին թաքցրած հարստությունները, ավերեցին, քանդեցին, քարը քարի վրա շթողին։ Բացի այդ. 4—5 օրվա տարածության վրա գտնվող ճանապարհի բոլոր գյուղերն ու ավանները, դաշտերն ու շինությունները այն աստիճան քանդեցին ու ավերեցին, որ շինության և կենդանության հետքն անգամ չմնաց։ Աջեմի երկրում մեր բանակը ամբողջ ժամանակ հաղթող և տիրապետող հանդիսացավ։ Սպանված ու վիրավորված կրքերաշէների [պարսիկների] քանակը հայտնի է միայն բարձրլի Աստծուն։ Բացի այդ՝ անսահման էր նաև թալանված ու կողոպտված բազմատեսակ թանկագին ապրանքների քանակը»։ Շատ մեծ էր գերի վերցված «տղաների, նորահաս և վարդանման երես ունեցող քնքուշ ու մատղաշ աղջիկների» թիվը<sup>3</sup>։

Նույնանման տեղեկություններ է հայտնում նաև XVII դարի թուրք պատմիչ, տարեգիր Նալիման։ 1635 թ., գրում է նա, երբ սուլթան Մուրադ Չորրորդը զբաղվեց Արևելյան Հայաստանը և Իրանի մի զգալի մասը, ամենուրեք կատարելով անօրինակ շարագործություններ, Երևանում տեղի են ունենում դաժան կոտորածներ ու մեծ ավերածություններ։ Ի դեպ, նույնը կատարվում է նաև Իրանում։ Այստեղ ևս, գրում է պատմիչը, իսլամական բանակը «պատահած բերդերն ու ամրոցները քանդելով, այգիներն ու պտղատու ծառերը կտրատելով և ձեռքն անցած կրքերաշներին սպանելով շարունակում է ճանապարհը։ Այսպես էր վարվում նաև Խոյ և այլ քաղաքներում՝ մինչև Թավրիզ հասնելը։ Փաղիշահը հրամայում է քանդել և կործանել շահի պալատը և քաղաքը։ Իսլամական զինվորները Թավրիզի բարձրագիշ շենքերը, բարեշեն ու գեղեցիկ սրալատները քանդում են»։ Պատահական չէ, որ թուրք

պատմիչները նշում են, որ սուլթան Մուրադը ոչ միայն դաժան էր տարչունարբու, այլև ուներ քանդելու, այրելու և ոչնչացնելու մեծ ցանկություն<sup>4</sup>։ Այսպիսիք էին էսաթ Ուրասի կողմից գովաբանված գրեթե բոլոր թուրք սուլթանները։

Բարբարոսությունները իհարկե շարունակվեցին նաև հետագայում։ Եվրոպացի ճանապարհորդներից մեկի վկայությամբ Դիարբեքիբի կառավարիչ Արիֆի Ահմեդ փաշան, որին օսմանյան արքունիքը նշանակեց էր սերասքեր, 1724 թ. հունիսի 26-ին անցնելով Արաքսը, «35 հազարանոց բանակով մտավ Երևանի նահանգ։ Դժվար է խոսել այս ներխուժման հետևանքով կատարված գազանությունների և այլ ոճրագործությունների մասին. ճանապարհին գտնված բոլոր գյուղերն ու ավանները կողոպուտի ենթարկեցին։ Ինչպես մեկ, այնպես էլ մյուս սեռից վերցված գերիների թիվը մեծ էր, էջմիածնի կաթողիկոսի՝ Պարսկաստանի հայերին ուղղված նամակներում հայերից գերյալների թիվը հաշվում էր մինչև 30 հազար»<sup>5</sup>։

Ինչպես ասացինք, նման և բազմաթիվ այլ փաստերի մասին էսաթ Ուրասը լուծ է, զբանով իսկ ցույց տալով իր գիտական անբարեխղճությունը։ Հարկ է այստեղ նշել այն իրողությունը, որ հայ ժողովրդական զանգվածները հաճախ համառ դիմադրություն և հերոսական կռիվներ են մղել թուրք նվաճողների դեմ։ Հայտնի է, թե ինչպիսի ոսպնական սխրանքներ գործեցին հայկական զինված ուժերը։ Նրանք ոչ միայն ծանր կորուստներ պատճառեցին թշնամուն, այլև փալլուն հաղթանակներից հետո ստեղծեցին հայկական ինքնավար իշխանությունը Դավիթ-Բեկի ղեկավարությամբ։

Է. Ուրասի գրքում բազմաթիվ էջեր են նվիրված Թուրքիայում XIX դարում տեղի ունեցած ռեֆորմիստական (թանգիմաթի) շարժմանը։ Մանրամասնորեն կանգ առնելով այդ ինդրի վրա հեղինակը աշխատում է ցույց տալ, որ իբր իրականացված մի շարք բարենորոգումների հետևանքով կատարվեցին մեծ տեղաշարժեր և առաջին հերթին կարգավորվեցին, հավասարվեցին մուսուլմանների ու քրիստոնյաների հարաբերությունները, վերացան վերջիններիս նկատմամբ եղած ճնշումներն ու հարստահարությունները։ Բայց ո՞ւմ հայտնի չէ, որ այս բոլորը մնացին որպես դատարկ խոսակցություններ, որ բոլոր «նոր օրենքները» մնացին միայն թղթի վրա, ու շարունակվեցին զանգվածային

<sup>3</sup> «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովրդի մասին». հ. Ա. կազմեց Ա. Խ. Սաֆրաստյանը, Երևան, 1961, էջ 33, 34։

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 108։

<sup>5</sup> Տե՛ս Մ. Կ. Զուլյալյան, Հայ ժողովրդի XIII—XVIII դարերի պատմություն. հարցերը ըստ եվրոպացի հեղինակների. դիրք Ա, Երևան, 1990, էջ 202։

կատորածները: Ահա մի քանի փաստ: Քուրք շարդարանները 1822 թ. կիրոս կղզում սպանեցին 50000 հույն, 1850 թ.<sup>6</sup> 12000 հայ ու նեատորյան, 1850 թ.<sup>6</sup> 11000 մարտիաներ, 1876 թ.<sup>6</sup> 15000 բուլղարացիներ, 1892 թ.<sup>6</sup> 8000 եզդիներ, 1894—1896 թթ.<sup>6</sup> 300000 հայ և այլն<sup>6</sup>: Այս մասին Քուրք պատմաբանը, Էհարկե, նորից լուծում է:

Էնաթ Ուրասի գրքում քննարկվում են նաև հայ ժողովրդի հին պատմությունից հարցերը: Այստեղ հեղինակի գլխավոր նպատակը այն է, որ ցույց առա, թե հայ ժողովուրդը զուրկ է եղել սեփական պետականությունից և միշտ էլ գտնվել է օտար պետությունների տիրապետություն տակ: Հայաստանի պատմությունը փաստորեն չի ընդունում հայ Արտաշեսյան, Արշակունիների, Բագրատունիների ու Կիլիկիայի Ռուբինյանների թագավորությունների գոյությունը:

Չմոռանանք նկատել, որ Ուրասի գիրքը աչքի է ընկնում տարօրինակ շարադրանքով: Խախտելով ժամանակադրական կարգը նա սկզբում խոսում է նոր, ապա հետո հին և միջին դարերի պատմության հարցերի մասին: Զարմանալի օրիգինալություն: Աշխատություն մեջ կարելի է գտնել հակասաբանական բազմաթիվ կարծիքներ ու տեսակետներ:

<sup>6</sup> Տե՛ս James H. Tashjian. Turkey: Author of Genocide, Boston, Massachusetts, 1965, p. 30.

## ՀԱՐՅԱԶՐՈՒՅՑ Մ. ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ՀԵՏ

1990 թ. լրացավ Հայաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, ՊԲՀ պարբերականի բազմամյա խմբագիր, պատմաբան Մ. Գ. Ներսիսյանի ծննդյան 80-ամյակը: Այդ կապակցությամբ ստորև տպագրում ենք հարցազրույց նրա հետ:

ՊԲՀ խմբ.

Հարց. Որպես պատմաբան ձեր գործունեությունը սկսել էք 1930-ական թթ.: Ի՞նչ կասեք այդ ժամանակաշրջանի պատմագիտության մասին:

Պատասխան. Հայտնի է, որ այդ տարիների խորհրդահայ պատմագիտության, ինչպես նաև հասարակական գիտությունների մյուս բնագավառներում իշխում էին գոհնիկ սոցիոլոգիկ մի ղոգմաները: Հայ ժողովրդի պատմության հարցերը հիմնականում, մեծ մասամբ լուսաբանվում էին ոչ թե գիտական գիրքերից, այլ ղեկավար պաշտոնական շքրջաններում բնութագրված որոշումների ոգով: Շատ դեպքերում արհամարհվում էին փաստերը, կարևորը զգոնությունը և քաղաքական-ներկուսակցական հաշիվներն էին: Առանձնապես նենգափոխվում էին Հ. Հ. Գաշնակցության պատմության հետ կապված հարցերը: Բնորոշ է, որ 1928 թ. ՀԿԿ Կենտկոմի պլենումի ընդունած հատուկ որոշմամբ դաշնակցություն կուսակցությունը համարվեց բուրժուա-նացիտախառնական, ինչնամական կուսակցություն: Հասկանալի է, որ այս պայմաններում դաշնակցության մասին գրող բոլոր հեղինակները միայն հայհոյում էին նրան: Գծբախտաբար ես ես տուրք ավելցի այդ ընդհանուր արամադրությունը: 20—24 տարեկան հասակում մեր օրթոդոքս ուսուցիչների ակղեցության տակ, նրանց ղեկավարությունում լույս ընծայվեցին իմ մի շարք զբվածքները, որոնցում կրկնվում էին օրհնքի ու ստացած հակադաշնակցական ղոգմաները: Պետք է նկատել, որ ես, ինչպես և այլ սկսնակներ, դեռևս աղոտ գաղափար ունենալով շատ հարցերի մասին, աղնվորեն հավատում էինք մեր գրածներին: Բայց իմ

ախարհը եւ հասկացա արդեն 30-ական թթ. վերջերին, որի հետեանքով դեռ այդ շրջանից դադարեցին զբաղվել Գաշնակցութուն կուսակցութեան պատմութեան հետ կապված հարցերով: Ինձ համար պարզ դարձավ, որ հնարավոր չէ ճշմարիտ խոսք ասել այդ կուսակցութեան մասին:

Հարկ է հիշել, որ պատմաբաններն ու բոլոր հայագետներն ընդհանրապես աշխատում էին մղձավանջային պայմաններում: Նրանք հաճախ ենթարկվում էին ջարդարար ստալինականների հարձակումներին ու հալածանքներին: Ահա մի բնորոշ օրինակ: 1931 թ. «Նոր ուղի» հանդեսի երկրորդ համարում հրատարակվեց կուսակցական ղեկավար աշխատող Ադո Ադոյանի «Հակալենինյան իդեոլոգիայի ոտնձգությունների դեմ» հոդվածը, ուր մեր նշանավոր շատ հայագետներ հայտարարվեցին մարքսիզմ-լենինիզմի թշնամիներ: Հոդվածի հեղինակը գրում էր. «Հայաստանի ինտելիգենցիայի որոշ մասը՝ հանձինս հին և նոր պրոֆեսուրայի մի քանի ներկայացուցիչների, ուղղակի ռեակցիոն, ըստ էության կոնդրատեյան, բացահայտ նացիոնալիստական-բուրժուական արշավ է սկսել մարքսիզմ-լենինիզմի դեմ» (էջ 113): Իր այս միտքը հիմնավորելու նպատակով հոդվածագիրը ծանր, բայց շինժու մեղադրանքներ էր առաջ քաշում, օրինակ, մեր այնպիսի խոշոր հայագետների հասցեին, ինչպիսիք էին՝ Հ. Մանանդյանը, Հր. Աճառյանը, Մ. Աբեղյանը և մյուսները: Բերենք մի քանի քաղվածք: «Պրոֆ. Մանանդյանի հին Հայաստանի պատմության ծրագիրն ամբողջապես կազմված է պատմության բուրժուական նացիոնալիստական կոնցեպցիայի հիման վրա: Էջմիածնական և դաշնակցական պատմագրության թեզերն այս ծրագրում փայլում են: Ծրագրում գլխավոր տեղը բռնում են ազգերի կոնֆլիկտը Հայաստանում, իսկ դասակարգերը և դասակարգային պայքարը շքացել են: Ակնհայտ է, որ պրոֆ. Մանանդյանի պատմական կոնցեպցիան չի կարող տեղ գտնել մեր ԲՈՒՀ-երում: Անհրաժեշտ է ծավալուն պայքար սկսել պատմության նացիոնալիստական դաշնակցական մեկնաբանության դեմ» (էջ 119):

Բոլորիս հայտնի Հր. Աճառյանի մասին ասված էր. «...Լեզվի տեսության դասատու Հ. Աճառյանը ամեն առիթով պաշտպանում էր ռեակցիոն մետաֆիզիկական և հարձակվում դիալեկտիկական մատերիալիզմի վրա: Եվ զարմանալին այն է, որ մինչև օրս էլ մեր ԲՈՒՀ-երի երիտասարդության դաստիարակությունը վստահում են բացահայտ իդեալիստ Աճառյանին... թե որ աստիճանի է հասնում բուրժուական ռեակցիոն այս իդեալիստի ատելությունը դեպի մարքսիզմը, այդ հանրահայտ է: Բայց ցավն այն է, որ մենք այս նացիոնալիստ-իդեալիստ Աճառյանների դեմ չենք ծավալել իսկական հեղափոխական պայքար:

Մի եզրակացություն կարող է լինել: Պետք է մաքրել մեր ԲՈՒՀ-երը Աճառյանի տիպի «գիտնականներից»: Վերջապես ժամանակն է, որ գործնական դիալեկտիկայի լեզվով խոսենք լեզվագետ իդեալիստների հետ» (էջ 122):

Քաղաքական ինչպիսի պրովոկացիա, ինչ ամբարտավանություն: Հայագիտության հետ կապ չունեցող հեղինակը Աճառյանին համարում է չակերտավոր գիտնական: Մ. Աբեղյանին տրվում էին «նացիոնալիստ» ու «հետեղական իդեալիստ» պիտակները: Նույն ոգով խոսվում էր Գ. Ղափանցյանի, Ա. Տերտերյանի և մյուսների մասին: Ադոյանի նմանների թիվը քիչ չէր: Կատարելով վերինների կամքն ու ցանկությունը, երբեմն էլնելով անհատական միտումներից՝ նրանք ահ ու սարսափի մեջ էին պահում մեր մտավորականությունը ու ամեն կերպ վարկաբեկում նրան:

Պատմաբանների, գրականագետների ու գրողների դեմ նոր, ավելի կազմակերպված գրոհ սկսվեց 1936—1937 թթ., այդ տարիներին, ինչպես հայտնի է, բանտարկվեցին հարյուրավոր ու հազարավոր անմեղ մարդիկ: Այսպիսի պարագաներում պարզ է, որ մեծապես տուժում էր իսկական պատմագիտությունը:

Հարց. Որքան ինձ հայտնի է, ստալինյան ռեժիմի ժամանակ Դուք եւ ենթարկվել եք հետապնդումների: Ի՞նչ կասեք այդ մասին:

Պատասխան. Կոնկրետ լինելու համար խոսեմ փաստերով, բերեմ մի քանի օրինակ: 1935 թ. լույս տեսավ «Նույնբերյան հեղափոխությունը Հայաստանում» իմ գրքույկը, որտեղ ես լայնորեն օգտագործել էի Ազատի Խանջյանի հոդվածները: Այդ և մի շարք «քաղաքական լուրջ սխալների» համար Խանջյանի հակառակորդները հարձակում սկսեցին նաև իմ գրքույկի դեմ: Պատմաբան Վ. Պարսամյանը Ստալինի ու Բերիայի անուններով ուղարկած իր նամակներում նրանց ուշադրությունը հրավիրեց այդ «բուրժուա-նացիոնալիստական» աշխատության վրա: Հարցը քննվեց ոչ միայն կուսակցական սկզբնական կազմակերպությունում, այլև շրջկոմում և անգամ Կենտկոմի պլենումում: Գաղափարական հարցերի մասին Կենտկոմի պլենումի ընդունած բանաձևի մեջ գրքույկը որակվեց որպես «նացիոնալ-ուկրոնիստական, սպեցիֆիկայն դիրքավորումներ պարունակող բրոշյուր» (տե՛ս «Նորհրդային Հայաստան», 1 փետրվարի 1936, № 25): Պլենումի բանաձևում միաժամանակ ասվում էր. «Կենտկոմի պլենումը պարտավորեցնում է կուսակցության քաղկոմներին ու շրջկոմներին հատուկ ուշադրություն նվիրել կուսակցության պատմության և ընկեր Բերիայի «Անդրկովկասի բոլշևիկյան

կազմակերպությունների պատմության հարցի շուրջը» գեկուցման հետագա ավելի խորն ուսումնասիրման հարցերին» (նույն տեղում):

Հարցին արձագանքեց նաև պարբերական մամուլը: «Նորհրդային Հայաստան» և «Коммунист» թերթերում տպագրվեց ԿԿ Կենտկոմի ազիտացիայի բաժնի վարիչ Լ. Արիսյանի ծավալուն հոդվածը, որն ուներ «Ներսիսյանի «Նույնմբերյան հեղափոխությունը Հայաստանում» գրքի շուրջը» վերնագիրը: Հոդվածագիրը նշում էր, որ Ներսիսյանը, հետևելով Ս. Կասյանին, Աշ. Հովհաննիսյանին և ուրիշներին, պրոպագանդում է սպեցիֆիկյան տեսակետներ: «Սպեցիֆիկ պատմաբաններն ստեղծել են մի ամբողջ գրականություն, որտեղ Հայաստանի հեղափոխական շարժումների և երկրում խորհրդային իշխանություն հաստատելու պատմությունը կտրված է Անդրկովկասի և Ռուսաստանի հեղափոխական շարժումների պատմությունից: Այդպես է վարվում նաև ընկեր Ներսիսյանը» («Նորհրդային Հայաստան», 26 հունվարի 1936, № 20): Հոդվածում մեղադրանք էր ներկայացվում այն մասին, որ գրքույկում «անտեսվում ու լուրջան է մատնվում... ընկերներ Լենինի և Ստալինի դեմ Անդրկովկասի ու Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների, հեղափոխական շարժումների ու աշխատանքի ղեկավարման գործում» (ընդգծումները մերն են—Մ. Ն.): Գրքույկի հրատարակությունը, եզրակացնում էր հոդվածագիրը, ցույց է տալիս, որ կուսակցական կազմակերպությունները «ղեկ ըստ կուսության շեն վերակառուցել իրենց աշխատանքը, ինչպես հարկն է շեն մտածել ընկեր Բերիայի գեկուցման վրա և իրենց մոտ անհրաժեշտ եզրակացություններ շեն արել: Գազալիս է կրկին հաստատելու, որ ղեկ թույլ է առանձին աշխատողների զգոնությունը և դրա շնորհիվ լենինիզմին խորթ ու թշնամի ազդեցությունները, ավյալ ղեպքում սպեցիֆիկյան դրույթները, հնարավորություն են ստանում թափանցելու մեր կուսակցական պատմական գրականության մեջ» (նույն տեղում):

Քանի ղեկ Ա. Խանջյանը զբաղեցնում էր Հայաստանի ԿԿ Կենտկոմի առաջին քարտուղարի պաշտոնը, գրքույկի բնագաղտությունն ուներ համեմատաբար «շափավոր» բնույթ: Բայց երբ 1936 թ. երկրորդ կեսին Խանջյանը հայտարարվեց «ժողովրդի թշնամի», ապա ստալինյան-բերիական էքստրեմիստները խիստ աշխուժացան, և մեղադրվեցի ամեն տեսակի հանցանքների մեջ: 1937 թ. հունիսին ինձ հեռացրին կուսակցությունից (կուս. թեկնածու էի): «Նորհրդային Հայաստան» թերթում հրատարակվեց Ա. Կ.-ի հոդվածը, ուր ասված էր. «Ներևանի կուսպատմության ինստիտուտի սկզբնական կուսկազմակերպության և քաղաքային ռազկոմի բլուրոյի որոշմամբ, կուսակցության շարքերից

վտարվեցին Գարեգին Սարգսյանը և Մկրտիչ Ներսիսյանը... Աշխատելով կուսպատմության ինստիտուտում Ներսիսյանը, կատարելով ժողովրդի բշնամի Խանջյանի պատվերը, չանացել է ամեն կերպ կեղծել, ֆալսիֆիկացիայի ենթակել Հայաստանի կուսակցական կազմակերպությունների ու ֆաղափացիական կոմիտեի պատմության վերաբերյալ փաստաթղթերը, բացահայտ հակահեղափոխական առե յկիստական դաշնակցական կոնտրաբանդ է անցկացրել «Նույնմբերյան հեղափոխությունը Հայաստանում» իր գրույկում, մի գրույկ, որ իր՝ Ներսիսյանի խոստովանությամբ, գրվել է Խանջյանի հանձնառուությամբ և նայվել ու վավերացվել է Խանջյանի կողմից և որն ըստ էության ուղղված էր կուսակցության պատմության մաբխիստական լենինյան լուսարանման դեմ... Կուսակցության մեջ սողոսկած Գ. Սարգսյանը և Մ. Ներսիսյանը, մաբխիստ պատմաբանի դիմակ հագած, յսցվելով կուսպատմության ինստիտուտը, Բիչ վնասներ շեն հասցրել մեբ գաղափարական հակառիպի կաբևորագույն տեղամասում: Հակահեղափոխական կոնտրաբանդ անցկացնելու հետ միասին նրանք դիտավորյալ կերպով ձգձգել և ձախողել են Հայաստանի ֆաղափացիական կոմիտեի և կուսակցական կազմակերպությունների պատմությանը նվիրված գիտական մաբխիստական գրականության հրատարակումը, սարոտած կազմակերպելով այդ օղղությամբ» (տե՛ս «Նորհրդային Հայաստան», 26 հունիսի 1937, № 144):

Հարդարարական բնույթի հոդվածներ լույս տեսան նաև մյուս թերթերում: Մեծ եռանդ գործադրեց հատկապես «Ավանգարդը», ուր հրապարակված հոդվածներից մեկը ուներ «Մաբքել համալսարանը թշնամական տարրերից» խորագիրը: Այստեղ «երդվյալ թշնամիներ» հայտարարվեցին պրոֆեսորներ Գրիգոր Ղափանցյանը, Գրիգոր Զուբարը, Վահան Ռշտունին, Սուրեն Մարկոսյանը, Հակոբ Զորյանը, Սիմոն Հակոբյանը, Գուրգեն Սևակը և ուրիշները: Թշնամիների ցուցակում կար և իմ ազգանունը, քանի որ այդ ժամանակ ևս համատեղության կարգով որպես ասիստենտ աշխատում էի համալսարանում (տե՛ս «Ավանգարդ», 6 հոկտեմբերի 1937):

Հեռացնելով կուսակցությունից ինձ ազատեցին նաև աշխատանքից: Մոտ մեկ տարի մնացի անգործ, օգնում էին հարազատներս, վաճառում էի շնչին գներով գրագրարանիս գրքերը: Իհարկե, ընդունեցի «սխալը», չեյած դրան ամեն գիշեր սպասում էի ՊԱԿ-ի ներկայացուցիչներին: Բայց տեղի ունեցավ անսպասելին: 1938 թ. մարտին Սովետական Միության կոմկուսի Կենտկոմի պլենումում արտասանած իր ճառում Ստալինը հայտարարեց, որ կադրերի հարցում պետք է զգույշ լի-

նել, որ զավակները պատասխանատու չեն ծնողների համար և այն: Մեծ ստախոսի և երկերեսանու այս խոսքերի շնորհիվ շատ մարդիկ, թեկուզ և ժամանակավորապես, ազատվեցին հետապնդումներից: Գրանց թվում էս էլ վերականգնվեցի կուսակցության մեջ, աշխատանքի անցանք ՍՍՀՄ ԳԱ հայկական ֆիլիալի պատմության ինստիտուտում:

Խոսելով 1930-ական թթ. մասին ես ավելորդ չեմ համարում կանգ առնել մի այսպիսի փաստի վրա: 1930 թ. Երևանի պետական համալսարանի պատմության ամբիոնի վարիչ, ՀԿԿ Կենտկոմին կից կուսակցամտևության ինստիտուտի տնօրեն, պրոֆ. Կարո Ղազարյանի առաջարկով նույն համալսարանի պատմության ֆակուլտետի երկու ուսանողներ՝ Մ. Ներսիսյան և Վ. Պարսամյան, սկսեցին հավաքել արխիվային և այլ նյութեր, նպատակ ունենալով կազմել ու հրատարակել փաստաթղթերի ժողովածու նվիրված 1920 թ. մայիսյան աստամբուլյան պատմությանը: Աշխատանքը կատարվեց պրոֆեսորի ղեկավարությամբ 1930—1931 թթ., այսինքն այն ժամանակ, երբ ես 20—21 տարեկան ուսանող էի: Ժողովածուն լույս տեսավ 1932 թ. «Առաջին մասսայական հեղափոխական շարժումը Հայաստանում» խորագրով: Գրքի վերջում տեղափոխական շարժումը կազմել են պրոֆ. Կ. Ղազարյանը և ուսանողներ Մ. Ներսիսյանը ու Վ. Պարսամյանը (տե՛ս էջ 70): Գրքում դժբախտաբար չկա նշում այն մասին, թե նրանցից ով ինչ է գրել, բայց դժվար չէ կոռեկ, որ այն ծանոթագրությունները, որոնցում տրված են Հ. Հ. Գաշնակցություն կուսակցության գործիչների գնահատականները (բավական դժվար էր) կարող էր գրել ժողովածուի խմբագիր պրոֆեսորը և ոչ թե դեռ նոր միայն գրիչ բռնող ուսանողը: Ինչու՞ է հմ խոսում այս մասին: Բանն այն է, որ մեր օրերի անհատական հաշիվներ մաքրող մի շարք «ասպետներ», որոնք իրենց ղիկետանտության համար քննադատության են ենթարկվել իմ խմբագրությունում լույս տեսնող «Պատմա-բանասիրական հանգեսում», այսօր փորձեր են անում նշված ծանոթագրություններում տեղ գտած սխալների ու գեհնությունների մեղքը բարդել ուսանող Ներսիսյանի վրա, ոչ մի խոսք չառելով ո՛չ գրքի խմբագիր պրոֆեսորի և ո՛չ էլ Վ. Պարսամյանի մասին: Այսօրվա ընթերցողից թարգմտվում է նաև այն, որ 1930-ական թթ. Հայաստանում անհնարին էր գրել այլ կերպ: Պարզ է, որ վիրավորված ինքնասիրությունը դիմում է անբարեխղճության: Նկատեմ, որ պրոֆ. Կ. Ղազարյանը՝ համեստ ու աշխատասեր այդ պատմաբանը, տարիներ հետո ենթարկվելով շարամիտ ամբաստանության, բանտարկվեց ու աքսոր ուղարկվեց:

Բայց վերադառնանք ձեր հիմնական հարցին: 1940 թ. լույս տեսավ «Նարոզնիկական խմբակները Անդրկովկասում» իմ գրքույկը, որի պատճառով ես նորից հարձակումների ենթարկվեցի մոտ 14 տարի շարունակ: Հենվելով արխիվային փաստաթղթերի և եղած գրականության վրա, ես այդ գրքում այն տեսակետն եմ դարգայրել, որ Հ. Հ. Գաշնակցություն կուսակցության կազմավորման գործում կարևոր դեր խաղացին: 1870—1880-ական թթ. գործող հայ ազգային նարոզնիկական խմբերն ու կազմակերպությունները, որոնց մեջ ընգրկված էին ուսական նարոզնիկական գաղափարներով ոգևորված բազմաթիվ հայ դեմոկրատ ու հեղափոխական երիտասարդներ՝ Քրիստափոր Միքայելյանը, Սիմեոն Զավարյանը, Ստեփան Զորյանը, բժիշկ Լորիս-Մելիքյանը (կոմս Լորիս-Մելիքովի եղբոր տղան) և ուրիշներ: Զգաստ և օրթոդոքս «ասպետներ» նորից աղմուկ բարձրացրին: Աշխատության հեղինակը մեղադրվեց այն բանում, որ հակառակ կուսակցության որոշումների, Գաշնակցություն կուսակցությունը համարում է դեմոկրատական-հեղափոխական: Ամբաստանագրեր ուղարկվեցին ՀԿԿ Կենտկոմին և ՍՍՀՄ կոմկուսի Կենտկոմի զլխավոր տեսական օրգան «Բոլշևիկ» պարբերականին: Նորից հանձնաժողովներ, նորից քննարկումներ, մեղադրանքներ, հանդիմանություններ: Տարիներ հետո՝ 1948 թ., այդ հարցը նորից բարձրացավ: Մոսկվայում լույս տեսնող «Литературная газета» թերթում հրատարակվեց փիլիսոփայական գիտությունների թեկնածու Ա. Կարապետյանի «Ընդդեմ բուրժուական նացիոնալիզմի մնացուկների» հոդվածը, որ ասված է, որ իմ աշխատությունը գրված է նացիոնալիստական դիրքերից, քանի որ Գաշնակցություն կուսակցության շատ հիմնադիրների ես համարում եմ նարոզնիկական-դեմոկրատական մտավորականության ներկայացուցիչներ: Կարապետյանի կարծիքով ոչ մի կապ չի եղել նարոզնիկների և գաշնակների մեջ, որոնք (գաշնակները) նրա կարծիքով եղել են ծայրահեղ (отъявленные) նացիոնալիստներ: Հոդվածագիրը ավելացնում էր, որ Ներսիսյանը սեպտեմբերի մի թիթարյաններին համարում է լուսավորիչներ: Իսկ զա վկայում է այն մասին, որ Ներսիսյանը «ավելի աչ է քան բուրժուական լիբերալները» (տե՛ս «Литературная газета», 31 հուլիսի 1948, № 61):

Զմոռանամ նշել, որ Ա. Կարապետյանի հոդվածում բուրժուական նացիոնալիզմի, իդեալիզմի ու հակալենինիզմի մեջ մեղադրվեցին նաև Մանուկ Աբեղյանը, Գերենիկ Դեմիրճյանը, Հովհաննես Շիրազը, Սոլոմոն Տարոնցին, Խաչիկ Դաշտենցը, Վ. Խեչումյանը, Ա. Զիվլիգովը, Հ. Կուսիկյանը, Խ. Սարգսյանը, Ռ. Զորյանը, Մ. Մկրյանը, Ե. Տեր-Մինասյանը, պրոֆեսորներ Վ. Զալոյանը, Ա. Աղամյանը և ուրիշներ:

Նարոդնիկության մասին գրված իմ այդ աշխատության «վնասա-  
կարության» մասին նորից խոսեցին 1952—1953 թթ., այսինքն այն  
տարիներին, երբ մեր հանրապետությունում լայն պայքար ծավալվեց  
այսպես կոչված բուրժուա-նացիոնալիստական միասնական հոսանքի  
դեմ: Ահա, օրինակ, ինչ գրվեց ՀԿԿ Կենտկոմի օրգան «Պարտիական  
կյանք» ամսագրում. «Պրոֆ. Մ. Ներսիսյանը 1940 թ. երատարակած իր  
«Նարոդնիկական խմբակներն Անդրկովկասում» գրքում սխալ գնահա-  
տական է տալիս 80-ական րվականների բազմազան խմբակներին:  
Նա հայկական բուրժուա-նացիոնալիստական խմբակները, որոնցից հե-  
տագայում կազմակերպվեց Գաղնիկցուքուն պարտիան, հայտարարում  
է նարոդնիկական, ռեվոլյուցիոն խմբակներ» (տե՛ս «Պարտիական կյանք»,  
1953, № 2, էջ 47):

Իմ դեմ քաղաքական մեղադրանքներ առաջ քաշվեցին նաև երկու  
տարի հետո՝ 1954—1955 թթ.: Այս անգամ դադափարական ճակատը  
«վնասակար» մտքերից ազատելու հոգսը իր վրա վերցրեց պարտ-  
բյուրոկրատիայի բավական ազդեցիկ ներկայացուցիչներից մեկը՝  
Շամվոն Առուշանյանը, որ այդ տարիներին վարում էր ՀԿԿ Երևանի  
քաղաքային կազմակերպության առաջին քարտուղարի պաշտոնը: Պատ-  
մության հարցերից բխողովին անտեղյակ այդ մարդուն օգնության  
եկան մի շարք պատմաբաններ (և առաջին հերթին նորից Վ. Ա. Պար-  
սամյանը): Հարցը քննարկվեց կուսակցության քաղաքային կոմիտեում,  
ընդունվեց որոշում գրադարաններից հավաքել ու ոչնչացնել իմ գիրքը:  
Երկար շարժարկելուց հետո ինձ հաջողվեց ՀԿԿ Կենտկոմի գիտության  
բաժնի վարիչ Ռ. Խաչատրյանի հետ միասին համոզել Կենտկոմի բյու-  
րոյի անդամներին չհաստատել քաղկոմի այդ որոշումը: Անհետևանք  
անցան Առուշանյանի փորձերը ինձ՝ որպես նացիոնալիստի կուսակցու-  
թյունից հեռացնելու ուղղությամբ:

Խիստ քննադատության ենթարկվեցի ես նաև իմ մի այլ աշխա-  
տության կապակցությամբ: 1946 թ. ապրիլին հանրապետության Գի-  
տությունների ակադեմիայի պատմության ինստիտուտում պաշտպանե-  
ցի դոկտորական դիսերտացիա «Հայ ժողովրդի ազատագրական պայ-  
քաբը բուրժուական դեսպոտիզմի դեմ (1850—1870 թթ.)» թեմայով: Այդ,  
իհարկե, համարձակ ու վտանգավոր քայլ էր, քանի որ հակառակ իշ-  
խող հակադիտական դոգմաների ես այդ աշխատության մեջ վեր էի  
հանել արևմտահայության ինքնաբուխ ժողովրդական ազատագրական  
շարժումը ուղղված օսմանյան լծի դեմ, բարձր գնահատական տվել  
Մ. Նալբանդյանի, Հ. Սրվաճյանի, Մ. Խրիմյանի, Ռ. Պատկանյանի,  
Գր. Արծրունու ու ժողովրդի ազատագրական իրձերն արտահայտող

մյուս փայլուն գործիչների հայրենասիրական գործունեությանը: Հաս-  
կանալի է, որ շուտով նորից մեղադրվեցի նացիոնալիզմի մեջ, ամբաս-  
տանագրեր ուղարկվեցին միութենական բարձրագույն կրթության ատես-  
տացիոն հանձնաժողովին ու ՀԿԿ Կենտկոմին: Ի վերջո բանիմաց և հե-  
ղինակավոր մի շարք գիտնականների կողմից տրված կարծիքների հի-  
ման վրա հաստատվեց իմ դիսերտացիան, իսկ ՀԿԿ Կենտկոմի քարտու-  
ղարությունը սահմանափակվեց միայն բանավոր դիտողություններով:  
Հարցը չբարդացավ շնորհիվ ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Գր.  
Հարությունյանի բարյացակամ միջամտության:

Սակայն ավելի ուժեղ հարձակումներ եղան մի քանի տարի հետո:  
Հայանի է, որ 1952 թ. վերջերին և 1953 թ. սկզբներին Խորհրդային  
Միության մեջ բարձրացավ ստալինյան հալածանքների մի նոր ալիք,  
որն իր արձագանքը գտավ նաև Հայաստանում: Խորհրդահայ շատ պատ-  
մաբաններ ու գրականագետներ մեղադրվեցին բուրժուական «միաս-  
նական հոսանքի» տեսությունը և նացիոնալիստական այլևայլ գաղա-  
փարներ պրոպագանդելու մեջ: Սկսվեց խաշակրաց արշավանք «հան-  
ցագործների» դեմ: Հրապարակվեցին բազմաթիվ «մերկացնող» հոգ-  
վածներ, տեղի ունեցան տարբեր կարգի քննարկումներ, ընդունվեցին  
համապատասխան որոշումներ և այլն: Իհարկե, «չրջանառության» մեջ  
առան նաև ինձ: Այսպես, ՀԿԿ Կենտկոմի երկրորդ քարտուղարի հոգվա-  
ծում, տպագրված Կենտկոմի օրգան «Պարտիական կյանք» ամսագրում,  
ասված է. «Պրոֆեսոր Մ. Ներսիսյանը, իր «Նարոդնիկական խմբակներն  
Անդրկովկասում» գրքում և «Հայ ազգային ազատագրական շարժումը  
19-րդ դարի 60—80-ական թվականներին» ձեռագիր աշխատությունում  
(նկատի ունի 1946 թ. պաշտպանած իմ դոկտորական դիսերտացիան—  
Մ. Ն.) հակառակ ազգային-ազատագրական շարժման վերաբերյալ  
մարքսիստական-լենինյան ուսմունքի, փորձում է ապացուցել, թե այդ  
ժամանակաշրջանի շարժումը գյուղացիական-դեմոկրատական բնույթ  
է կրել, միևնչեռ այդ շարժումները եղել են բուրժուական շարժումներ:  
Բուրժուական նացիոնալիստական իդեոլոգներին, այդ քվում Բաֆթուն,  
Պատկանյանին և մյուսներին ես համարում է հայ գյուղացիության շա-  
նների արտահայտիչներ: Գնահատական տալով անցյալ դարի 80-ական  
թվականների հայ բազմազան խմբակներին՝ պրոֆեսոր Մ. Ներսիսյա-  
նը հայ բուրժուական խմբակները դիտում է որպես դեմոկրատական ռե-  
վոլյուցիոն խմբակներ, իսկ նրա իդեոլոգներին համարում է դեմոկրատ  
գաղծիչներ» («Պարտիական կյանք», 1953, № 1, էջ 34):

Իսկ մի ուրիշը՝ հիշված պարբերականի խմբագիրը, գրում էր. «Լուրջ  
սխալներ կան Ներսիսյանի դոկտորական չապագրված դիսերտացիա-

յում: նա փոխանակ բացահայտելու Արծրունու, Բաֆֆու, Պատկանյանի բուրժուական նացիոնալիզմը, նրանց դատում է պրոգրեսիվ-դեմոկրատական գործիչների շարքը... սխալ է գնահատում հայ ազգային շարժումների սոցիալ-դասակարգային էությունը, այդ շարժումները ներկայացնելով իրեն ժողովրդական-գյուղացիական շարժումներ» («Պարտիական կյանք», 1953, № 2, էջ 47—48):

Նույն ոգով հոգովածներ ապագրվեցին գրեթե բոլոր պարբերականներում: «Սովետական Հայաստան» թերթը, օրինակ, հրապարակեց մի ընդարձակ խմբագրական, որի վերնագիրն էր. «Արմատախիլ անել բուրժուա-նացիոնալիստական իդեոլոգիայի ամեն մի գրսևորում պատմագրության և դրականագիտության մեջ»: Այստեղ ևս ի թիվս շատերի (Աշ. Հովհաննիսյանի, Ա. Տերտերյանի, Վ. Ուշունու և մյուսների) բուրժուական նացիոնալիստ հայտարարեցին նաև ինձ: Թերթը գրում էր. «Պրոֆ Մ. Ներսիսյանը հետևելով բուրժուա-նացիոնալիստական տրագիցիաներին, իր «19-րդ դարի 60—80-ական թվականների ազգային ազատագրական շարժումը» գոկտորական դիսերտացիայում, հակառակ մաբխիզմ-լենինիզմի այն դուլլիին, որ ազգային շարժումները կապիտալիզմի ժամանակաշրջանում իրենց էությունը բուրժուական են, փորձում է հայ ազգային շարժումները ներկայացնել իբրև ժողովրդական դեմոկրատական շարժումներ... նա դեմոկրատ է մկրտում այնպիսի բուրժուական նացիոնալիստներին, ինչպիսիք են Պատկանյանը, Բաֆֆին և ուրիշներ: Պրոֆ. Մ. Ներսիսյանը զովաբանում է բուրժուական նացիոնալիզմի դադափարախոս Գ. Արծրունուն և գրանդվ իսկ ապակողմնորոշում սովետական երիտասարդ պատմաբանների մի մասին, լուրջ վնաս հասցնելով նրանց դադափարական դաստիարակությանը» («Սովետական Հայաստան», 9 հունվարի 1953, № 7):

Բուրժուական նացիոնալիզմի մեջ մեղադրվող հեղինակների գլխին կուտակվում էին սև ամպեր: Սակայն բարեբախտաբար 1953 թ. մարտի սկզբին իր հոգին ավանդեց մեծ դահճապետ Ստալինը: Գրությունը զգալիորեն փոխվեց: Շատերը փրկվեցին մահից, բանտից ու աքսորից: Իմ հարցը վերջացավ նրանով, որ ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի որոշմամբ ես ստացա նկատողություն: Երկու տարի հետո՝ 1955 թ., ն. Ս. Խրուշչովի ղեկավարության ժամանակ, վերջապես լույս տեսավ 1944—1946 թթ. շարագրված «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական դեսպոտիզմի դեմ» իմ աշխատությունը որոշ կրճատումներով: Գրաքննությունն պահանջով կրճատվեց, օրինակ, ձեռագրի այն մասը, որտեղ խոսվում էր Խրիմյան Հայրիկի հայրենասիրական գործունեության մասին: 1965 թ. փետրվարին լույս տեսավ «Ժողովրդական հերոսը» խո-

րագիրը կրող իմ հոգվածը, որ խորհրդային կարգերում առաջին անգամ պատշաճ գնահատական արվեց հայ ազգային-ազատագրական շարժման ամենափայլուն գործիչներից մեկին՝ Անդրանիկ Օզանյանին (տե՛ս «Սովետական Հայաստան», 25 փետրվարի 1965): Նույն թվականի ապրիլին խորհրդային Միության ԿԿ Կենտկոմի օրգան «Правда» թերթում հրապարակվեց իմ և պրոֆ. Ն. Ուշակովի համատեղ հոգվածը 1915 թ. Մեծ Լոկոնի ու այլ ցեղասպանությունների մասին (տե՛ս «Правда», 25 ապրիլի 1965): Հարկ եմ համարում հիշել, որ նշված երկու հոգվածների հրապարակման գործում զգալի դեր խաղացին ՀԿԿ Կենտկոմի քարտուղարներ Յա. Զարոբյանը և Հ. Բաղդասարյանը): 1966 թ., խախտելով ընդունված «կարգն ու կանոնը», ինձ հաջողվեց լույս բնծայել «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրության մեջ» ծավալուն ժողովածուն (ռուսերեն), որը թեև կազմված էր շատ տարիներ առաջ, բայց երբեք չէր հանձնարարվում տպագրության համար: Այդ արժեքավոր գրքի հրապարակման կապակցությամբ ես՝ մեղավորս, գրովոր բացատրություն տվեցի վերադաս օրգաններին: Լավ էր, որ հարցը վերջացավ դրանով:

Ավելացնեմ, որ նացիոնալիզմի ու հակամարքսիզմի մեջ ես մեղադրվեցի նաև 1974—1975 թթ.: Այս անգամ դատախազի դերում հանդես եկավ Հայկական մանկավարժական ինստիտուտի դասախոս Շ. Հարությունյանը, որի խիստ մակերեսային ու բացահայտորեն կոմպլիցատիվ դիսերտացիայի մասին: Ես անվանի պատմաբան Աշ. Հովհաննիսյանի հետ միասին առիթ էի ունեցել իմ բացասական կարծիքն արտահայտել հրապարակայնորեն տարիներ առաջ և «Պատմա-բանասիրական հանդեսում» տպագրել Վ. Ոսկանյանի քննադատական խոսքը նրա պատմագիտական պարզունակ մարդանքների մասին (տե՛ս ՊԲՀ, 1964 թ., № 4, էջ 268—269): Գիտական քննադատությանը Հարությունյանը պատասխանեց քաղաքական դեմադողիայով: Ամեն ճիշդ գործադրելով նա աշխատեց ցույց տալ, որ իմ խմբագրությամբ 1972 թ. երեվանի պետական համալսարանի կողմից հրատարակված «Հայ ժողովրդի պատմություն» համառոտ ակնարկը (մեկհատորյակը), որի մասին տպագրվեցին հինգ դրական գրախոսություն, ոչ ավել, ոչ պակաս հակամարքսիստական ու նացիոնալիստական գիրք է: Գոհհիկ սոցիոլոգիզմի կողմնակից մի շարք ղեկավար մարդկանց օգնությամբ նա տպագրեց կիսագրագետ, բայց «սուր զգոնություն» հաղեցված մի գրախոսական «Լենինյան ուղիով» ամսագրում, դիմումներ գրեց ՀԿԿ Կենտկոմի քարտուղարներին և անգամ Սովետական Միության կոմկուսի ոչ անհայտ լիդերներից մեկին՝ ախրահոջակ Մ. Ա. Մուսրովին, դաժան,

օգիտող մի մարդու, որը տարիներ շարունակ քարացրել էր երկրի գաղափարական կյանքը: Ջարդարար լիզերին ուղղված 1975 թ. նոյեմբերի 27-ի թվակիր նամակում, որի մի պատճենը պահպանվում է իմ թրդ-թերում, Հարությունյանը ամեն տեսակի քաղաքական մեղադրանքներ էր բարդում խմբագրի ու հեղինակների վրա: Այսպես, ամբաստանադրում ասված է. «Դրեում բացակայում է պատմության մարտա-լենինյան պերիոդիզացիան», այնտեղ չի խոսվում Բաբվի կոմունայի մասին, չեն հիշատակված «մեզ համար շատ սուրբ անուններ», այդ թվում Օրջոնիկիձեն, Կիրովը, Խախանյանը, Վելիկանովը, Աթարբեկյանը և ուրիշներ: Հարությունյանը «սուրբ անուն» էր համարում մասսայական տնտրների կազմակերպիչ, դաժան մարդասպան Գևորգ Աթարբեկյանին: Սուսլովի ուշադրությունը հրավիրվում էր մինչև իսկ այն հանգամանքի վրա, որը միջնադարյան հուշակավոր հայ բժիշկ Ամիրբեկյանի մասին դրքում ավելի շատ է խոսվում, քան Անդրֆեդերացիայի կազմակերպման պատմության մասին: Ամեն առիթով քաղաքական մեղադրանքներ: Իր դիմում-մատնադրի վերջում Հարությունյանը խնդրում էր ջարդարար Սուսլովի միջամտությունը: Իհարկե, կազմվեցին հանձնաժողովներ, կատարվեցին քննարկումներ և միայն անվանի գիտնականների հիմնավոր կարծիքների և համալսարանի գիտական խորհրդի համապատասխան որոշման շնորհիվ տեղի շունչան նոր հետապնդումներ:

Հարց. Ինչպիսի՞ն է եղել ձեր գիտական-կազմակերպչական ու դասախոսական աշխատանքը անցյալում:

Պատասխան. Եղել եմ հանրապետության ԳԱ պատմության ինստիտուտի տնօրեն, նույն ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, ակադեմիայի փոխնախագահ (վիցեպրեզիդենտ): 1966—1977 թթ. վարել եմ Երևանի Պետական համալսարանի ռեկտորի պաշտոնը: Երկար տարիներ դասավանդել եմ հայ ժողովրդի պատմություն Աբովյանի անվան Հայկական մանկավարժական ինստիտուտում և Երևանի համալսարանում:

Հարց. Արդեն 33-րդ տարին է, որ Դուք խմբագրում եք «Պատմաբանասիրական հանդեսը», որը, ինչպես բազմիցս նշվել է, գիտական մեծ հեղինակություն ունի ինչպես Հայաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Ի՞նչ կասեք ձեր պարբերականի մասին:

Պատասխան. Մեր հանդեսը, որ սկսել է լույս տեսնել 1958 թ. (ատրեկան շոքո հատոր), հայագիտական պարբերական է: Նրանում հիմնականում լուսաբանվում են հայ ժողովրդի հին և միջնադարյան պատմության, գրականության, լեզվի ու մշակույթի այլ բնագավառ-

ների հարցերը: Սակայն այնտեղ տպագրվում են հոդվածներ նաև կռվկասագիտության, բյուզանդագիտության ու արևելագիտության կարևոր պրոբլեմների վերաբերյալ: «Հանդեսին» աշխատակցում են ոչ միայն Հայաստանի, այլև Խորհրդային Միության ու արտասահմանյան շատ հայագետներ: Այսպես, օրինակ, օտարազգի գիտնականներից մեզ աշխատակցել են Բուլղարիայից Դ. Անդեյովը, Վ. Գյուզելը, Ռումինիայից՝ Վ. Բենբեյանուն (երկար տարիներ եղել է նաև խմբագրական խորհրդի անդամ), Իտալիայից՝ Ջ. Բոնֆանտեն, Վ. Պիզանին, Ֆրանսիայից՝ Ֆ. Ֆելդին, Ամերիկայի Միացյալ Նահանգներից՝ Ջ. Գրեպինը, Ռ. Յակոբսոնը, Հոլանդիայից՝ Մ. Սթոունը, Բելգիայից՝ Ջ. Վալտենբերգը, Հունգարիայից՝ Է. Շյույը, Գերմանիայից՝ Հ. Վալտեր Պոլը, Ռուսաստանից՝ Վ. Տոպորովը, Օ. Շիրոկովը, Տ. Իզմայլովան, Ուկրաինայից՝ Յա. Գաշկեիչը, Վրաստանից՝ Ի. Աբուլաձեն (եղել է նաև խմբագրության անդամ), Գ. Մելիքիշվիլին և շատ ուրիշներ: Պարբերականում հանդես են եկել ինչպես Հանրապետության, այնպես էլ սփյուռքի գրեթե բոլոր հայ անվանի հայագետներ:

Հասկանալի է, որ «Հանդեսը» ևս զերծ չի մնացել իր ժամանակ իշխող դոկտրինայի սոցիոլոգիզմի ազդեցությունից: Բայց չնայած դրան նա հիմնականում կարողացավ պահել իր գիտական մակարդակը: Պատահական չէ, որ պարբերականը լավ քննդնելություն գտավ: Նրան բարձր գնահատական են տվել հայտնի գիտնականներ Հ. Օրբելին, Վ. Մինորը (Լոնդոն), Կ. Մելիք-Օհանջանյանը, Հ. Միրունին (Բուխարեստ), Հ. Արմենը, Հ. Շալյանը (ԱՄՆ), Է. Գուրեկյանը (Լոնդոն), Վենեսիկի ու Վեհենայի Մխիթարյանների ներկայացուցիչները, մեր և սփյուռքի մամուլում հանդես եկած գրախոսները: 1987 թ. «Հանդեսի» 30-ամյակի առիթով խմբագրությունը ստացավ Հայաստանի ԳԱ նախագահության հետևյալ նամակը, որը ստորագրել էր Ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը. «Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի նախագահությունը ողջունում է «Պատմաբանասիրական հանդեսի» խմբագրությանը հանդեսի հրատարակության 30-ամյակի առթիվ: Անցած երեք տասնամյակների ընթացքում Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի «Հանդեսը» իր շուրջն է համախմբել Սովետական Միության և արտասահմանյան առաջավոր գրեթե բոլոր հայագետներին, արդյունավետ աշխատանք է կատարել հայ ժողովրդի պատմության, գրականության, լեզվի, արվեստի, փիլիսոփայության և մշակույթի այլ բնագավառների կարևոր հարցերի ուսումնասիրության, արևելագիտության, կովկասագիտության, ռյատագիտության ու բանասիրության տեսական մի շարք պրոբլեմների գիտական քննարկման,

հարեան երկրների հետ Հայաստանի ունեցած տնտեսական, քաղաքական ու մշակութային կապերի ու փոխհարաբերությունների պատմության մեկնաբանման, սփյուռքահայ գիտական, հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքի լուսաբանման ուղղությունը: Մշտապես բարձր մակարդակի ձգտող «Հանդեսը» դարձել է հայագիտական ծանրակշիռ գիտական օրգան և համընդհանուր ճանաչում է ձեռք բերել մեր երկրում և նրա սահմաններից դուրս: ՀՍՍՀ ԳԱ նախագահությունը նշում է նաև ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանի 30-ամյա արդասավոր գործունեությունը «Հանդեսի» անընդմեջ ղլխավոր խմբագրի պաշտոնում»:

Իհարկե անելիքները դեռևս շատ են: Անհրաժեշտ է պահպանել ու ամփելի բարձրացնել պարբերականի գիտական մակարդակը, վերացնել եղած թերությունները: Ժամանակն է թարմ, երիտասարդ ուժեր ներգրավել խմբագրական խորհրդում, ավելի համարձակորեն վերանայել պատմագիտության մեջ ու հասարակագիտական մյուս գիտություններում տեղ գտած հին, քաղաքական կուսակցություններին ու հոսանքներին սպասարկող և իսկական գիտության հետ աղերս չունեցող «տեսությունները»:

**Հարց.** Ձեր կարծիքը խորհրդահայ պատմագիտության այսօրվա վիճակի մասին:

**Պատասխան.** Ուրախալի է, որ այսօր մեր պատմաբանները լրջորեն գիտակցում են հայ ժողովրդի պատմության շատ հարցերի նորովի լուսաբանման անհրաժեշտությունը: Այսօր արդեն անվիճելի է այն տեսակետը, որ պատմագիտությունը պետք է ազատագրվի դոեհիկ սոցիալոգիզմի դոգմաներից և հենվի միայն իրական փաստերի գիտական վերլուծության վրա: Վերջին ժամանակները լույս են տեսել մի շարք արժեքավոր գրքեր: Բայց միաժամանակ հրապարակվում են գրքեր, դժբուխներ, որոնք խիստ մակերեսային են և շատ հեռու գիտությունից: Լույս են տեսնում զիլետանտական, հակագիտական հողվածներ հայ ժողովրդի ծագման, Հայկական հարցի, հայ ազատագրական շարժման պատմության և այլ հարցերի մասին: Որոշ հեղինակներ, հանդես բերելով բացահայտ անգիտություն, փորձում են վարկաբեկել մեր ժողովրդի վերջին դարերի ազգային-ազատագրական շարժումը, նրա փայլուն ներկայացուցիչներին՝ Իսրայել Օրուն, Խաչատուր Աբովյանին, Ներսես Աշտարակեցուն, զորավար Անդրանիկին և ուրիշներին: Դեռևս կան «գիտուններ», որոնք խոսելով XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին թուրքական բռնապետության դեմ ծավալված հայ ազատագրական

շարժման մասին, աշխատում են ինչ-ինչ նկատառումներով ժխտել, նսեմացնել հայ ազգային քաղաքական կուսակցությունների՝ դաշնակցության, հնչակյանների ու արմենականների գործուն մասնակցությունը և ղեկավար դերը այդ ժողովրդական պայքարում: Չմոռանամ նկատել, որ վերահրատարակվում են գրքեր առանց անհրաժեշտ առաջաբանների ու ծանոթագրությունների (այս դեպքում ըստ երևույթին զբլխավոր նպատակը շահույթ ստանալն է): Զարմանալի անտարբերություն են ցուցաբերում մեր պրոֆեսիոնալ պատմաբանները: Կարծում եմ, որ բանիմաց մասնագետները չպետք է զլանան իրենց հեղինակավոր խոսքն ասելու բոլոր այն դեպքերում, երբ փորձեր են արվում կեղծելու պատմական ճշմարտությունը, երբ նորից ջանքեր են թափվում ծուռ հայելու մեջ ներկայացնելու մեր ժողովրդի պատմությունը:

## II. Գ Ի Տ Ա Կ Ա Ն Հ Ա Ղ Ո Ր Գ Ո Ւ Մ Ն Ե Ր

(Արխիվային նյութերի հրատարակում)

### Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Հ Ա Ր Յ Ի Ա Ր Ծ Ա Ր Ծ Ո Ւ Մ Ը 1912 Թ Վ Ա Ս Ա Ն Ի Ն

1912 թ. աշնանը, երբ առաջին Բալկանյան պատերազմում Բուլղարիայի, Հունաստանի, Սերբիայի և Չեռնոգորիայի միացյալ զինված ուժերը պարտության մատնեցին օսմանյան պետությանը, հայ իրականության մեջ նորից լայնորեն արժարժեցիկ Հայկական հարցը: Խնդրի լուծման ուղղությամբ աշխույժ գործունեություն ծավալեցին հատկապես Քիֆլիսի նորաստեղծ Հայ ազգային բյուրոն, Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ V-ը, Կ. Պոլսի պատրիարքարանը և արևելահայ ազգային մշտահայ մի շարք մտավորականներ: Մեր անվանի պատմաբան Լեոյի արխիվում և Մաշտոցի անվան Մատենադարանում պահվում է Ս. Պետերբուրգի Հայկական խմբակի անդամներ՝ Նիկողայոս Ադոնցի և Միքրական Տիգրանյանի գրավոր հաշվետվությունը 1912 թ. զեկտեմբերին Կ. Պոլսի կատարած իրենց այցելության մասին: Այս արժեքավոր փաստաթղթում հանգամանորեն ներկայացված է հասարակական-քաղաքական այն միջնորոտը, որ այդ ժամանակ ստեղծվել էր արևմտահայ իրականության մեջ: Հաշվետվությունը պարունակում է հետաքրքիր տեղեկություններ այն մասին, թե Հայկական հարցի վերաբերյալ ինչ տեսակետ է իշխել արևմտահայության մեջ, թե ինչպիսի վերաբերմունք է եղել ցուցաբերել հայ ժողովրդին հուզող այդ հարցի նկատմամբ եվրոպական մի շարք երկրների՝ Կ. Պոլսի ղեկավարները և այլն:

Խիստ բնորոշ է, օրինակ, ռուսական և անգլիական կառավարությունների դիրքորոշումը: 1912 թ. նոյեմբերի 13-ին Կ. Պոլսի պատրիարք Հովհաննես Արշարունին, այցելելով ռուսական ղեկավար Գիրսին, խնդրել էր նրան, որ Ռուսաստանը հովանավորողի դեր ստանձնի Հայկական Հարցի նկատմամբ: Գեկպանը հուսադրել է պատրիարքին և ասել, թե ռուսական կառավարությունը կարեկցում է հայերին (հետագա բանակցություններում ավելի պարզ ու որոշակի է դառնում Ռուսաստանի համակրությունը Հայկական հարցի նկատմամբ): Բայց, ահա ավելի ուշ, զեկտեմբերի 24-ին պատրիարքարանի՝ Հայկական հարցով

զբաղվող հատուկ հանձնաժողովի անդամ պրոֆ. Տեր-Հակոբյանը այցելում է Կ. Պոլսի անգլիական ղեկավար Լատտերին նույն խնդրանքով՝ օգնել հայերին: Բացահայտորեն մերժելով ու ծաղրի ենթարկելով հայ պրոֆեսորի փաստարկները՝ Մեծ Բրիտանիայի ղեկավարը ի վերջո հայտարարում է. «Դժբախտաբար անգլիական նավերը չեն կարող մոտենալ (доплыть) Վանին և Մուշին»:

Հաշվետվությունում հաղորդվում է կարևոր տեղեկություններ նաև արևմտահայ մի շարք գործիչների ու մտավորականների մասին, մտավորականներ, որոնց ճնշող մեծամասնությունը, ինչպես վկայում է վավերագիրը, ունեցել է ռուսական կողմնորոշում: Բավական մանրամասնորեն շարադրված են Գրիգոր Զոհրապի, Մ. Օրմանյանի, Բ. Քեչյանի, Ն. Տաղավարյանի և մյուս հայ գործիչների տեսակետները Հայկական հարցի և նրա լուծման ուղիների վերաբերյալ: Ընդհանրացնելով իրենց խոսքը արևմտահայության մասին՝ փաստաթղթի հեղինակներն անվերապահորեն պնդում են. «Այսօր թուրքահայերի մեջ ռուսասիրական քաղաքականությունը ժողովրդական քաղաքականություն է»:

Ստորև հրատարակվող զեկուցագիրն ունի հետևյալ խորագիրը. «К Армянскому вопросу в Турции (отчет о поездке в Константинополь двух командированных С. Петербургским Армянским кружком членов его)»:

\* \* \*

«Из С.-Петербурга мы выехали с курьерским поездом 24 декабря. Дорогой нашли не лишним уведомить бюро однородного с нашим Совецания в Тифлисе и Баку о нашей миссии, изъявив готовность в случае надобности быть им полезными. Из Одессы написали два письма на имя С. С. Арутюнова и К. И. Хатисова; об этом тогда же особо известили председателя нашего Совецания».

27-го с пароходом «Афон» выехали из Одессы и на следующий день в пятницу, в полдень, были уже в турецкой столице. На пароходе мы познакомились и разговорились с нашим случайным попутчиком, неким Янчевецким, вновь назначенным в Константинополь корреспондентом С.-Петербургского телеграфного агенства. По его словам, прежним корреспондентом были недовольны отчасти потому, что тот мало внимания уделял жизни турецких провинций, в частности Армении. Г. Янчевецкий непринужденно делился с нами своими воззрениями на русскую поли-

тику в Восточном вопросе; сообщил, что раньше он побывал в различных странах Ближнего Востока, жил и в Персии, где в Тегеране и его окрестностях видел и лично испытал самое теплое, родственное отношение армянского населения к русским; рассказал о своих лекциях о панисламизме, читанных им незадолго перед тем в С.-Петербурге и вызвавших возражения со стороны мусульман, недовольных указанием в его лекциях на существование панисламистского движения. На наш вопрос, является ли автор корреспонденций из Тегерана, печатавшихся в «Новом времени» и нападавших на армян, наш попутчик ответил, что это его брат, взглядов которого он во многом не разделяет. Поездка наша, хотя мы о ее цели ничего не сообщили Янчевецкому, и послужила корреспонденту основанием для следующей агентской телеграммы из Константинополя от 7 января, напечатанной в русских газетах: «В течение нескольких дней здесь (в Константинополе) происходили совещания выдающихся армянских деятелей, ученых, писателей, съехавшихся из разных мест, в том числе и из России». Между тем никакого совещания и съезда в Константинополе не было.

По приезде в Константинополь ни на пристани, ни в таможенных никаких затруднений и осмотров мы не встретили со стороны турецких властей, свободно въехали в город и остановились в одной из лучших гостиниц—отель «Токатлян»—на главной улице столицы, ул. Пера. Гостиницу содержит армянин Микиртчан Токатлян на европейский лад, по всем данным требуемого искусства, со всякого рода удобствами и приспособлениями. В нижнем этаже, громадными окнами смотрящем на улицу, помещаются его же, лучшие в Константинополе, ресторан и кафе, привлекающие массу интеллигенции всех национальностей и представителей высшего местного общества. Сам Токатлян родом из г. Токата в Малой Азии, с приветливой внешностью и скромными манерами, оказался интересной личностью, предприимчивой и благотворительной. ОТЕЛЬ построен и оборудован им за свой счет на земле армянской церкви, которой все и должно достаться через известное число лет.

Выйдя из гостиницы на улицу, мы очень кстати встретили хорошо знакомого нам художника Терлемезяна, который любезно взялся проводить нас в редакцию армянской газеты «Бюта-

ния», там мы надеялись встретить некоторых из наших знакомых, прежде всего д-ра Я. Х. Завриева.

В редакции мы узнали, что в этот день, т. е. пятницу, когда обыкновенно происходят заседания Армянского национального собрания, имеет быть последнее перед праздниками заседание. Мы тотчас же поспешили туда присутствовать на заседании и познакомиться с депутатами, членами Национального собрания. Но, к сожалению, заседание, за отсутствием кворума, не могло состояться, и бывшие налицо депутаты почти все уже успели разойтись к нашему приходу. Мы лишились возможности увидеть так сильно интересовавшее нас представительное учреждение армян в Турции.

Нам сообщили, что на следующий день (в субботу) имеет быть заседание особой комиссии при Правлении Национального собрания. Здесь же мы познакомимся с одним из членов Национального собрания, состоящим одновременно депутатом от Ванского вилайета в оттоманском парламенте, Вааном Папазяном, братом известного беллетриста. Знакомство это было для нас чрезвычайно полезно: он оказал нам большие услуги и содействие во все время нашего пребывания в Константинополе.

Мы осмотрели зал Национального собрания, более чем скромный и по размеру и по обстановке, вошли в находящееся тут же помещение так называемого центрального училища, средне-учебного заведения западного типа. Инспектор его, г. Налбандян, сообщил нам некоторые данные о школе, об учащихся (150) и учителях (26). Осмотрели затем церковь посреди небольшого двора, застроенного кругом зданиями: для нас были новостью расставленные в церкви скамьи наподобие католических и лютеранских церквей.

С небогими впечатлениями мы вышли из этого центра наших национальных учреждений и направились в редакцию упомянутой уже газеты. Были налицо весь редакционный состав и главные сотрудники: ответственный редактор Р. Зардарян, Папазян (брат Ваана и Вртанеса, бывший монах Маштоц), Хачатрянц, бывший инспектор Санасаровской школы, а также Акнути (Малумян), Заварян, д-р Завриев и др. В их обществе провели весь вечер; к нам присоединился потом Топчянц, сотрудник и корреспондент немецких газет.

На следующий день утром (29 декабря в субботу) мы пошли вновь в патриархат. Озабоченные выполнением нашей миссии, мы хотели осведомиться прежде всего о том, что предприняли или намерены предпринять армянские официальные круги, патриархат с Национальным собранием в условиях текущего политического момента.

В заседании своем от 21 декабря Национальное собрание, выслушав доклад Национального правления о принятой им тактике действий и программе в вопросе реформ в Армении, выразило свое доверие Национальному правлению, одоблив его точку зрения. В том же заседании депутат Шарикян заявил от имени партии Дашнакцутюн, что она, оставив свои теоретические стремления, присоединяется к требованиям дня, чтобы поддержать единодушие армянского народа в столь жизненном вопросе о преобразовании армянских областей (Отчет о заседании см. в № 35 газеты «Араджамарт» от 22 декабря).

Мы узнали, что при Национальном правлении образована особая комиссия, выделенная им из своего состава, под названием Комиссии безопасности, в числе восьми членов, и ей вверено ведение всех дел, связанных с Армянским вопросом в новой его фазе. Комиссия заседает под председательством патриарха, епископа Иоаннеса (Аршаруни); членами ее состоят: бывший патриарх, епископ Егише (Дурян), архимандрит Григорис (Балакян), архимандрит Гнел (Калемкарян) и г. г. председатель Национального правления Стефан Караян и члены его Оскан Мартикян, главный инспектор в турецком министерстве финансов, ныне состоит министром почт и телеграфов в младотурецком кабинете Махмуда Шевкет-паши, Ваан Папазян, проф. Тер-Акопян. Работа и само существование Комиссии должны были быть строго конфиденциальными. После того, как Святейшим католикосом всех армян был поднят официально Армянский вопрос обращением к русскому правительству, и ответственное ведение его было принято им на себя, Национальное правление получило возможность формально отстраниться от официального участия в этом ходатайстве перед международным концертом. Но Национальное правление, по понятным причинам, воздерживаясь от открытого выступления, в то же время находило нужным осведомлять, поддерживать и отчасти направлять католико-

са в его обращении к державам. С этой целью оно и избрало упомянутую Комиссию с обязательством действовать во всем согласованно с главой армянской церкви и оказывать ему содействие доставлением необходимых материалов, сведений и соображений.

Деятельность Комиссии безопасности выразилась в разработке проекта предполагаемых и приемлемых с армянской точки зрения реформ, в открытии сношений и ведении переговоров с представителями европейских держав и, главным образом, с русским посольством в Константинополе. Кроме того, Комиссия издает выпусками и распространяет в надлежащих сферах материалы и сообщения, имеющие целью представить фактическое положение вещей в Армении и выяснить нужды и меры их удовлетворения в жизни армян Турции.

Проект реформ (основные положения) был подготовлен Комиссией в середине декабря, снабжен географической картой с точным указанием подлежащей преобразованию территории в пределах шести армянских вилайетов. К карте приложена статистическая таблица населяющих очерченную территорию народностей и соотношения между армянским и всеми другими различными этническими элементами мусульманской массы в отдельности. Мы запаслись копиями этого проекта и таблицы, которые предлагаем вниманию Сопровождающих. Поэтому, да будет нам позволено, не останавливаться на них и перейти к изложению тех переговоров и сношений, которые вела Комиссия с посольствами в Константинополе и вне Турции.

Ноября 13 числа патриарх, в сопровождении г. г. Оскана и Зораба, посетил русского посла гофмейстера М. Н. Гирса и, обратив его внимание на тяжелое положение армян в Турции, просил, чтобы в настоящий исторически важный момент, когда идет война во имя эмансипации христианских народностей от мусульманского владычества, не были забыты армяне, изнывающие в мусульманской среде. Посол, при котором находился первый драгоман г. Н. Мандельштам, спросил патриарха о том, что творится ныне в армянских провинциях, и не улучшилось ли положение армян по сравнению с тем, что было раньше? Патриархом было указано, что положение армян в отдельных провинциях остается по-прежнему тревожным, не исключаяющим частичных

изблений, грабежей и разорительных набегов необуздываемых властями диких племен.

Русское правительство относится к армянам сочувственно, заявил г. посол, и очень желало бы улучшить их положение в Турции, но как— вот затруднительный вопрос. Какое средство предлагали бы вы сами, армяне?

Для нас, армян, одно ясно,—ответил патриарх,—что наше спасение во всяком случае не от турок. Мы убеждены, что турки, даже при желании, бессильны создать для нас иные и лучшие условия быта. Единственная надежда наша на великую христианскую державу, которая могла бы устроить нашу судьбу хотя бы так, как обставила Австрия Герцеговину.

Слова патриарха, по-видимому, подействовали на посла, и он сказал, что для ликвидации последствий войны предвидится конференция представителей держав и на ней, возможно, будет рассмотрен также Армянский вопрос.

Посол пожелал узнать, все ли партии и общественные группы у армян солидарны в своих политических чаяниях по данному вопросу, а также—как высоко стоит авторитет католикоса в глазах турецких армян? На что последовал утвердительный ответ со стороны патриарха:

Посол сообщил, что русское посольство предупредило турецкое правительство, чтобы оно не разместило мухаджиров (переселенцев) из Румелии в вилайетах близ русской границы. При прощании посол отметил одобрительно, что армянская пресса ведет себя тактично и благоразумно по отношению к политическому моменту.

Второе свидание имело место между Осканом эфенди и г. Мандельштамом (28 декабря). Разговор вращался вначале вокруг вопроса о проектируемых Портой реформах для армянских вилайетов, причем г. Мандельштам интересовался отношением армянского патриархата к этому предприятию турецкого правительства. Затем Оскан эфенди сам задал вопрос, не получены ли ожидаемые из С.-Петербурга инструкции?

Выдвигать Армянский вопрос сейчас, ответил г. Мандельштам, и с тем расчетом, чтобы поставить его на рассмотрение конференции, мы признаем нецелесообразным и невыгодным, и именно в интересах самого вопроса. Дело в том, что Тройствен-

ное согласие не рассчитывает на поддержку Тройственного союза в Армянском вопросе и думает, что последний скорее будет прогнанодействовать. Вот почему нет основания выносить Армянский вопрос на обсуждение шести держав в конференции, созываемой для улаживания спорных вопросов, возникших на балканской почве. Державы Тройственного согласия могут сговориться между собою по Армянскому вопросу и разрешить его помимо Тройственного союза.

Г. Мандельштам пожелал узнать, в чем заключается миссия армянской делегации в Париже. Оскан эфенди объяснил, при каких условиях зародилась мысль о делегации, и что она находится в связи с обращением католикоса к русскому правительству и является естественным результатом переговоров, которые вели в С.-Петербурге епископ Месроп от имени католикоса. Оскан эфенди указал также на то, что делегация пока ничего активного не предприняла, имела лишь свидание с министром иностранных дел Франции, с г. Пуанкаре, и заручилась содействием французского правительства.

Затем зашла речь о существовании армянских реформ, и драгоман спросил г. Оскана, не имеется ли у патриарха готового проекта и в чем он состоит?

Оскан эфенди ответил, что прежде, чем думать о своем проекте, нам необходимо узнать планы русского правительства. При составлении проекта мы хотели бы базировать на инструкциях, исходящих от посольства, дабы могли дать себе отчет о пределах возможного и стали бы на твердую почву реализуемых стремлений. То, что мы можем и имеем сейчас заявить, независимо от ваших указаний, это—сознание необходимости европейского контроля в деле реформ; вот единственное и необходимое условие всякого преобразования в нашем быту и положении.

Стало быть, нежелательно, чтобы общий правитель был турок, заключил г. Мандельштам.

—Ни в каком случае, опыт показывает, что турок по существу своему не пригоден для внесения улучшений в нашу жизнь. Нам нужен контроль вроде того, что вводится в Македонии.

—Все ли партии так думают?—спросил г. Мандельштам.

—Если речь идет о партии Дашнакцутюн, то она в Армян-

ском вопросе действует единодушно с Национальным собранием: между нами нет разногласия.

В заключение г. Мандельштам заговорил об убийстве в Ване армянина Гапамаджяна и интересовался узнать, не дашнакцанское ли дело это убийство; и, услышав от Оскана эфенди, что дашнакцанская печать по поводу распространившихся слухов о виновниках преступления заявила, что партия давно отказалась от террористических актов, г. Мандельштам заметил, что это очень важно, так как русское правительство чрезвычайно отрицательно относится к террору.

На следующий день после этого свидания, 29 декабря, г. Мандельштам пригласил к себе Оскана эфенди и просил его представить в посольство проект тех реформ, которые считаются желательными в патриархате. Оскан эфенди воспользовался случаем и сообщил основные пункты проекта, намеченные в Комиссии безопасности. Г. Мандельштам находил, что проект должен быть достаточно разработан, примерно в объеме майского акта 1895 года.

На следующий день утром г. Мандельштам еще раз просил к себе Оскана эфенди и выражал недоумение по поводу полученного им сведения о том, что Нубар-паша едет в Лондон с целью добиться рассмотрения Армянского вопроса на конференции. Обстоятельство это, по словам драгомана, не соответствует видам русского правительства, как было сообщено на одном из предыдущих переговоров самому Оскану эфенди. Г. Мандельштам говорил об этом взволнованно, как показалось г. Оскану, и последний счел нужным успокоить его, заявляя, что слухи эти не заслуживают доверия и вовсе не оправдываются имеющимися в патриархате более достоверными сведениями.

Переговоры с посольством, в лице г. Мандельштама, имел также д-р Я. Х. Завриев, который является самым ярким представителем русофильской политики в константинопольских армянских кругах. Ему принадлежит, собственно говоря, и инициатива сношений с русским посольством. Первые шаги к сближению и к взаимному пониманию во имя общих интересов с русским посольством были сделаны тем же Завриевым еще при после г. Чарыкове. Правдивостью своих воззрений и искренностью убеждений Завриев снискал доверие интересующихся нашим воп-

росом лиц в посольских кругах. В беседе с г. Мандельштамом он неоднократно развивал мысль о том, что армяне—естественные союзники русских среди дикой и некультурной массы темного населения Турции, и потому имеют основание и надежду на покровительство России не только в своих интересах, но и в интересах русских. Многое, что сообщил нам Оскан эфенди из переговоров своих с посольством, мы слышали и из уст Завриева, как результат его бесед с г. Мандельштамом.

